# ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

Է·

# ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

# ՂԱԶԱՐԱՅ

# ՓԱՐՊԵՑՒՈՅ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԵՒ ԹՈՒՂԹ

## ԱՌ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1873—ՌՅԻԲ

# Ա. Զ. Դ.

Մի 'ի յաւէտ փափագատենչ և ընթերական աւանդից բազմերախտ դասու և դարու Թարգմանչաց մերոց՝ է Երրորդն անուանեալ Պատմութիւն Հայոց, զոր հրամանաւ քաջին Վահանայ Մամիկոնոյ՝ եղբօրորդւոյ Մեծին Վարդանայ, գրեաց յելս Ե դարու կամ 'ի սկիզբն Զին՝ աշակերտն աշակերտաց Սահակայ և Մեսրովպայ՝ Ղազար Վանական, 'ի գեղջէ Փարպոյ Արագածոտն գաւառի, 'ի սահմանակցութենէ բնիկ Ոստանին Հայոց։ Սա այս միակ գործ կամ գրուած նորին ծանուցեալ՝ ութսուն ամօք յառաջ տպագրութեամբ 'ի լոյս ընծայեցաւ 'ի մամլոյ Մխիթարեան վանացս. և զոր յայնժամ ծանուցին հրատարակօղքն Բռն տռ Վէրծռնօղս՝ անփոփոխ զնոյն և մեք զկնի մերոյս այսմ դոյզն ազդարարութեան՝ կարգեմք, 'ի յիշատակ իրաճանաչ և երախտագէտ ծերունեաց մերոց. մանաւանդ զի և ոչ միոյ յետ այնորիկ հանդիպեալ մեր նորոյ օրինակի Պատմութեանս, հարկաւորիմք ըստ առաջնոյն կրկնել զտպագիրս զայս, 'ի ձև և 'ի չափ հատորոց ընտիր մատենագրաց մերոց. սակաւ ուրեք 'ի

յայտնի վրիպականն՝ արարեալ ուղղու-
թիւն . և յերկս տրոհեալ Դրուագս ըն-
բովանդակ գիրսն , զի և այսպէս իսկ կոչէ
հեղինակն զմասունս գրոց պատմութեն ,
և երեք իսկ գլխաւոր մասունք երեքն յի-
րումն պատմագրութեան . զոր դարձեալ
առանձին 'ի հարիւր գլուխս տրամատե-
ցաք , առանց խորագրաց . զի որ յառաջ-
նում տպագրութեան եդեալքն են՝ չեն
հեղինակին կամ հին կարգաւորութիւն .
Միայն 'ի Տեսիլն Ս. Սահակայ և 'ի մեկ-
նութեան նորին՝ արարաք այլայլութիւնս
բանից ըստ հնագոյն օրինակաց որ 'ի ձեռ-
ընտիրս գտանին : Արդ որ ինչ զՊատմու-
թենէս կայցէ գիտելի՝ 'ի Բանի անդ ա-
ռաջնոյ տպագրութեանն գտցեն խն-
դրողք . և մեք սակաւ ինչ զնորագիւտ
թղթոյն Ղազարայ ասասցուք , զոր յա-
րեալ կցեցաք 'ի կռան Պատմութեանն .
զի այնպէս գրեալ աւանդի և առ նախ-
նեօք :

Օրինակ թղթոյս Ղազարայ առ ձեռն-
տու իւր Վահան՝ յայտնեցաւ 'ի դարանս
մատենից աթոռոյն Էջմիածնի , 'ի ձեռն
փութաջան խուզարկուի Յովհաննու ե-
պիսկոպոսի Շահխաթունեան , որ և հա-
տուածս ինչ անտի եդեռ յիւրումն Ստո-
րագրութեան Էջմիածնի և հնգեցուն գա-
ւառացն Արարատայ . ապա յամի 1855
հմուտ վարժապետն տեառն Լազարեան
ճեմարանի՝ Պ. Մկրտիչ Էմին զբովան-
դակն 'ի տիպ արձանացոյց 'ի Մոսկուա
քաղաքի , երկար յառաջաբանութեամբ
և ծանօթութեամբք : Յետ նորա և մե

ամն եռանդուն բանասէր, Մկր. Նալբան-
դեանց, յեղեալ զնոյն յաշխարհիկ բար-
բառ. խորոյ գաւառին՝ երկարագոյն եւ
խորհրդածութեամբք բանից՝ եթող ա-
մանրիմին. որոց յետ տարաժամ մահու-
նորին հայացեալ հրատարակեցին 'ի մայ-
րաքաղաքին Ռուսաց, յամի 1868։ Ի վե-
րայ երկոցուն այսց երկասիրութեանցն ան-
դէպ վարկաք յաւելուլ եւ մերոյսանն ծա-
նօթութիւնս, բայց ոչ ուրեք անհրա-
ժեշտն թուեցաւ. այն զի եւ Թուղթն
ինքնին եւ Պատճառն նախակարգեալ 'ի
մերձաժամանակ մատենագրէ՝ տան ոչ
սակաւ կարեւոր եւ պիտանի ծանօթս ըղ-
կենաց Ղազարու։ Այլ զի հանգոյն Պատ-
մութեանն եւ Թղթոյս այսորիկ մի միայն
օրինակ գտեալ է ցարդ, եւ Թերութիւնք ոչ
սակաւ նշմարին 'ի գաղափարին՝ աւելե-
ցաք եւ մեք Թողուլ նոյնպէս, ըստ առա-
ջին տպագրողացն, բաց զվրիպեալսն 'ի նո-
ցին տեսութենէ՝ ուղղագրելով, որում
բաղդատողացն դիւրին է կալ 'ի վերայ։
Բայց զգլխաւոր ուղղութիւն մի հարկ
համարիմք յիշեցուցանել. այն է դասա-
ւորութիւն հատուածոց բանի Թղթոյն, որ
'ի միջին տեղիս խառնակեալ եւ անյարիր
ծնայր, 'ի սակս սխալակ յետ եւ յառաջ
կարգութեան Թերթից մատենին՝ յորմէ
գաղափարեալս է. եւ ըստ այնմ վրէպ
դասաւորութեամբ տպագրեալ էր նա-
խայիշեալ բանասիրացն. զոր մտադիր
քննեալ դասաւորեցաք որպէս արժան եւ
առոյգ էր. միայն 'ի միում տեղւոջ ոչ կա-
րացաք 'ի հուն ելանել, եւ պակաս կար-

ծեմբ 'ի բանին, որպէս ևնշանակեցաւ ան-
դէն (յէջ 593). գուցէ այլոյ ուրուք ճար-
տարութի, և մանաւանդ ըղձալին բաղդ,
լցցէ և զայն թերութիւն. հանդերձ նո-
րովք ևս գործովք քաջի Վիպագրին և
ճարտասանի մերոյ Ղազարայ. որ երկո-
քումք այսոքիւք տեսակօք դպրութեան,
պատմագրութեան ասեմ և ճարտասա-
նութե՝ ոչ ունիք 'ի մերոցս վայելչաբանից
ստորակայի, թէ ոչ և բնաւիցն վեհագոյն
հանդիսանայ կարգաբանութեամբ և քա-
ղաքագիտութեամբ. և միահամուռն ցան-
կալի հանգամանօք՝ զոր փափագեմք յե-
տինքս 'ի նախնեաց մերոց և յոսկեղինիկ
դրչաց. ընդ Մովսիսի Խորենացւոյ և ընդ
քաղցրաբանին Եղիշեայ կազմէ զերրեակն
պանծալի. յորս սխրացեալ և իմաստնոյ
ուրումն և քաջ հայագէտ Փռանկ մատե-
նագրի, ոչ անարժան ասէր և յետ ճար-
տարաց վիպասանից Հելլենաց՝ ընթեռ-
նուլ և զգրանս Հայերոյս այսոցիկ:

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## ՏՊԱԳՐԻՆ ՅԱՄԻ 1793

Յանկալի ամենայն բանասիրաց ազգիս ճանաչեմք զգործս մերոց նախնեաց. և 'ի նոսա առաւել ըզգործս պատմագրականս, որք զանցեալն գրաւորականօք իւր կենդանի բարբառովք մեզ արձանագրեցին. զյաջորդութիւն մերոց թագաւորաց և իշխանաց, զզանազան անցս յաջողութեան և ձախողութեան մերում սեփհական աշխարհի, և ըզպատմութիւն առաքելաւանդ կրօնի: Գիւտ այսպիսի հարազատ ազգային պատմագրաց՝ շնորհք և պարծանք իւրաքանչիւր ազգաց. իսկ զըրկումն յայնպիսեաց կամ կորուստ՝ պակասութիւն անփոխանակելի, զոր չիք հնար այլուստ լնուլ. զի ճարտարութիւն յետագայից որ զամենայն գիւտ գիտէ հնարել անծանօթ նախնեաց՝ և զամենայն մատեանս յօրինել, յամենայն հնարից վերջա-

ցեալ գտանի զանցեալսն, ներկայ
հանդիսացուցանել, կամ զանցելոց
գրել, ուրանօր չգուցէ պատմագրու-
Թիւն Թողեալ մեզ 'ի Նախնեաց :
Զպատմագիր ժամանակակից եւ ա-
կանատես անցից յիւրմէ պատմելոց`
գերագոյն և փափագելի ճանաչեմք
առաւել քան զպատմագիրս յետա-
գայս նոյն անցից · և 'ի նոսա զպատ-
մագիր ժամանակակից հնոց ժամա-
նակաց` պատուականագոյն համա-
րիմք առաւել քան զվերջին ժամա-
նակաց · վասն զի առաւել տան իւր-
եանց վերծանողաց ծերութիւն և
երկարութիւն ամաց, ըստ պղատո-
նեան ոճոյ այլաբանելով, որ ծեր
կոչէր զմանուկ հմուտ հնոց պատ-
մութեց, և մանուկ` զծեր անհմուտ
քան զինքն նախնագունից : Արդ
այսպէս ունելով ընտրութեան նախ-
նեաց պատմագրութեան, յոգունց
պատմագրաց ազգիս գերագոյն ար-
դարև և ցանկալի ամենեցուն հա-
մարիմք զառաջիկայ պատմագիրս
Ղազար Փարպեցի · Ղազարիկ ձայ-
նեալ 'ի Սամուէլէ · ժամանակակից

անցիցն յիւրմէ պատմելոց, 'ի հնա-
գոյն յայնմ հինգերորդ դարու՝ զոր
ոսկի դար ուսումնասիրութեան
ազգիս արժան է կոչել. աշակերտ
Աղանայ արծրունւոյ, և ունկնդիր
այնոցիկ արանց՝ զորս հիմունս և
աղբիւրս պայծառութեան հայկա-
զեան լեզուիս պարտ է անուանել.
'ի կարգս առաջին պատմագրաց, ըզ-
կնի Եղիշէի դասեալ 'ի Տարօնեցւոյն,
'ի Սամուէլէ և 'ի Կիրակոսէ: Ի վերայ
այսոցիկ և դատող և ճանաչօղ. ըն-
տրող և յառաջատես ամենայն նշա-
նաց պակասութեան և կատարե-
լութեան պատմագրի՝ զորս և ինքն
իսկ արթունն 'ի գործս մի ըստ միոջէ
յիշատակէ 'ի սկիզբն գրոց իւրոց այս
է՝ ճշմարտութիւն բանից վճիտ և
վայելուչ ասացուածոյ, զորոշ և զան-
շփոթ կարգադրութիւն իւրաքան-
չիւր անցից, զանաչառ ստուգագրու-
թի յամենայն մասին. չառնել մար-
դահաճութեան բանից յաւելուա-
ծըս, չյաւելուլ զոչ եղեալսն, չա-
ճեցուցանել ընդունայն բանիւք զնը-
ւաղունս, և ոչ նուաղեցուցանել

կարճակատուր բանիւք զմեծամեծս, առ 'ի անպարատ հանդիսանալ յիմաստասէր լողաց ժամանակին: Այս ամենայն են կատարելութիւնք պատմագրի, յորս կարի իմն յառաջանեալ գտանելով զմեր Ղազար, անշուշտ հաւաստամք բազում երկիւղածին պատրաստութեամբ և ողջախոհ զգուշութեամբ արդարապատում ճշգրտաբանեալ զիւր պատմագրութիւն. մանաւանդ զի ընտանի գոլով պալատանն և աւագանւոյն, որպէս և ինքն ցուցանէ, 'ի նոցունց տեղեկութենէ և 'ի դիւանացն կարէր ստուգել զամենայն:

Սորայս պատմութեան կարգ վըճիտ, յօրինուած շարագրութեան քաղցր, և որպէս թուի 'ի տեղիս տեղիս աշխարհիկ և ընտանի սացուած այնր ժամանակի՝ այլ յստակագոյն բերանոց և ազատ արանց. ընթացք ոճոյն միօրինակ, գեղեցիկ հանդիսացուցէ փոքունց պարագայից, յոր սակս թերևս Ճարտասան անուամբ յիշատակի 'ի Տարօնեցւոյն և 'ի Կիրակոսէ, ոչ թողու

տարտամութիւն կամ տարակոյս 'ի բանս իւր. ոչ զանց առնէ զկարեւորագոյնսն իւրաքանչիւր անցից, ոչ զանց առնէ նաեւ բազում ուրեք նշանակել զժամանակագրութիւնս, ըզբազմաց տեղեաց զգաւառս, զիւրաքանչիւր անձանց զգիտելի ասացուածս. կրկնէ գրեթէ ամենայն ուրեք զամենեցունց մակադրական անուանս 'ի բացատրութիւն ընթերցողին, նմանակցելով յայսմ Յունաց պատմագրաց այնր դարու. եւ յամենայնի 'ի սոսա (բաց 'ի սակաւուց) միշտ չափաւոր իմն համառօտութիւն պատուեալ, գրեթէ ամենայնիւ յանձին բերէ զձիր կանոնեալ պատմագրի, եւ յինքն ճշգրտէ զիւրոյ ինքեան բանս զԱգաթանգեղոսէ. «Ստուգաբան 'ի կարգադրութիւն ճառից, եւ յարմարագիր 'ի պատմութ̃ս ասացուածի իւրոյ»:

Սորայս պատմութիւն համօրէն գրեթէ 97 ամաց՝ յ' 388էն սկսեալ մինչ'ի 485, առաջի առնէ մեզ զխռովագոյն եւ զտրտմալի դար ազգիս. ըզպաշարումն ծաղկեալ Թագաւո-

րութէ Արշակունեաց, և զդադա-
րութիւն խաղաղութեան կրօնի 'ի համ-
աշխարհական հալածանաց Պարսից.
առաջի առնէ նոյնպէս և զուրախա-
լին զոսկիղէն դալրութեան ազգիս,
զերկրորդ ոսկիղէն կրօնի բազումա-
րեանցն հեղմամբ յետ սրբոյն Գրի-
գորի, և զոսկիղէն մարզպանութե:
Եթէ երկպառակութէ և անմիա-
բանութեամբ ոմանց տխրեցուցանէ
զլսելիս, անլուր քաջութեան գոր-
ծովք, սքանչելի օրինակօք համբե-
րութեան արանց և կանանց, սերտ
միաբանութէ առհասարակ համ-
օրէն ազգին յուղղափառ հաւատս,
ուրախ առնէ և քաջալերէ յառաջ-
նոյն զգուշանալ և առ երկրորդն
թեակոխել: Յայս ամենայն օգտու-
թիւն հայեցեալ մեր՝ կարևոր հա-
մարեցաք 'ի լոյս ընծայեցուցանել
ղայականն յայտապատում պատմա-
գիր այնպիսի խռովայոյզ բազմայե-
ղանակ դիպմանց ժամանակի. բայց
յամենայնի զգուշացեալ զհետ գնալ
հաւատարմութեամբ օրինակին. թէ-
պէտ և ուրեք ոչ պականին

վրիպակք բառից և թերութիւնք և այլայլութիւնք ասացուածոյ· այլ զի չունէր ինչ բաժանումն 'ի գլխակարգութիւնս և կամ 'ի գիրս, 'ի դէպ համարեցաք 'ի բացատրութիւն ընթերցողին ուրոյն 'ի լուսանցսն անդ դնել խորագիր երևելի դիպուածոց· և զայն առ այժմ առանց ինչ թուանշանաց։ Անձանձիր ընթերցանութիւն մերոց բանասիրաց զմեզ յուսացուցանէ գանձել ըստ ժամանակին զարդիւնս իւրեանց ընթերցանութեան, զծանօթութիւն անցից անցելոց, զհմտութիւն ընտանի հայկաբանութեան, և որ առաւելն է՝ զհաստատութիւն հաւատոյ 'ի հոգիս, ոչ միայն մտօք այլ և գործովք, զարիութիւն 'ի վիշտս, և զհամբերութիւն առ սէրն Քրիստոսի· որք են վախճան մերոյ առաջարկութեան գործոյ։

# ՂԱԶԱՐԱՅ

# ՓԱՐՊԵՑՒՈՅ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա. Սկիզբն առաջին գրոց պատմութեանն Հայոց. որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս, 'ի մահուն Արտաւանայ յԱրտաշրէ՝ յորդւոյ Սասանայ՝ բռնաւոր Ստահրացւոյն. և զդարձ աշխարհիս Հայոց յանգիտութենէ կռապաշտութեան յաստուածգիտութե ճշմարտութիւն՝ 'ի ձեռն սրբոյ նահատակին Գրիգո-

րեալ. յորոյ անուն և զգիրսն անուա-
նեալ կոչեն Գրիգորիսի: Երկրորդ
գիրք սկիզբն արարեալ պատմելոյ
'ի կարգէ առաջին գրոցն՝ զկնի բազ-
մափոփոխ աշխարհիս Հայոց, զբա-
րեաց և զչարեաց, զխաղս և զգործս
զարանց որոց և զայլոց, զժամա-
նակս պատերազմաց և զխաղաղու-
թեան. պատմեալ զայս ամենայն
Փաւստոս այն Բուզանդացի, մինչև
ցԹագաւորութիւնն Արշակայ (որ-
դւոյ Պապայ, որդւոյ Արշակայ [1].)
որդւոյ Տիրանայ, առ որով Թագա-
ւորութեամբ բաժանեալ աշխար-
հիս Հայոց՝ պատառեցաւ յերկուս
ծուէնս ըստ օրինակի հնացեալ ձոր-
ձոյ: Եւ աւարտեալ աստանօր զբան
պատմութեան իւրոյ՝ մնացուցեալ
հանգոյն, զոր անուանեալ կոչեն
զանուն գրոցն՝ Հայոց պատմու-
թիւն:

Երրորդ՝ Պատմութիւնս այս 'ի
կարգէ նորին գրոց շարադրեալ ան-
կարութեանս մերում. յոր հարկա-

1. Փակագծեալդ պակասէ 'ի բնագրին:

ւորեալ հրամանաւ իշխանաց և բա-
նիւ սուրբ վարդապետաց, առաջ
զանձինս յայտնի գործ կարեւոր,
ձեռներեցեալ ընդդիմանալ. յիշեալ ՚ի
սուրբ գրոց զպատուհասին անհնա-
զանդից որդւոցն, և զօրս գրէ՝ նե-
րողութիւն հնազանդից և հաւանե-
լոց. կարգեալ մի ըստ միոջէ զիրս և ըզ-
գործս, զբազմայեղանակ գլխմունս
Հայաստան աշխարհիս, բաժան-
մանց յերկուս Թագաւորութիւնս.
— և ՚ի միջնակէ բաժնոյ անօրինա-
ցըն՝ [1] արանց քաջաց ՚ի տոհմէ նա-
խարարացն Հայոց՝ առ զանձինս
անհամարս ՚ի նահատակութիւնս ՚ի
վերայ ուխտին սուրբ եկեղեցւոյ. և
կեանս համբերել կապանաց և բան-
դից վասն երկնաւոր յուսոյն բազ-
մաժամանակ տեւողութեամբ. — հե-
ղեալ և քահանայից ընտրելոց Աս-
տուծոյ և Ճշմարտապէս հօտուց՝
զարիւն ՚ի պատարագաց խորանց, ՚ի
վերայ ընտրեալ բանաւոր հօտին
Քրիստոսի. — և ամանց յինկերա-

1. Յոր. օրէնացն : Զդարս լսմանց :

կըցոց նախարարացն և յայլ ազգաս մարդկանէ՝ գտանել յետս յաւիտէ որբութեանն, և անշէջ յաւիտենից հրոյն լինել լուցկի. պատրաստուցոյն սատանայի և նորին արբանեկացն։ Եւ գրել զայս անձնոյն մինչև ցօր սկզբան մարդասպանութեանն Հայոց Վարդանայ Մամիկոնէից տեառն և մեծի զօրավարին Հայոց և մարդասպանի. և դադարեալ հանգուցից յայսմ տեղւոջ զբան վաստակոց պատմութեանցս այսոցիկ։

Բ. Ընդ բազում ժամս մնաենից առաջնոյն պատմագրացն Հայոց անցի. յորոց բան յերկար ընթերցողութեանն զոր 'ի նոցանէ զժամանակաց և զգարուց աշխարհիս Հայոց բազմադիմի յեղափոխութիւնս, յառաջ և յանխաւ կարգաւորութենէ առաջին գրոցն, զոր յարմարագէս պատմեալ ծանոյց մեզ երանելին Ագաթանգեղոս. այլ բանիբուն գիտութեամբ և լի անձնոյն հրաշանօքն, առաջարան 'ի կարգադրութիւն ժամուց և յարմարա-

գեր 'ի պատմութիւնս աստուածի
խօսից։ Ես զնուազումն Թագաւո-
րութեան արշակունեացն Արտաւա-
նայ, և զզօրանալն սասանեանցն
Արտաշրի որդւոյ Սասանայ՝ սաս-
տանէս յօրինուածով կարգեալ
զդաշնեայց. զինքնախնդրութիւն Խոս-
րովու, և՛ զառաքելուածն զաւա-
զոցեալ Սասանեայցն. զնոր-
հուրդն և զհաստատունն զօղի հե-
ռոտս յաղագս մահուն Խոսրովու,
զհարստանկութեն զմնածութիւն
Անակայ, և զարգանումն 'ի նմանէ
Խոսրովու՝ նենգաւոր խաբէութեն·
զմատնումն յայնմհետէ զաշխարհս
Հայոց 'ի ձեռս Թագաւորութեան
օտարի. զխախուցանելն զայնկա-
ցն զօրդի Խոսրովու յաւարու-
թիւն առ 'ի յաղթումն. զհակայա-
կալ միաբանեալ զդարձն Տրդա-
տայ, և զյաղթօղ մարտիս նմնէն
զհրոյին զնախնեայն քաջայր ըն
Թագաւորութիւն. զելեկն 'ի նո-
մա որոյն Գրիգորի. զելեգս պաշ-
տամանն ամենայն զհաւատակութիւն
նորին որոյն, և Թէ որպէս աստուա-

ատեղաստանումն եւ անդրաւ բարգաւաճ՚որ-
ատեղաստանումն զատաւորեալս օգնու-
շարժմանցն. զատուցելոց որ յայտնա-
կանութիւն Պետրոսի ՚ի Հռովմայ գեղեցն
՚ի մերոյ որոց ՚ի Հռովմայ դեռեւս
մարգարէից մարգարէն. զհամբերու-
թեան ատենաւորեալն որքան ամե-
՚ի մերոյն. ըստ կանոնագէտ առա-
ատեանութեան մեծին. որ առաքեր
զհաւատալն ՚ի գործն Հայոց.
զհամաձայնալն ՚ի կանոնաց ՚ի Հռովմ
զերես աւուր կանոնացն, եւ զհետեւեալ
մերձեցող բարբառն, ՚ի Հռովմ
մարտիրոսական պատմեան ՚ի Հռովմ
շարժման բարբառ. յառաջեան զա-
րբունեան զաւակեալ զհող մերոց-
բարութեան Պետրոսի ՚ի խոր
կան. զէն որոյն Պետրոսի ՚ի խոր
մերձաւորեն, եւ զհանեալն Հայաստան
միաբանեալ ՚ի խաղաղ ամենայն
թեանն յառաջեցուցիչն արդարու-
թեանն բառ. զորովարելն յաջող-
հեռնէ մարդկութեան կենաց
աշխարհին Հայոց. զհանդէս մերա-
թեան բայց զոր մեծին Պետրոս
՚ի ձեռն մեծ իշխանութեան Պետրոսի
բարեխօսութեամբն եւ առաքելո-
ւթեանն ծառայելոց յաշխարհին
մերում. զմիաբանութեան եկեղեցւոյ.

զպայծառութիւն քահանայից, ընդ-
խումբս բազմամբոխ ժողովրդոց 'ի
տօնս փրկչին և 'ի ժողովմունս յիշա-
տակաց սրբոց: Զայս ամենայն, և
առաւել քան զսոյն գիտութիւն,
յիւրում հաստատուն և անսխալ
կարգաւորութեան՝ պատմեաց մեզ
երանելի այրն Աստուծոյ Ագաթան-
գեղոս:

գ[1]. Իսկ զհետ սորա՝ ըստ այլայլ-
ման իրաց և ժամանակաց և դիպե-
լոյ աշխարհիս Հայոց բազմամբոխ
դարուց, երբեմն խաղաղութեան և
երբեմն սաստիկ և անբաւ շփոթ-
մանց, միաբանութեան առ միմեանս
և երկպառակութեամբ ձեռքելոյ 'ի
միմեանց, բազումք սպրդեցին գալ
յայսպիսի յայրատութիւնս, որք
ողեռք և յանդգունք. գրեցին յիւ-
քեանց ձեռս ընդունայնս և անպի-
տանաբանս, և խառնեալ եդին 'ի
գիրս գիտուն լողայ. այլ ընտրող

1. Գ. և Դ. հատուածք անյարիրք թուին
'ի կարգիս, յորում կան պակաս կամ ա-
ւելի բանք, կամ տեղափոխելիք:

[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] և [illegible] [illegible]
[illegible]։ Ս[illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]
[illegible], [illegible] և [illegible] [illegible]
Վ[illegible], [illegible] Ս[illegible], [illegible]
[illegible] Հայոց և [illegible], [illegible]
[illegible] և [illegible] [illegible]
[illegible] Հայոց ՚ի [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] և [illegible] [illegible]
[illegible] [illegible] և [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible], [illegible]
[illegible] ՚ի [illegible] և [illegible]
[illegible]։ ՚ի [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible], [illegible] [illegible]
[illegible] [illegible] Հայոց։ [illegible]
[illegible] [illegible] և [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] և [illegible] [illegible]
[illegible] [illegible]։ Ս[illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]

նութեանց նոցա, և պարունակէ-
ամենայն շարժութիւնն՝ մինչև և
մեք զարմացեալ կարդամք ցածնուն։ Այս-
պէս և բան հզօրին Աստուծոյ վա-
րէ զամենայն՝ զոր կամի. ցասու-
ցեալ խառնակէ մեր գործոց, խռովէ
սպրեալ. կարգաց փխան գործոց տես-
նելով՝ ոչորմի փառօքն։

Եւ արդ՝ յաջողիլն սյայնիկ մա-
հուս ընծայեալ անձինն շաղախե-
գով ընդունայն, և հասանէ եւեթ
խնդրին անձինն՝ որում ոչ տա-
րեալ բարձան, մտացեալ զկէս-
ոչն՝ բերելեալ օտարին գուտմա-
նան. խոլ մխանք եւ առնել կա-
նիցին գանձուն յուսացեալ ծա-
ռանգութիւն, որ և զօրինութեան
բանից առաջնորդութեամբ կարգեալ
պատմութեանն, հանձնէ մտադրա-
ծութեան բանից յաւելուած՝ ի
ցուցանել ստեղծ, նաև աստուածոյ
առաքինութիւն, ամենազօրութեան եր-
կիւղիւն ընդ բաժին քաջաց ընդդէմ-
ղեկաց, [1] զինուորեալ բանիւ ծառայից

1. Խօսի զինուր կառափնդեան զօրաց։

անվթար՝ 'ի սուրբ Հոգւոյն շնորհին յուսով ապաւինեալք․ ունելով փոխանակ փայտամած տախտակացն՝ զհիմն ուղղափառ հաւատոյ, և փոխանակ 'ի նմա բազմայօրինակ կազմութեան շնորհացն՝ զերրեակ նոյնութեանն միութիւն, ըստ անբաժան սուրբ Երրորդութեանն։ Եւ զինուացն տախտակք առանց բազմաց սատարելոյ շնորհին լինել յանօթ պիտանացու, քանի՞ եւ սասեղ այսպիսի մեծ և հզօր գործոյ ձեռնարկութիւն, որ բազում կարեւոր պէտք էին առաքինի արանց օգնականութեան․ կայ ոմանց ըստ աստուածային հրամանատուութե 'ի հնազանդութիւն բնիկ իւրեանց արշակունի թագաւորացն, և այլոց ծառայել կամաւ օտար թագաւորացն՝ 'ի կորուստ անձանց և աշխարհիս․ որք 'ի միաբանելն՝ տեսանէին զԱստուծոյ օգնականութիւնն յանձինս և յաշխարհս, և 'ի քաղաքին և 'ի պատուականին՝ զշէնս և զկորուստ յանձինս և յաշխարհս։

Դ․ Որում երկրորդ գրոցն ա-

նուանեն զոմն պատմագիր կոչե-
ցեալ Փաւստոս Բուզանդացի. և վասն
զի կարգելոյն առ 'ի նմանէ 'ի տե-
ղիս ուրեք՝ կարծեցին ոմանք բանք
ինչ ոչ յարմարք և դիպողք, որպէս
առաջնոյն Ճշմարտութիւն Ագա-
թանգեղոսն կոչեցելոյ, յերկուա-
ցեալ հարկաւորին չասել զայնպիսի
անպատշաճ կարգումն բիւզանդա-
ցւոյ ուսելոյ: Քանզի Բիւզանդիոս
այս փոքրիկ քաղաքին էր յառաջա-
գոյն շինեալ յառնէ ումեմնէ Բիւ-
զաս անուն կոչեցելոյ, մերձակայ
Թրակացւոց սահմանակցութեանն.
զոր և 'ի գալն աստուածական հրա-
մանաւ սրբոյն Կոստանդիանոսի 'ի
վերայ անթիւ բազմութեանն Գոթաց
'ի պատերազմ[1], և առ եզերբն Դե-
կովբ գետոյ արարեալ զիւր զօրու
բանակատեղս, որ աստուածային
տեսչութեանն լինէր արժանի, օրի-
նակեալ նմա յայտնապէս յերկնից

1. Օտարոտի իմն է և պատերազմն. և տեղին. զոր այլ պատմագիրք 'ի սահմանս Հռովմայ և առ Տիբերիս գետով ասեն:

տնկեցեալ լուսատեսիլ ծառն կենսատու խաչին, բերելով շուրջ զինքեամբ ճառագայթելց ծաղկանոցիւ, թէ Այսու յաղթեսցես. և նորա զարթնացեալ, և յուսով երևեցելոյ նովին սուրբ նշանին օգնականութեամբ՝ յաղթեաց վանէր զթշնամեացն բանակսն. և խնդիր փութացէր զխաչն այն՝ հարցանելով, ձեռով զիւր մայրն զերանելին Հեղինէ յԵրուսաղէմ՝ առաքէր. և թէ որպէս անդ ՚ի ձեռն ջերմ՝ խնդրոյ սրբոյ մայրոյն[1] յայտնեցաւ կենաց փայտն, զիարդ ամենայն անձն ՚ի նորին երից առեղեկացեալ՝ զգիւտ փրկութեան մերոյ։

Ու խնդրն թագաւորին եղեալ ՚ի յառաջադրեալ քաղաքին, որ անուանեալ կոչէր Ելիադանիս, և տեսեալ զպաշտօնէութեանն զամխաթիւն տեղւոյն, թէպէտ և ծանրագոյն և բազում՝ աշխատութեամբ ՚ի տեղւոյն յուզանելոյ, որպէս վեհարէր վասն օգտակարութեան կեն-

1. Թուղթ Սրբոյն Մակարայ։

ղւոյն· վասն զի շրջափակեալ յամենայն կողմանց ծովածիր էր տեղին, բայց խուն ինչ ցամաքայատակ ճանապարհ առանց շրջագայուե̃ց ջրոյն, որ ելանէր յարեւմուտս կոյս քաղաքին: Վաղվաղակի զձեռն 'ի գործ արկեալ՝ տայր հրաման հարթել զբարձրաբերձ զբլուրսն որք 'ի ներս 'ի կղզւոջն էին· և չինեալ քաղաք մեծապայծառ՝ զոր ըստ իւրում անուանակոչուե̃ն Կոստանդնուպօլիս անուանէր, որ Թարգմանի հայերէն Կոստանդիանոսի քաղաք· զոր ոմանք ըստ հռովմայեցի բարբառոյն՝ պալատն ասեն, որ Թարգմանի արքունի: Իսկ որ յառաջագոյն չինեալ Բիւզանդիոն էր, Թաղ մի յեզեր նորին քաղաքի, որ մինչև ցայսօր նորին անուամբ կոչի Բիւզանդիոս: Եւ յայնմհետէ վըտակք գիտութեան որպէս 'ի Թագաւորանիստ վայրի յորդեալ բըղխեն 'ի քաղաքէն· որպէս և յամենայն կողմանց յաշխարհէն Յունաց քաջ ուսեալքն անդ փութան հանդիսանալ· և մինչև ցայսօր առաւե-

լեալ տարածին յամենայն կողմանս նորա իմաստութեան վառէք :

Արդ յայնպիսում քաղաքի և 'ի մէջ այնչափ բազմութեանն ուսելոյ վարժեալ այրն Փաւստոս , այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լռողաց բանս կարգէր 'ի պատմութեան իւրում. քա՛ւ և մի՛ լիցի : Ուստի և անհաւատալի խմուլ անկարամութեանս կարծեցեալ գործն , ասեմ , թէ գուցէ այլ ոք յանգուգն և անհրահանգ բանիւ լըբաբար ձեռն արկեալ յիւրն՝ գրեաց զինչ պէտս ըստ կամի . և կամ զի ուրուք անկարեալ դիպողն՝ այլաբանեալ իմասեաց , և անուամբ Փաւստոսին զիւրոյ յանդըգնութեանն սխալանս համարեցաւ ծածկել . և այն յայանի ցուցանի ամենայն հայեցողաց . քանզի են ոմանք 'ի Յոյնս , այլ մանաւանդ առաւել յԱսորիս : Եւ քաջքն[1] լսելով զայլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն , անուանի յիշատակ

1. Եւ այս բան անյարիր կայ առաջնոցն :

թողցեն զհին խորհուրդ՝ անձանց և ազգի։ Իսկ ծոյլքն և վատքն՝ հայելով յանձինս և լսելով զայլոց ըն- պարսաւանս, ՚ի բաց ՚նախանձն կրթեալք՝ ջանասցին բաւանալ։

Ե. Ըստ այսմ օրինակի զգուշացեալ առախալեցուցանէ զմեզ անդր Մամիկոնեից Վահան, զօրավարն Հայոց և մարզպան, որոյ հասեալ հրաման առ իս Ղազար փարպեցւոյ և սնեալ և ուսեալ առ սուրբ առաքինակրօն եղբարցն Աղանայ, որ էր ազգաւ ՚ի հոյակապ և յականաւոր տոհմէն Արծրունեաց, որդի Վասակայ եղբօր Տաճատայ և Գառեգնի։ Որ մինչդեռ էր ՚ի տիս մանկութեանն, և այն ինչ դեռանց մարմնոյն ՚ի վերայ գեղեցկատեսիլ վարդափթիթ ծնօտիցն բուսանէր, ՚ի բաց ընկեցեալ արհամարհէր զամենայն վայելս կենցաղոյս, և զերկնաթռիչ զճանապարհէն յաւիտենից բարութեանցն ընտրեալ հետևել, կեցեալ յանապատս ընդ այս ընտանիս ՚ի [1] Ճգնա-

1. Ցոր. եա։

թիւնս մեծամեծս: Զօրոյ և ոչ բա-
ւական որք էին բանիւ բովանդակել
զանբաւ վարուցն զառն նահատա-
կութիւնն. այլ այնքան միայն սա-
ցեալ՝ մնացուսցուք զբանս, որպէս
թէ պատճառանօք գոլով ՚ի մարմնի.
տքնութեամբ և պահօք և անդա-
դար աղօթիւք զցայգ և զերեկ միշտ
հոգևոր անապատ վաստակօք զան-
մարմնոյն զվերին զօրացն բերէր
յանձին զքաղաքավարութիւն. որ
ոչ երբէք ՚ի կեանս իւրում ընտրեաց
ժամ աղօթից, այլ զտիւ և զգիշեր
անհանգիստ նմա ժամ աղօթից էր:
Եւ կեցեալ այսպէս, մինչև առաւե-
լեալ ծաղկէր հեր գլխոյն ալխասակն
քան զվարդակէն, և կատարեալ
զընթացս նահատակութեան իւրոյ՝
հանգչէր: Եւ եդեալ ՚ի մատրանն
՚ի յԱգամակերտի. որոյ յիշատա-
կարանն ընդ անուանս վկայիցն սըր-
բոց պատմեալ քարոզի մինչև ցայ-
օր և յաւիտեան, անուն սրբոյն յա-
մենայն եկեղեցիս Հայաստանեայց
աշխարհիս, Վրաց և Աղուանից:
Եւ արդ՝ այսպէս հարկաւորեալ

բնագաւառաց ղոկարութիւնս մեր տէրն Մամիկոնէից Վահան, սպարապետն Հայոց և մարզպան, ձեռնարկեալ 'ի գործ՝ որ 'ի վեր քան ըզկար գիտութեան մերոյ էր. քանզի ոչ էր քան զբան [1]: Զի ոչ փոքր ինչ կասկած է՝ աներկիւղ այսպէս ումեք տալ զանձն յայսպիսի վաստակս, ուր պիտոյ են յարմարութիւնք բանից, որոշեալ կարգադրութիւնք ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն, բերել պատկառելով ստուգագրութիւն անպարսաւ յականջս իմաստասէր լսողաց. չյաւելուլ զանեղեալսն՝ յընդունայն աճմունս բանից. չնուազեցուցանել զեղեալսն և կարճակտուր պատմել, բանիւք անփութութե. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել 'ի յայտնութիւն: Եւ վասն զի են աստ պէտք բազում երկկեղակին պատրաստութեան, արդ [2] նպաստեալ իմում տկար

1. Այսպէս յՕր:
2. Յօր. ոչէ:

խորհրդոյս, աղաչեմ սատարեցէք ամենայն աղօթիւքն անձինք, ձերովք առ Աստուած խնդրուածովք օգնականութեամբք. որովք արդարացուսցէ Զփրկութեամբ գեղեալ ի վեր քան զիս գործոյս հոգեւորութեան, ընդ յորդման ձեծապատուոյն ծառայից ձեռաց մասնաւորապատութեամբ, հաւրց բարեխօսութեամբ որոց՝ յաղթեցէ եւ յաղթահար ձառահակիսն ։

Օրհնեալ է Աստուած ։

# ԴՐՈՒԱԳ Ա.

Ց. Եւ ՚ի բաժանելն զԹագաւո-
րութիւն Արշակունեացն յերկուս. առ
՚ի հնազանդեցուցանել զերկիրն ա-
րեւելից աշխարհին Հայոց՝ Թագա-
ւորին Յունաց՝ ընդ իշխանութեամբ
իւրոյ տէրութեանն, և զերկիրն արե-
ւմտից՝ հնազանդեցուցանելով զանձն
և բռնաւոր ծառայութեամբ՝ ար-
քային Պարսից. երթեալ այնուհե-
տև նախարարացն Հայոց ՚ի միաձայնե-
ալքն արքային Պարսից. խնդրեին
իւրեանց թագաւոր զոմն ընտրել նախ-
նի կարգին յազգէն Արշակունեաց:
Եւ արքայն Պարսից Շապհոյ կա-
տարեալ զխնդրուածս նոցա՝ ընտր-
եալ նոցա թագաւոր Խոսրով անուն
յազգէն Արշակունեաց:

Քանզի նախնոյն Թագաւորին Հայոց Արշակ ունէր միահեծան զԹագաւորութիւնն 'ի վերայ ամենայն աշխարհիս Հայոց: Իբրև ետես Թէ խախտեալ և քայքայեալ մասնեցաւ 'ի բաժանումն մեծ իշխանութիւն Թագաւորութեան ազգին իւրեանց, մեծաւ տրտմութեամբ խռովեալ տարակուսէր յանձն իւր. տեսանէր նախ զանկանելն ընդ լծով ծառայութեան երկուց Թագաւորաց զաշխարհս Հայոց. և դարձեալ զմեծ մասն զլաւն և զպիտանին և զարգաւանդն աշխարհիս Հայոց` ունել 'ի բաժին արքային Պարսից. քանզի Թէպէտ և հասեալ բազում գաւառք այլ` 'ի ժառանգութիւն մասին Թագաւորին Յունաց, սակայն համեմատէին այն միայն Այրարատեան գաւառին: Խորհուրդ բազմածուփ հանդերձ իւրովք սիրելեօք 'ի մէջ առեալ Թագաւորն Արշակ մտայոյզ լինէր 'ի սիրտ իւր ասելով. Թէպէտ երբեք մինչև ցայժմ կամ հակառակութեամբ կամ սիրով եղեալք մեք ընդ մի-

մեանս, զգացուցեալ էր մեր նոցա
գործով պատերազմի, որպէս և
պարտ էր ճանաչելաւն զփորձ միւ-
սոյ ևս լաւագունի քան զինքն. և
թէ խոնարհեալ դիպէաք 'ի սէր առ
միմեանս, սակայն եղբայր լինէաք
հաշուեալ նոցա, պատուով և գա-
հակցութեամբ ըստ կրսերագոյն
մասին. և ոչ բնաւ անկեալք 'ի բա-
ժնէ՝ զանուն ծառայութեան սա-
ցեալ կրէաք յանձինս: Իսկ այժմ
յաղագս ցասուցանելոյ մեր և մերոց
առաջնոցն զերկայնամիտ և զքաղցր
Աստուած, մատնեալ անկաք 'ի
ստրկութիւն, և խոնարհեալք յա-
նարգութիւն՝ անօգտութեամբ գը-
տեալք 'ի բաժանումն. այլ և զգե-
ղեցիկ տեղի հանգստի մերոյ և բնա-
կութեան՝ տեսաք ժառանգեալ ան-
բարհաւաճ և անաստուած ազգին
Պարսկաց: Վասն որոյ ընտրելագոյն
լեցի ինձ թողուլ զանձկալի և զա-
մենատենչ վայրս Արարատայ՝ ըղ-
բնիկ և զսեպհական տեղիս նախ-
նեաց իմոց, և գնալ զկնի ազա-
տութեան, և կեալ բաղձալի կարօ-

առնոյր՝ քան թէ սիրել զհեշտացուցա-
նելիսն, զոր իւրն թագուց եւր
ամբարտաւանս. եւ ընտրել զբարեգործութիւն
ամենայն առաքինեաց՝ քան ընծայել աներա
զանձար 'ի մէջ առաքինեաց. եւ հեռա-
ցեալ յանցս մոլոր զերեւար եւ հան
զփառս հետա նախանձ հեշտացուցի,
եւ վախճանել առաքինութեանց, քան
զբաւ օր ոչ արժանի թագաւորութ-
եան սրբոյ եւ շնորհութեան:

ե. Եւ իրաւացի զոր ամենայն
Աղամ թագաւորն 'ի մէջ իւր՝
նորան մերձեալ թագուր զպարտ եւ
զերծ ժամանակութեան նախնեաց
իւրոց՝ զպատոն Աբրահամու, հա-
ւատացուց եւ զմշակութեան եւ զա-
հանութեան, զամենայրոյն, զամենայն
բուզան, զամենայնին, զամենայնիւն
'ի ջանս եւ 'ի զարմանս մարդկային
պիտոյից հեղեալ եւ վայելութեան
եւ սթափութեան: Զգուշա մեծա-
տարած եւ որպիսի, զերբեմն չափ
ձանից զկերակուրս եւ պարարա-
տացն, զհոժարս երեկոյս հեշտա-
կարոտութեան եւ որոճակներ, եւ ոչ
րոպէ եւ բազումք ընդ նման, յորոց

'ի վերուստ 'ի կատարացն՝ [1] ջրոց հոսմունք անկարօտ ոռոգման, որբուցանելով զդաշտս մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանսպակասութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանութիւն իւղաբուղխ սերմանցն։ Իսկ 'ի լանջակողմանսն կամ 'ի սարահարթ տեղիս՝ յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց, հանդերձս ինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սփռեալքս պարարտաբոյսք և պարարտարօտք, պարարտահամք. որոց թանձրախիտ աճմունք խոտոցն՝ զանթիւ արօտականս ընդանի իշանց և զանհամբոյր բոյլս վայրենի էրէոցն յադեցուցեալ. թանձրաթաղանթս, տռուզադաւակս, սոնքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն։ Իսկ սաստկաբուրումն անուշահոտ ծաղկանցն, որ զարանցն .քա-

1. Յոր. կատարածն։

ջոց որսասէր նետողայն և զհօտա-
րած բացօթեգայն ընձեռելով ա-
ռողջութիւն, զօրացուցանեն զըզ-
գայութիւն խելացն և նորոգեն։
Անդ գտանին և ազգի ազգի ար-
մատք բուսոց 'ի պէտս օգտակարու-
թե̃ գեղոց՝ ըստ ճարտարագէտ ճա-
նաչողութեան ստուգահմուտ բժըշ-
կացն յօրինուածոց, երագահաս
ախտահալած սպեղանիք, և կամ
ըմբմամբ՝ յերկարելոյն 'ի ցաւս՝
պատահացուցանեն առողջութիւն։
Իսկ դաշտացն ամենալրութիւն
զկամս աշխատասիրացն կորզելով
յինքեանց երբև բանին, և առլցեալ
որ զինչ և է բարով, ևս առաւել
փութանակի զդարձն առ ինքեանս
հրաւիրեն միանգամայն։ Որք ոչ
միայն երևելութեամբն ցուցանեն
վերաբերեալ զշահաւորութիւն օգ-
տից մարդկան, այլ առաւել յոր-
դորախօսք աշխատողացն զառ ընդ
երկրաւ ծածկեալ օգուտս ուսու-
ցանեն, գանձել անձանց զշահս և
զվայելս այսր աշխարհիս 'ի մեծու-
թիւն թագաւորաց և 'ի հաստա-

տութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստով ձեռաց՝ զարդարեն ըզթագաւորս մեծատեսիլ զարդեօքն, յօրինուածովքն՝ զոր 'ի խոյրան և 'ի թագսն և 'ի հանդերձսն ոսկեհուռս պաճուճեալս ընդելուզանեն: Այլ և մածմամբ ջրոյ՝ համածին անուշութիւնս մատուցանեն զխորակացն որոշութիւնս. նաև զարմատս եղէգնասեր բուսոցն՝ ոչ ընդունայն անուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ. այլ և 'ի նմանէ ծնեալ որդունս 'ի զարդ կարմրատեսիլ գունոյ ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս: Նաև գետոցն գնացք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և փոքումբք, զանազանեալ համովք և այլ և այլ տեսովք՝ ուրախացուցեալ լցուցանէ զխորչս ընչից, և յագուրդ որովայնից ժրացելոցն և անլէհեր ջանացողացն:

Անուցանէ յինքեան երկիրն ջերմովք արուեստիւք [1] և զառաւելու-

1. Այլայլեալ թուի բանդ:

թիւն հաւուցն յուրախութիւն և 'ի սթափումն որսատենչ ազատացն. զկրկջաձայն քաղցրաձայն առապա-րասէր վիմասոյզ սորամուտ երամս կաքաւացն և սալամբեացն, և կամ զեղեգնաբնակ թփամուտ մացառա-ղօղ պարարտամարմին զանուշա-համ ազգ ագարացն վայրենեաց. այլ և զջրասուզակ մամռախնդիր խօզակեր մեծանձունք և յաղթա-մարմինք հաւքն, փորն և թանձրն և սագն. և կամ այլ բազում և ան-համար ցամաքայնոցն և ջրայնոցն ջոկք թռչնոցն: Իսկ թակարթացն շրջափակութեամբք, երագազիւքն և գահողովքն եղեալ 'ի յորս՝ գունդք նախարարացն որդւովքն ազատացն, ուր ոմանք զհետ ցռուցն և այծե-մանցն արշաւելով՝ զխիզախականն և զաղեղնայինն նետ բարբառեցին, և այլք զհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ՝ զգործ կո-րովաձիգ արանցն ցուցանեն. և կէսք սուսերօք իբրև զմենամար-տիկս՝ զաստիկանդամ երամս վա-րազացն գլորեցուցեալ սպանանէին:

Եւ շատք 'ի մանր մանկանց նախարարաց որդւոցն՝ դաստիարակօք և ծառայիւք, զայլ և այլ սեռս 'ի թռչնոցն որսացեալ բազայիւք, դարձեալ բերիցեն 'ի յաճախումն ընթրեացն ուրախութեան. և այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով՝ դընան ուրախացեալք:

Որոց դէտակն կալեալ ըստ հանապազօրեայ սովորութեան՝ ջրայոյզ ջրածուփ ձկնորսացն մանկունք, ընթացեալք 'ի յառաջ նախարարազունդ որերոյն, ձկունս 'ի յորսոյ, և բազմազան վայրենի հաւուց ձագս և ձուս 'ի կղզեաց գետոյն՝ բերեալ մատուցանեն ընծայս իշխանացն: Յորոց ընկալեալ մասն ինչ նախարարացն ըստ կամի՝ պարգևեն և նոքա 'ի յիւրեանց բերոցն ըստ առաւելապէս բաւականի ընծայաւորացն. և հասեալք լի ամենայն բարութեամբ յիւրաքանչիւր յապարանս՝ շնորհեն և անպարապիցն մնացելոցն 'ի տան՝ զամբիծան, առաւելապէս և առ օտարն: Եւ տեսանել է յամենեցուն ընթրիս՝

որպէս և չեղջակոյտս ինչ 'ի վերայ միմեանց զերեսցն բազմութիւն և զնոցուն գլխոց կարգմանց զառաջադրութիւն. յորոց ուրախացեալ բերկրին ձկնակերացն և մսակերացն անձինք, առաւել քան զխորտկաց անուշութեամբ՝ հոգևոր ճաշակօք սաղմոսիւք և մարգարէական երգօք օրհնելով զպարգևատուն Քրիստոս և զտուիչ և զլցուցիչ ամենայն բարութեանց:

Ը. Եւ արդ զայսպիսի զղձակերտ գաւառ՝ զնաշխարհիկ և զամենայն ըստ տուչութեան ամենախնամ արարչին Աստուծոյ, զԱյրարատեան գաւառ, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենայն, որ բերէ յինքեան զօրինակ լիութեան, ըստ բանի գրոյն, զերկրին Եգիպտացւոց և զդրախտին Աստուծոյ, և զընտիր սեփհական կալուածի ազգին Արշակունեաց՝ զքաղաքն Վաղարշապատ, զբնակութիւն սատանին արշակունի Թագաւորացն, ըզբարձրաբերձ շինուածս անթիւ ա-

պարանացն , զանյագ զամենալն դաշտացն զբերկրութիւն , զհրեշտակացոյց հիմնարկութիւն սրբոյ տանն Աստուծոյ՝ մեծի եկեղեցւոյն , և զայնց վկայարանաց ճգնազգեցիկ երանելի կուսանացն. որոց գտեալք անարժան՝ ազգն Արշակունեաց յաղագս անարժան գործոց իւրեանց , ըստ բանի սրբոյ առն Աստուծոյ Ներսէսի , գտան եղեալք ընկեցիկք յերեսաց Աստուծոյ. մատնեցան ՚ի բաժանումն Թագաւորին Պարսից և Յունաց. որոց վիճակեալ երկոցունց զմեծ զաշխարհս Հայոց, բաժանեալ ծառայեցուցին:

Յաղագս որոյ յուղն անկեալ գնայր յԱյրարատեան գաւառէն՝ որպէս ՚ի գերութիւն՝ Արշակ Թագաւորն Հայոց. լաւ համարեցաւ երթալ զհետ սուղ սակաւ բաժնի յերկիրն հաւատացեալ, և կալ ՚ի հնազանդութիւն Յունաց Թագաւորին, քան թէ կալ ՚ի փափուկ գաւառի այսպիսի վայելչութեանց , և տեսանել հանապազօր զայլանումն հաւատոց , զթշնամանս սուրբ

եկեղեցւոյ, զնախատինս զոր կրելոց էին պաշտօնեայք աստուածային ուխտին յանօրինաց, զթեթեւութիւն իւրոյ ազգին և զթագաւորութեան՝ յամբարհաւան՛ իշխանացն Պարսից տէրութեանն. ընտրելագոյն համարեալ անցուցանել զնեղազ և զթուով ժամանակ կենցաղոյս այսորիկ քրիստոնէութեամբ 'ի խաղաղութեան, քան թէ սուտ փառօք որպէս զարհամարհոտ կեցեալ ատ և վրիպեալ յաւիտենից կենացն՝ մատնել յայրումն անշէջ հրոյն յաւիտենից: Եւ խորհելով զայս ամենայն՝ յանկարծակի 'ի միա խոր տարակուսեալ լքեալ դեգեր ժառանգութիւն զնախնեաց իւրոց՝ գնայր 'ի ծառայութիւն թագաւորին Յունաց [1]:

Թ. Իսկ յետ ժամանակի ինչ անցելոյ բերեալ ատելութիւն նախարարացն Հայոց, որ ընդ Պարսից

1. Աստանօր պակասեն երեք պատմութեանն, որ պահանջէր յիշել զպատերազմն Արշակայ ընդ Խոսրովու:

իշխանութեամբն էին, ընդ Թագա-
ւորին իւրեանց Խոսրովու, վասն
երթալոյ տակաւին 'ի նուաղումն
Թագաւորութեան յազգէն Արշա-
կունեաց, յաղագս առաւելեալ 'ի
նոսա գործոց իւրեանց չարաց, ըստ
բանից սուրբ քահանայապետին
առաջնոց և այլոց ևս բազում առա-
քինի արանց, որք անլուռ բերանով
բողոք բարձեալ յանդիմանէին զան-
արժան գործս նոցա և զմատնումն
ընդ լծով խիստ և անօրէն ծառայ-
ութեանն Պարսից, և նախագոյն
բարբառէին. երթեալ այնուհետև
առնէին բանսարկութիւնս առ Շա-
պուհ արքայն Պարսից, եթէ Խոս-
րով զինքն կարծեցուցանէ քեզ սի-
րելի և հնազանդ, և այս ամենայն
ցուցակութիւն նորա առ քեզ ստու-
թեամբ՝ և ոչ ստուգութեամբ. վա-
սն զի գաղտ ուխտ իւր և խոր-
հուրդ ընդ Թագաւորին Յունաց է,
և միշտ հրովարտակօք և երթևեկ
պատգամաւորօք խօսի ընդ նմա 'ի
խաղաղութիւն: Բայց դուք որպէս
իմանայք հատուցանել նմա ըստ նո-

րս խաբէութեանն, զայն դուք ոչ իշխէք [1]: Եւ կարծէին բանտարկեալքն ըստ իւրեանց անմիտ խորհրդոցն՝ կորուսանել զնա, և անձանց և աշխարհի բարոյ խնդիր շինութեան լինել պատճառ. և ոչ գիտէին եթէ սատակեալքն 'ի մաշումն և 'ի չար ծառայութիւն վասն մեղաց իւրեանց մատնեալ լինին յԱստուծոյ:

Իսկ զայն լուեալ խնդութեամբ և ախորժակ ունկնդրութբ Տաղհոյ արքային Պարսից, հրաման տայր վաղվաղակի հրովարտակաւ՝ զԽոսրով 'ի գաւառն կոչել. և նորա չզգացեալ զբանտարկութիւն իշխանացըն Հայոց, վաղվաղակի որպէս առ իւր իշխանս և բարեկամս՝ 'ի գաւառն հասանէր: Եւ Տաղհոյ թշնամանեալ զնա պատուհասէր. այլ թերևս և վասն յօժարութեամբ մերժեալ զնա 'ի թագաւորութենէն՝ և ոչ յանդիման կամեցեալ առնել զնա չարախօսացն, վաղվաղակի մերժեալ ընկենոյր զԽոսրով յիշխա-

1. Այլայլեալ է բանդ:

նութենէ իւրոյ թագաւորութեանն. և ուխտէր՝ այլ ոչ ևս տեսանել զաշխարհն Հայոց, անդէն կալեալ յաշխարհին Պարսից պահէր: Իսկ իբրև մերժեալ լինէր Խոսրով 'ի թագաւորութենէն՝ խնդրէին Հայք ընդ Շապուհ այլ թագաւոր իւրեանց, և նա հաւանեալ թագաւորեցուցանէր նոցա զՎռամշապուհ զեղբայր նորին Խոսրովու՝ յազգէն Արշակունեաց. և թագաւորեցուցեալ զՎռամշապուհ՝ արձակէր 'ի Հայս:

Ժ. Ի ժամանակս սորա թագաւորութեանն տուաւ շնորհ հոգւորութեան յամենախնամէն Աստուծոյ առն միում ճշմարտի՝ Մաշթոց[1] անուն կոչեցելոյ, որ էր 'ի գաւառէն Տարօնոյ, 'ի Հացեկաց գեղջէ, որդի առն ուրուք անուն էր Վարդան. 'ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն զյոյն, զինուորեալ 'ի

1. Ի Կորեան պատմութենէ և ըստ Խորենացւոյ առեալ և գաղափարեալ իսկ են ճառեալքդ զՄեսրովբայ:

դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն. վասն զի սորին և յոյն գրով վճարէին յայնժամ ըզգործ Թագաւորին Հայոց՝ արքունի դպիրքն, վճռոցն և հրովարտակացն: Եւ ապաստուորեալ անդ ամս կարգաւորապէս սաստիկ եղերանաց, յետ այնորիկ տենչացեալ կարգի վանականութեան՝ երթայ ՚ի վանս բազմութեան եղբարց, և ընկալեալ զկերպարանս վանականութեան՝ լինէր ընտիր յամենայնի և երևելի. հրաժարէր յամենայն աշխարհաղքօս երկրաւոր զբաղմանց: Այս յանապատական կրօնս փոխեալ՝ զարմանալի երևէր և հաշակաւոր. և կայր յանապատս ՚ի բազում տեղիս քարանձաւաց, մեծատաքինութեամբ և խստամբէր վարիւք. բազում և այլաուրբ վարուք[1] կրօնաւորօք և աղօթասէր եղբարբք. մինչև յամս հինգերորդ՝ արքային Հայոց Վռամշապհոյ եղբօր Խոսրո-

1. Գուցէ սրբավարու—ք :

վաս։ Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաստատես՝ ՚ի պատմութեն գրոց սուն ցանկալի Կորեան՝ աշակերտի նորին երանելոյն Մաշթոցի, կարգացեալ ունկնդրեսցի զմարս կենաց նորա. և զնոր հայերէն նշանագրացն, թէ երբ կամ՝ ուր, և կամ՝ յորը ուրուք ձեռն գտանէ, Թագաւորին Հայոց Վռամշապուհայ քերթուածին խնդրելով։ զոր կարդեաց գրելով Չմնարատակս յառաջադրեալ այն հայեաց Կորիւն. սակս և մեք բազում անգամ կարդալով ունկնդրեցեալ հաստատես։

Եւ այսպէս բազմաժամանակեայ մտածութիւն երանելոյ սուն Մաշթոցի՝ ընկալեալ յանմոռանալ մարդասիրէն Աստուծոյ՝ զօրացոյց զնա հոգւով սրբութեան իւրոյ։ Բանին հասուցեալ յառաջամարգարե մեր երանելի այրն Մաշթոց՝ ստանեալ զմեծազան ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս. որք բազում Թաշտեր և ձեռափեաց Ձեռնադրհեք և բազմաժամանակեայ գեղերմանիք մաշեին զաւուրս իւրեանց ՚ի

գրոցս տառի գիտութեան: Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք գրոց տառի ուսմամբ վարէին 'ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, յանլսութենէ լեզուին տառոյ: Զայս 'ի բազում ժամանակս զմտաւ ածեալ երանելին առն Մաշթոցի, և փղձկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց և կանանց առհասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն, զօրացեալ 'ի սուրբ Հոգւոյն յորդորմամբ, և եկեալ առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Սահակ՝ զեկուցանէր նմա զիւրոյ բազմաժամանակեայ մտածութեան զխնդիրն, և ընկալեալ 'ի նմանէ քաջալերութեան աւետիս, թէ՝ Զօրացեալ պինդ կաց, առեալ ընդ քեզ և այլ արս օգնականս 'ի քահանայից՝ զոր ես պատուիրեմ. և ուր տկարա-

նայք 'ի կարգել զհեգենայսն՝ բերեալ առ իս ուղղեմ զայն. քանզի յոյժ դիւրին է գիւտ իրացդ զոր հայցես։ Բայց նախ արժան է մեզ զգացուցանել Թագաւորին զպէտս այսպիսի մեծ և կարևոր խնդրոյ. վասն որոյ և քան զաւուրս ինչ յառաջ ոչ բազումս՝ առեալ բանք յեկեղեցւոջ յաղագս կարօտութեան այդպիսի պիտոյից, ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի Նշանագիրս հայերէն առ ումեմն եպիսկոպոսի 'ի գեօղ միում. և Թագաւորն յիշէր զասացեալսն, քանզի և ինձ նա պատմեաց։

Եւ մտեալ որբոյ կաթուղիկոսին Հայոց Սահակայ հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ առ Թագաւորն Վռամշապուհ, և իմացուցեալ նմա զպէտս իրացն, յիշեաց և ինքն Թագաւորն զխօսեցեալսն վանականին վասն նորին իրացն ընդ նմա, զոր և նորա պատմեալ ուրախացոյց։ Եւ նոցա լուեալ զայս 'ի Թագաւորէն, փութացուցանէին զնա առնել, թէ Ձեռնեմ յաղագս մեծ և օգտաբեր

աշխարհիս Հայոց գիւտից սպառին՝ 'ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայն բերէ քեզ շահ յիշատակ անմոռաց և օգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո, և կամ որպէս յառաջ քան զքեզ նախնեացն քո էին յազգէն Արշակունեաց: Եւ թագաւորին լուեալ զայս և խնդալից եղեալ՝ ետ փառս Աստուծոյ, որ 'ի ժամանակս թագաւորութե՛ նորա զայսպիսի հոգեւոր կենաց փափագ ժառանգեաց յաշխարհիս Հայոց:

Վաղվաղակի առնլով առաքեալ դեսպան զՎահրիճ ոմն անուն կոչեցեալ 'ի ծնողաց իւրոց՝ հանդերձ հրովարտակաւ, առ այր մի երէց Հաբէլ անուն, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցուցայ, որ և մերձաւոր էր առն բարեպաշտի Դանիէլի եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն հայերէն կային. և երանելոյն Հաբէլի ընկալեալ զհրովարտակն 'ի Վահրիճէ և լուեալ զիրան՝ փութանակի հասանէր առ սքանչելի եպիսկոպոսն Դանիէլ: Եւ նախ անդէն 'ի

նմին Դանիէլէ ինքն տեղեկանայր զկարգ նշանագրացն, և առեալ 'ի նմանէ առ Թագաւորն և առ սուրբ հայրապետն Հայոց Սահակ և առ երանելին Մաշթոց հասանէր։ Իսկ արքային Հայոց սուրբ կաթողիկոսաւն Սահակաւ և երանելեաւն Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրսն 'ի Դանիէլէ՝ ուրախ լինէին։ Բայց տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց համներգաբար մուրացածիւն այնուիկ փծագրութեամբ։

Զկնի այսորիկ ինքնին Մեսրովբ իջանէ 'ի Միջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն՝ անցանէ յԵդեսիա առ Պղատոն ոմն Ճարտասան հեթանոս, իշխան դիւանին։ Եւ նորա խնդութեամբ ընկալեալ՝ և զոր ինչ միանգամ 'ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ և շատ ջանացեալ և ոչ օգտեալ, զտգիտութիւն խոստովանեաց հռետորն. և զայլ ոմն ասելով յոյժ

հասու՝ վարդապետ իւր Լեւոն յա-
ռաջագոյն, և տայր տանել զճար-
տարացն գրեան 'ի նոյն գիրեանն
Եդեսեայ և գնացեալ քրիստոնէու-
թեան հաւատոյ, որոյ անուն Ե-
պիփանոս· զոր խնդրեալ՝ դոցես,
լցուցանել զփափաքդ քո։ Յայն-
ժամ Մեսրովբայ օգնականութիւն
'ի Բաբելոնէ եպիսկոպոսէ գտեալ,
և անցեալ ընդ Փիւնիկէ՝ 'ի Սամոս
դիմէ։ Քանզի Եպիփանու վճարելով
զկենցաղս՝ թողեալ ընդ աշակերտ
մի անուանեալ Հռուփանոս, հրա-
շալի արուեստիւ հելլէն դպրու-
թեան, որ 'ի Սամոս էր միայնա-
ցեալ։ Առ սա երթեալ Մեսրով-
բայ և յայսմ ևս անշահ մնացեալ,
յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ
'ի քուն երազ և ոչ յարթնութեան
տեսիլ, այլ 'ի սրտին գործարանի
երևութացեալ հոգւոյն՝ թաթ ձե-
ռին աջոյ գրելով 'ի վերայ վիմի, զի
որպէս 'ի ձեան վերջք գծին կուտա-
կեալ ունէր քարն։ Եւ ոչ միայն
երևութացաւ, այլ և հանգամանք
ամենիցն որպէս յաման ինչ 'ի միտս

նորա հաւաքեցաւ ։ Եւ յարու-
ցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշա-
նագիրս մեր հանդերձ Հռոփա-
նոսիւ, կերպաձեւեալ զգիրն ա-
ձեռն պատրաստ Մեսրովբայ, փո-
խադրելով զհայերէն աթութայն
բառ անսայթաքութեան սկղբայիցն
՚ի հելլենացւոյն ։

Եւ այսպէս զխղեալ զխառն ՚նշա-
նագրացն՝ ձեռն ՚ի գործ արկանէր
երանելին Մաշթոց, յերիւրելով
զնա սուրբ հայրապետին Հայոց
Սահակայ, զիւրահնար ձեռնատուրս
ցուցանելով կարգադրութեան գրե-
նոյս և հեղինակին ուղղաձայնու-
թեան, առաւ՛նոն օրինակոն և այլ
որս բանիբունս և մասցին ՚ի քա-
հանայիցն Հայոց, որք էին աշխա-
մի և նոքա որպէս երանելին Մաշ-
թոց մերձաւորեալք ՚ի յունարէն
հեղինայն. որում առաջնոյն ա-
նուն էր Յոհան՝ ՚ի գաւառէն Եկե-
ղեաց, և երկրորդին Յովսէփ՝ ՚ի Պա-
ղանական տանէն, և երրորդին Տէր՝
՚ի Խորձենոյ, և չորրորդին Մուշէ՝
՚ի Տարօնոյ ։ Որոց օգնելով զորէն

երանելին Մաշթոց, հանգիտակցու-
ցանէր զհայերէն ածութեայն ըստ
կարգման ոսկեղբարցն Յունաց, ըն-
ակեղ հարցմունք և ուսանելով ՛ի
սուրբ կաթողիկոսէն Սահակայ
զաթութեայն գաղափար, ըստ ան-
այթարգութեան յանկին: Վասն զի
ոչ ընդէմն բառական ՛ի մշտարել
ստախտ ուղղակի՝ առանց առաջ-
նորդելոյ նոցա սրբոց հայրապետացն
Սահակայ, որ յոյժ աղքեալ ան-
ցուցանէր վարժիւք զեղանակ զեւ-
նաք Յունաց. եղեւ կատարելա-
պէս հմուտ երգողական տառիցն և
հռետորական յօրդառաց յայտնա-
բանութեան. ևս առաւել տեղեկա-
ցեալ փիլիսոփայական արուեստիցն
ցուցանիւք:

Կարգեալ այնուհետև Փրկչին ա-
ռաջնորդութեամբ զեւր գրենոյն
հայերէնի, և ձեռնացին ուղղեալ
յօրինուածս, ցանկային կարգել
դպրոցս և ուսուցանել բազմութե
մանկանց. քանզի ամենայն անձն
յորդորեալ փափաքէր յուսումն
հայերէն դպրութեան, որպէս ՛ի

խաւարէ՝ յաստի սահմանացն դէպ-
ծեալք 'ի լերս՝ խնդրային։ Բայց սա-
բակուսեալք կասէին յանցքութե-
նէ գլոց ոլորց. քանզի ոչ գոյին
գեա եւ հայերէն լաղութեամբ ըն-
կալակարանք եկեղեցւոյ։ Եւ երա-
նելին Մաշթոց և որ ընդ նմա պա-
տուական քահանայք էին՝ ոչ գօ-
րէին համարձակել յայտնիլ սա-
տիկ և կարևոր գործ, թարգմանել
գիրս 'ի յոյն լեզուոյն 'ի հայ բար-
բառ. վասն զի ոչ ինչ էին այնպէս
տեղեակ գիտնականս հրահանգի յու-
նարէն ուսման։

ԺԱ. Այս ժողովեալ ամենայն ա-
ւագ քահանայք աշխարհին Հայոց, 
հանդերձ երանելեաւ Մաշթոցիւ և
ամենայն նախարարք աշխարհին
Հայոց և մեծամեծ ազատատերք՝
առ Թագաւորն Հայոց Վռամշա-
պուհ, և հանդերձ Թագաւորաւն
սկսան աղաչել զտէր կաթողիկոսն
Սահակ՝ արկանել զձեռն յաշխա-
տութիւն հայերէ, և թարգմանել
զաստուածաշունչ կտակարանս 'ի
յոյն լեզուոյ 'ի հայ բարբառ։ Ե-

դամբ աւագ քահանայից ամէն ցուրբ քահանայապետն, թէ Մեք որ կամքս առաջի քո, հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ, զոր զարթոյց աստուածային շնորհ 'ի ցանկութիւնս յայս՝ կարգել զվաղնջուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել 'ի կիր. այլ ասորի մեծաջան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ. յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցւոյն. և ուսուցիչքն հանելով յոգւոց և հառաչելով՝ զղջանային զանօտիջանն իւրեանց, յորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս 'ի վարդապետութենէ հոգեւոր խրատուցն, որ է կերակուր և պարարումն իմաստնախնդիր անձանց. մինչև գտաւ գիր, և յաջողելով Քրիստոսի եկեալ յաձումն տակաւին զօրանայ: Համայն և զայս վաստակոյս կարգումն, և քոյին առաքինութեանդ գիտութեամբ եղիցի, և կատարեա: Արդ՝ որպէս և

սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահեալ 'ի խոշտանկանաց անձինս աջով հզօրին 'ի լուսաւորութիւն գիտութեան աշխարհիս Հայոց տուաւ, պահեալ շնորհեցաւ և քեզ նորին շառաւիղի՝ վիճակ ժառանգութեան պայծառութեան պաշտաման այսորիկ. սկիզբն առնել գործոյ մշակութեանս այսմիկ, և լինել նմանօղ սուրբ նախնոյն քում, որ յանգիտութենէ 'ի ճըշմարիտ աստուածգիտութի առաջնորդեաց աշխարհիս Հայոց: Արդ և դու յանօգուտ մուրողաբանութենէն 'ի սոյդ հոգեշահ և եկեղեցազարդ բանաւորութիւնս առաջնորդեա բազում ժողովրդոց աշխարհիս մեծի, լնուլ զպակասութիւնս զայս մնացեալ 'ի սուրբ նախնեացն քոց, զոր պահեաց քեզ Աստուած, զոր ոչ ումեք այլում 'ի Հայաստան աշխարհիս մարդկան դոյ հնար ձեռն արկանել յայդպիսի գործ մեծ: Վասն զի և ոչ կարացաք հմուտ լինել և տեղեկանալ այդչափ արուեստաւոր ումանցդ, որպէս և քեզ

տուաւ զօրութ̃ին ճարտարութեան 'ի վերին օգնականութենէն, յաղագս քո առաքինասէր և պարկեշտ հոգւոյդ, որ նմանեալ ճշգրտապէս օրինակեցեր 'ի քեզ զվարս երանելոյ հօր քո Ներսէսի:

Եւ լուեալ զայս ամենայն բարեպաշտ կաթուղիկոսն Հայոց սուրբն Սահակ՝ 'ի թագաւորէն Հայոց Վռամշապհոյ և յերանելոյն Մաշթոցէ և յամենայն ուխտէ քահանայից, եւս առաւել յաւագ տանուտերացն և յամենայն նախարարացն Հայոց, զուարճացաւ յոգի իւր փառաւորելով զփրկիչն ամենեցուն զտէր Յիսուս Քրիստոս: Եւ կամաւոր յօժարութ̃բ ետ զանձն 'ի գործ՝ պանծացեալ յԱստուծոյ գործակցութիւնն, որ ետ նմա զայնպիսի շնորհս առաւելապէս գիտութեան. և անվեհեր ջանալով զցայդ և զցերեկ՝ թարգմանեաց զկըտակարանս ամենայն զխօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք 'ի սուրբ Հոգւոյն. և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնորոց կտա-

կարանացն զլուսաւոր և զկենսա-
տուր քարոզութիւնս նովին հոգւով:
Եւ տարեալ՝ի գլուխ սուրբ հայ-
րապետին Հայոց Սահակայ զգործ
մեծ հոգևոր վաստակոյն, կարգե-
ցան վաղվաղակի յայնմհետէ դըպ-
րոցք հօտին ուսմանց, բազմացան
դասք գրչաց ելևելս առնելով զմի-
մեամբք • զարդարեցան պաշտա-
մունք սուրբ եկեղեցւոյ, յորդորե-
ցան բազմութիւնք արանց և կա-
նանց ժողովրդոց [1] ՚ի տօնս փրկչին
և ՚ի ժողովս մարտիրոսաց: Որ շա-
հեալք լի հոգևոր օգտիւ, ընթա-
նային խնդալիցք ՚ի հաղորդմանէ
մեծի խորհրդոյն, արձակեալք իւ-
րաքանչիւր ՚ի տունս մեծամեծք և
տղայք, սաղմոսելով և կցորդս ասե-
լով ընդ ամենայն տեղիս ՚ի հրապա-
րակս և ՚ի փողոցս, և առտնին: Պայ-
ծառացան եկեղեցիք, շուք առին
վկայարանք սրբոց, միշտ ծաղկելով
՚ի նոսա ուխտ կտակարանաց ըն-
ծայիւք• հանապազօրուղս հօսէին

1. Թուի ժողովելոյ:

վտակք յառաջացն մեկնութեանց,
որք զծածուկս մարգարէից բերե֊
լով 'ի յայտնութիւն՝ սեղանս ամե֊
նալից հոգևոր խորտկօք դնէին ա֊
ռաջի ամենայն ժողովրդեան. յո֊
րոց ծաղկեալ իմաստախնդիր մար֊
դոյ՝ քաղցրանայ 'ի քիմս նոցա ըստ
բանի սաղմոսերգին բանք վարդա֊
պետութեան քան զխորիսխ մեղու։
Եւ զի միանգամայն խակ ասացից
ըստ բանի սուրբ մարգարէին Եսա֊
յեայ, թէ լցաւ երկիրս ամենայն
Հայոց՝ գիտութեամբ տեառն 'ի հո֊
գևոր վտակաց սուրբ հայրապետին
Սահակայ, իբրև զջուրս բազումս որ
ծածկեն զծովս։ Եւ շնորհիւ ամե֊
նախնամ փրկչին Քրիստոսի կատա֊
րեալ այս ամենայն 'ի ժամանակս
Վռամշապհոյ, ըստ յառաջագոյն
գրեցելոց, և լուսաւորեալ զաշ֊
խարհս Հայոց։ Եկաց յետ այսորիկ
թագաւորն Վռամշապուհ ամս քը֊
սան և մի[1], և հասեալ 'ի յերկար
ծերութիւն՝ վախճանեցաւ յանկող֊

1. Ընդ բնաւ 21 ամ թագաւորեաց։

նի նորում խաղաղական հանդիսիւ յաշխարհիս Հայոց։

ԺԲ. Յետ այսորիկ մեռաւ և Տապուհ արքայն Պարսից, և Թագաւորեաց Վռամ որդի նորա որ էր Կըրման արքայ. յորմէ խնդրեցին իւրեանց Հայք Թագաւոր զնոյն միւսանգամ Խոսրով զեղբայր Վռամշապհոյ, զոր յառաջնումն բանադրկութեառուն մերժել զնա Հայք Տապհոյ արքայէն Պարսից 'ի Թագաւորութենէ Հայոց։ Եւ նորա կատարեալ զխնդիրս նոցա, Թագաւորեցուցանէր դարձեալ զԽոսրով՝ զայր յոյժ ծեր։ Եւ եկեալ Խոսրով յաշխարհս Հայոց, և կեցեալ ամիս ութ՝ վախճանէր, առ հարսն յաւելեալ։

Եւ յետ մահուան Վռամայ արքային Պարսից Թագաւորէր Յազկերտ եղբայր Վռամայ՝ որդի Տապհոյ 'ի վերայ աշխարհին Պարսից։ Եւ ոչ կամեցեալ Յազկերտի Թագաւորեցուցանել 'ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց, Թագաւորեցուցանէր 'ի վերայ նոցա

զեալ զօրքն, որում անուն էր Տա-
րօն ըստ անուան հօր իւրոյ. իսր-
ճեալ հարաւոյ խնայմամբ տանն
՚ի միտս իւր: Առաջին զայս, եթէ
աշխարհն Հայոց մեծ է և օգտակար,
առհմանակից և դրակից է Յունաց
իշխանութեանն, ընդ որոյ ձեռամբ
բազումք են հնազանդեալք յաղ-
գէն Արշակունեաց. որոյ դուցէ զա-
րմեալ առ միմեանս ազգայն՝ ըստ
օրինի եղբարց, որք ընդ մերով և
ընդ Յունաց իշխանութեամբն են,
և եղեալք ՚ի միաբանութիւն խա-
ռեսցին ՚ի խաղաղութիւն ընդ Թա-
գաւորին Յունաց, և ընդ նորա հը-
նազանդութեամբ յօժարեալք՝ ա-
պստամբեսցին ՚ի մէնջ: Եւ արդես
կալեալ է զնեղ բազում անգամ
յաղթութեամբ՝ առաւել ևս յա-
ռաջածով նորա՝ անհնարին ա-
նցեն զնեղ պատերազմաւ: Եւ եր-
կրորդ, զի յօրինաց մեր օտար են
և անեցոյք, և միաբանեան ունին
զպաշտօն նոցա և զօրէնս: Արդ ՚ի
Թագաւորել յազգէս մերմէ ՚ի վե-
րայ աշխարհին Հայոց՝ յամենայն

այդպիսի կասկածանաց անհոգա-ցեալ լինի թագաւորութիւնս մեր. և նոքա ցանկ երկիւղիւ և դողու-թեամբ ծառայեն մեզ, և օտարոտիս ինչ և վնասակարս ինչ ոչ խորհին: Է զի և սովորութիւն առնուն յանկ-չել յօրէնս մեր հանապազ խօսիւք ընդ միմեանս և ընտելական բարե-կամութեամբ 'ի զբօսմունս որսոց, 'ի խաղս որ լինին 'ի միջի նոցա. այլ և ամուսնութեանց տուրևառիւք հաղորդեալք առ միմեանս, զատու-ցեալք այնուհետև որոշին 'ի սիրոյ նոցա և յօրինացն:

Եւ սորա խորհելով զայս այսպէս, չգիտէր զբան սուրբ Հոգւոյն՝ որ ասէր, թէ Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան, զի են ընդունայն: Որ փութանակի և արդեամբք վճիռ ե-տուն գրեալքն՝ իրացն եղելոցն. քանզի չև ևս յերկարեալ 'ի թա-գաւորութեն՝ մեռանէր Յազկերտ. 'ի նմին աւուր և զորդի նորին զՇա-պուհ՝ զոր 'ի տեղի Արշակունոյն թագաւորեցոյց 'ի վերայ աշխարհիս, անդրէն 'ի դրանն մարդկանէ դաւով

յաղթութիւն առաքեցին։ Եւ յետ
մահուանն Յազկերտի որդւոյ Շապ-
հոյ թագաւորին Պարսից թագաւո-
րեաց Վռամ՝ որդի նորա 'ի վերայ
աշխարհին Արեաց։ Եւ եկեալ իշ-
խանք աշխարհին Հայոց առաջի
Վռամայ արքային Պարսից, խնդրե-
ցին իւրեանց թագաւոր յազգէն
Արշակունեաց։ Եւ նա թագաւորե-
ցոյց 'ի վերայ նոցա զԱրտաշէս որդի
Վռամշապհոյ, յազգէ թագաւո-
րացն Հայոց։

ԺԴ. Եւ էր Արտաշէս այր մա-
նուկ և իգամոլ, և բազում անա-
ռակութեամբ վարէր զթագաւո-
րութիւնն։ Եւ չհարցեալ այնպիսի
զեղխ մոլեկան վարուց թագաւո-
րին Արտաշէսի ամենայն նախարարքն
Հայոց, ժողովեցան միահամուռ առ
մեծ քահանայապետն Հայոց առ
սուրբն Սահակ, որ էր յազգէն
Պարթևաց, որդի որդւոյն Ներսէսի,
և ասեն ցնա. Ոչ ևս կարեմք այս-
պիսի անօրէն և պիղծ գործոց թա-
գաւորին հանդուրժել. վասն զի լաւ
համարիմք մեռանել՝ քան եթէ

քաղաքի գործ ազատեցութեան հա-
նապազօր տեսանել և լսել: Ս.Մ. և
մեծի պատուականն և երկնաւոր
խորհրդոյն հաղորդել ոչ կարեմք 'ի
խղճէ մտաց, զոր ամենայն տեսանե-
լով քաղաքի աղծագործութիւն և
լսել. քանզի ուսեալ եմք 'ի քէն և
'ի քո նախնեացն վարդապետութե-
նէ, թէ ոչ միայն որ գործենն պար-
տական են, այլ և որ յանձն առ-
նուն: Արդ քեզ նախ պարտ է այս-
պիսի անհնարին աղէտից խնդրել
հնարս, և բառնալ 'ի միջոյ քաղաքի
ամբարշտեալ Թագաւոր, որ այս-
պէս յայտնի իբրև զանհաւատ ար-
համարհանօք առ ոտն հարկանէ
զօրութիւն, և աներկիւղ կամա-
կարութեամբ գործէ զաղտեղի գի-
ճութիւն:

Եւ լուեալ քաղաքի բանս աւագ
քահանայապետին Հայոց Սահա-
կայ 'ի նախարարացն Հայոց, պա-
տասխանի տուեալ ասէ. Իբրև ոչ
եթէ նոր ինչ լսելով այսօր 'ի ձէնջ
ճանաչեմ զաղաչեալդ ձեր. այլ
գիտեմ զի զկծեալ սրտիւք խօսիք

զայսպիսի խօսս: Եւ ինձ անհնար է առնել եթէ այլուրանք ինչ և ոչ տուգութեամբ պատմին տացեալքդ 'ի ձէնջ. բայց արդ՝ որպիսի հնարիւք ըստ արժանի հօգեւոր մարդկան պարտ է զելս իրացդ գտանել՝ զայն արժան է խորհել ամենեցուն և առնել: Եւ նոցա առհասարակ պատասխանի տուեալ ասեն ցուրբ կաթուղիկոսն Սահակ, թէ Մեք և ոչ մի ինչ ելս այլ և հնարս իրացն գտանել կարող եմք, բայց բողոքել թագաւորին Պարսից՝ 'ի բաց բառնալ 'ի թագաւորութենէ սորա, որում ինքն իսկ ինքեամբ չեղև արժանի ժառանգելոյ: Այլ մեզ քան զայդ ոչ իմանալ ինչ է և ոչ առնել. այլ զքեզ աղաչեմք միաբանել այսմ խորհրդոյ մեզ. և չէ պարտ այսպիսի անարբութեանց այլ և պղծութեանց գործոյ թագաւորին հաղորդ լինել:

Իսկ սուրբ հօգեւոր կաթուղիկոսն Հայոց Սահակ իբրև լսէր զայս ամենայն 'ի նախարարացն Հայոց, և սուգիւ ճանաչէր եթէ 'ի նոյն միտս և 'ի նոյն խորհուրդս հասա-

տեղ են բովանդակ աւազանի աշ-
խարհին, 'ի մեծ տրամութիւն և
յանմխիթարութ ընկղմեալ լինէր.
և հեղեալ արտասուաց վտակս ա-
ռաջի բազմութեան նախարարացն
Հայոց, հրաժարէր անձեալ պատա-
խանի բանիցն մինչև յաւուրս բա-
զումս: Եւ արգելեալ զինքն 'ի սե-
նեակ՝ ողբոց միայն և արտասուաց
լսէին ձայնս մերձեալ 'ի դուրս սե-
նեկին. քանզի տեսանող ակամբ և
'ի զօրութենէ սուրբ Հոգւոյն տե-
սանէր այրն Աստուծոյ 'ի սպառ. 'ի
սպառ զկործանումն աշխարհիս
Հայոց: Իսկ յետ բազում աւուրց
համարձակեալ ոմանք յեպիսկոպո-
սաց որք հանապազ պարապէին առ
դուրս սրբոյն, չհարցեալք և առ
վայր մի առեալ յաստուածատուրն և 'ի
շնորհալից վարդապետութենէ նորա,
որ քաղցր էր 'ի ճաշակելս խորհր-
դոց հոգւոր և իմաստուն լսողաց.
ըստ բանի մարգարէին Դաւթի,
քան զխորիսխ մեղու, և այլք 'ի
պատուականն երկրաց և 'ի սարկա-
ւագաց, որք 'ի նորին 'ի ձեռն, 'ի սուրբ ախ-

ած հայրապետոյն էին, և ոմանք յա-
ղագս ազգայնոյն Հայոց, համար-
ձակեալ մատնէին 'ի ներքս, և խօ-
սէին ընդ նմա բանիւք ողոքանաց:
Ընդ որս սփոփեալ սակաւ մի սուրբ
քահանայապետն ըստ հոգևոր գի-
տութեանն և խրատու՝ զոր միացեալ
'ի յինքեան 'ի մանկութենէ իւրմէ,
լռեալ դադարէր առ վայր մի:

Իսկ յետ բազում աւուրց դար-
ձեալ ժողովեալ առ նա միաբան ա-
մենայն ազատագունդք աշխարհին
Հայոց, և զնոյն բանս երկրորդեալ
առաջի սրբոյ կաթուղիկոսին Հայոց՝
խնդրէին սակաւ 'ի նմանէ և զնորա
միաբանութիւնն ընդ ինքեանս: Իսկ
սուրբն իբրև տեսանէր, եթէ ոչինչ
ամենևիմբ են կասեալք յառաջին
կամացն և խորհրդոցն, վասն զի յա-
ւելուած որ ըստ օրէ աղաւեղի գոր-
ծոց թագաւորին առաւել քան զա-
ռաւել աճեցուցանէր 'ի կորուստ
անձին իւրոյ զմիաբանութիւն իշ-
խանացն, ձայն բարձեալ մեծաձայն
ողբալով ասէր ցամենեսեան առհա-
սարակ. Եթէ ես, ասէր, եթէ դուք

խնկ, որպէս ուսեալք յԱստուծոյ խօսիք հոգեւորապէս. և տարեալ ար-վայր մի թերութեան անձն, տասուօք և թախանձեցուցանելով զամենողորմ զփրկիչն մեր զտէր Յի-սուս Քրիստոս՝ յաղագս գիւտի կո-րուսելոյն խնդրեցէք հնարս. զի ըստ աւազանի ծննդեանն, թէպէտ մեզա-ւոր է, սակայն եղբայր և մարմին մեր է. յիշելով զվարդապետութին սուրբ առաքելոյն Պօղոսի, զոր աւանդեալ ուսոյց ձեզ հոգւոր հայրն ձեր և քահանայապետն սուրբն Գրիգոր. Զի եթէ վշտանայ ինչ մի անդամն, ասէ, վշտանան ամենայն անդամք ընդ նմա. և եթէ փառաւորի մի ան-դամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա: Յիշել պարտ է և զմտաւ-ածել զխիստ և զնեղութիւնս, ըզ-բանդսն և զկապանս զսրբոյն Գրի-գորի, զպաղատանս և զաղօթս զոր վասն ամենայն աշխարհիս փրկու-թեան խնդրեալ յԱստուծոյ եգիտ, և զամենեսեան յանհաւատութե-նէ՝ շնորհիւ սուրբ Հոգւոյն հաւա-տացեալս արար. զդիւաց մոլորու-

ալ կամեալ հա-
տաստանեան արարեալ հաւատ
թիւնս փափագանաց ընդունելութեան
լսեալ 'ի ձէնջ. աստուածպաշտութեան
սրբութեան ուսուցանել մեզ: Եւ ձեզ
Հանել 'ի մտաց ամենայն ինչ 'ի վերայ
'ի միջի ձերում ծագեալ մարդոյ 'ի
րաց ներքին խորհրդոյն յանդգնել զա-
մենայնն անդրանկութեանց մա-
մնալով, և ոչ անհաւանու-
Թեան մարդկութեանն յարմարութեան
հոգւոյ 'ի ծագել և լուսաւորել մեզ:
Նա զի խորհրդոյ զուարթ հաւատոյ
զաւուրս բազում հոգւոյն իմ և զձեր
Եկեղեցւոյ զաւուրս, որ և զիմաստու-
և զկարգաւորութեան ընդունելութեան
յամենայնի և պատուոյ և մեծագոյն
բանս, հաւատով և զգուշութեամբ
խնդրութեան զայս և զերկինս ա-
ծեալ 'ի փառս և խնդութեան ամենայն
թագաւորին Քրիստոսի, 'ի նորին հաստա-
տութիւն ընդունելութեան: Եւ
ապա 'ի մարդկութեան հոգւոյն նորին
զաւուր առաջնոյ մեծագոյն զամենայն
մարդկութեան՝ մարդասիրութեան
մեծ մեծութեան և կատարեալ ծերոց
առ հաւատոյ սէր և մեծ ողորմութիւն
և փառաց փառաւորեալ 'ի մեզ ա-
մեն Հոգւոյ մեծութեան զամենայնի
Աստուած, որում՝ Հնարաւորն է
ամենայն, և ոչ ինչ անհնարին ա-
ռաւել քան զհաւատս մեր, և մեծութեան
ապա և նա միշտ է մարդասիրական

զոր ՚ի յոյժ դժուարին կարծե-
ցեալ է մեզ. որ և ես իսկ վկա-
միամիտ և անթերահաւատ խնդրո-
ղացն ասելով անուան Աստուած,
թէ Ուր իցեն երկու և երեք ժող-
վեալ յանուն իմ՝ ամենայն զոր ինչ
և խնդրեսցեն ՚ի Հօրէ իմմէ՝ տացի
նոցա: Իսկ որոց եթէ երկուցն և ե-
րիցն աներկմիտ խնդրողացն զամե-
նայն հայցուածն կատարէ Աս-
տուած, որչափ ևս առաւել զայս-
չափ բազմութեան խնդրողաց հարկէ
Աստուած փութով. մանաւանդ թէ
անձանձրոյթ լինելն խնդրողն և
ջերմ հաւատարմօք և անթերահա-
ւատ յուսով, զինչ ոչ առաւել ևս
քան զհայցուածն մեծամեծ իրս
վճարիցէ:

Այլ վասն որ ասէք եթէ միա-
բանեաց ընդ մեզ, ինձ բարւոյն մաս-
նից լինել շնորհի հաւատոյն մե-
րոյ, և անհաւատից զիս՝ համարի գի-
տելով աշխարհն մատնել յապա-
նումն: Զի թէպէտ և մեղաւոր է,
այլ գրեցեալ է առաջի առաքելին
ծննդեամբն. հաւատ է փրկութեան

խնդրոյն, լուեալ է զլուր քաղցրութեան աւետարանին կենաց: Արդ եթէ էր տանել առ բժիշկ առողջ զվիրաւոր եկեղեցւոյս խոց ոչխար, փութայի և ոչ յապաղէի. այլ յամենախնամից տեառն մատուցանել զիմ հիւանդացեալ հոգւոյ որդի, և ոչ երբեք յանձն առնում: Զի եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի տանել զհաւատացեալս յաղագս մեղաց, առաջի անհաւատիցն՝ ոչ հաւանիմ, որ հանապազ ուսուցիչ լեալ եմ բողոքոյն Պօղոսի որ ասէ. Իշխէ՞ ոք 'ի ձէնջ, եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի իւրում՝ դատել առաջի անօրինաց և ոչ առաջի սրբոց. եթէ ո՞չ գիտէք եթէ սուրբք զաշխարհս դատին. և եթէ ձեօք դատի աշխարհս, ապա ոչ էք արժանի անարգ ատենից: Ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս դատիմք, թող թէ զերկրաւորս. զերկրաւոր ատեանս եթէ յանձն առնուք, զանարգս՝ եկեղեցւոյ դատաւոր նստուցանեմք, առ ամօթոյ ձերոյ ասեմ: Եւ այնպէս, ասէ, 'ոչ ոք գոյ

իմաստուն 'ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել 'ի մէջ եղբօր իւրոյ· այլ եղբայր ընդ եղբօր դատի, և զայն 'ի մէջ անհաւատից։ Եւ արդ որ ուսուցի զբազումս, զանձն իմ ընդէ՞ր ոչ ուսուցից։ Այլ ինձ լաւ լիցի մեռանել, քան եթէ զոք 'ի հաւատացելոց՝ վասն անարժան գործոյ՝ մատնել անօրինաց։ Զի թէպէտ և իցէ պոռնիկ, այլ զկնիք հօտին Քրիստոսի կրէ յանձին իւրում· զեձացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ և հեթանոս· զեղխ՝ այլ ոչ կռապաշտ· տկարացեալ է 'ի կանայս, այլ ոչ ծառայէ տարերց· միով ախտանոյ ցաւով, այլ ոչ վարակեալ ամենայն ախտիւք իբրև զամբարիշտ։ Եւ զիա՞րդ զանկաւամեղն՝ ամենայնիւ ամբարշտելոցն մատնել 'ի սատակումն· քաւ ձեզ, որդիք, մի՛ խորհիք զխորհուրդ զայդ, և զերնկզանեարդ՝ որպէս և ոմանք զձեր նախնեացն՝ կորուսանել մի՛ ջանայք։

Զայս և առաւել քան զայն բանս և խրատ բազում արտասուօք և աղերսանօք խօսեցեալ անձանձրոյթ

սրբոյ կաթուղիկոսին ընդ աւագա-
նին Հայոց, ոչինչ կարաց վնաս յա-
ռաջին միաբանութենէն և 'ի խոր-
հրդոյն՝ զոր հաստատեալ էին 'ի
միտս իւրեանց՝ 'ի բաց դարձուցա-
նել: Քանզի եկեալ հասեալ էր 'ի
վերայ նոցա նզովք սրբոյ առն Աս-
տուծոյ Ներսէսի, անկանել նոցա
ընդ լծով չար ծառայութեան հե-
թանոսաց, և ոչ դադարէր մինչև 'ի
գլուխ զգործն հանէր: Միաբանու-
թեամբ պատասխանի արարեալ ա-
մենեցուն քահանայապետին սրբոյ
ասացին, թէ Փոխանակ զի ոչ լուար
բանից մերոց, և 'ի միաբանութենէ
մերմէ զանձն քո 'ի բաց մերժեցեր,
գիտասջիր զի որպէս եղեալ է 'ի մախ
չթագաւորեալ սմա, և այլ ևս 'ի վե-
րայ խոստանամք՝ չքահանայանալ
և ոչ քեզ առ յերկարս 'ի վերայ
աշխարհիս մերում: Եւ զայս այս-
պէս տասցեալ ամենայն աւագաց
տանուտերանց աշխարհիս Հայոց ա-
ռաջի հայրապետին Սահակայ, ե-
լին զայրագնեալք 'ի խրատուէ սր-
բոյն, և այլ ոչ ևս կամեցան դա-

նովաւ երանելին քահանայապետն
Սահակ. զի էր վասն շրջմոլիկեալ
և պաշտպանեալ ամբծից երանելւոյն հայ-
րապետին Ներսէսի, 'ի համօրէն
կատարման խորհուրդս:

ԺԳ. Եւ այնուհետև միաբանեալ
գնացին 'ի դուռն. և երթեալք անդր
յանդիման եղեն արքային Պարսից
վասնից: Ընդ որս էր և երէց մի
Աւրանիկ անուն 'ի գաւառէն Բզ-
նունեաց, 'ի գեղջէն որ կոչի Արծկէ,
'ի տոհմէ քահանայից գաւառին[1],
մխուանայր. որոյ միաբանեալ
ընդ նախարարսն Հայոց, Ճեղքեալ
'ի խրատուէ սրբոյ հայրապետին
Սահակայ, խօսէր բանս անհնա-
ձայր և առաւել զպատեղիս քան զա-
մենայն նախարարս Հայոց զթագա-
ւորէն Արտաշէսէ, առաջի աւագա-
նւոյն Պարսից. շնորհ առնելով
նախարարացն Հայոց՝ յաղագս խոս-
տանալոյ նմա ամենից յաւագանոյն
Հայոց զաթոռ կաթուղիկոսութեան
աշխարհին Հայոց: Եւ ծանուցեալ

1. Յօր. Ի գաւառին:

նախադոյն զպատճառս տրտնջոյն իւրեանց՝ Սուրենայ և այլ աւագանոյն Պարթևաց. քանզի Սուրէնն պահլաւ էր 'ի ժամանակին յայնմիկ հազարապետ դրանն արքունի. և հանդերձ նովաւ և այլ մեծամեծք դրանն հասուցին զբանս ամբաստանութեանն առ Վռամ արքայն Պարթևաց:

Եւ լուեալ արքայն Պարթևաց այնպիսի բանս յաղագս նոցին, ոչ թոյլ տայր նոցա խօսել առ վայր մի առանց գալոյ ոսոխին 'ի դուռն: Վաղվաղակի դեսպան առաքեաց զթագաւորէն Հայոց Արտաշէսն՝ առ ինքն ձեռամբ գալ հրամայէր. գաղտնի գրեր և մեծի քահանայապետին Հայոց Սահակայ: Եւ եկեալ նոցա 'ի դուռն, հարցանէր նախ առանձին արքայն Պարթևաց ըզթագաւորն Հայոց զԱրտաշէս, եթէ զինչ են խօսք յաղագս որոյ ամբաստանեն զքեն նախարարքն Հայոց: Եւ նորա պատասխանի տուեալ ասէր. եթէ Ամենեքին ոչ գիտեմ զինչ խօսին և չարախօսեն զմեզ զինէն.

այլ որպէս առեալ էն ՚ի բնէ Թշնամանել զտեարս խորհրդոց, ըստ նմին օրինակի և այժմ կամին կատարել զոր կամաց խորհրդոց զենդերա· քանզի միշտ իշխանափոխք լեալ էն և ափրատեացք: Ես Թագաւորն Արեաց Վռամ հրաման տայր, միայն ընդ միայն կոչել առ ինքն ըզսուրբ կաթողիկոսն Հայոց զՍահակ. քանզի մեծարէր զնա, նախ՝ վասն ազգականութեան տանն, և գործեալ՝ զի առաջի անհաւատից յորդս և պատուական ցուցանէր զսուրբ ծառայն իւր Աստուած. և հարցեալ ցերանելի կաթողիկոսն, կամէր լսել ՚ի նմանէ զամենայն քանիցն զչարախօսացն Թագաւորացն Հայոց: Իսկ նորա պատասխանի արարեալ ասէր, եթէ Ոչ գիտեմ զինչ խօսին նոքա զնմանէ. նոքին խիկ ատացեն և զուք բամբարուք ՚ի նոցանէ. և որպէս ասենն առաջի ձեր՝ յանձինս խորհրդոց ընդդէմն զհաւատոյն. զնա ինչ ազգական խնդրեա բանից մի հայցանէք. զի ոչինչ լսելոց էք յինէն յաղագս հա-

րախոսութեանց ազգօրէն չոր ինչ և կամ բարի:

Այսպէս կոչէր առ ինքն Թագաւորն Վռամ զՍուրէն պաշտօնեան՝ զիւր զՃաղարապեան, որ ազգակից և տոհմակից էր մեծի քահանայապետին Սահակայ, որպէս զի միաբանեալ և նա ընդ այլ նախարարսն Հայոց՝ վկայեսցէ չարախոսութեան նոցա, և պատուեալ բազում պարգևօք և մեծապէս շքեղութեամբ դարձցի յիշխանութի կաթուղիկոսութե իւրոյ և յաշխարհ: Եւ Սուրենայ բերեալ զպատգամն զարքայի առ երանելին Սահակ, խոստանայր նմա ըստ առածին Վռամայ շքեղութիւն մեծ և օգուտ գտանել՚ի Թագաւորէն. Թէ հաւանեալ, ասէ, կամաց նորա՝ տացես վկայութիւն նախարարացն Հայոց, մեծարեալ բազում պատուովք գտանես յիշխանութիւնդ. ապա եթէ այլազգագոյն ինչ խորհիս յամառեալ, և զքո կաթուղիկոսական աթոռն կորուսանես՚ի քէն, և յիշխանութենէդ զոր ունիս՝ մերժեալ լինիս. և

Եւ վասն զի ազգակից քո եմ եւ ըղձայրքն քո կամիմ, եւ ոչ թեթեւութեանք տամ քեզ այսպիսի սիրոյ խրատ: Եւ այսպիսի բանիւք ջանայր հաւանեցուցանել զսուրբ հայրապետն զՍահակ· քանզի կամէին բառնալ 'ի միջոյ զթագաւորութիւնն Հայոց:

Իսկ ասորին եւ բնաւ իսկ յանձն ոչ առնոյր այսպիսի բանից տալ վկայութիւն իշխանացն Հայոց· այլ հաստատեալ 'ի նոյն միտս ասէր, եթէ Ես զԱրտաշէսի զայգախի ինչ զխաթարութիւն ոչ գիտեմ, որով թէ արժան է 'ի ձէնջ դատելոյ եւ անարգանաց· զի թէպէտ եւ ըստ ուղղասէր մերոց օրինաց արժանի է եւ անգանելոյ, այլ ըստ հրամանի ձեր աղանդաւոր օրինացդ՝ գովութեան արժանի է եւ մեծարանաց:

Եւ լուեալ զայս պատասխանի Սուրենայ 'ի մեծ հայրապետէն Հայոց Սահակայ՝ յիւրմէ առհմահեցին, եւ պատմեալ Թագաւորին Արեաց, 'ի ցասումն զայրացման գըրգռեալ Թագաւորն՝ հրաման տայ

այնուհետև 'ի բազմամբոխ ատենին
հարցանել զնախարարսն Հայոց և
զԱրտաշէս: Եւ կուտեալ իշխանացն
Հայոց բազում ամբաստանութիւն
և ազգի ազգի խօսս անարժանու-
թեան 'ի վերայ Թագաւորին իւ-
րեանց· քանզի ոչ եթէ 'ի նմա ե-
ղեալ զիրսն խօսէին, այլ ևս յաւե-
լուածովք ըստ օրինի Թշնամու-
թեան կուտէին 'ի վերայ նորա բա-
զում չարս· որ Թէպէտ և յուրաստ
եղեալ Արտաշէսի՝ Թէ չէ այդպէս,
ոչ հաւատացին բողքն, եդեալ
զկամս իւրեանց բառնալ 'ի միջոյ
զԹագաւորութիւն յԱրշակունեաց
ազգէն: Մանաւանդ՝ զի լուաւ Թա-
գաւորն Արեաց ամենայն աւագա-
նեօք դրանն 'ի դատախազացն Ար-
տաշէսի, Թէ ընաւ զի՞ իսկ ևս պիտոյ
է Թագաւոր· այլ իշխան պարսիկ
ըստ ժամանակի եկեալ վերակացու
լիցի մեզ· որ և զիւրաքանչիւր ու-
րուք 'ի մէնջ ծանուցեալ զհպատա-
կութիւն և զանհպատակութիւն՝
ցուցցէ ձեզ:
Եւ լուեալ զայս Վռամայ հան-

ղերձ աւագանով դրանն, յոյժ ու-
րախանայր. և այնուհետև հրաման
տայր վաղվաղակի ՚ի բաց առնուլ
զթագաւորութիւնն յԱրտաշիսէ.
ընդ նմին և զտունն կաթուղիկոսա-
կան ՚ի սրբոյն Սահակայ՝ յարքունիս
ունել. փոխանակ զի ոչ միաբանե-
ցաւ տալ վկայութիւն ընդ Նախա-
րարին Հայոց: Եւ այսպէս վճա-
րեալ հրաման Պարսից Թագաւո-
րին ՚ի գլուխ ելանէր: Յայնմհետէ
բարձաւ Թագաւորութիւն յազգէն
Արշակունեաց ՚ի վեցերորդ ամի
Արտաշիսի, ըստ բանի երանելոյ
առն Աստուծոյ մեծի քահանայա-
պետին Ներսէսի. և անկաւ աշ-
խարհս Հայոց ընդ լծով ծառայու-
թեան անօրէն իշխանութեան Պար-
սից: Եւ առեալ գինս իշխանացն
Հայոց ՚ի Թագաւորէն Պարսից ընդ
մատնութեանն Արտաշիսի, պատիւ
և մեծութիւնս, նման արծաթոյն
զոր առին ընդ Յովսեփայ եղբարքն՝
ընդ մատնութեանն իսմայէլացի վա-
ճառականացն: Եւ այսպէս հրաժա-
րեալք ՚ի դրանէ, եկին յաշխարհն
իւրեանց:

ԺԵ. Եւ տանուտերացն Հայոց, որոց խոստացեալ էր զկաթուղիկոսութիւնն Սուրմակայ արծկեցի երիցոյն, նստուցին զնա յաթոռ կաթուղիկոսութեան Հայոց։ Որում՝ տակաւ ինչ ժամանակի անցելոյ՝ ընդդիմացեալ ոմանց 'ի զօրաւոր իշխանացն Հայոց, մերժեալ ընկեցին զնա յիշխանութենէ կաթուղիկոսութեանն։ Եւ յայնմհետէ տաքեցաւ նախ 'ի Վասամայ արքայէն Պարսից՝ յաշխարհս Հայոց՝ մարզպան պարսիկ. և յայնմհետէ եղեն խապառ խապուռ անկեալք ընդ լծով ծառայութեան անօրէն ազգին Պարսից։ Եւ կատարեալ էր 'ի գլուխ բանն անիծից մեծի քահանայապետին Ներսէսի, զոր առաքելապէս աճեցեալ օր քան զօր 'ի թագաւորականն տոհմին Արշակունեաց գործք անօրէնութեան չարեացն, զոր կամակար համարձակութեամբ միշտ գործէին անամօթեալք։ Մանաւանդ յորժամ ետես և սուրբն Ներսէս զմահն անարդար [1], զոր համայն

1. Յօր. ուղղար։

նենգութեամբ։ Արշակ 'ի վերայ Գնե-
լոյ եղբօրորդւոյն իւրոյ, և չկա-
րացեալ հանդուրժել այնչափ ան-
օրէն գործոց սուրբ այրն Աստու-
ծոյ Ներսէս, զայրագնեալ սրտիւ
ըստ գրեցելոց 'ի պատմութեան եր
կրորդումն, ճառին հնգետասանե-
րորդի, ասաց, թէ Փոխանակ զի
յաճախեցեր 'ի չարիս մեծամեծս՝
առաւել քան զհայրն քո Տիրան
և քան զայլ նմանիսն քո, որք ե-
ղեն չարք և ամպարիշտք յազգէդ
Արշակունեաց, և ոչ նմանեալ նա-
խանձեցար լուսոյն և առաքինի ա-
ռանց եղելոց 'ի տոհմին քում. որոց
ժառանգեալ զպատիւ թագաւո-
րութեան հարց իւրեանց՝ առաւել
ևս փութացան լինել ժառանգա-
ւորք բարի գործոց արքայութեանն.
այլ օր քան զօր աճեցուցեալ 'ի
քեզ առանց պատկառանաց զամե-
նայն պղծագործութիւնս լցեալ կա-
տարեցեր. 'ի վերայ ամենայնի այ-
դորիկ դատար պատճառ հեղման ար-
դար արեան եղբօրորդւոյն քո Գնե-
լոյ. արդ եղիցիս դու հեղեալ յեր-

ելք իւրեւ զմ՛ուր բաւորեայ. եւ 'ի տեղի, այնպէս Յովհաննէսի՝ ան- բարեաց. Եւ կործանումն՝ որ եղեւ- բանից. Նով մարդարեին ատայոա՝ Հայոց 'ի վերայ ձեր, ընկեց այսպէս Աստուա- ծոյս զԻստեն բաժանեն. որքանք ա- րեամբ եւ կործանեամբ, եւ այլ մի- ով հաստատեամբ. Հանդերձ եւ այլ եւ ծանր եւ աշխարհն յաւելուածովք. զոր ատացեալ է որպէս բաշխանդա- ցեալքն 'ի վերայ աշխին Աստուա- ծոյս.

Խնդրեցին այնուհետեւ իշխանք նախարարքն Հայոց յարքունուստ կաթուղիկոս, եւ Թագաւորին Վռամ եւ Նորա զՍահակ զամն առաքել, ա- սելի յաղագս այդ. որ եկեալ յա- խայբն Հայոց իշխանք զամենայն- ցեր. որք եկին մեծ կրօնիւք, եկեալք ընդ նմա յԱպրեսատանէ. բայց ամե- նաթեան իշխանաց աշխարհին ամե- նեքին. եւ ոչ կէին բան ասել ամ- բիծ կրօնից, զոր եւ տեղեաց էր [1] եւ կարգեաց յամենայն եկեղեցիս Հայ-

1. Յոբ. ԿԲ.

ոյ՝ սրբոյ նահատակին Գրիգորի։
Եւ տաղակացեալ մեծամեծ տանու-
տեարքն Հայոց և ազատ սեպուհքն
և ամենայն ժողովրդոյն բազմու-
թիւնք ընդ վարս մարդկան՝ որք ե-
կեալ էին ընդ կաթուղիկոսին Բր-
քիշոյ· որ ոչ հաւատարեալ հան-
գոյն էին կանոնի և վարդապետու-
թեան հրեշտակակրօն կարգաւո-
րութեամբ սրբոյ նահատակին Գրի-
գորի, որով վարժեալ զամենեսեան
սնոյց և հաստատեաց ընդ վերին
քաղաքավարութեանն։ Առաւել ևս
սուգ առեալ հեծէին անմխիթար
սքանչելի քահանայք սուրբ եկեղե-
ցւոյ, որ յառաքելանման աջոյ նոր
հայրապետին Սահակայ ձեռնա-
դրեալք էին։ Եւ չկարացեալք հան-
դուրժել առ 'ի յերկարս այսպիսի
զեղխ և անարժան կարգի, խոտեալ
մերժեցին զԲրքիշոյն 'ի քահանայա-
պետութենէն Հայոց· ծանուցանե-
լով Թագաւորին Վռամայ, եթէ Ոչ
են կարգք սորա և վարք ըստ կար-
գի մերոյ աշխարհի ուսման· բայց
ա՛յլ այր տուր մեզ առաջնորդ ըստ

մեծամ՛ ընդ կայսրն , որ եղեալ մի-
աբանեալ՝ կայսր հաստատուն ըն-
կալաւ աւրս եկեղեցւոյ: Եւ Վա-
ղանէ մերայնոց հաստատեալ կամս
խնդրոյն նոյա , այսր նոյն զար-
ձեալ կախեալ զեա այսր , ո-
րում անուն էր Շաւմէն: Սա և
կեալ յաշխարհն Հայոց՝ կայր և ն
նուիրեալ րաս կրօնից Սրբոց , և
ամփոփ իւր կացեալ ժամանակն՝
վախճանեալ յաշխարհին Հայոց:

68. Եւ ապա ժողովեալ առաջ-
նորդաց չեացն և բանակացն կայսերա-
նեան ուխտին եկեղեցւոյ և ժողո-
վրդեալ ՚ի միասին՝ սիրով և կա-
մօք , ուղղափառն զաւրքն և զաւրաւոր
և զաւրականաւորն վերադարձաւ-
թիւն՝ զոր ասացեալ ատենի ՚ի
նաւս աւուրն Պրիսկոսի և նորին
զաւրականն , որք ուսուցին զՃշմարիտ
և զաղբերս ասացեալ առեալն յա-
զայս· զոր ընդունեն նորին երանելի
առաքելոյն ընկալան , ոչ ՚ի մարդ-
կանէ և ոչ ՚ի ձեռն մարդոյ , այլ
յաղագս եղեալ ասեալ Հոգւոյն Սր-
բոյ Քրիստոսի: Եւ զաւրհեալ ժողովեալն

միահամուռ, և դիմեալք բուռն հարկանէին զոտից սրբոյ առն Աստուծոյ Սահակայ, աղերս թախանձանաց և բազմաղէտ արտասուս արկեալ առաջի ճշմարիտ քահանայապետին և տեառն. Մեղաք յերկինս և առաջի քո. Թող մեզ մեղուցելոցս և ձևացո զքեզ ըստ օրինակի Նախնոյն քո բարեպաշտի սրբոյն Գրիգորի, որ ոչ յիշեաց զայնչափ տանջանս և զքերանս՝ զոր անցուցին ընդ նա նախնիքն մեր. այլ նմանեալ արարչին ամենեցուն՝ հատոյց փոխարէնս բարի փոխանակ չարեացն՝ զոր հասուցին 'ի վերայ նորա. և ծանուցեալ եցոյց ամենայն բանիւ հաւանելոց նմա՝ վարս երկնաթռիչս և ճանապարհս աստուածագիւտս. և ուսոյց ամենեցունց ասել հանապազ՝ Թող մեզ զպարտիս մեր, ըստ մեր թողլոյ մերոց պարտապանաց: Արդ որ եղեր դու անդադար վարդապետ մեր, զորին փառաւորութիւն արպաւորեա և դու 'ի քոյին անձնդ. զնոյն համբերութեան օրինակ, և թող մեզ զպարտիս մեր: Եւ մեք

ցանուցն և խնդրելոյն 'ի գրոյն հա-
ստատել գրել 'ի բնին հայերէնն ո-
թոյ կանխագիտութեան այլ ըր է
կեղեքեալ, յորմէ յուսուցեալ՝ ակ-
ապր գոյն անձնաւորեալ արդարութեան
արդարացեալն: Եւ մի խոստովանեալ այդ-
ալը աստուծոյ ընդ յաւակ և այս-
ձանկին մարգարէութեան այլոց և
առաքելոցն հայրապետացն Դրի-
նայեալ բանքն ազգ թու յուսալ ազնիւ
մեղքն 'ի յոյն առանձնացող կեսը ս-
ւանդեալ անձն առակ բարձրութեան
արփոյն և այս կարծեցի մեզ և
ծնեալք 'ի մեզ՝ գրախոսեալն հա-
ւատ:

Սրբոյ է աստել եւ բան ըն-
ալք նոյն խոստովանեալ մոռ-
քանութեան անձնոյն բարձր թէ
'ի բարձ աստ ալ ըն առեալ
առել և 'ի գեղեցիկ անդամն, ան-
ձնին ոչ կարելն խոստովանեցուցանել
գիտա առն կեանքն 'ի բանն խոն-
արհ հոգևորական ապաշխարութեան ի-
րեանց: Եւ խոստովանեալ պատա-
խանատուութեանն ազգ ցանկա-
ցեալ: Թէ Եւ ոչ առաջ յերկնաւոր

արարչէն և 'ի փարդապետէն Քրիստոսէ բարկանալ ումեք, որ և 'ի խաչին յաղագս խաչահանուացն աղաչէր զՀայր՝ չհամարել նոցա ըզմեղսն. որ և մեզ ցանկ բողոքէ ասելով, Օրհնեցէք զհալածիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց: Այլ քահանայանալ 'ի վերայ տիրանենգ և տիրասպան և մատնիչ ժողովրդոց՝ ոչ կարեմ. քանզի սուրբ Հոգին որ ծնաւ զմեզ վերստին սուրբ աւազանաւն՝ ժառանգակից լինել Քրիստոսի, նոյն ասաց երկնաքաղաքացի արամբն Պօղոսիւ, Թէ Մի՛ դատիք զի մի՛ դատապարտեսջիք: Եւ էթէ, Դուք որ կարողդ էք՝ զտկարութիւն տկարացն բարձէք. և դարձեալ ասէ, Թէ Իմ են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից ասէ Տէր: Արդ դուք ձեզէն գիտէք. եղէք վրէժխնդիր Թագաւորին ձերոյ գործոց, և զայրացեալք նմա՝ զսուրբ հաւատ ուխտին մերոյ մատնեալ՝ ծախու ետուք անիրաւ անօրինացն: Ի՞ւ զիս արդեօք ջանայցէք մխիթարել՝ և կամ ո՞ւմ թախանձեցուցանէք զիս

քահանայանալ՝ որ զվիրաւոր ոչխար հօտին Քրիստոսի տեսանեմ, ոչ պատեալ և ձիթով և գինով օծեալ զվէրսն և եդեալ 'ի վերայ գրաստու և տարեալ 'ի պանդոկն, այլ յօշեալ յանխնայ և առաջի գիշակեր գազանաց ընկեցեալ յօշոտումն։ Երթայք յինէն 'ի բաց, և թողուք ինձ ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց, զոր տեսանեմ աչօք մնացս 'ի զօրութենէ վերին ցուցակութեանն. մի՛ բռնադատէք մխիթարել զիս 'ի վերայ բեկմանն ժողովրդեան իմոյ։ Վասն զի զանգս ապէտս այսմիկ յառաջ քան զձեռնադրելն զիս յեպիսկոպոսութիւն եցոյց ինձ վերին կանխասացութին, զխաւերութիւն յանուրջս՝ ըստ օրինակի մարգարէական տեսլեանն, որ ցուցաւ սուրբ նահապետին Գրիգորի, զխաւերութիւն իրաց առ 'ի յապայ եղելոց։ Զոր և ձեզ պատմեմ այսօր բռնադատեալս առ նեղել սրտի իմոյ, և ցուցանեմ անդէն, որպէս և սուրբ առաքեալն Աստուածոյ Պօղոս, որ յաղագս սուտ առա-

քեղոյն և անօրէն մշակացն գրեաց պարծելով առ Կորնթացիսն, զիւր ճգնութեանցն զհանդէսն: Արդ ունկնդիր լերուք ինձ մտադիւրութե՟ ամենայն բազմութիւնք ժողովրդոց և պատմեցից ձեզ:

ժե. Յաւաղ քան զամս բազումս խորհուրդք անմխիթարք նեղէին զիս, անդադար զմտաւ ածելով և աղաչելով զԲարձրեալն՝ շնորհել ինձ որու որդի որպէս և նախնեացն իմոց, որք յառաջ քան զիս էին ամուսնացեալք՝ յաղագս որդեծնութեան: Եւ արդ վասն զի մատակարարութիւն հզօրին առ իւրաքանչիւր ոք արդար է, և ճանաչօղ առաւել քան եթէ զոր մեքն խնդրեմք և խորհիմք. և էի ես 'ի մեծի հինգշաբաթոջն 'ի զատկի աղուհացիցն 'ի հանդէսն. հաղորդեալ 'ի ժամ երեկոյին պաշտամանն՝ սրբոյ և մեղաքաւիչ խորհրդոց կենարարին, ճաշակեալ այլ բնաւ ուտելի ինչ ոչ՝ բայց հաց և ջուր և աղ, ըստ կանոնաց մեծի և սուրբ ժողովոյն երեք հարիւր ութ և տասանցն, որք

'ի Նիկիացւոց քաղաքին այսպէս կանոնադրեալ հաստատեցին, զորոց կանոնադրութիւն կնքեալ սուրբ Հոգւին սահմանեաց. և կատարեալ կանոն յերկարման առաջին դուբուղայիցն, և դասք պաշտօնէիցն ընդհատելն ծանրնկրհմամբ 'ի սաստկութէ բազմօրեայ աքնութեանցն՝ որպէս կիսամեռք եղեն. որոց զաւուրս քառասնորդացն ուժգին պահօք և անդադար աղօթիւք զցայգ և զցերեկ հանեալ էր. և մանաւանդ 'ի մեծի շաբաթուն առաւել ևս յաւելուածով զնոյնս աճեցուցանել փութային, ուշադրեալք ուրախալից[1] վաստակով՝ հասանել վարձուցըն հատուցման: Եւ լոյս ճրագացն և կանթեղացն բորբոքեալ տոչորէր. և ընթերցողն կամաւ յերկարէր ըղկարդացմունսն՝ յաղագս սակաւ մի առնլոյ ոգի և բաւելոյ պաշտօնէիցն առաջարկութեան կանոնին. մնային և ժողովրդոցն բազմութեան ժողովելոյ ըստ սովորութեանն՝ 'ի պաշ-

1. Այլ օր. աղօթից:

տօն գիշերոյն. քանզի յորդոր կա-
մաւորութեամբն փափաքէր իւրա-
քանչիւր ոք, այր և կին առհասա-
րակ, ժամանել արթնութեամբ ան-
ձին փրկութեան: Եւ ես նստէի
մերձ առ սեղանն Աստուծոյ 'ի սուրբ
եկեղեցւոջն Վաղարշապատ քա-
ղաքի:

Եւ ահա յանկարծակի բացաւ
հաստատութիւնն վերին, ընդ որ
ծագեալ լոյսն սաստիկ, և ելից զա-
մենայն երկիր: Եւ կանգնեալ երե-
ւեցաւ ինձ յերկրի բեմ չորեքկուսի
ամպեղէն, որոյ բարձրութիւնն հա-
սանէր մինչև յերկինս, և լայնու-
թիւնն տարածեալ ընդ զամենայն
երկիր: Եւ 'ի վերայ բեմին երևէր
տետրասկել յոսկւոյ սրբոյ՝ խորա-
նարդ, ըստ արժանի սպասաւորու-
թեան տեառն. ծածկեալ յոյժ բա-
րակ կտաւով սպիտակափայլ գու-
նով: Եւ 'ի վերայ խորանաձև ծած-
կութեանն յայտնապէս նշան տէ-
րունական խաչին երևէր. որոյ երե-
ւելութիւնն՝ ոչ նիւթեղէն, այլ լու-
սեղէն ցուցանիւր: Եւ յանկարծա-

կը եղև ճշմին խաղաղական օդոյ, և բազում փեղկ մի ծածկութի կառա-ւցին. ընդ որ հայեցեալ անտի, և ահա կայր 'ի մէջոյ ընձմին ակզան շրջբերեալ ակնատեսակ 'ի բարձրա-գունին ականց դրաստաւականաց ընդ-եռաղեալ. Եւ 'ի մէջոյ ականցն կայր հաց մի սուրբ և ոսկեղէն մի խաղաղ, բաս դրաստաւականն խոր-հրդոց երկնաւոր փրկութեան. Եւ մէջն սա սուրբ խորհրդոցն երևէր ծառ մի զմիթենի վառաւոր դալա-րիլ յոյժ, զոր ոչ կարէր առնել զնոսն բարձրութեան և լայնու-թեան, որոյ բերքն էր բազմադարդ և սաղք, և ամսոյն և զեղեցկու-թիւնն անդադար՝ և զգաստէլի. Եւ որդեակ ջուր սուրբ զմիթենայն 'ի խնդրոց կայր՝ երկրի ձևոյ ան-անձին. որոց երկի սուրբ մաքուր և հաստատեալ դաշտաց երևէին, և զարդեւրն 'ի նոյանէն որպէս կետ-բաշխին և նուագարանաց բաս եր-կոյնուհաւատութեան երկին երևէին. Եւ պտուղք շարեցանց սաւոյն ոչ ինչ բնաւ էին նմանք և կամ՝ հա-

ւասար պտղաբերութեան[1] պտղա-
բոյծ առողջութեանն այլ պտղոյ ձի-
թենւոյն. այլ նուազք առաւել
թուով և փոխ առողջութեամբ, որ-
պէս թէ ծնկեալք էին:

Եւ ընդ աջեկէ բեմին աթոռ մի
բարձր չորեքկուսի ծովագոյն սաւ-
նակերպ, և ծածկեալ թանձր կը-
տաւով թխագունիւ: Եւ վերա-
ցեալ կտաւն 'ի շնչմանէ քաղցր օ-
դոյն եկելոյ, տեսի և ահա սկաւեղ
արծաթի մեծ 'ի վերայ աթոռոյն:
Եւ 'ի վերայ սկաւեղն կայր նափորտ
մի բեհեզեայ ծալեալ և եդեալ. և
առ նմին գունդ մի ոսկի բոլոր, և
մագաղաթ հաստուածաձև չորեք-
կուսի, գրեալ 'ի սկզբանն կարգս
ինչ սակաւ՝ ոսկետեսիլ գրով սքան-
չելապէս, իբր թէ ձեռամբ դպրի
ճարտարի. և 'ի միջոյ կողման մա-
գաղաթին հեռի յոսկեգիր կար-
գացն՝ երևէին այլ կարգք ինչ եղ-
ծեալք ջնջագիրք, որոց ոչինչ բնաւ
երևէր տեսիլ գրոյն և կամ կեր-

1. Այլ օր. Բազմաբերութեան:

պարան։ Եւ հուսկ յեղր մոգաղու-
թին հեռի 'ի ջնջագիր կարգացն՝
գործեալ տեսանել այլ եւ կարգ մի
և կէս կարգի, գրեալ ոսկեգիր գրով
առաւել սքանչելապէս, ըստ տեսոյ
առաջին կարգացն գրելոց 'ի սկըզ-
բանն մոգաղաթին։ Եւ կիսագիր
կարգին մինչև ցմիջոց գրոյն և ևս
առաւելագոյն էր ոսկւով, և այն
ցկատարումն՝ կարմրագեղով երե-
ւէր։ Եւ կային շուրջ զծնօտիւք
սկուտեղն անթիւ բազմութիւն ոս-
կայոց արուաց, այլ սակաւ և ի-
գաց· ամենեքեան պայծառացեալք
լուսազգեցիկք էին։ Բայց Ճառա-
գայթ փայլման պատմուճանաց նո-
ցա՝ էր որ կարմրագոյն արձակէին
նշոյլս, և էր որ այլ երփներփն, և
գոյնս ազգի ազգիս։ Եւ դէմք ամե-
նեցուն 'ի սուրբ սեղանն հայէին,
չդարձուցեալ բնաւ և ոչ ուրեք
զաչս իւրեանց 'ի խորհրդոյն փըր-
կութեան։

Եւ սկսաւ յանկարծակի սաստ-
կագէս դղըրդմամբ շարժել աթոռն։
Եւ զմանկտին զոր տեսանէի 'ի տես

տղայութեան, առժամոյն վաղվաղակի փոփոխեալս 'ի հասակ երիտասարդութեան՝ կատարեալք լինէին. և եղեալ թևաշպէցինք 'ի վեր 'ի սուրբ սեղանն, որ էր ընդելուզեալ 'ի բազմագունի ականց, թռուցեալ բնակէին[1]: Եւ համբարձեալ սուրբ սեղանն հանդերձ նոքօք 'ի վեր քան զբարձութիւն հաստատութեանն երկնից ծածկէր: Եւ այսպէս եղեալ աներևոյթ տեսիլն ամփոփէր. և ես 'ի մեծ զարհուրումն ընկղմեալ ափշէի:

Եւ ահա յանկարծակի կերպարան մարդոյ երևէր ինձ յերկնից, այր լուսեղէն. որոյ տեսութիւն սաստկութեան լուսոյն մռայլեցուցեալ ծածկէր զարեգականն լոյս: Եւ սլացեալ այրն հասանէր ուր ես կայի. և իմ առաւել ևս հիացմամբ ափշեալ 'ի փայլակնացայտ երևմանէ առնն, անկայ վաղվաղակի դողալով 'ի վերայ երեսաց իմոց յեր-

1. Աստանօր նոր օրինակք յաւելուն. Եւ զսուրբ Աստուածն Երգէին:

կէր. և ՚նորա բուռն հարեալ կանգ-՚նեաց զիս, և հաստատեալ կացոյց ՚ի վերայ ոտից իմոց. և ասէ ցիս. Քաջալերեաց, զօրացիր և մի երկնչիր. այլ հաստատեա զմիտս քո յա-նուն հզօրին՝ որ արար զամենայն երևելիս և աներևոյթս, և շնորհեաց եցոյց քեզ զմեծ խորհուրդ յաւա-ջանես արարչութեան իւրոյ: Եւ իմ՝ ուշաբերեալ զօրացայ ՚ի բանէ ՚նորա և կանգնեալ կացի ՚ի վերայ ոտից իմոց: Եւ ասէ ցիս. Վասն էր ես արարած, և կամ ընդէր զար-մանք ՚նմանութեան արարչին ըզ-միտս քո և զյատակ խորհրդոց քոց: Վասն զի անդխառական խորհրդովք յածեցուցեալ զմիտդ՝ խառնէիր վասն չլինելոյ քեզ արու արդի, որ քաղծանութ էիր կամաց հզօրին՝ որ գիտելութեամբ բաշխէ զիւրա-քանչիւր օգուտ, և ոչ զգայու-թեամբ խափանեալ արդերու յա-մէքն զարժանն. և այդ զթագաւ՚ի քեզ Բարձրեալն վասն սիրելոյ ըզ-քեզ, կամեցաւ դարձուցանել ՚ի քէն զդդախն մտածութիւնս: Եւ

մխիթարեաց զքեզ աւետեամբք այդ-
ուիկ, որ ցուցաւ քեզ յայտնու-
թիւն մեծ, ոչ միայն յառաջիկայս,
այլ և առ 'ի յապա ամենայն իրաց
որ լինելոց են մինչ 'ի վախճան ժա-
մանակի, ծանոյց քեզ և ամենայն
հաւատացելոց 'ի բան նորա, որպէս
ճշմարիտ նախնոյն քում առն Ա-
ստուծոյ սրբոյն Գրիգորի․ իսկ քեզ
մինչ 'ի կատարած աշխարհի որ ինչ
միանգամ լինելոց է՝ եցոյց զամե-
նայն։ Եւ արդ՝ լո՛ւր և պատմեցից
քեզ զմեկնութիւն մեծի յայտնու-
թեանդ, որպէս ինձ հրամայեցաւ
'ի վերին զօրութենէն ծանուցանել
քեզ զամենայն․ և դու ունկնդիր
եղեալ բազում զգուշութեամբ,
գրեա 'ի տախտակս սրտի քո անմո-
ռաց․ զոր և 'ի մագաղաթի դրոշմեալ
թողցես հաւատացեալ ժողովրդոց
զգուշութիւն անողալ՝ մինչ 'ի վախ-
ճան ժամանակի։

Զբանս հաստատութեան երկ-
նից զոր տեսեր՝ և զտարածել լու-
սոյն սաստիկ ընդ ամենայն երեսս
երկրի․ քանզի ահա 'ի գալստենէ

կենարարի Որդւոյն Աստուծոյ բացեալ է դուռն շնորհի ողորմութե՛ նորա առ ամենեսեան, որ սիրեն զնա և պահեն[1] զբան հրամանի նորա, յորս ծագեալ լուսաւորէ լոյս փառաց վարդապետութեան նորա։ Եւ բեմն չորեքկուսի կանգնեալ որ երևեցաւ քեզ՝ բարձր յերկրէ մինչև յերկինս, հաւատն ճշմարտութեան է, որով վերանան արդարքն ՚ի ծանրութենէ աշխարհիս կենաց ՚ի թեթևութիւն երկնից բնակութեանն։ Եւ զի ամպեղէն գունով երևեցաւ բեմն. վասն զի որ վերացաւ[2] ամպով՝ նոյն գալոց է վերացուցանել ընդ իւր զարդարս, ուր բազում են և անթիւ օթևանք ՚ի տան արքայութեանն Հօր. զոր և դու տեղեկացեալ ուսար ՚ի սուրբ Հոգւոյն, որ խօսէր ընտիր առաքե՛ Պօղոսիւ, թէ Ամպովք յափշտակիմք ընդ առաջ Տեառն՝ յօդս։ Եւ տեսարանակերպն ոսկի որ ՚ի վերայ բե-

1. Այլ օր. խափանեն։
2. Այլ օր. երևեցան։

մին, զորով էր արկեալ մաքուր կը-
տաւն բարակ՝ որով ծածկեալ էր
սուրբ սեղանն և որ 'ի նմա խոր-
հուրդն, գիտեա և ծանիր, զի ծա-
ծուկ և անյայտ է խորհուրդ աս-
տուածային գիտութեն պատուա-
կանութեամբ և մաքրութեամբ,
ըստ պատուականութեան մաքուր
ոսկոյն և լուսափայլ մաքրութեան
կտաւոյն, յորոյ վերայ կանգնեալ
նշան կենդանացուցիչ խաչին՝ որով
երևէր, կենդանացեալ կանգնեցան
ամենայն արարածք գլորեալք մե-
ղօք. և դարձեալ՝ զի նախ խաչն
երևի 'ի գալստեան Քրիստոսի, և
ապա յայտնի խորհուրդ դատաս-
տանին և հատուցման ըստ իւրա-
քանչիւր գործոց։
Եւ զի եղեալ օդ քաղցրաշունչ,
որ եբաց զմասն ինչ կտաւոյն, իմա
զի ցուցաւ քեզ 'ի սուրբ Հոգւոյն
քաղցր խաղացմունք, որ յայտնէ
սրբոց իւրոց զխորհուրդ ծածկեալ
աստուածութեան իւրոյ։ Ընդ որով
կայր սեղան սկի 'ի պատուական
ականց ընդելուզեալ. որոց Երրոր-

գութեանն ծանուցանէ միանակա-
նութիւն. որ զկարս և զճգնութիւն
արդարոցն որպէս զպատուական
ականց զանազանութն առ ինքեան
տպաւորեալ զուարձանայ, որք ըզ-
ճաշակ կենաց զմարմին և զարիւն
Փրկչին արժանապէս ճշմարտու-
թեամբ՝ բազմեալք ընդ նմա՝ ճաշա-
կեն 'ի սուրբ[1] սեղանոյն. ըստ երե-
ւելոյ քեզ հացն և ողկոյզն 'ի վերայ
սեղանոյն, օրինակ մարմնոյ և ա-
րեան կենարար չարչարանացն ծա-
նուցաւ:

Իսկ երևումն քեզ սքանչելատե-
սիլ ձիթենւոյն, որ էր հուպ առ
տէրունեան խորհուրդն, բարձր և
վարսաւոր բազմաբեր պտղոլից,
զաուրս և զողորմութիւն և զսէր.
մարդկան որ առ միմեանս՝ եցոյց
քեզ ընդունողն: Քանզի մօտ և ա-
ռաջին և պատուական աստուա-
ծութեանն է աղքատսիրութե յա-
մենայն բարեգործութիւնս, որով
և առաջին արդարքն ընտիրք երևե-

1. Այլ օր. պատուական:

ցան Աբրահամ, Իսահակ և Յա-
կոբ[1], առանց որոյ և կուսանացն
արհամարհեալ վաստակք կուսու-
թեան՝ արտաքոյ հարսանեացն ըն-
կեցան: Սովաւ ճանաչի յանձինս
մարդկան կնիք քարոզութեանն
Քրիստոսի, որ ասացն, թէ Յայսմ
ծանիցեն ամենեքեան զձեզ թէ իմ
աշակերտք էք, եթէ սիրիցէք զմի-
մեանս. և մանաւանդ որ առաւելա-
պէս զուարթամտութեամբ կամաւ
կատարեաց զսիրոյն պատուիրան՝
ոչ միայն յաղքատս, այլ և յընկերս
և յեղբարս, և առ ամենեսեան՝ ո-
րով հաստատի խաղաղութիւն աշ-
խարհի. և սէրն փառաց բնակէ 'ի
մէջ նոցա, շնորհելով զհանդիստ և
զառատաբար պտղաբերութիւն եր-
կրի, որպէս տեսանէիր բարձր զձի-
թենին և լիապտուղ և վարսաւոր:
Եւ սոքա չորք ձիթենեայն որ 'ի
խոնարհ կողմ երկրի ձգտեալ երե-
ւելով, երեք սոքա հաստատակեալք

1. Հին օր. փոխանակ սոցին առէ. Յոբ և Կոստանդնուպոլսոյ և նմանեաց նոյա:

ջախել, և էին տատանել[1] միաթիւք պաղանք, և գետորդն 'ի նոսա՝ զոր կլափչափին ըստ հասարակութեան երկին և պակասաւոր ըստ պաղաբերութեանն ամսոց, յորոց չորեցունց պաղուք փոխանք էին և թաամք, և բերքն պակասք և անմանք քան զայլ տասաքասեակ պտուղս ձիթենւոյն: Արդ ամփոփեա զունդկէնդրութիւն մտաց քոց, լուր և տեսցես զոր ինչ սահմանեաց Բարձրեալն յայտնեալ մինչև 'ի փոխման աշխարհիս՝ երեք տասներեակք ամաց և կէս տասներեկի համառօտեցի 'ի վերայ ամենայն աշխարհի, մինչև յերևումն սկզբոյն անապատի, զոր Դանիէլ մարգարէի ասացեալ է նը Հոգւոյն. և լինին ամքս յայտնապէս թուով ամք երեք հարիւր յիսուն, ըստ միաւոյթ պաղոց երից ամսոցն և կիսոյն: Եւ զի տեսեր զղաւաղ ամսոյն թառամն և ծնկեալս և աչինչ բնաւ նմանս այլ պտղոցն որ 'ի ձիթենւոյն էին. տես ճշգրտապէս և

1. Հին օր. տատատանել:

ծանիր, զի բարձեալ է սէր և արդարութիւն յամենայն մարդոց. ոչ՛ք ստութեամբ և ոչ ստուգութեամբ կարծեցուցանեն զանձինս սիրունս և պատուիրանապահս. և այն յայտնի գրեալ կայ և կնքեալ 'ի գիտութեան ամենակալին Աստուծոյ, որ ների երկայնմտութեամբ և հատուցանէ անաչառութեամբ [1]:

Եւ ընդ ահեկէ բեմին, որ ցուցաքեզ անթառ չորեքկուսի ծովագոյն ստանակերպ, զնստուածս դաշու քահանայութեանն և թագաւորութեն ցուցանէ, զոր արդարև Բանն Աստուած հաստատէ: Յորոյ վերայ կայր սպառին արծաթի. քանզի իբրև զարծաթ ընտիր և փորձ լուսափայլ՝ յամենայն ազգս ընդունելոյ սփռեալ տարածեցաւ բանն. զոր և սաղմոսերգն վարդապետէ ասելով Հոգւոյն, յասելն թէ բանք Տեառն որպէս զարծաթ ընտրեալ և փորձեալ յերկրէ. և զասելն յերկրէ՝ գիտասցես եթէ զերկուսն որ-

1. Հին օր. անաչառ առատութեամբ:

գոյն Աստուծոյ մարմնով 'ի սուրբ կուսէն՝ յայտ առնէ մարգարէն: Եւ զի երևեցաւ քեզ ծովացոյն սաստանման տեսիլ ամպոյն, նշանակեալ ցուցանէ զծփումն[1] ալէկոծութեան աշխարհիս Հայոց: Քանզի և թխագոյն թանձր կապուտոյն ծածկուածն՝ զօրինակ բերէ զթանձրամած ագոյն[2] որ ունելոց է զաշխարհս ամենայն. վասն զի տեսիլդ 'ի վախճան է: Եւ նափորան բեհեզեայ՝ զոր տեսանէիր ծալեալ և եդեալ 'ի վերայ սկտեղն, և գունդն ոսկի որ կայր մերձ նափորտանն, նշանակէ միոյն զքահանայութիւնն, և միւսն զթագաւորութիւնն: Եւ զի ոչ ոք էր արկեալ զիւրեաւ զնափորան, և ոչ այն ոք էր որ զգունդն ունէր 'ի ձեռին, լուր ստուգապէս. զի լռեսցէ մերձ ընդ մերձ թագաւորութի̅ յազգէդ Արշակունեաց, և քահանայութիւն 'ի ցեղէ արժանաւոր քահանայապետին Գրիգորի:

1. Հին օր. ալէկոծումն.
2. Նոյն. ամպոյն:

Եւ մագաղաթն հաստածանէ՝ որ ցուցաւ քեզ գրեալ 'ի սկզբանն կարգս ինչ ոսկեղէն գրով, զձեռնադրութիւն արանց սրբոց եցոյց քեզ շնորհք Հոգւոյն սրբոյ, որք 'ի զաւակէ երանելոյն[1] Գրիգորի յաջորդէն արժանապէս զաթոռ քահանայապետութեան, Նոքա են որք ընտիրք գրեալք ոսկետեսիլ գրով 'ի դպրութիւն կենաց: Եւ զի երևեցաւ 'ի միջոյ կողմն[2] մագաղաթին՝ հեռի յոսկեգիր կարգացն՝ կարգք ինչ խանգարեալք և ջնջագիրք, գիտեա զի նստելոց են քահանայապետք ոմանք յաթոռ սրբոյն Գրիգորի, որ ոչ ըստ հրամանի սրբոց առաքելոցն և ոչ ըստ կանոնի պատուական ծեր ժողովոյն երեքհարիւր ութուտասանիցն լինին ձեռնադրեալք յերկնաւոր պաշտօնն, այլ ըստ փառաց աշխարհիս ձգտին 'ի պատիւն յանդգնութեամբ, որք են արծաթասէրք առաւել քան աստուածա-

1. Հին օր. ցանկալոյն:
2. Նոյն. յաջոյ կողման:

սէրք։ Եւ վասն զի խոստան և օտար է քահանայապետութեանն և ոչ ըստ հաճոյից Բարձրելոյն, ջնջեալ են նոքա 'ի դպրութենէ երկնից բարութենէն, տալով դատաստան գեհենին այրմամբ զանձանց և զժողովրդեանն կորստեան։ Եւ այլ կարգն և միւս ևս կէս կարգի՝ որ երևեցաւ քեզ գրեալ սքանչելապէս ոսկի գրով 'ի ստորին եզեր մագաղաթին, ծանիր հաւաստեաւ՝ զի մերձ յերևումն սրբոյն անապատի դարձեալ յառնէ Թագաւոր յազգէդ Արշակունեաց, և նորոգի աթոռ հայրապետութեան 'ի շառաւիղէ սրբոյն Գրիգորի։ Վասն զի ոչ էին արհամարհեալք և ընկեցեալք յերկիր 'ի կոխումն, այլ յայտական երևմամբ կայր գունդն, և ծաղեալ պատուականութեամբ ցուցաւ քեզ նախորան, որ ևս առաւել հաստատապէս ցուցաւ քեզ. և ծանոյց զայս վերին ազդեցութին սքանչելատեսիլ ոսկեգիր կարգուն և կարգակիսաւն, որ 'ի ժամանակս գոռոզացելոյ թշնամւոյն

արդարութեան նստցի քահանայապետ արդար, 'ի ճշմարիտ վիճակէ ցեղին սրբոյն Գրիգորի. և քահանայացեալ առաջինն կատարէ զաւուրս իւր, կրեալ ճգնութիւնս բազումս 'ի սուտ առաքելոց իշխանին կորստեան, և վախճանի խաղաղական հանգստիւ և ոչ սրով: Եւ միւս զաւակ նորին յաջորդեալ զաթոռ քահանայապետութեն՝ և բազում և ազգի ազգի համբերեալ քերանաց և գանից և սովոյ և հալածանաց և զառն նեղութեան՝ ժամանակս բազումս, և յանօրէն իշխանին դահճացն սրով ընկալցի զվախճանն մարտիրոսութեան: Այն զի ցուցաւ քեզ 'ի կարգին մասն մի գրելոցն կարմրագեղով, ստուգեալ հաւատարմութեամբ դաւանեաց զկատարումն մարտիրոսութեանն, որ դիպելոց է սրբոցն:

Եւ որ երևեցաւ քեզ բազմութիւնք ողայոց շուրջ կալով 'ի վերայ արծաթ սկտեղն, զուարթատեսիկ ցնծալից ուրախութեամբ. զի ահա յարգանդէ զաւակիդ՝ որ ու-

ւաւ քեզ յարարչէն, ելցեն բազում շառաւիղք. որք ընտիրք զօրութեամբ. ընդ որս միաբանեալք և այլ բազմութիւնք լաւ արանց յազգէ նախարարացդ Հայոց, որք զօրացեալք սուրբ բանիւն Աստուծոյ և զյարուցմունս Թագաւորաց և զապառնալիս իշխանաց առ ոչինչ համարեալ արհամարհեացեն, միացուցեալ զանձինս ընդ յոյսն բաղձալի երկնաւոր կոչմանն, չհայելով 'ի մեծութիւնս անոտիս և ոչ 'ի փառս առժամայնս. ընդ որոյ վաճառեալ ոմանց զփառս անեղծին Աստուծոյ՝ ընդ անօտի և ապականացու կենաց աշխարհիս, ուրացողք լինին. վասն զի մօտ է առ դուրս վաճառ Թուլացելոցն 'ի կորուստ, և հասեալ կայ հուպ օգնութիւն զօրացելոցն 'ի փրկութիւն: Յորս և դու հայեցեալ շնորհի ակամբ տեսեր շուրջ զաստուածային սեղանովն պարելով[1] զոր-

1. Հին օր. զաստուածային բանիւն պատեալ:

ղայն, չհայելով ընդու 'ի սայթաք-
մունս անտի հեթանոսական պաշ-
տամանն. յորոց ոմանք կատարե-
լութեան հասեալք՝ 'մարտիրոսա-
կան պսակին լինին արժանիք: Եւ
այլք յարանց բազմաց, և ոչ միայն
յարանց, այլ գտանին և 'ի կանանց,
որք թէպէտ և ոչ սրով, այլ 'ի շնոր-
հացն սուրբ Հոգւոյն զօրացեալք՝ բա-
զում բարեգործութեամբք կատա-
րին: Որպէս երևէին քեզ լուսա-
փայլ նշոյլք արձակեալք 'ի մանկը-
տւոյն. յորոց կարմրագոյն փայլ-
մամբ երփներ գոյնն՝ զկատարելոցն
արեամբն ցուցանէ գուշակելով ըզ-
նահատակութիւն. և զայլոցն այլա-
այլս ճառագայթիւք ցուցանէր զշո-
ղումն, որպէս և զբազմափայլ գոյնս
լուսաւորութեան առաքինի վար-
գուց. վասն զի բազումք են և անթիւ
ճգնութիւն և վաստակք արանց ար-
գարոց և սրբոց:

Եւ վասն զի շարժեցաւ սաստիկ
դղրդմամբ աթոռն զոր տեսեր, և
որ երբեմն առաջի քեզ երևէին՝
յաճումն կատարելութեան բոլոն-

գանեալք՝ յերկրէ յերկինս Թռուցեալ համբարձայքն, բովանդակապէս քեզ զերկրիս կենցաղս արգաբոցն և 'ի յերկինս զլինելոյ նոցա զհրեշտականման փոփոխումն եցոյց պարգևատուդ բարեաց. Քանզի երրև զողոյս յաշխարհի կացին առդարքն անմեղութեամբ, չդարձուցանելով և ոչ ուրեք զհայեցուածս մտաց իւրեանց՝ 'ի զբաղմունս նանրութեան, այլ ուշադրեալք[1] 'ի հրաւիրումն երկնաւոր ուրախութեանն և եմ հայլին: Քանզի բազում և խիստ դղորդմունք յայսմհետէ լինելոց են յաշխարհի, յարուցմունք Թագաւորաց 'ի վերայ միմեանց, սովք և սասանութիւնք և բազում նեղութիւնք[2], որք զմտաւոր զարուստ որդւոյն կորստեան նշանակեն: Որ եկեալ նստիցի ըստ գրեցելոյն՝ 'ի տեղւոջն սրբութեան, ցուցանելով զինքն Աստուած. որ հաշի և մաշի 'ի վերին զօրութենէն.

1. Հին. օր. ուշադրեալք:
2. Նմն. [illegible]:

զոր տէր Յիսուս սատակեսցէ հո֊
գւով բերանոյ իւրոյ։ Եւ յայնժամ
կատարեալ վարուք առաքինութե֊
թւչին արդարքն 'ի յաւիտենից
յարկսն, և այնպէս յամենայն ժամ
ընդ Տեառն լինիցին։ Եւ ապա յայս֊
նապէս կատարի առ նոսա բանն
տէրունեան բարբառոյն որ ասէ, թէ
Ուր եսն եմ՝ անդ և պաշտօնեայն
իմ եղիցի։ Եւ դու կնքեա զտեսիլդ
որ ցուցաւ քեզ թուով յայտնու֊
թիւն 'ի բարձանց. քանզի ոչ վրի֊
պեսցի այտի բան մի՝ մինչև կատա֊
րեսցի ամենայն։

ԺԸ. Եւ ես խբրև 'ի քնոյ զարթու֊
ցեալ 'ի տեսլենէն՝ զոր եցոյց ինձ
Բարձրեալն, որպէս արթնութեամբ
յայտնապէս, և 'ի զարմացման մեծի
եղեալ՝ փառաւորեցի զմարդասէրն
Աստուած, որ արժանի արար զան֊
արժանութիւնս իմ այսպիսի մեծ
և ահաւոր տեսչութեան։ Եւ լռեալ
դադարեցի 'ի յայտնելոյ զայս ումեք
մինչև ցայսօր ժամանակի։ Եւ արդ
պատմեցի ձեզ ոչ միայն առ նեղեալ
սրտիս, այլ և թաքուցանել երկտ֊

ցեալ. զի մի՛ երբեք զլացօղ պատուհա-
սեալ դատեցայց 'ի ցուցողէ յայտ-
նութեանս այսորիկ. որ և գրով իսկ
հրամայեաց ինձ զաւանդս զայս
թողուլ աշխարհի։

Եւ լուեալ զայս ամենայն խօսս
բազմութեան աւագանւոյն Հայոց՝
ատենուտերացն և սեպհացն և միա-
համուռ ժողովրդոցն բազմութեան՝
'ի սուրբ հայրապետէն Սահակայ,
յարտասուս հարեալ զարհուրե-
ցան։ Եւ այնուհետև ոչ ոք ինչ իշ-
խէր յաղագս այսպիսի բանից ա-
սել ինչ ընդ սրբոյն և կամ ճառել։

Եւ յայնմհետէ ամփոփեալ զին-
քըն առաքինւոյն յամենայն աշխար-
հածուփ զբօսանաց, աղօթից միայն
պարապէր և վարդապետութեան.
վասն զի բազումք յեպիսկոպոսաց
և յայլոց 'ի պատուական քահա-
նայից ոչ երբեք ժուժէին տեւել և
մեկուսանալ 'ի մշտաբուղխ աղբերէ
վարդապետութեան սրբոյն, ուր
ուրեք և դիպէր, 'ի յոստանի և կամ
'ի հովս։ Եւ կացեալ ամս բազումս,
և հասեալ 'ի յերկար ծերութիւն՝

վախճանեցաւ խաղաղական հանգըստիւ 'ի գաւառին Բագրեւանդայ, 'ի գիւղն որ անուանեալ կոչի Բլուր, 'ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի որդւոյ Վռամայ Թագաւորին Պարսից, յամսեանն նաւասարդի, որ օր երեսուն էր ամսոյն, յերրորդ[1] ժամու աւուրն. որ և զօր ծննդեան սրբոյն 'ի սոյգ գիտողաց և 'ի պատմութենէ երանելոյ առն Կորեան՝ հաստատեալ գրեցաք լինել և նոյն օր ծննդեան սրբոյն, 'ի նմին ամսեան:

Եւ վասն զի ոչ գոյր իւր արու որդի՝ բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Համազասպայ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետի, որ ծնաւ 'ի Համազասպայ երիս արու որդիս, զսուրբն Վարդան և զսուրբն Հմայեակ և զերանելին Համազասպեան. որոց ետ և կնքեաց սուրբ այրն Աստուծոյ Սահակ զստացուածս գեօղից իւրոց և ագարակաց, և որ ինչ

1. Հին. օր. մի, յերկրորդ:

միանգամ էր իւր՝ եւ նոցա 'ի ժառանգութիւն և զաւակի նոցա մինչև ցյաւիտեան: Եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա օրհնութեամբ բազմաւ. և պատուիրեաց նոցա պահել զվարդապետութիւն պատուիրանի սրբոյն Գրիգորի, զոր ուսոյց և աւանդեաց Ճշմարտութեամբ ամենայն աշխարհիս Հայոց, ծառայել և երկիր պագանել միումն միայնոյ Ճշմարտին Աստուծոյ տեառըն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Որոց առեալ զտենչալի նշխարս սրբոյն՝ բազմութեամբ քահանայից և ազատաց, տարան 'ի գաւառն Տարօնոյ 'ի բնիկ գիւղն իւր սեփհական՝ յանուանեալն Աշտիշատ. և անդ կազմեալ հանգստարան սրբոյն, պատեցին զպարկեշտ մարմին արդարոյն ըստ արժանի կայանից Ճշմարտին: Որ և շինեալ եկեղեցի մեծապայծառ և վկայարան սրբոյն՝ զարդարեցին պատուական և մեծագին սպասուք. հիմնացուցեալ կանգնեցին 'ի տեղւոջն վանս բազ-

մութեան պաշտօնէից · կարգեալ դարմանս անպակաս պտղոց 'ի հանգիստ առաւելեալ եղբայրութեն · ժողովս տարևորականս աշխարհաժողովս յորդոր բազմութեամբ հաստատեցին 'ի տեղւոջն, որ ըստ ժամանակի բազմամբոխ ժողովրդօք կամաւոր յօժարութեամբ՝ ազատք և քահանայք գաւառին, այլ և կարի յոյժ հեռաւոր տեղեաց դիմեալք[1] յօր կարգադրութեան նորա տօնեն։ Որ և բազում օգնականութիւնս առողջութեան ըստ իւրաքանչիւր ախտից շահին 'ի նշխարաց սրբոյն, և ուրախալից սրտիւ դառնան[2] 'ի բընակութիւնս իւրաքանչիւր։

ԺԹ · Եւ յետ վեց ամսոյ կատարման նորին տարւոյ հանգստեան սրբոյն Սահակայ՝ վախճանեցաւ երանելին Մաշտոց 'ի Վաղարշապատ քաղաքի, զոր և Նոր-քաղաք անուանեն, յերեքտասաներորդի աւուր ամսոյն մեհեկանի · զոր առեալ

1. Հին օր · դիմեալ։
2. Յօր · դառնային։

իշխանին Ամատունեաց Վահանայ՝ զմարմին առաքինւոյն՝ տարաւ յիւր ՚ի գեօղն, որ անուանեալ կոչի Օշական։ Եւ յոյժ մեծարանօք դնէր երանելւոյն կազմեալ, տօն յիշատակի առնէին ամենափոյթ պատուով ամենայն բազմութիւնք ժողովրդոցն Այրարատոյ։

Զորոյ զհետ յաջորդեաց զաթոռ հայրապետութեան աշխարհիս Հայոց հրամանաւ երանելւոյն Մաշտոցի՝ սուրբն Յովսէփ, որ էր ՚ի գաւառէն Վայոց ձորոյ, ՚ի գեղջէն որում անուն էր Խողոցիմք։ Եւ ՚ի բարեխօսութենէ սուրբ հանգուցելոյն արանց՝ շնորհեցաւ աշխարհիս Հայոց պաշտօն ուղղափառ հաւատոց, մինչև ցամն երկոտասաներորդ Յազկերտի արքային Պարսից որդւոյ Վռամայ։

Վերջ բանիս այս։

# ԴՐՈՒԱԿ Բ.

Ի. Եւ էր Յազկերտի արքայ հազարապետ մի Միհրներսեհ անուն, այր չարահնար և դժնամիտ. որոյ արկեալ'ի միտս 'ի շատ ամաց ըզխորհուրդս անօրէնութեան 'ի կործանումն և 'ի կորուստ թուլամիտ ոգւոց. որում գտեալ օժանդակ չար և սադրիչ անօրէն թինաւոր բազմաժամանակեայ մտածութեն իւրում՝ այր մի 'ի տոհմէն Սիւնեաց, որոյ անունն էր Վարազվաղան. որով ըստ նմանութեան սատանայի՝ որ 'ի դրախտին օձիւն խաբեաց ըզնախաստեղծին հաղորդն, նոյնպէս և նա նովաւ զիւրոյ դաւն կամացն վճարել ջանայր զչհաճոյսն: Եւ էր Վարազվաղանս այս փեսայացեալ

Իշխանին Սիւնեաց Վասակայ. որ և ըստ համբաւոյ ամենից՝ առելութեամբ մեծաւ ատէին զկեանն ընդ միմեանս զՎարազվաղանայ և զդըստեր Իշխանին Սիւնեաց. յաղագս որոյ ծանր քինու հայէր հայր աջըկանն ընդ փեսային իւրում, և հնարէր սպանմամբ խնդրել զվրէժս 'ի Թշնամեաց դստերն իւրոյ, մինչև հալածեալ հանէր զնա յաշխարհէս Հայոց:

Եւ չարխնամին Վարազվաղանայ գիտացեալ զանհնարին ուրախութիւնն Վասակայ, և զի ոչ կարէր հանդուրժել սաստիկ բռնութեան աներոյն՝ յաղագս հզօրապէս ճոխութեան որով վարէր 'ի ժամանակս իշխանութե իւրոյ, փախուցեալ յերկիրն Պարսից՝ առ Միհրներսեհ հազարապետն արեաց անկանէր: Եւ վաղվաղակի խորհուրդ դիւական 'ի միտս արկեալ, առաջնորդ կորըստեան աշխարհիս լինէր. Ճանաչելով 'ի նոյն խորհուրդ չարութեան յորդոր և զկամս Միհրներսեհի. միաբանութիւն անօրէն 'ի միաբա-

նութիւն բանաստեղծութեն 'ի մէջ ա-
ռեալ՝ ուրանայր զճշմարտութիւնս,
և տարելոց հաստատելոյ յարար-
չէն 'ի տպաւորութեան մարդկան՝
արեգական և լուսնի. երկիր պա-
գանէր. և Ձեղչեալ խղճմտական
յաճախութեամբ 'ի սուրբ և յար-
գար քարոզութեանն կենաց՝ զոր
նահատակն և առաքեալն Հայոց
Գրիգորիոս բազում և մեծամեծ
վշտաց կրելով՝ անձանձրոյթ աշ-
թիւք և անդադար խնդրուածովք՝
պայծառ և զգեցեալ վարդապետեալ
աներամնեալ զամենայն ազգ. արհա-
մարհեալ մերժեր յինքենէ անօրէնն
Վաղարշապատ։ Եւ մտեալ 'ի տուն
մխիթարանցին՝ զկրակն աստց զոլ տա-
տուած, և ուրացեալ յանգեակ և 'ի
միջանական սուրբ Երրորդութե-
նէն՝ եղև դեղագործ մահու և մա-
տուռակ կորստեան ազգաց անօրի-
նաւն Միհրներսեհի, ամենայն ալ-
կարամիս անձանց։ Որում՝ այնու-
հետև եղեալ վարդապետ, ուսուցա-
նէր փութապէս 'ի տունէ և 'ի դիւէրք
դրան իշխանն Միհրներսեհ զմիշտ

տեարդուհն Սիւնեաց զՎարդանայ, ասելով այսպէս. Թէ Հայոց մնաց աջորդ եւ տես Թագաւորութիւն մի-այնական, որ ահաւոր է եւ 'ի վեր քան զամենայն Թագաւորութիւնս, եւ առատութիւն աննեձից եւ հրա-հանգի եւ կամ կազմութիւն զինու, որ առաւել դողացուցանէ զամե-նայն տեսողս եւ լսողս, զհնազանդս եւ զանհնազանդս. ընդ նմին եւ զօրի-նացս յայտնապէս բաւ արժանի մեծ Թագաւորութեանս զընտրողութն, զստոյգն եւ զվայելուչն: Քանզի մի ոք ոչ տեսանէ յամենայն տիեզերս զարեգականն զփառաւորութիւն, որոյ Ճառագայթիւք լուսաւորին ամենայն եղեալք խօսնոց եւ անխօս-նոց, եւ կամ զհրոյ օգտակարու-Թիւն, որով կերակրին եւ վայելեն ամենայն բանաւորք, եւ կամ աս-տեղքս, եւ քաղցրախառն օդոյ շնչ-մունք, որով բոյսք եւ սերմունք ա-ճեցեալք եւ հասեալք 'ի կատա-րելութիւն, մատուցանեն մարդկան զկեանս բարի եւ զուրախանալն: Արդ՝ Թէպէտ եւ անհնազանդ են

մեզ այնոքիկ, տեսանեն զայս ամե֊
նայն և ոչ իմանան. վասն զի ոչ ու֊
նին իբրև զմեզ մեծ իմաստս և խո֊
հականութեան խրատս: Եւ վասն
զի չկարացեալ ճանաչել այնպի֊
սեացն զաստուածս, և ոչ զօգուտն՝
որ յիւրաքանչիւր ումեքէ յաս֊
տուածոցն բաշխին՝ի մարդիկ, յայտ֊
նի է և ստուգապէս՝ թէ և աստուա֊
ծոցն ցասուցեալ՝ չկամեցան զիւ֊
րեանց բարութիւնսն, որ՝ի միոյ միոյ
որոշողութեամբ պարգևի յաշխար֊
հըս, ծանուցանել անմտայն: Իսկ
ոյք ընդ մերով մեծ իշխանութ͞բս
հնազանդեալ են ազգք, և ընդ հե֊
ռամբ այսպիսի ահեղ և սաստիկ
կարգեալք են ընդ թագաւորու֊
թեամբ, կորնչելին զյաւիտենական
կորուստն, և մեք մեղադրեալք յԱս֊
տուծոյ պատուհասիցիմք:

Զորոյ անմիտ վարդապետութիւն
զխորամանգ ուսուցչին Միհրներսե֊
հի լուեալ խելացնոր աշակերտ նո֊
րա Վարազվաղան, չկարաց զգալ
յապշութենէ սատանայականն պղ֊
տորեալ մտացն, և առնել անդրէն

պատասխանի անզգայեալ վարդապետին, թէ Աստուած որ ինքն յինքեան պակաս է և թերակատար, զիա՞րդ կարէ տալ այնոցիկ այլում զկատարելութեան խնդիրս: Քանզի զգոյան իւր ոք կարէ տալ խնդրողին. իսկ որ ինչ իւր ոչ գոյ ուրուք, այլ որպէս մասն ինչ 'ի բաղում մասանց յումեքէ առեալ ունիցի յանձին, կարէ տալ յայնմ մասնէ զոր ինչ ունի. իսկ զոր ինքն ոչ ունի, յայտնի է թէ և այլում շնորհել զայն ոչ կարէ: Վասն զի թէ տապացեալ ոք՝ կարօտեսցի զովանաւոյ, և մատուցեալ զայն խնդրեսցէ դարձեալ 'ի ջերմութենէ, չպատահէ խնդրոյն. այլ և խնդրողին յոյժ անմիտ ճանաչի յամենեցունց և արժանի ծաղու: Քանզի և նոյն ինքն խնդրողին հաւատեաւ գիտէ, թէ որ ինչ ինձն պիտի, յորմէ կամիմ խնդրել՝ նորա չիք, և ոչ տալ կարէ. և (թէպէտ) բազում թախանձանօք և յերկար դեգերմամբ խնդրեսցէ յայնպիսւոյն, անմիտ է և լի է ապաշաւութեամբ. որպէս թէ 'ի ջրոյ

ոք խնդրիցէ ցամաքութիւն, և 'ի հրոյ հայցիցէ ոք գիճութիւն, և կամ զարեգակն աղաչեսցէ ոք յաղագս զովացուցանելոյ, և կամ 'ի գիշերոյ պահանջեսցէ ոք լոյս: Այլ զեդեալն 'ի նոսա յԱստուծոյ մատուցն՝ կան և ունին, սահմանեալ զնոյն և մատակարարեալ ըստ իւրաքանչիւր մասին, հարկաւորին անդադար հատուցանել աշխարհի՝ ոչ իւրեանց կամաւ, այլ ըստ հրամանի արարչին իւրեանց, որ էն Աստուած ճշմարիտ, արարիչ ամենայն լինելութեան ժամանակաց և տարերց, ջերմութեան և ցրտութեան և ցամաքութեան և խոնաւութեան, լուսոյ և խաւարի. և ունի յինքեան զամենայն բովանդակապէս. և որք խնդրեն 'ի նմանէ արժանաւորապէս՝ տայ և լնու զամենայն կատարելապէս ըստ իւրաքանչիւր ուրուք պիտոյից և կամաց:

Զոր և իւր ուսեալ զայս ամենայն 'ի մանկութենէ իւրմէ անօրէնն Վարազվաղան՝ քաջ գիտէր. բայց 'ի նախանձ անօրէնութեան ընկղմեալ

ընդ անկողին՝ խորհէր 'ի միտս իւր այլոյն տառապածուաց, ապրելով 'նման գիւղին՝ որ մնացեալ 'նեղեալ էր 'ի սրտի 'նորա, թէ՛ խնամասս այս իմ եւ ջանս եւ սպառուած՝ երկուց իրաց առիթ է ինձ բարւոյ: Կամ հաւանիլ աշխարհն Հայոց եւ ուրանայ, մեծաց պարգեւաց եւ պատուոյ արժանի լինիմ յԱրեաց, որպէս հաւատարիմ նախարարս եւ օգտացոյց այսպիսի կարեւոր եւ մեծ իրաց. եւ կամ չհաւանիլ յանձն առնուլ՝ եւ ընդդիմանալ, չհարցեալ կալ առաջի այսպիսի մեծի ուժոյ՝ կորնչելն անմեղելի ամենք եւ կորստեամբ. կորնչի թերեւս եւ իմ թշնամին յերկիւ յայսմիկ: Եւ ես թէպէտ եւ ոչ մի՛ այլ խիղճ չհանդիպիմ բարւոյ, սակայն շատ իսկ է ինձ եւ բաւական՝ լուրն եւ անես կորստեան թշնամեաց իմոց, քան զամենայն օգուտ եւ մեծութիւնս՝ որ են յաշխարհի:

Եւ զայս ամենայն չար խորհրդմամբ անձին իւրում եւ զաւակի խնդրեալ Արեաց սեպհին անօրինի եւ սպրեալ 'ի գլուխ, չմոռացաւ եւ տառա-

ծայրին տեսչութիւնն· այլ աստէն իսկ նախ ընկալեալ յարդար դատաստանէն Աստուծոյ զվճիռ հատուցման՝ ըստ արժանի գործոց իւրոց· քանզի տեսիլ նշաւակի եղև ամենայն տոհմին իւրոյ և գաւառին մարդկան: Վասն զի 'ի խորհրդակցէն 'ի դիւէն իւրմէ տանջեալ ամս բազումս՝ առաջի ամենեցուն հանապազօր նշաւակօք, զգետնեալ մըրմրէր անզգայութեամբ, և չկարացեալ ասել թէ մեղայ: Վասն որոյ գտեալ դիւէն ամենաթափուր զայրն 'ի խնամոց մարդասիրին, յետոյ ապա սաստիկ անհնարին խայտառականօք՝ մինչ 'ի բազում ժամանակս չարալլուկ կտտանօք զարկուցեալ՝ հեղձոյց: Որ և զհնացորդս ժահահոտ չարահամ խորտկին իւրոյ եթող զաւակին իւրում, ըստ գրեցելումն 'ի վեշտասաներորդումն սաղմոսին, Յագեցան կերակրօք, ասէ· որ միւս ևս Թարգմանիչ՝ խոզենեաւ ասէ, և թողին զհնացուածս տղայոց իւրեանց: Եւ այսպէս նորա աստէն ընկալեալ զհատուցումն մեղաց իւ-

րոց, պատժի և անշէջ գեհենոյն 'ի տարտարոսին՝ մատնել յաւիտենից և անանց բոցոյն: Յորոց ձեռն ընկեղչքն առեալ զայր տակաւ յերեւումն՝ կանխատեսութիւն մարգարէական սուրբ նահապետին Գրիգորի տեսլեան, որ երևեցաւ նմա յԱստուծոյ. աղբերքն կենաց, յորում լուացեալ զաւք սևագոյն այծեացն՝ 'ի սպիտակակերպն զոյն օգեաց դարձեալք՝ արեգակնանման լուսափայլեալք երևէին. յորոց կէսք 'ի լուացելոցն յետս դարձեալք ընդ կրունկս՝ անցանէին ընդ ջուրն, և փոխեալք 'ի նմանութիւն ապիտակացեալ զգառանցն՝ 'ի զոյն սևացեալ զայլոցն, յարձակէին 'ի վերայ զգառանցն և արեան Ճապաղս հանէին: Որոց նախ և առաջին յառաջատեսութեանն որոյն 'ի զանութենէ 'ի զայլութիւն փոփոխման՝ այն այր 'ի առհմէն Սիւնեաց եղև, պատճառ կորստեան բազմաց և կործանի աշխարհիս Հայոց:

ԻԱ. Եւ լուեալ զայս ամենայն բանս անօրէնին Միհրներսեհի և

խնդալից եղեալ, քանզի եգիտ սա-
տար մահաթոյն և գրգռիչ անօրէն
իւրում չար մտածութեանն զայրն
զգխւազգեաց զՎարազվաղան, մը-
տեալ խնդալից առ Թագաւորն Յազ-
կերտ, սկսաւ խօսել ընդ նմա առ-
անձինն և ասէ. Ոչ միայն 'ի վայել-
չութենէ շահից, եթէ որպէս 'ի դէպ
է տէրանց օգտել 'ի ծառայից՝ զայն
և եթ հոգալ պարտ է տէրանց, այլ և
յաղագս գիւտի ոգւոց արժան է
զմտաւ ածել, որով ոգիք ծառայից
մի՛ կորիցեն: Վասն զի որպէս դու
վասն քո շահիցն և հարկաց փոյթ
յանձին ունիս՝ զի օգտեսցիս, նոյն-
պէս և աստուածք զոգւոցն գիւտս
ջերմագոյն ևս գրեն և կամին տե-
սանել. և աստուածոցն արժանի
առնել չկարէ ոք ասել զպարգևս և
զպատիւս, որ այնպիսոյն յաստուա-
ծոյն մթերեալ պահին. Թող թէ
որ ոք բազում ոգիս հնարի 'ի մո-
լորութենէ 'ի ճանապարհ ածել.
և զանէծս անցուցանել ընդ ար-
դարս, փառք և շքեղութիւնք որ
այնպիսեացն ոգւոց ընձեռին յաս-

տուծոյն՝ ոչ ոք կարէ բանիւ ասել զայն և պատմել, և կամ ընդ գրով բովանդակել: Արդ՝ քանի՞ աշխարհք են որում դուք իշխէք աստուածաբար, և զոր սպանանել կամիք յիշէք և զորս կեցուցանել:

Եւ նախ առաջին որպէս Հայոց մեծ աշխարհն պիտոյ է և օգտակար, և առ նմին Վրաց և Աղուանից, և միայն օգտիցն և եթ հայիք՝ զոր ընդունիք յաշխարհացն· և որ մեծն է և կարևոր յաղագս այնչափ կորուսեալ ոգւոց գիւտի՝ զայն բնաւ և զմտաւ իսկ չածէք և ոչ հոգայք· և զայս ոչ գիտէք՝ եթէ ընդ ամենայնի այնչափ անձինն համար տալոց էք աստուածոցն: Զի եթէ հոգայք ընդ այնչափ ոգւոյ փրկութեան, գիտացէք զի աւելի քան զաստի թագաւորութեանդ մեծութիւնդ զոր ունիք, ոգւոյն բարի և մեծութիւն որ լինէր անդ՝ շատ օգուտ էր ձեզ և պիտոյ: Ես առաւել այլ օգուտս մեծամեծս և կարևոր իրս տեսանեմ յիրս յայս Արևաց աշխարհիս: Վասն զի դուք ինքնին գի-

տէք և ամենայն Արիք՝ զաշխարհն
Հայոց, թէ որպէս մեծ է և պիտա-
նի, և մօտ և սահմանակից է կայ-
սեր իշխանութեանն. և զօրէնս և
պաշտօն զնոյն ունի, զի կայսր զիշ-
խանութիւն նոցա ունի: Եւ եթէ
և մերոց օրինաց ընտանեցուցանէք
զնոսա և ընդելնուն, և կարեն ճա-
նաչել եթէ ցայժմ մոլորեալք էին,
և արդ 'ի ճանապարհ եկեսցեն, այ-
նուհետև զձեզ սիրեն և զԱրեաց աշ-
խարհս, և 'ի կայսերէ և յօրինաց
նորա և յաշխարհէն մերժին և հե-
ռանան 'ի բաց: Եւ լինի այնուհե-
տև աշխարհն ընդ մեր սերտ սի-
րով և միաբանութեամբ: Եւ յոր-
ժամ Հայք սերտիւ մեր լինին,
Վիրք և Աղուանք այնուհետև մեր
իսկ են: Եւ իմ թէպէտև էր յա-
ռաջագոյն հոգացեալ զայսպիսի մեծ
իրս, և զմտաւ ածեալ ցուցանել
ձեզ, առաւել ես հաստատեալ յառ-
նէն՝ որ 'ի Միւնեայ տոհմէն՝ գիտաց
հեռանալ 'ի մոլար օրինացն զոր
ցայժմ ունէր, և ընտրել զճշմարիտ
և զհաստատուն օրէնս մեր՝ զոր կա-

մաւ և ախորժելով յանձն էառ. զոր 'ի Նմանէ աւելագոյն ծանեայ, և հաստատեցի զօգուտ հոգւոր և զմարմնաւոր, որ յիրացս յայսցանէ լինելոց է ձերում Թագաւորութեանդ և առ հասարակ ամենայն Արեաց աշխարհիս: Այլ և որ սերտ սիրով ետ զանձն իւր այրն և ընտրեաց զլաւն, արժան է դիպել երեւելի փառաց և առաւելապէս պատուոյ քան զամենայն ընկերակիցս իւր և տոհմակիցս, որպէս զի տեսեալ տոհմին Նորա և ամենայն Հայոց աւագանւոյն՝ զմեծամեծ բարիս և զշքեղութիւն՝ որ 'ի ձէնջ 'ի վերայ Նորա յայտնի լինի, 'ի Նախանձ գրգռեալ և Նոքա այսպիսի կենաց և բարւոյ հանդիպել՝ յօժարութեամբ յանձն առնուն զձեր հրաման, և մի զմիով ելեալք փութով կատարեն զկամս ձեր: Եւ եթէ այս այսպէս լինի, միշտ 'ի խաղաղութեան և յանհոգութեան կայ Թագաւորութիւն Արեաց աշխարհիս· ապա թէ ոչ լինիցի այս այսպէս, կասկածեմ յառաջիկայն՝ մի

գուցէ որում օրինացն են հաստա-տուն, նոցին և ծառայութիւն առնել ցանկան, և լինի ոչ փոքր կաս-կած Արեաց աշխարհին յիրացն յայնցանէ:

Եւ իբրև զայս ամենայն յարմարումն բանից լսէր Յազկերտ արքայն Պարսից 'ի չարախորհուրդ և 'ի դժնամիտ հազարապետէն իւրմէ Միհրներսեհէ, հաճեալ ընդ խմատըն և գովեալ՝ յայտնէր մոգուցն և այլ աւագանոյն Արեաց զբանս ամենայն Միհրներսեհի: Եւ ամենայն Արեաց առ հասարակ զարմացեալ և գովեալ զխրատն, վաղվաղակի կոչէր զմոգսն, և գրեալ զօրէնս մոգութեանն՝ տայր բերել 'ի Հայս: Եւ արարեալ հրովարտակս առ ամենայն Հայոց աւագանին և գրէր այսպէս:

ԻԲ. Թագաւորացն առաջնոց՝ որ նախ քան զիս իմ նախնիքն էին և զայս թագաւորական գահ ունէին, ոչ գիտեմ եթէ յաղագս այլ ինչ մեծ անպարապութեանց, և թէ չխորհելով զպատիւ ծանր և կա-

ըստր պէտս, չհոգացան խրատ։ Իսկ իմ զինու ածեալ, ՚ի մարդոյն և յայլ խնամատան և յաւագ մարդ-կանէ։ Ապէսյ աշխարհին անդէպէ-ցեալ, թէ որ միանգամ ընդ իշխա-նութեանն մերոյ թագաւորութեա-նն, որպէս օտարք և այլ հպատա-կութեանն փախեալք ՚ի նոցանէ, և սատակել ապստամբք ընդ փոխութիւն և ընդ գիւղ ամենեցուն հոգւոյ հոգալ և դատնել. և եթէ յանկարծ ծուլացեալ դատնիլք յայտնի մեծ հպատակութենէ, անդէպիցայք յոր-նոց մերոյ՝ թէ ծանր պատուհաս կրեսցեն եւս յաստուածոյն։ Այդ եթէ մեք պատուհասելք զան չրս-զդեցալ ումեք ՚ի ձէնջ, ձեզ ասա-ռեալ ունելն ևս արժանի է երկնչել, թէ հեղգոյք ինչ յհրաքանչիւր հոգւոյ օտարէ, զի ՚ի մէնջ պատուհա-սիք և յաստուածոյ։ Վասն որոյ և զօրէնս մեր զատոյդ և զարդար դրե-ցաք և տուաք բերել առ ձեզ. և կամիմք եթէ որպէս դուք օտա-կար աշխարհի էք և մեր սիրելի, զմեր արդեօք զարդար և զէջեն օրէնս

ուսանէիք և ունէիք, և չպաշտէիք զայնպիսի օրէնս՝ որ ամենեցուն մեզ յայտնի են թէ սուտ են և անօգուտ: Արդ լուեալ ձեր զմեր հրամանսդ, կամաւ և սիրով յանձն առէք, և բնաւ ամենևիմբ զմիտս ընդ այլ ինչ մի տանիք: Այլ և այս կայ մեզ և մեզ, զի զկարծեցեալ ըզձեր օրէնսդ՝ առ մեզ գրել հրամայեցուք ձեզ, եթէ որպէս կորուսեալ էիք մինչև ցայսօր: Եւ յորժամ դուք իբրև զմեզ ճանաչօղք ճշմարիտ մեր օրինացս լինիք, Վիրք և Աղուանք ըստ մեր և ձեր կամս չիշխեն ելանել:

ԻԳ. Եւ ընկալեալ զայսպիսի հրովարտակ ամենայն Հայոց աւագանոյն, և ընթերցեալ զամենայն գըրեալսն 'ի հրովարտակին, և զայն ևս իմացեալ՝ թէ զօրէնս անօրէնութեան իւրեանց գրով առաքէ առ նոսա, ծանուցեալ և զառ 'ի ծածուկ նետս թշնամւոյն՝ զոր ձգէր խորամանկութեամբ յանպատրաստ հօտըն Քրիստոսի, տրտմեալ առաջնախորհուրդ ժողովուրդք սուրբ հօ-

տին Քրիստոսի՝ 'ի կոր կործանեցան, թէ ընդէ՞ր խակ ընաւ այնպիսի դաւն ըն թիւնոց ծնեալ 'ի նոցանէ ձառեցան իրքս. Մի՛ գուցէ, ասեն, անձեցեալ 'ի պակասամիտ և 'ի փառախնդիր անձինս թերահաւատ մարդոյ, չարաչար ձգտեալ արմատս՝ կորնչիցին բազումք վրիպեալք 'ի ճշմարիտ և յարդար հաւատոյն Քրիստոսի:

Ժողովեցան այնուհետև ըստ հրամանի տանուտերայն Հայոց սուրբ եպիսկոպոսք ըստ գաւառաց աշխարհին Հայոց, և պատուական երիցունք և վանականք, որք են այսոքիկ. Սուրբն [1] Յովսէփ, որ թէպէտ և երէց էր ըստ ձեռնադրութեան, այլ զկաթուղիկոսութեան Հայոց զաթոռն ունէր 'ի ժամանակին. Տէր Անանիա Սիւնեաց եպիսկոպոս, Տէր Մուշէ Արծրունեաց եպիսկոպոս, Տէր Սահակ Տարօնոյ եպիսկոպոս, Սուրբն Սահակ Ռըշտունեաց եպիսկոպոս, Տէր Մելիտէ

Մանձկերտոյ եպիսկոպոս, Տէր Եղ-
նիկ Բագրեւանդեայ եպիսկոպոս,
Տէր Սուրմակ Բզնունեաց եպիսկո-
պոս, Տէր Թաթիկ Բասենոյ եպիս-
կոպոս, Տէր Երեմիա Մարդաստանի
եպիսկոպոս, Տէր Գագ Վանան-
դեայ եպիսկոպոս, Տէր Բասիլ Մո-
կաց եպիսկոպոս, Տէր Եղբայր Ան-
ձեւացեաց եպիսկոպոս, Տէր Տաճատ
Տայոց եպիսկոպոս, Տէր Քասուն
Տարբերունոյ եպիսկոպոս, Տէր Զա-
ւէն Մանանաղւոյ եպիսկոպոս [1],
Տէր Եղիշէ Ամատունեաց եպիսկո-
պոս, Տէր Երեմիա Ապահունեաց
եպիսկոպոս: Այսոքիկ ամենեքեան
եպիսկոպոսք, և 'ի պատուական ե-
րիցանց` սուրբն Ղեւոնդ, և Խորէն
'ի Մրենեայ, և Դաւիթ, և այլ պա-
տուական երիցունք, և աւագ վա-
նականք բազումք, հանդերձ սքան-
չելի և հրեշտակակրօն տերամբն Ա-
ղանաւ, որ էր յազգէն Արծրու-
նեաց: Եւ որք 'ի նախարարացն էին
ժողովեալք, տէրն Սիւնեաց Վա-

1. Սա ոչ միշէ մԵղիշեայ:

սակ, և տէրն Արծրունեաց Ներշապուհ, Վրիւ Մաղխազ, տէրն Մամիկոնէից և սպարապետն Հայոց Վարդանն, տէրն Վահեւունեաց Գիւտ, տէրն Մոկաց Արտակ, տէրն Անձեւացեաց Շմաւոն, տէրն Ապահունեաց Մանէճ, տէրն Վանանդեաց Առաւան, տէրն Արշարունեաց Արշաւիր, տէրն Ամատունեաց Վահան, տէրն Գնունեաց Ատոմ, տէրն Պալունեաց Վարազշապուհ, տէրն Աշոցայ Հրահատ, տէրն Դիմաքսենից Համայեակ, տէրն Աբեղենից Գաղրիկ, Տէրն Առաւեղենից Փապագ, Վրէն Ձիւնական: Այսոքիկ ամենեքեան աւագ տանուտեարք, հանդերձ աւագ սեպհօք և բարեպաշտ եպիսկոպոսօք, և աւագ քահանայիւք և վանականօք, պատասխանի հրովարտակին գրէին առ Թագաւորն Յազկերտ և առ ամենայն աւագանին դրանն՝ այսպէս[1]:

1. Թէպէտ և ձեռնարկողք Թղթոյն նոյնք էին որ յԵղիշեայ յիշին, այլ Թուղթս այս օտար է յայնմանէն:

ԻԴ. Ի լուսաւոր և 'ի ճշմարիտ օրէնս մեր գրեալ է, որ ձեզ ընդունայնութիւն և բարբանջմունք թըւին, թէ ծառայք հնազանդ լերուք մարմնաւոր տերանց ձերոց՝ որպէս Աստուծոյ. և մեր ըստ կարի զօրութեան մերոյ երկուցեալ նախ 'ի հըրամանէ օրինաց մերոց, և ապա 'ի ձեր 'ի մեծ թագաւորութենէդ, եդեալ 'ի մտի՝ ոչ միայն ըստ երկիւղի մարդկան որպէս առ ականէ ըստ օրինի չար ծառայից ծառայել ձեզ, այլ կամաւ իսկ և յօժարութեամբ՝ յամենայնի զձեր կամս և զհրաման կատարել. և ծառայել ձեզ ոչ միայն կարասոյ ծախիւք, այլ և զարիւն անձանց մերոց և որդւոց 'ի վերայ դնել: Բայց վասն հոգւոց մերոց դիւտի և կամ կորստեան՝ զձեզ ինչ ամենևին այդ հոգ մի՛ աշխատեսցէ. և վասն պարգևի և պատուհասի՝ որ երկնչիքդ յաստուածոցդ՝ յաղագս սիրոյ ոգւոյ, որպէս ասէքդ, 'ի մեր անձինս և յոգիս հասցէ յԱստուծոյ օգուտն այն և կամ պատիժ: Բայց դուք զիարդ Ա.Ի.Թ զայդ լուեալ

ներեցէք մեզ. քանզի որպէս անհնար է մարդկային բնութեանց փոխել զերկնից տեսչութիւնն յայլ տեսութիւն, նոյնպէս և անհնար է որ 'ի բնէ ուսեալ եմք և հաստատեալ յօրէնս յայս, անսալ այդպիսի հրամանի և հաւանել. զոր և լոկ քանիւք անգամ լսել ոչ կարեմք, քանզի և կամիմք իսկ ոչ:

Այլ վասն օրինաց ձերոց, զոր գրեալ էր և տուեալ բերել առ մեզ, մեք ձեզ ոչ երբէք լսեմք: Մինչ որ այդր լինիմք 'ի դրանն, և կամ 'ի մօտ գուցդ՝ որ ձեր օրէնսուսոյցքդ իմն կոչին, այպն արարեալ արհամարհեմք. Թող թէ և գրոց ևս յօժարեցուցանէք զմեզ, կարդալ և լսել որ ինչ ոչ է մեզ պիտոյ և խնդիր: Այլ յառաւել ևս պատուելոյ զթագաւորութիւնդ ձեր՝ և բանալ անգամ զգրեալսդ կամ տեսանել ոչ կամեցաք. զի զօրէնս՝ զոր ճանաչեմք եթէ սուտ են և անմիտ մարդոյ բարբանջմունք, զոր բազում անգամ մեր լուեալ է 'ի ձեր անուանեալ սուտ վարդապետացդ, և տեղեակ եմք

ծերև զձեզ, զայն ոչ կորդալ պարտ
է և ոչ լսել: Վասն զի ընդ կար-
դալն՝ հարկիմք և ծաղր առնել, ուս-
տի օրէնքն և օրէնսդիրքն և որք
պաշտեն զայդպիսի խաբէութիւն՝
'ի միասին Թշնամանին: Յաղագս որոյ
և ոչ զմեր օրէնս գրել և տալ բերել
առ ձեզ՝ ըստ հրամանիդ ձերոյ՝ 'ի
դէպ և պատշաճ համարեցաք: Զի
եթէ զձեր սուտ և զարժանի ծա-
ղու օրէնսդ չհամարեցաք արժա-
նի կարդալոյ և մատուցանելոյ 'ի
մեզ, զի մի՛ Թշնամանեսցուք զձեզ՝
ծաղր առնելով զօրինօքդ, զոր ըստ
ձերում իսկ մեծի խրատոյդ պարտ
էր զմտաւ ածել և 'ի գրելն և 'ի
տալ բերելն առ մեզ, մեք զի՞րդ
զայսպիսի զաստուածաւէր և զճըշ-
մարիտ օրէնսն՝ գրեցեմք առ ձեր
անգիտութիւնդ, յայպանումն և 'ի
Թշնամանս: Բայց այս և եթ ձեզ 'ի
հաւատոյս մերոյ յայտնի լիցի, զի
տարերց ոչ ծառայեմք, արեգական
և լուսնի, հողմոց և կրակի, որպէս
դուքդ. և բազում աստուածոցդ՝
զոր անուանէքդ դուք 'ի յերկրի և

'ի յերկնի, պաշտօն ոչ մատուցա-
նեմք: Քանզի ուսայք և հաստա-
տեալ ծառայեմք միում միայնոյ
Ճշմարտին Աստուծոյ, որ արար
զերկինս և զերկիր և զամենայն ինչ
որ 'ի նոսա. և նա միայն է անուա-
նելոցդ 'ի ձէնջ աստուածոցդ՝ Աս-
տուած և արարիչ, Թագաւոր Թա-
գաւորաց և տէր տերանց. և նմա
միայնոյ վայելէ ամենայն բանաւո-
րաց՝ մատուցանել երկրպագութի̃
և պաշտօն:

ԻԵ. Եւ գրեալ զայս ամենայն
բանս 'ի նամակին սուրբ քահանայից
ժողովյն, և հանդերձ ամենայն նա-
խարարօքն Հայոց, ետուն տանել
առ Թագաւորն Արեաց Յազկերտ:
Եւ նորա հրամայեալ կոչել զմոգսն
և զամենայն աւագսն դրանն, ետ
բանալ զնամակն՝ զոր առաքեցին
Հայք, և կարդալ առաջի ամենեցուն:
Եւ լուեալ զբանս նամակին Թա-
գաւորն հանդերձ մոգօքն, և ամե-
նայն աւագանեաւ դրանն, և սրամը-
տութեամբ բարկութեան գրգռեալ՝
հարցանէր զմոգսն և զամենայն Ա.

րեաց աւագանին, թէ ձեզ զի՞րդ
թուի 'ի ծառայից այդպիսի աներ-
կիւղ համարձակութեամբ գրել առ
իւրեանց տէրն։ Իսկ դասք մոգուցն
և ամենայն մեծամեծացն աւագա-
նոյն դրանն՝ յոտն կացեալ ասացին,
թէ զնոցա կորուստն անձանց իւ-
րեանց և աշխարհի գրեալ է առ ձեզ.
բայց ձեզ թէ որպէս պարտ է ծա-
նուցանել նոցա զձեր տէրութիւն և
զնոցա ծառայութիւն՝ զայն դուք
իշխէք։ Առաւել ևս գրգռեալ զթա-
գաւորն և զամենայն աւագանին,
ասելով. Եթէ ոչ ուստեք ունէին
նոքա յայլուստ օգնականութեան
յոյս, զայդպիսի բանդ 'ի միտս իսկ
իւրեանց նկատել չիշխէին, թող թէ
նամակաւ առ ձեր թագաւորու-
թիւնդ առաքել։ Զայս չարախոր-
հուրդն Միհրներսեհ ասէր։

Եւ թագաւորն Յազկերտ իբրև
լուաւ զայս ամենայն 'ի մոգուցն և
յամենայն դրան աւագանոյն, սրտ-
մտութեամբ զայրացեալ՝ հրաման
ետ փութանակի հրովարտակս առ-
նել յաշխարհն Հայոց և Վրաց և

Աղուանից։ Եւ հրամայէր դրել յե-
րեսին հրովարտակին, զի ամենայն
տանուտեարքն և ազատ սեպուհքն
երեցունց աշխարհացն՝ փութով և
անխափան 'ի դուռն եկեսցեն. և որ
ոք, ասէ, ծուլացեալ յապաղեսցէ,
առանց ամենայն թողութեանց մա-
հու պատուհաս կրեսցէ։ Եւ հա-
սեալ հրովարտակս այս յերեսին
յաշխարհսն Հայոց, Վրաց և Ա-
ղուանից, և ընթերցեալ առաջի նո-
ցա, իբրև լուան զայնպիսի ստիպով
կոչումն զամենեցունց, անդէն և
անդ գիտացին զպատճառս իրացն՝
թէ չէ խաղաղութեամբ, այլ կորըս-
տեան ոգւոց է ստիպումն կոչմանս
այսորիկ. տրտմեալք աղմկէին, և
յԱստուծոյ օգնականութիւնն ա-
պաստանեալ ապաւինէին։

Պատգամաւորութիւն այնուհե-
տև երեքին աշխարհքն առ միմեանս
առնէին և ուխտադրութիւնս, և բա-
զում երդմամբ աւետարանին հաս-
տատէին։ Խորհէին, չերթալն որ-
պէս ապստամբութիւն կարծեցու-
ցանել, և զերթալն խռովեալք տա-

ռակուսէին․ հաշուէին զերթալն Լու-
սագոյն, և ելից խրացն զԱստուած
կոչէին օգնական։ Բայց զիւրեանց
զմիտս և զբանս և զխորհուրդս՝ միջ-
նորդութեամբ սրբոյ աւետարանին՝
անքակ և աներկեան առ միմեանս
հաստատէին․ Թէ Երթամք այս,
այլ ուրանալ զարարիչն երկնի և
երկրի ոչ հաւանիմք։ Եւ այս կա-
տարի մեզ յԱստուծոյ, յորժամ
ցուցանեմք զմեզ Քրիստոսի մի մար-
մին և մի հոգի․ յիշելով զաւուրս
զառաքելոյն՝ զքարոզչին ասելն ե-
կեղեցւոյ, որոց էր սիրտ մի և ոգի
մի․ որոց բարեխօսութեամբ ուղ-
ղեսցէ զմեր պատասխանիս առաջի
ահեղ Թագաւորին՝ փրկչին մեր և
տէր Յիսուս Քրիստոս, և պահեսցէ
զմեզ յորձակմանէ չար գազանին,
որ դիմեալ կայ 'ի վերայ մեր․ քան-
զի ոչ երբեք Աստուած զմիաբա-
նեալսն 'ի բարի կամս՝ եթող 'ի ձե-
ռաց։ Իսկ եթէ ոք որոշեալ ձեռ-
քեսցի յայս ուխտէս միաբանու-
թեան, և Որդի մարդոյ՝ ուրասցէ և
ինքն իսկ ասէ, ուրացեալ ընկեսցէ

զայնպիսին յերեսաց խորոց առաջի Հօր և հրեշտակաց երկնից:

Եւ այսպէս միաբանեալք ուխտիւք և երդմամբ երեքեան աշխարհքն, Հայք, Վիրք և Աղուանք, գնացին 'ի դուռն:

Եւ որք 'ի ժամուն 'ի մեծամեծ աւագանոյն Հայոց՝ յուղի անկեալ ճանապարհորդեցան այսոքիկ են: Ի տոհմէն Սիւնեաց Վասակ Սիւնեաց տէրն, որ և 'ի ժամուն մարզպան էր Հայոց. և 'ի տոհմէն Արծրունեաց Ներշապուհ. 'ի տոհմէն Ռուշտունեաց Արտակ. 'ի տոհմէն Խորխոռունեաց Գադիշոյ. 'ի տոհմէն Մամիկոնէից Վարդան, Հայոց սպարապետ և տէրն Մամիկոնէից. 'ի տոհմէն Մոկաց Արտակ. 'ի տոհմէն Ապահունեաց Մանէճ. 'ի տոհմէն Ամատունեաց Վահան. 'ի տոհմէն Վահեւունեաց Գիւտ. 'ի տոհմէն Անձեւացեաց Շմաւոն. և յաշխարհէն Վրաց բդեշխն Աշուշա, և այլ տանուտեարք աշխարհին:

ԻԶ. Եւ հասեալք ամենեքեան առաջի 'ի դուռն՝ յանդիման եղեն

նախ մեծամեծացն դրան արքունի, և ապա Թագաւորին Յազկերտի։ Հրաման տուեալ արքային Պարսից Յազկերտի առ վաղիւն, որպէս զի ամենայն աւագանին դրանն, հանդերձ երևելի մոգօք, առաջի նորա լիցին 'ի խորանին. և առացեալքն 'ի Թագաւորէն կատարէին առ վաղիւն։

Ապա հրամայէր զուղեկեալսն 'ի Հայոց, 'ի Վրաց և յԱղուանից զառաջեաւ ածել։ Եւ նախդոյն հարցեալ ցՀայոց տանուտեարսն և ցսեպուհսն, ասէր. եթէ Նախ և առաջին կամիմ լսել 'ի ձէնջ, եթէ զի՞նչ համարեալ եմ ես ձեզ, կամ թէ դուք ո՞րպէս կարծէք զձեր անձինս լինել իմ [1]։ Եւ նոքա պատասխանի տուեալ միաբան ասացին. եթէ Այդ հրամանիդ տեսութիւն և գիտելութիւն՝ և առանց պատասխանի լսելոյ 'ի մէնջ՝ յայտնի է ամենայն Արեաց և Անարեաց։ Եւ Թագաւորն անդրէն երկրորդեալ ասաց,

1. Յոր. Դ։

եթէ Յայտնի և անծածուկ են այ-
նոցիկ՝ որ ընդ իմով իշխանութեամբ
են և հրամանի իմում ընդդիմանալ
չիշխեն ամենևին. բայց ես 'ի ձէնջ
կամիմ լսել, և զձեր ճանաչողու-
թիւնդ կամիմ գիտել, եթէ զինչ
հաշուեալ կարծէք զիս, ասացէք
ցիս: Եւ նոցա պատասխանի արա-
րեալ ասացին. եթէ Մեք զձեզ թա-
գաւոր գիտեմք, որպէս ամենեցունց՝
առաւել ևս մեր. իշխանութիւն ու-
նիս նման Աստուծոյ 'ի վերայ մեր
և ամենայն մարդոյ՝ որ է 'ի թագա-
ւորութեան քում, սպանանել և կե-
ցուցանել:

Եւ Յազկերտի արքայի լուեալ 'ի
նոցանէ և ամենայն դրանն աւագա-
նոյն զայսպիսի պատասխանիս, ասէ
ցնոսա թագաւորն Յազկերտ. Այդ
պատասխանիք ձեր՝ 'ի նամակէն զոր
ետուք բերել առ իս՝ շատ հեռի են
և աննմանք: Վասն զի 'ի նամակին
յայտ արարեալ էր, եթէ իւիք իւիք՝
որովք ծառայեմք քեզ, և կամաց
քոց և հրամանի չընդդիմացեալք
հաւանիմք. և է ինչ զոր ոչ քեզ

պարտ է տալ և ոչ մեզ հնազանդել և յանձն առնուլ: Արդ 'ի մեր Թագաւորութենէս և ամենայն Արեաց՝ 'ի ձէնջ նախ և առաջին կարևոր և պիտոյ խնդիր այդ է, և այդու Ճանաչի մեր առ ձեզ տէրութիւն և խնամարկութիւն, և ձեր առ մեզ արդարամտութեամբ ծառայութե և հնազանդութիւն, զի զվաստակոյ և զօգտէ, որ մինչև ցայսօր ձեր առ մեզ Թագաւորս և առ Արեաց աշխարհս ցուցեալ գոհ եմք. և արդ կամիմ պատուով և մեծամեծ փառօք արձակել զձեզ յաշխարհն ձեր, միայն Թէ զայդ ևս զիմ կամս, որ վասն ձեր հոգւոյ փրկութեան հոգացայ՝ յանձն առնուք, և դառնայք 'ի կորստեան Ճանապարհէն, յորում ցայժմ իբրև զկոյր մի 'ի խաւարի շրջեալ էիք: Ապա եթէ այլազգազգոյն ինչ խորհիք, և արդարև յորում միտս և մոլար օրէնս ցայժմ կեցեալ էք և 'ի նմին յամառեալ պնդիք, դուք Հայք, Վիրք և Աղուանք, առ ոչինչ համարիմ զայնչափ 'ի ձէնջ օգուտս և վաստակս,

այլ կնաւ և որդւովք և ազգաւ կո-
րուսանեմ 'ի միջոյ:

Եւ լուեալ զայս ամենայն բանս
պատուոյ և խոստմանց և մահու
սպառնալեաց 'ի Թագաւորէն Պար-
սից Յազկերտէ՝ երեցունց աշխար-
հաց ազատանոյն, լսեցին առ վայր
մի այլքն: Բայց յառաջ կացեալ
աներկիւղ և քաջասիրտ մտօք Վար-
դանայ Մամիկոնէից տեառն և Հա-
յոց սպարապետի, պատասխանի ետ
Թագաւորին Յազկերտի առաջի ա-
մենայն բազմութեանն և ասէ. Եթէ
Բազումք են յայս երից աշխարհաց
յազատորերոյ, որք են աւագ քան
զիս և գահու և աւուրբք, և շատ
են՝ որ 'ի խոնարհ են. զվաստակ և
զհպատակութիւն՝ զոր ծառայից
պարտ է առ իւրեանց տեառն և
առ Թագաւորն առնել, զայն նախ
դու՝ որ ամենեցուն տէրդ ես՝ և ա-
պա ամենայն Արիք, զիմ և զիւրա-
քանչիւր 'ի նոցանէ մինչև ցայժմ
քաջ գիտէք, և ոչինչ պիտոյ է ինձ
և կամ ումեք 'ի նոցանէ զիւր զվաս-
տակ և զսպաս ծանուցանել ձեզ:

Յայտնեաէ և յառաջ 'ի մտի այսպէս եղեալ իմում անձինս, զի եթէ և դոյ հնար առնել զմի անձն իմ բազում անձինս, զոյժ և զյօժարութիւն կամաց առաւել ևս քան զնոյնս, զկեանս և զկարասի՝ որ գամ մի յիմում տանս կայ՝ ձեր առնելով, և 'ի վերայ Արեաց տեառն և 'ի վերայ Արեաց աշխարհի եղեալ է 'ի մտի մաշել: Բայց զօրէնս՝ զոր ուսայ յԱստուծոյ 'ի մանկութենէ իմմէ՝ թողուլ, և ընդ երկիւղի մարդոյ փոխանակել՝ չէ հնար: Զի եթէ 'ի մարդոյ ընկալեալ էր զարդար վարդապետութիւնն՝ զոր հաստատեալ է 'ի միտս իմ, գիտէի թէ ճըշմարիտ էն՝ և ուրանայի, ողորմելի զանձն իմ համարէի. Թող թէ օրէնս, զոր ընկալայ և ուսայ 'ի բերանոյ Աստուծոյ, վաճառել ընդ երկիւղի մարդոյ և մնոտի փառաց. քաւ լիցի: Իմ պատասխանիք այդ են, յորում ցանկամ մեռանել, քան թէ կալ ուրացութեամբ առանց Աստուծոյ: Իսկ այլքս, որ կան առաջի ձեր ամենեքեան՝ որ

եռ 'ի քրիստոնէական կարգէ, բաւական է իւրաքանչիւր ոք ընդ անձին իւրոյ տալ պատասխանի:

Եւ լուեալ այլ ազգացն, որք էին յերից աշխարհաց՝ Հայոց, Վրաց և Աղուանից, զպատասխանիսն աներկիւղութեամբ զսպարապետին Հայոց Վարդանայ, և զսաստիկ սրամտութիւն զանազան թագաւորին, ետուն պատասխանի և ասեն. Ներեսցէ մեզ արքայ աւուր ինչ խօսել ընդ միմեանս, և տանել ձեզ պատասխանիս հաստատագոյն միաբանութեամբ. վասն զի յաղագս հոգւոյ ընտրութեան խնդրին 'ի մէնջ պատասխանիքդ, յորում կայ առաջի գիւտ և կամ կորուստ յաւիտենական: Եւ ոչ է պարտ սխալել և անքնին մտօք առաջի ձեր առնել այդպիսի մեծի խնդրոյ դարձուած բանից. քանզի զնախնի և զաւրական հայրենի աւանդութեան մերոյ խնդրէք զհաւտալն, և զյանձնառութիւն բանադանէք օրինաց՝ որոց ոչ եմք եղեալ մեք և կամ հարքն մեր ընդունօղք և

սիրողք։ Եւ Թագաւորին ամենայն աւագանեաւն յանձն առեալ, հաւանեցան բանիցն. և շնորհեալ նոցա զժամանակաւորութեան խնդիրն, արձակեցին զատեանն։

ԻԸ. Յայնժամ 'ի մի վայր ժողովեալ նախարարացն ամենեցուն, որք էին յերեցունց աշխարհացն՝ Հայոց, Վրաց և Աղուանից, և տարակուսեալք յանձինս իւրեանց, խորհուրդ 'ի մէջ առեալ՝ թէ զինչպիսի հնարիւք և մտածութեամբ ելս իրացն կարասցեն գտանել. և յածեցուցեալ զմիտս 'ի բազում յուզմունս խնդրոց զատկաւ աւուրս, յայս միտս առ վայր մի հաւանեցան և հաստատեցան, եթէ այլ ոչինչ գոյ մեզ հնար զերծանել յոլորդայթէս, զոր ձգեալ չար որսորդին սատանայի՝ պաշարեաց ըզմեզ, բայց եթէ առ ժամ մի յանձն առնումք պատճառանօք զհրամայեալս նոցա. և երթեալ իւրաքանչիւր յաշխարհ, այնուհետև կամ կեամք ծառայելով ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի՝ յոր ծնաք աւա-

զանձին նորոգութեամբ 'ի ձեռն ամենասուրբ վարդապետութեան նահատակին Գրիգորի և նորին զաւակի, և կամ թողեալ զաշխարհ՝ զընացին իւրաքանչիւր յօտարութիւն կնաւ և որդւովք, ապաւինեալք և հաստատեալք 'ի բուն կենդրոն փրկչին՝ որ ասէ. թէ Յորժամ հալածեսցեն զձեզ 'ի քաղաքէս յայսմանէ՝ փախիջիք 'ի միւսն: Այս եթէ զանձանց միայն զփրկութի եղեալք 'ի մտի ընդդիմանամք անօրէն հրամանաց իշխանին, անթիւ բազմութեան արանց և կանանց, ծերոց և տղայոց լինիմք պատճառ յաւիտենից կորստեան. զորս խաղացուցեալ այսր՝ զընտրս ծառայեցուցանեն անօրէնութեանց պաշտամանց ազգաց յազգս:

Արդ թէպէտ և ածեալ ուրուք զմտաւ զայսպիսի որոշողութեամբ առանձինն, և զնոյնս գործեալ խորհեալք միաբանութեամբ առ միմեանս զաւուրս սակաւս զցայգ և զցերեկ, սակայն ոչ իշխէին յայտնել զօրավարին Հայոց Վարդանայ

առաւ Մամիկոնէից զմեծամեծութիւն միաբանութեան իւրեանց. Ճանաչելով ի միտս իւրեանց, թէ նոքա ոչ են հնար յանձն առնուլ և հաւանել այսպիսի խորհրդոյ. ամենեքեան զանձնական զհաւատս հայրենի իւրեանց ի վերայ հաստատութեան մեծին Տրդատայ. Բայց առաջին և ձեռնամուխ լինել[1] նոքա և յարուցանել զայս ամենայն, չհաւանէին հանդուրժել. քանզի գիտէին եթէ առանց նորա ամենայն խորհրդոցն ի նմանէ և պատճառադրութիւնք և արարուածք՝ թէ րեք են և անհնարինք։ Զի թէպէտ և կարծեցին լինել կարող լուծա-Ճառափոխ խորհրդոցն՝ զերծանել խաբէութեամբ և գողանալ զմիաթագաւորին և զամենայն Արեաց հրապարակէն, և գտանել յիւրաքանչիւր երկիր. առաջին գիտէին թէ թերակատար և ոչ լիապէս լինի նոցա գործ խորհրդոյն և իրացն առաջարկութիւն. Վասն զի առաւել էր ամենեցուն և լինել ի գլուխ Ճա-

1 Օր. Նշանեն։

ռաչէին, եթէ ամենայն իրք այնպիսի գործոյ 'ի բնէ յուրում Մամիկոնէից ազգաւ և նոցա միաբանութեամբ եղեալ էին 'ի գլուխ։

Որոց ածեալ զայս ամենայն զմը-տաւ նախարարացն ամենեցուն և սեպհացն, որք էին 'ի դրանն ժողո-վեալք, միաբան եկին առ տէրն Մա-միկոնէից և Հայոց զօրավարն Վար-դան, և յայտնեալ նմա զխորհուր-դըն՝ պատմեցին զիւրեանց զիմաստս զամենայն և զոր խորհեալ էին առ-նել. յաւելեալ 'ի նոյնս Թախան-ձումն և աղերս ամենեցունց ասէին. Հայեաց, ասեն, 'ի մեզ անընդդատ մտօք, հայեաց, ասեն, և յառաջի-կայ զխպմունս բազմութեան բիւ-րոց մարդկան պատահելոց չարա-չար աղէտից. յիշեա զհառաչանս մարց, զմտաւ ած զորդւոց ող-բումն, զծերոց սոխպով և զպառա-ւանց վարելոց յօտարութիւն, և այլ ամենեցունց դիպելոց այսպիսի անհնարին և չար վշտաց։ Թէ լոկ միայն մարմնոյ աշխատութեամբ և մահուամբ էր կրել զայս ամենայն,

հանգոյն ծառոց էր և զաւառն և ար-
ժանի լինելոյ. Թող թէ առ հասարակ
առաւելի հոգւոյ և մարմնոյ զայթա-
կղութիւն և կորուստ: Եւ ոչ եթէ
լոկ հարևանցի լինի հասանելոյ վտան-
գիս փորձանաց, այլ ցանկ մանեալ
իսպառ ամբարշտութեան թանձրա-
մածութեամբ անձնելոյ է զաւուրս ե-
կեղեցիս մեր և զեկեղեցականսն. ըղ-
կանայս և զծնունդս մերձև յաւի-
տեան: Եւ եթէ զաւ մեծարանելով
մերում խորհրդոյս՝ կարասցես առ-
վայրկ մի հաւանեցուցանել զա-
մբար. գիտեմք զի ողորմութեան
զիջանելք բազմաց մէջս. այլ և ոչ ընդ-
հանուր եկեղեցիք եկեղեցւոյ աշ-
խարհոյն մատանին յաւելք. և ոչ
վարին ՚ի գերութիւն բռնաւորաց
աշխարհացն բնակիչք. զի ոչ շարժի
աւուրք հասանեն ՚ի հիմանէ. այլ թէ
և առ վայրկ մի զգուշ համարին՝ կանգ-
նէ հաստատ անդրէն և հաստատէ
ող ամենակալին: Եւ այս լինի հաս-
տատ այսպէս. եթէ կարասցես վայրկ
մի հնարադարանս վասն մեր. ողորմես
զի ողորմայցէ զմեզ քե հանդերձ

ամենագթածն բժշկի՝ Բանն Աս-
տուած:

Եւ լուեալ զայս ամենայն բանս զօրավարքն Հայոց Վարդանայ ընդ Մամիկոնէից ՚ի նախարարացն Հայոց, Վրաց և Աղուանից, ամենեքին ոչ առնուին յանձն լսել և հաւանել այսպիսի բանից, և կամ ընաւ հաղորդ լինել այսպիսի խորհրդոյ. այլ յոյժ խռովեալ մեծաձայն գոչմամբ ասէր ցամենեսեան. Թէ Մի լիցի ինձ ստել արարչին իմում՝ պատճառանօք և կամ ճշմարտութեամբ, և մի ուրանալ զայն՝ առաջի անօրէն և մահկանացու ազգի, որ ուրանայ զուրացօղս իւր առաջի Հօր և հրեշտակաց սրբոց: Քաւ լիցի ինձ յաղագս զմտաւ ածելոյ զկարիս և զվիշտս զկնոջ և զորդւոց և զազգի, տալ ՚ի մոռացումն զոր ասէն, Թէ Որ սիրէ զկին և զորդիս առաւել քան զիս, չէ ինձ արժանի: Այլ դուք որ այժմ յերեցունց աշխարհաց եկեալդ էք տանուտեարք և սեպուհք, շնորհիւ ողորմութեամբն Քրիստոսի լի էք ամե-

նայն զօրութեամբ և լաւութեամբ. զի ըստ ազատութեան արուեստի՛ առաւելեալ էք ամենայն հրահանգիւ, և ճանաչիք երևելի 'ի մէջ սպայիս և 'ի մէջ ամենայն ազգաց, և 'ի մարտս և 'ի կագս քաջութե՟. իսկ զճշմարիտ և զարդար հաւատն ուսեալ էք յԱստուծոյ 'ի ձեռն առաքելանման հօվուին սրբոյ նահատակին Գրիգորի և նորին զաւակի. բաւական էք ընդ իւրաքանչիւր անձին տալ պատասխանի, և որպէս խորհիք՝ կարիցէք առնել. այլ ինձ ոք 'ի ձէնջ՝ զոր ինչ անհնար է ինձ լսել բանիւք, թող թէ և առնել արդեամբք, մի՛ ասէք:

Եւ լուեալ զայս ամենայն ըզխօսս՝ բազմութեան նախարարացն աշխարհացն երեցունց 'ի զօրավարէն Հայոց 'ի տեառնէն Մամիկոնէից Վարդանայ, թէպէտ և յանհընարին տրամութե՟ ընկղմեալք խռովէին, այլ սակայն ոչինչ թոյլ տուեալ լինէին 'ի բանիցն առաջարկելոյն. իմացեալ և առ կարիս վտանգին և այլ հնարս մաղթանաց: Եւ

ժողովեալք 'ի մի վայր՝ կոչէին առ
ինքեանս զիշխանն Մոկաց զԱրտակ,
և զնա առաւել փութացուցանէին՝
անձանձրոյթ խանդաղատանօք նըս-
տել առանձինն և խօսել ընդ սպա-
րապետին իւրեանց՝ տեառն Մամի-
կոնէից տոհմին։ Եւ նա ինքն էր այր
համեստ, մտացի և քաջ. և տէրն
Մամիկոնէից Վարդան առաւելա-
պէս պատուով սիրէր զԱրտակ։ Որ
և հաւանեալ հրամանի նախարա-
րացն Հայոց, յանձն առնոյր ամե-
նայորդոր փութով ջանալ ընդ նը-
մա, յարաժամ աղաչէր. զոր և առ-
նէր իշխանն Մոկաց Արտակ, մերթ
առանձինն և մերթ հանդերձ աւա-
գանեաւն Հայոց՝ ըստ յանձնառու-
թեանն իւրոյ. որք ոչ դադարէին
զցայգ և զցերեկ խօսել ընդ նմա
զնոյն բանս և զայլերս 'ի բազում
աւուրս։ Զորս և ստիպագոյնս և
անհանգիստ 'ի նոյն խորհուրդս ճե-
պեցուցանէր զամենեսեան բդեշխն
Վրաց Աշուշայ, որ էր այր խելացի
և խորհրդական, և ունէր կին յազ-
գէն Արծրունեաց զքենի մեծի սեպ-

հէն Մամիկոնէից Վարդանայ· որ ևս առաւել յորդորէր յառաջագրեալն Աշուշայ զամենայն բազմութիւն նախարարացն Հայոց և զտէրն Մոկաց զԱրտակ, խօսել ընդ զօրավարին Հայոց Վարդանայ զայս ամենայն աւանդ յապաղելոյ։ Եւ ինքն զնոյն խօսէր ընդ նմա ոչ կասեր անձանձրոյթ բողոքելով, և ըստէպ հայեցուցանելով յիրան, թէ որչափ յանհաւանելն քո՝ կորուստ երեցունց աշխարհացն լինի, և 'ի հաւանելն և յանձն առնուլն՝ գիւտ բազմաց, և անձին ապաշխարութե ակնկալութիւն։

Եւ տեսեալ նախարարացն և սեպհացն երեցունց աշխարհացն զկամս սպարապետին Հայոց Վարդանայ այնպէս անշարժս և անհաւանս 'ի յորդորմունս խօսից նոցա և աղաչանաց, բերեալ հարկաւորէին այնուհետև մատուցանել նմա 'ի սուրբ գրոց ճառակս դիպողս՝ ըստ պատշաճի հանդիպելոյ 'ի ժամանակին, որք տեղեկագոյնք էին 'ի նոսա գրոց սուրբ եկեղեցւոյ, յիշեցուցանելով

նոսա՝ որպէս առն ուսելոյ և տե-
ղեկի, – քանզի յոյժ հմուտ էր և
ընդել գրոց վարդապետութեան՝
ուսեալ և խրատեալ ՚ի սուրբ հայ-
րապետէն ՚ի Սահակայ ՚ի հաւրն
իւրմէ, – զգրեալն սրբոյն Պօղոսի
յաղագս Արարչին, թէ որ ոչն գի-
տէր մեղս, վասն մեր մեղս արար:
Եւ դարձեալ զինքեան իսկ Պօղոսի
զիջանելն, և նզով զանձն տենչա-
ցեալ լինել վասն ազգատոհմին փրր-
կութեան, զոր գրեալ ասէր ՚ի թղ-
թի Հռովմայեցւոց, եթէ Ուխտիք
խնդրէի ես իսկ ինքն նզովեալ լինել
՚ի Քրիստոսէ. վասն եղբարց իմոց և
զաւակաց և ազգականաց ըստ մար-
մնոյ, որք են Իսրայէլացիք, որոց
որդեգրութիւնն և փառքն և կտա-
կարանքն և օրէնսդրութիւնքն և
պաշտօնն և աւետիքն: Ա՛ռ յանձն,
ասէն, և դու լինել վասն մեր առա-
կաւորս, նզովս. չես մեծ և առա-
ւելեալ ՚ի հաւատս արդարութեան
քան զսուրբ առաքեալն Քրիստոսի
Պօղոս. բայց ժողովուրդքն Հայոց
Վրաց և Աղուանից յոյժ շատ են

քան զժողովուրդն խաչահանութեան Հրէից։

Եւ յորժամ զայսպիսի բազում բանս և ստէպ թախանձանօք զաղաչանս դնէին առաջի զօրավարին Հայոց Վարդանայ՝ երեցունց աշխարհաց աւագ տանուտեարքն և սեպուհքն, բերէին այնուհետև և զսուրբ աւետարանն, եդեալ ամենեցունց առ հասարակ զձեռս 'ի վերայ՝ երդնուին ասելով. Եթէ դու ևեթ առ վայր մի կարասցես յանձն առնուլ պատճառանօք զասացեալս թագաւորին, և զերծուսցես զմեզ յորոգայթագէտ թշնամւոյն յարձակմանց, ամենայն ասացելոց 'ի քէն լուիցուք և արասցուք, դնելով զանձինս մեր 'ի վերայ ուխտին սրբութեան, և հեղլով զարիւն մեր 'ի վերայ ամենայն աշխարհին փրկութեան։ Եւ եթէ դիպեսցի մեզ թողուլ զաշխարհ և զամենայն ստացուածս և փախչել յօտարութիւն, ընտրեսցուք հանդերձ կանամբք և որդւովք. և սիրով յանձն առցուք զաղքատութիւն և զմուրողութիւն.

միայն 'ի բարեկամութենէս ևեթ ատ-
րեցաք։ Եւ որ որ թուեցեալ 'ի
բանիցս յայսցանէ՝ ամենայն ախտա-
ւորն, և նենգութեամբ որոշեցի
յերգմանէ սուրբ աստուածայնոյն. և
'ի միաբանութենէ բարեկամութեան
այսորիկ, որոշեալ ձերբերցի և նմա
նման Յուդայի, որ ձերբեալ մեկ-
նեցաւ 'ի գնդէն սուրբ առաքելոցն.
և բաժին այնոցիկ առանց ատա-
խարութեան և թողութեան ընդ-
նմին լիցի, մանաւանդ անէծք նոցին
զոր պատրաստեաց Աստուած սա-
տանայի և արբանեկաց նորա։ Եւ
որ ինչ վնասք և կամ գերութիւնք
և զրկմունք աշխարհաց երեցունց
հասցեն, յանձնէ այնոցիկ և մա-
բանելոցն ընդ նոսա խնդրեսցի վրէժ-
խնդրին մինչև ցյաւիտեան։ Իսկ
զբարի և զօգտակար պահպանու-
թիւն՝ զոր շնորհեաց փրկչին Քրիս-
տոսի պարգևեսցէ բազում այլոց
երեցունց աշխարհացս՝ վասն քո սու-
վայր մի հաւանեցող մեզ, եղիցի
մնացեալ ժառանգութիւն այն 'ի
փրկութիւն թողութեան այլոց քո
և ազգի մինչև ցյաւիտեան։

ըսելով զայս ամենայն բանս

Ու ըսելով երկու աշխարհաց ազգա-
ի ըմբռնել զաշխարհին Հայոց Վրաց-
ւոցն՝ զօրավարին Սամիէլեանց. անսեալ
նոյ մեծամ ամենեցուն անհաստատութե
և զիջել ամենեցուն ամբարտաւան ա-
կրթանի զօրութ առաջի աւանդեցին և ա-
մին, որոց Միրով, յարատատու հա-
ամեղեցին յանձն առ մեր մի զօրա-
բեալ՝ Միրսաւորին զաւն երե-
Խանանք աշխարհացն և բարձրութեանց
գանց աշխարհացն և կանանց։
Նատա տղայոց և կանանց։

ԻԸ. Ու այնպէս մարտնեալք ա-
մենեքեան յանձն առնուին կատա-
րել խորհրդեանն զչարամանն Թա-
գաւորին. և երթեալք 'ի տան մի-
խրանցին, կեցին 'ի Նատա ցուցա-
նէին, այլ ոչ ամենեքեան, զօրա-
Խանանք և ոչ Ջշմարտութեանն
զաշխարհին զերաց խրխեանց մա-
նկոտորածին։ Ու անկք Թէպէտ
և զեալին զանգարակին զօրութն,
այլ ցանկացեալք աշխարհին զա-
ռաց՝ փոխանակեցին զփառս անեղ-
ծին Աստուծոյ ընդ եղծանելի և ան-
ցաւոր կենաց աշխարհիս։

Եւ զայն տեսեալ թագաւորին Պարսից և ամենայն մեծամեծաց դրանն և մոգուցն, նուէրս ազգի ազգի բազում խնդութեամբ մատուցանէին աստուածոց իւրեանց: Խրախ մեծ ուրախութեան առնէին յաւուրն յայնմիկ, հաշուելով այն որ լինել անշարժ հաստատութիւն թագաւորութեան իւրեանց, կեալ խաղաղութեամբ աներկիւղ այնուհետև յամենայն թշնամեաց: Եւ ագուցեալ զտանուտեարսն և զսեպուհսն զերեցունց աշխարհացն ըղ-Հայոց, զՎրաց և զԱղուանից 'ի հանդերձս թագաւորականս զարդարէին. այլ և բազում և այլ ազգի ազգի պարգևօք և պատուօք, գիւղօք և ագարակօք, ըստ իւրաքանչիւր ուրուք պիտոյից լցուցանէին զամենեսեան: Զորս և 'ի հրաժեշտի կացուցեալ՝ փութացուցանէին հասանել յիւրաքանչիւր աշխարհ: Տուեալ ընդ նոսա բազմութիւն սուտ վարդապետաց, զոր և մոգ անուանեն, յորդորէին ուսանել զուսմունս ծաղրելի շնչմանց և

ընդունչարկու քարթընչմանց խօս-
ողն, որպէս զօձակոչան և զորովայ-
նախօսս. պատուէր տային յերեսին
աշխարհին կարգել զխաբէութեան
դպրոցս, և ուսուցանել առ հասա-
րակ զբնաւս՝ զարս և զկանայս՝
զուսմունս մոգուցն:

Որոց առեալ 'ի յանձն՝ զբազ-
մութիւն մոգուցն տանել ընդ ին-
քեանս յօժարէին: Երթեալք այ-
նուհետև հրաժարեալք 'ի Թագա-
ւորէն Յազկերտէ և 'ի մեծամեծ
աւագանւոյն դրանն, գովութիւնս
սուտս և շնորհակալութիւնս խա-
բէութեամբ իւրաքանչիւր ոք 'ի
պատճառելոցն առ վայր մի ըստ իւ-
րում զօրելոյ իմաստից մատուցա-
նէին Թագաւորին և ամենայն աւա-
գանւոյն Արեաց, մանաւանդ առա-
ւելագոյն չարաթունին Միհրներ-
սեհի: Եւ էր պատճառ շնորհակա-
լութեանն յամենեցունց մոգաց այս,
եթէ Ամենայն Թագաւորք որ յա-
ռաջ քան զձեզ էին 'ի գահուդ
յայդմ, ձեր նախնիքն, սիրէին ըզ-
մեզ՝ հոգալով զմեր շինութիւնս և

զօգուտս մարմնաւորս: Բայց դուք առաւել ցուցէք զսէրն՝ որ էր առ մեզ, զի զյաւիտենական կենդանութիւնն մեր զմտաւ ածէք ծանուցանել մեզ և պարգևել: Եւ եթէ նախնեացն քոյ ծառայեցայք յամենայնի յօժարութեամբ և կամաւ յամենայն պէտս՝ յոր և հրամայէին մեզ, իսկ քեզ՝ ամենայն անձին պարտ է ոչ իբրև զմի անձն սպասս մատուցանել, այլ որպէս զբազում անձինս զմի անձն առնել, և անձանձրոյթ հպատակել զցայգ և զցերեկ օգտախնդիր թագաւորութեանդ. քանզի յաղագս գիւտի մոլորեալ ոգւոյս մերոյ փութով հոգացար:

Եւ սոքա իւրաքանչիւր անձին այսպիսի լինչ, և եւս առաւել, ըստ իւրաքանչիւր կարի՝ սաստեալ զովութիւնս լսեալ դադարէին: Իսկ սպարապետն Հայոց Վարդան տէրն Մամիկոնէից կարգեալ զիւրն զառանց պատճառանաց զանսուտ բանս և զլինելոց իրս, որպէս ՚ի դէմս գովութեան թագաւորին և ամենայն բազմութեան աւագանոյն

Սրեայ, ասէր այսպէս. Թէ Զիմոյ
զնախնեացն զհպատակութիւն և
զվաստակ՝ զոր յայս դուրս և առ
ձեր Թագաւորութիւնդ արարեալ է,
'ի ժամանակէ յորմէհետէ կարգեալ
եմք 'ի ձեր ծառայութիւնդ, դուք
ամենեքեան քաղաքոյն գիտէք. և
ինձ ոչ է պիտոյ յաղագս այդպիսի
իրաց մի ըստ միոջէ տեղեկացուցա-
նել զձեզ, զոր ստուգագոյն առա-
ւել ճանաչէք քան զիս: Իսկ Թէ-
պէտ և շատ նուաղ եմ քան զիմ
նախնիսն, սակայն որչափ կարն էր
յիս, եղեալ էր 'ի մտի արդար վաս-
տակօք հաճել զմիտս ձեր. և ուր
հասեալ էի 'ի գործ 'ի ձեր հրամա-
նէ, տեսեալ էր զօրագլխաց ձերոց
և իմ ընկերաց՝ ըստ իմ ուժոյ միա-
մտութեամբ զիմ զգործն և զվաս-
տակն: Բայց արդ յայսմհետէ այս-
պէս կամք են, ջանամ զի Թէ ցայժմ
գործեալ ինչ իցէ՝ և ոչ արժանի
անուան կամ գովութեան, յայսմ-
հետէ հնարիւք ամենայն զօրութ̃բ և
ուժով՝ օգնականութեամբն Աստու-
ծոյ՝ գործել գործ այնպիսի, զոր ոչ

միայն առաջի ձեր Սրբոյ, այլ և 'ի կայսեր դրանն և յայլ ազգս պատմեսցի համբաւն այն մինչև ցյաւիտեան:

Եւ զայս բան՝ որպէս 'ի շնորհէ Աստուծոյ, սպարապետին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից ստացեալ, զոր հաճակելոց էր զնահատակութիւնն որ առ Աստուած 'ի գործ յաւիտենից: Եւ զայսպիսի ստացմունս լուեալ Թագաւորին Պարսից և ամենայն աւագանոյ դրանն, մեծաւ շնորհակալութեամբ զարմացեալք գովեցին զնա և գոհացան. քանզի ծածկեաց Աստուած զբան խոստմանցն՝ զոր ասաց գործել սպարապետն Հայոց Վարդան յաղագս մեծի անուան համբաւոյ, զոր պարգեւեաց նմա Աստուած զանուննահատակութեան յազգս յաւիտենից:

Եւ հրաժարեալք այնուհետև յամենեցունց երբեքեան աշխարհք, Հայք, Վիրք և Աղուանք, առեալ ընդ ինքեանս զդասս բազմութեան մորուց, դարձան յիւրաքանչիւր

հաստատեալ բազում աշխարհս, և 'ի Ճանապարհին միոյն անգամ աւետարանին սրբոյ, ուխտ երդման և 'ի միմեանց գնացին հրաժարեալք յիւրաքանչիւր աշխարհս, այդ ա-նէլ միմեանց 'ի ժամանակի ըստ Աս-տուծոյ հրամանատարութեանն ըղ-պետս գործոցն զոր խորհեցան կա-տարել: Բայց զբդեշխն Վրաց զԱ-շուշայ և զերկու որդիս իշխանին Սիւնեաց Վասակայ, զԲաբիկ և զԱմիրներսեհ, ոչ արձակեաց Թա-գաւորն Պարսից Յազկերտ ընդ այլ նախարարացն Հայոց. հայելով 'ի յառաջիկայ իւրացն անյայտութիւն, կասկածեալ զգուշացաւ:

ԻԹ. Արդ՝ եկեալ հասանէին տա-նուտեարքն Հայոց հանդերձ սեպ-հօքն և որ ընդ նոքեանս, յաշխարհս Հայոց, ողջք և ոչ ողջք, կենդանի կիսամեռք. որք ոչն տեսանէին ըստ յառաջ լուսաւոր եկեղցն ողջամբ յայնպիսի հեռաւոր Ճանապարհէ: Եւ եղեալ ընդ առաջ նոցա դասք պաշտօնէիցն Քրիստոսի, բերելով ընդ նոքեանս զնշան կենսատու խա-

չին և զնշխարս սրբոյ առաքելանման նահատակին Գրիգորի, զձայն սաղմոսաց զոր երգեաց մարգարէն Դաւիթ սուրբ Հոգւոյն շնորհիւ, որում և ինքեանք երբեմն ձայնակից եղեալք՝ առաւելագոյն քան զպաշտօնեայսն նուագէին զերգս երկնաւոր ցնծալից ուրախութեամբ: Այլ անդ էր լսել զձայն լալոյ և զձայն գուժի, գոչիւնս ողբոց և բարբառ ճչոյ. տղայք անձկոտք 'ի գրկաց հարց լուրեանց պակուցեալք փախչէին, կարծելով այլափոխեալս զնս, և ոչ զնոյնս նկատելով կերպարանս՝ զարհուրէին. ստէպ հայելով յերեսս մարցն, զորս տեսանէին կողկողագին միշտ և արտօսրաբուղխս, յաղագս որոյ և ինքեանք յարտասուս հարեալ տղայքն՝ ոչ ոք կարէր լռեցուցանել 'ի դայեկացն կամ 'ի դաստիարակացն: Ընդ որ հայեցեալ այնոցիկ՝ որք պատճառանօք և ոչ ճշմարտութեամբ ուրացողք էին, փութանակի և առ ժամայն կամէին յառնել և ընդ ինքեանց սուրն ելանել. որոց ոչ պիտէր և

տու փայլ մի կեալն, քան թէ զայն-
պիսի տեսանել զաղէտս և ժուժ-
կալել. որք զկերակուրս ուրախու-
թեան, ըստ բանի սաղմոսերգին,
իբրև զմոխիր ուտէին, և զըմպելին
իւրեանց արտասուօք խառնէին.
քանզի ոչ ոք հաւանէր ընդ նոսա
կամակից լինել անզգամաց, ոչ կին,
ոչ որդի, ոչ ազատ, ոչ ծառայ ոք և
ոչ սպասաւորք:

Եւ էր այնուհետև տեսանել զա-
մենեսեան քահանայսն 'ի միմեանց և
պատառեալս. և զորոց քայլս և
անխորժակ բարբառ փրկչին Քրիս-
տոսի, որ ասէր. թէ Ես և այլ ոչ-
խարք՝ որ ոչ են յայսմ գաւթէ,
պարտ է և զնոսա ածել այսր՝ զի
եղիցին մի հօտ միոյ հովուի Ջիմոր-
ոյ, զոր Աստուած միացոյց. և կա-
տարէր զասացեալսն. յանկարծակի
արշաւեալ թշնամւոյն՝ ցրուեաց
զնր 'ի վայր, և արար իբրև զհօտ՝
որոյ ոչ գուցէ հովիւ: Վասն ամե-
նայնի այսորիկ սուգ առեալ կա-
ծէին կանայք սուգ աղաղակն և
ողբս 'ի հրապարակս, մանկամարդ

տոնականայք, օրիորդք 'ի սրահս դանակախակեալս, հարսունք 'ի սենեակս: Սուրբ եպիսկոպոսք պատուական քահանայիւք և եկեղեցական ուխտիւ, ծերովք և տղայովք և ամենայն ժողովրդոցն բազմութեամբ՝ կառաչ բարձեալ լոյսն 'ի տաճարն Աստուծոյ: Եւ էր տեսանել ծեփեալ արեանց հասամամբք զամենայն դէմս ուղղափառ մարդոց:

Իսկ մոգուցն գունդք սախլով բռնադատէին տանել զկրակս 'ի տաճար սրբութեանց Տեառն, և յայլ ակնաւոր և գեղեցիկ տեղիս, շինել ատրուշանս և կարգել բանակիրս փայտակրաց 'ի պէտս կիզման չաստուածոյն անյագի. որոյ յուտելն յանդգայս՝ ոչինչ շնորհ ունի պաշտօնէիցն, և 'ի կրել արտաքս զաւելորդ Թրքածս մոխրոցացն՝ ձանձրացուցանէ զգաղախադէմ ընկրողն պաշտօնեայս:

Ղ. Եւ արդ՝ տեսեալ զայս ամենայն չարիս տեառն Սամիկոնէից և Հայոց սպարապետին Վարդանայ, կոչէր առ ինքն զամենայն միահա-

մուռ զբաղմութիւն դրան իւրոյ՝ սկսաւ խօսել ընդ նոսա և ասել. Ես ոչ ուրացայ զարարիչն իմ և զտէր Յիսուս Քրիստոս՝ կամաւ և կամ առ երկիւղի, քաւ լիցի. և ոչ զվարդապետութիւն և զհաւատս սրբոյ աւետարանին, զոր ուսոյց և հաստատեաց յիս Ճշմարիտ հաւն իմ տէր Սահակ, մերժեցի յինէն. այլ առ վայր մի մինչև 'ի ժամս յայս յաղագս ձեր ամենեցուն գիւտի՝ կորեայ պատճառանօք, զի գտեալ զիս ձեօք հանդերձ՝ ապաշխարեցից և կեցից: Վասն զի ուսեալ եմ և յիշեմ զքաղցրութիւն սուրբ մարգարէիցն, թէ Ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ դառնալ նորա և ըզկեալն. և զոր 'ի միւսում վայրի սուրբ Հոգին ասէ. թէ Յորժամ դարձցիս և հեծեսցես, յայնժամ կեցցես: Արդ՝ փոխանակ զի թողի զիս պատճառանօք առ վայր մի վասն ձեր, կամիմ առուգութեամբ փոխանակ այնր թողլոյ զամենայն ինչ իմ կենցաղոյս այսորիկ մինչև իսպառ: Եւ որ ոք 'ի ձէնջ կամակից

կարող էք լինել՝ արհամարհելով զամենայն մնաւն կեանս աշխարհիս, յանձն առեալ ձեզ հանդերձ վասն անուան Քրիստոսի՝ ընտրեմ զնալ յօտարութիւն:

Եւ նորա խոստացեալ զամենայն այսպէս ընդ ընտանիս առնն իւրոյ, պատասխանի ետ նմա երանելին եղբայրն Հեղնեակ և ասէ. Փութա կատարել զոր խորհիդ, և մի յապաղեր. քանզի ոչ ոք կարէ լինել երաշխաւոր անձին իւրում և ոչ ժամ մի. Աստուծով՝ եթէ[1] կեցցուք, և առանց խղճի մտաց վախճանի առաւելն զիւղեսցուք, զամ մի չկարացեալք վաղ և կամ անագան զերծանել 'ի մահուանէ. Թէ մուրողութեամբ լցէ և թէ օտարութեամբ՝ նովաւ և եթ կեցցուք, և անուամբ նորա պարծեսցուք զօրհանապազ: Զուրացութեանն ևեթ զանունն 'ի բաց ընկեսցուք 'ի մէնջ, և խառնեալ 'ի հօտն Քրիստոսի՝ կամաւ յանձն առցուք զամենայն

1. Յօր. Աստուածով է Բէ:

վիշտս որ և հասանէ 'ի վերայ մեր, եթէ սով, եթէ սուր. և կամ թէ յօտարութեան՝ մուրողութիւն և վախճան:

Եւ այսպէս միաբանութեամբ արհամարհեալ զամենայն սնոտի մեծութիւն կենցաղոյս այսորիկ՝ առ ոչինչ համարեցան. այլ հանդերձ հաւանելովք ընդ ինքեանս դրամբ և ընտանեօք՝ դէմ եդեալ անցեալ 'ի կողմանս իշխանութեանն Յունաց ճեպէին, ուր և թագուցանել միաբանութեամբ և կամ սատ անդ ցրուել զանձինս կարասցեն: Եւ եկեալ հասանէին 'ի գիւղ մի, որոյ անուն էր Արամոնայ, 'ի նահանգին Բագրաւանդայ, մերձակայ սահմանակից Բասենոյ և Տուարածատափայ. ուր և սակաւ ինչ աւուրս կամեցեալ հանգչել, և զուշ եդեալ ճանապարհն գնալ պատրաստէին սախտով:

Յանկարծակի իրազգած եղեալ այսպիսի խորհրդոյ և գնացից յաշխարհէս Հայոց՝ զմեծէ սպարապետէն Հայոց. զտեառնէն Մամիկո-

յոց, և աղաչանօք գործուցանել զնա աղօթել. զի տացէ նորա մեզ այս ամենայն կամք և խորհուրդք՝ և ոչ մի ինչ վնասելին:

Եւ առաքեաց նամակ իշխանին Սիւնեաց Վասակայ խաբեալ մատնութեան, հրամայէր նամականի տանել և այլ ամենայն աւագ տանուտերացն Հայոց. և կնքեաց զնամականին խաբողանչիւք ուրացող մատնութեան, այսպէս գրեալ և զկնքեաց աւետարանն ուխտին. և այս պատասխանի յայս առաքեաց 'ի բաժանոյն, զերանեալն Ղեւոնդ երէց, և զերանելի երէցն զՍրեհամ 'ի Նորքաղաքէ, և զերանելի երէցն Մուշէն 'ի Արենոյ, և այս առաքի 'ի տանուտերացն Հայոց, զիշխանն Արշարունեաց Արշաւիր, զիշխանն Դիմաքսենից զՀմայեակ, և զիշխանն Աբեղենից զՓարսիկ. և առաքեաց ընդ իշխանին Սիւնեաց Վասակայ զամենայն նամականին և զաւետարանն երդման, զեպայրան արձակէր զկնի նորա. Այլ հաւատան գանենին զնա և ոչ ինչ նմանն էին՝ յառաջագունեաց զեղն յԱրտամանդայ:

Եւ այդ արարեալ՝ մատնէին զառաջեաւ, որպատմէին երանելւոյն Վարդանայ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետին, և առաջի եղբարցն իւրոց՝ Հմայեկայ և Համազասպայ, զպատճառս իւրեանց փաթանակի հասանելոյն առ նոսա, ընխորհուրդն և զնոսա հանդերձ եղմամբ որ եղեն ամենայն Հայոց՝ մատնութեամբ իշխանին Սիւնեաց Վասակայ. յաւուր բերեալ և զաւետարանն երդման՝ ածէին առաջի երանելւոյն Վարդանայ և եղբարց նորա: Տային 'ի ձեռս նորա և զնամակն Վասակայ տեառն Սիւնեաց և զայլոց աւագացն Հայոց և զեպիսկոպոսացն և զերիցանցն, և պատգամ կարճառօտիւ ամենեցուն բան, և ասէին ցերանելին. Թէ Դու աւասիկ հանդերձ եղբարբքդ և հաւանեալ ընտանեօքդ, որք հաղացեալ էն ապրեցուցանել ընդ քեզ զինքեանս, անձնատուրք լինիք. բայց մեք ամենեքեան կորնչիմք զանխաձան կորուսան: Վասն զի ոչ է հնար մեզ առանց ձեր, և ոչ զաւակի մե-

րում՝ երբէք պատահէր փրկու-
թեան և կենաց: Բայց որպէս հոգա-
ցեալ խնամ տարէք ձեզ. նոյնպէս
և զայսչափ զբազմութեան ոգիս
մի՛ թողուք կորնչել. քանզի եմք աստ
բազումք, որք և ազգախառն և ա-
րեան ձեր եմք. պատկեցարուք և
ընդ մեզ 'ի Քրիստոսէ, որպէս յան-
կացեալ ջանայք ընդ ձեր միայն պր-
ատկին:

Եւ զայս ամենայն բանս լուեալ
'ի քահանայիցն և 'ի նախարար
պատգամաւորացն եկելոց՝ սուրբ
սպարապետին Հայոց տեառն Մա-
միկոնէից Վարդանայ հանդերձ ե-
րանելի եղբարբքն իւրովք, և զսուրբ
ուխտարան ուխտին տեսեալ, և ըզ-
նամականին կարդացեալ զիշխանին
Սիւնեաց Վասակայ զմարզպանին
Հայոց, և զայլոց զիւրաքանչիւր ու-
րուք զընկերակցացն, պատասխանի
ետ միաբանութեամբ ամենեցուն և
ասէ. Են և եղբարք իմ և ընտանիք
կարեւոր՝ ընտրելագոյն քան զամե-
նայն ինչ որ է յաշխարհի՝ հաստա-
տեալ եմք ընտրել և զատանել զօ-

զայն փրկութեան գիտա, եւ ուսեալ եմք հաստատուն եւ զանշարժ բանն որ ասէ, — յոր եւ հաստատեալ եմք անշարժութեամբ, — թէ Զի՞նչ օգուտ է մարդոյ թէ զաշխարհ ամենայն շահեսցի եւ զանձն իւր կորուսցէ. եւ կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ։ Եւ ոչ զմեր եւեթ զօգուտ խնդրեմք զօգուտին, այլ եւ ընդ այլոյն խնամք ընդ փրկութեան։ Եւ ոչ որ փոխացեալս եմք՝ յերկիւղէ ոք ինչ սրտ կարծիցէ զայս զմէնջ, յորմէ ոչ ոք երբեք զանգիտեաց յաղագս մերում, եւ ոչ երբեք. եւ թէ որպէս ՚ի մերոյ ընկերի բարւոյ՝ առաւել քան զանձին միշտ հոգալով՝ զանձն եդեալ է այսմ առհմի, զայն եւ ամենայն զօր Հօր գիտէք աստուաթեամբ ՚ի պատմութենէ գրոց, եւ ՚ի նմին ձեր յաւագոյ։ Բայց ՚ի նմա զաւր խաբէութենէ ձերմէ՝ զոր արարեալ է ձեր ընդ նախնիսն մեր հանապազ, զայն ամենայն յիշեալ, քննեցեալ եմք ընդ անձնատուրս. որպէս զանձ ձեր մնեալ է զմեզ ՚ի

այլ միաբանութեամբ ամենայն Հա-
յոցս երթալ յեկեղեցի ցանկայր։
Բայց թէպէտ և նեղէր չերթալով,
այլ և կամաւ արգելեալ առ վայր
մի՝ համբերէր խրացն, հոգալով և
զպէտս ընկերացն որպէս խրոյ
տանն և անձին. մանաւանդ յաղագս
Աշուշայի Վրաց բդեշխի և որդւոց
իշխանին Սիւնեաց Վասակայ, զորս
արգելեալ պահէաց անդրէն 'ի դրան
Թագաւորին Պարսից Յազկերտ։ Եւ
զայս խորհէր սուրբն Վարդան,
եթէ ոչ առ 'ի պէտս ինչ օգնակա-
նութեան իւրում առաջադրեալ
գործոյն, քանզի չխորհէր զյաղթու-
թեան ինչ անուն գտանել, այլ զհե-
ղումն արեան անձինն 'ի վերայ չե-
նութեան ուխտի եկեղեցւոյ տեն-
չէր [1] ըմբռնել. բայց հոգայր եթէ
զբարեսէր, թէ մի՛ գուցէ դժուար
ինչ արանցն 'ի Թագաւորէն դիպի՝
և վնասիցին։

Բայց իշխանին Ամատունեաց Վա-
հան ոչ տայր դուլ և դադար զօրա-

1. Յօր. մըմնէր։

վարին Հայոց Վարդանայ. այլ մերթ ինքեամբ և մերթ այլովք ստիպէր՝ վաղվաղակի յայտնել զիրս ապստամբութեանն, կարծեցուցանելով որպէս հոգւոյ ևեթ հոգալ զգութ փրկութեան. բայց ոչ հոգալով ինչ կարի յայն միտս՝ ըստ խօսիցն փութացուցանէր զյայտնել իրացն, այլ վասն մթերից առաջին ոխութեանն՝ զոր ունէին առ միմեանս իշխանն Սիւնեաց Վասակ և տէրն Ամատունեաց Վահան: Բայց ըստ ծանր խոհականութեանն իւրոյ հայեցեալ նկատէր, թէ կամ չհաւանեալ ապստամբել իշխանն Սիւնեաց Վասակ՝ մեռանի յիւրոցն ընկերաց անարժան մահուամբ, կամ թէ հաւանեալ առ վտանգին ապստամբել, արգելեալ անդրէն 'ի դրանն որդւքն երկոքեան՝ չարաչար կենօք վտանգեալ պատահէին մահու. և կամ բազմաժամանակեայ կարևոր կապանաց և բանդից դիպեալք՝ սանջին անխնայ:

Իսկ սուրբ այրն Աստուծոյ Վարդան՝ տէրն Մամիկոնէից և Հայոց

զօրավարին՝ ոչ 'ի բանս ինչ ունելք հայէր, այլ պէտս ընկերաց հոգայր, և 'ի նահատակութիւնն ցանկացեալ ընթանայր։ Եւ այնպէս ձըգեալ բանի զաւուրս գարնանայն յերկար, մինչև յաւուրս ամառնոյն մօտեցաւ. և հասեալ ամիւք ամառնոյն ջերմութեան, չու արարեալ ամենայն բազմութիւնն Հայոց 'ի տեղիս հովուց, գային հասանէին 'ի գաւառն՝ որ կոչի Ծաղկոտն, մերձ 'ի բերդն ամուր՝ զոր Անգղն անուանեն. զայն տեղւոջ արարեալ բանակետեղս արանց՝ դադարէին անդ զաւուրս ամառնոյն։

ԼԲ. Իսկ մոգքն՝ որ 'ի դրանէն նախարարքն Հայոց ուսուցիչս ածեալ էին ընդ ինքեանս, իբրև տեսին թէ արհամարհեալ են յաչս նոցա ինքեանք և օրէնք նոցա, քանզի կանայք նախարարացն զորս կարծէին մոգքն աշակերտել՝ այնք և տեսանել անգամ գարշէին զնոսա, այլ զորդիս իւրեանց և զդստերս պատուիրէին ամէն դաստիարակացն՝ չանցուցանել երբէք առ նո-

քօք մօտ, իսկ արքն՝ որք պատճա-
ռանօք կործեցուցանէին զինքեանս
ուրացօղս, սուտ վարդապետացն և
հաց ուտել առաջի իւրեանց չտային
Թոյլ և շրջէին ողորմելի սովամահք,
գնալ 'ի բաց և փախչել չիշխէին, և
կալն առ նոսա՝ զմահ ծանուցանէր
նոցա և զկորուստ, և տակաւին
գրել գալով 'ի դուռն զիրս ապս-
տամբութեանն փութանային։

Այս իմացեալ ազարապետին
Հայոց Վարդանայ՝ Թէ կարի հռ-
չակելին իւր ապստամբութեանն, և
'ի կարի հեզգալոյն մեծամեծ գոր-
ծելին Վրաց, խորհուրդ 'ի մէջ ա-
ռեալ զաւուրս բազումս, և ժողո-
վեալ զպատուական եպիսկոպոսս և
զականաւոր երիցունս և զաւագ
տանուտեարսն Հայոց և զսեպուհսն
առանձինն, չև դեռ ևս յայնմ ժա-
մու կամեցեալ յայտնել զբանն
իւրեանց մարզպանին Հայոց Վա-
սակայ, գիտելով ոչ միայն լոկ վասն
որդւոյն և եթ զկապուտին առն 'ի
փրկութեան դարձին, այլ զառա-
ւել փառաւոր աստուածատեաց

խորհրդոց նորա ճանաչեալ զորոճմունս, ասէր ցամենեսեան այնուհետև յայտնապէս այրն երանելին Վարդան. Թէ Մինչև ցե՞րբ հանդուրժեմք թագուցանել զճշմարտութիւնն և կորնչիմք. և այս համբաւ ելեալ տարածեալ ելից զամենայն տեղիս, այլ յայտնի լուսով գնասցուք իբրև ՚ի տուընջեան, և որդիս լուսոյ կոչեսցուք:

Մի ոմն յՈստանեաց տանէն, որում անուն էր Զանգաղան, սերմն ժանգ, որդի անօրէնութեան, որ բազում և անապաշխար չար գործեալ էր ՚ի կեանս իւրում, լսէր յոմանց զխորհեալն Հայոց, և երթեալ վաղվաղակի պատմէր նմանւոյն իւրում Վասակայ: Որոյ բանից իրազգած եղեալ նենգաւոր քսուն՝ աւագ նախարարքն Հայոց, կալեալ զնա ՚ի գեօղն որ կոչի Արծակ, տարեալ կապեցին ՚ի միւսում ևս ՚ի գեօղ յանուանեալ Բերդկունս, ՚ի նմին Բագրևանդ գաւառի. զոր և ոչ յետ բազում աւուրց՝ ըստ արժանի գործոց իւրոց անօրէնութեց՝ քարկոծեալ սատակեցին:

Եւ ապա յայտնապէս ժողովեալ միաբանութեամբ ամենայն տանուտեարքն Հայոց և սեպուհք, եպիսկոպոսքն և բազմութեամբ ամենայն քահանայիւք և ժողովրդովք, առ երանելի սպարապետն Հայոց՝ տէրն Մամիկոնէից Վարդան, և հանդերձ նովաւ մտին Թափ ըստ գրոց հրամանին բոլորեքեան առ իշխանն Սիւնեաց Վասակ, առ մարզպանն Հայոց. և յայտնեալ նմա միաբան ամենեցուն զխորհուրդն, թէպէտ ջանայր յապաղել նա, մի վասն որդւոցն իւրոց՝ որք 'ի դրանն էին, և դարձեալ զի և կեանքն իւր իսկ 'ի խնամս չարին միտէին հանապազ, ոչ ինչ այնուհետև թոյլ տային սայթաքել խորհրդոց նորա այսր անդր. այլ թէպէտ և ոչ կամաւ, սակայն 'ի հարկէ յանձն առեալ միաբանէր ընդ նոսա: Բերել դարձեալ հրամայէին նախարարքն Հայոց սուրբ եպիսկոպոսացն և երիցանցն՝ զաւետարան ուխտին սրբոյ. և երդուեալ ամենայն բազմութիւն զօրացն ազատացն և անազատացն,

հանդերձ իշխանաւն Սիւնեաց Վասակաւ, և ամենայն աւանատերամբք և սեպհօք՝ հաստատէին զերդումն. և որոց մատանեաւ չև ևս էր կնքեալ զաւետարանն՝ կնքէին. և համբարձեալ առ հասարակ զձեռս ընդ երկինս՝ բարբառելով ասէին այսպէս, ամենայն բազմութիւնն, այր և կին միաբան խնդալիցք.

Զքեզ սուրբ Հայր, արարիչ երկնի և երկրի, և զՈրդիդ քո միածին զտէր մեր Յիսուս Քրիստոս, և ըզսուրբ Հոգիդ կենդանարար, զանորիշ և զանքակ Երրորդութեանդ միութիւն, խոստովանիմք արարիչ երկնի և երկրի, անեսակաց և անեսից. որ միայնդ ես Աստուած, և չիք այլ ոք բաց 'ի քէն: Որ և ըստ մարդասիրութեան յաղագս փրկութեան տիեզերաց՝ 'ի վախճան աւուրցս մի 'ի սորին Երրորդութենէդ ծնար 'ի սուրբ կուսէն Մարիամայ, և զամենայն կարիս բարձեալ քոյին մարմնովդ, զոր 'ի սուրբ և յաստուածածին կուսէն առեր, ա-րեալ բևեռեցեր 'ի խաչափայտի

յորում հեղեալ զսուրբ արիւն քո՝
ազատեցեր զաշխարհս 'ի ծառայու-
թենէ մեղաց անիծից, մահու, թա-
ղեցար և յարեար, և վերացեալ
յերկինս՝ ետուր աւետիս խոստման
առնել առ քեզ զամենեսեան, որ
խոստովանին առ քեզ Աստուած
ճշմարիտ, թագաւոր թագաւորաց
և տէր տերանց։ Եւ մեք վկայեմք և
խոստովանիմք զքեզ՝ Աստուած աս-
տուածոց և տէր տերանց, Աստուած
քաւիչ մեղաց մերոց. ուրացեալքս
և զղջացեալքս, յանցուցեալքս և
յողորմութիւն ապաւինեալքս, գլո-
րեալքս և կանգնեալքս։ Ընկալ ըզ-
մեզ որպէս զորդին ուրացօղ, որ ծա-
խեալ ազատեղեցաք զհանդերձ սուրբ
մկրտութեանն, զոր զգեցուցեր մեզ
աւազանին լուացմամբ, անառակ
անօրէնութեամբ թաւալեցաք 'ի
տղմ ուրացութեանց իբրև զդա-
սակն խոզից։

Եւ արդ դարձեալ առ ճշմարիտ
Հայրդ երկնաւոր աղաղակեմք ասե-
լով. Մեղաք յերկինս և առաջի քո.
շնորհեա մեզ բարեխօսութեամբ

լուսաւորիչ առաքելոյն, և վաստա-
կովք սուրբ նահատակին Գրիգորի
նոյին նմանոյն և գործակցի, զթո-
ղութիւն մեղաց մերոց. և զգեցո
մեզ զառաջին պատմուճանն, և մա-
քրեա զոտս մեր 'ի խոչիցն չարեաց,
որով ծակոտեալ 'ի թշնամւոյն կաղա-
ցոյց զմեզ: Եւ տուր մեզ կօշիկս պատ-
րաստութեան՝ աւետարանին սրբոյ.
և դիր զմատանին՝ զգծած խաչին քո՝
'ի մատին աջոյ ձեռին մերոյ, որով
կնքեալք զբոլոր անդամս մեր՝ սար-
սեալ բանսարկուն փախիցէ 'ի մէնջ:
Եւ որպէս հեղեր դու զարիւնդ քո
սուրբ 'ի վերայ մեղաւորաց 'ի փըր-
կութիւն յանցաւորաց, պարգեւեա
և մեզ հեղուլ զարիւնս մեր 'ի վե-
րայ խոստովանութեանս այսորիկ
և իւրաքանչիւր թողութեան մե-
ղաց: Եւ որ ոք հեռացեալ յուխտէ
երդմանցս այսոցիկ ցուցցի և ուխ-
տազանց, 'ի միաբանութենէս մերմէ
որոշեսցի՝ եղիցի նա արտաքս ընդ
Յուդայի, որ մերժեալ ընկեցաւ 'ի
գնդէ սուրբ առաքելոյն. և առանց
ամենայն թողութեան կացեալ 'ի

ձախու կողմանն՝ լուեալ 'ի քէն զա-
հագին բարբառն, զոր առեալ յա-
ւուրն հատուցման, թէ Երթայք
յինէն, անիծեալք, 'ի հուրն յաւի-
տենից, որ պատրաստեալ է սատա-
նայի և արբանեկաց նորա:

Եւ ատեցեալ զամենայն խոստո-
վանութիւն զօրհնութեանն և զա-
ոծելոյն՝ միաբանութեամբ ամենայն
բազմութեանն 'ի ձայն մեծ արանց
և կանանց, հնչեաց երկիրն ամենայն
'ի բարբառոյ զօրացն բազմութեան:
Եւ գրեալ զայս ամենայն բանս հա-
ւատոյ ուխտին, և կնքեալ նախ մա-
տանեաւ իշխանին Սիւնեաց Վասա-
կայ, և ապա մատանեօք ամենայն
տանուտերացն Հայոց և աւագ սեպ-
հացն, և եդեալ 'ի սուրբ աւետա-
րանի երդմանն, ետուն ցպատուա-
կան եպիսկոպոսն և ցաւագ քահա-
նայութիւնն որ էին անդ: Եւ կա-
տարեալ զայս ամենայն այսպէս,
դիմեցին մեծաւ ցնծութեամբ և
հոգւոր երգովք 'ի տուն տեառն,
և երկրպագեալ միոյն միայնոյ ճշ-
մարտին Աստուծոյ լի անձկով, և

յերկար և անձանձրոյթ ծունրդրու-
թեամբ կատարեցին զաղօթսն։

Եւ արձակեալք յաղօթիցն ա-
միկ զօրացն բազմութիւն դիմեցին
'ի տուն մեհենացն, չնայելով բը-
նաւ աւագացն հրամանի. և առեալ
զկրակարանն՝ վարեցին 'ի ջուրն
զկրակն, որպէս 'ի գիրկս եղբօր,
ըստ ասելոյ սուտ վարդապետացն
Պարսից. զոր ըմբռնեալ ջրոցն թըշ-
նամաբար և ոչ եղբայրաբար՝ ծա-
խեցին։ Բայց զմոգուցն բազմութիւն
պահել առ օրն հրամայեցին զգու-
շութեամբ. և 'ի վաղիւն 'ի ծագել
արեւուն առս 'ի նոցանէ թուովս սպա-
նին սրով՝ 'ի գիւղն որ կոչի Զարեհ-
աւան։

ԼԴ. Եւ կատարեալ զայս ամե-
նայն գործս ըստ ասելոցս կարգաւ,
դադարեցին անդէն զաւուրս տօ-
թոյն։ Եւ ապա փութացան իջա-
նել յԱյրարատ գաւառ. քանզի
լուան թէ Միհրներսեհ Արեաց հա-
զարապետ եկեալ 'ի Փայտակարան
քաղաք՝ գունդ կազմէ, և ընդ Ա-
գուանս արձակէ 'ի Հայս. զոր և

Աղուանից աշխարհ, որ ուխտակիցք էին Հայոց՝ առեալ փութացուցանէին հասանել առ ինքեանս, և անդէն առ Աղուանս 'ի դիմի հարկանելոյ պատերազմաւ:

Եւ որք եկեալք յԱյրարատ գաւառ, և զայս համբաւ լուեալ 'ի կողմանց Աղուանից, առաքէր զերանելին սպարապետն Հայոց Վարդան զտէրն Մամիկոնէից՝ իշխանն Սիւնեաց Վասակ՝ գնալ պատահել նոցա գնդաւ. և զինքն մտացուցանէր անդէն պատճառանօք, ասելով. թէ Ես աստէն պատրաստիմ. գուցէ, ասէր, այլ ինչ խռովեալ չարախորհուրդն Միհրներսեհ՝ գործիցէ ընդ մեզ: Այլ ինքն Վասակ զխաբէութեան ճանապարհն կազմեալ նիւթէր 'ի սրտի իւրում, ունելով կամակիցս և այլ աստուածանենգ ուրս խորհրդոցն իւրոց յազատացն Հայոց: Իսկ երանելի սպարապետն Հայոց՝ տէրն Մամիկոնէից Վարդան, ասէր ցիշխանն Սիւնեաց Վասակ. թէ Որպէս ածաք զմտաւ՝ պարտ է մեզ նախ զօրս ա-

առաքեմքն առ կայսր՝ արձակել․ և ապա զոր ինչ հրամայեսցես ինձ առնեմ՝ անխափան։ Եւ նորա յաղագս ձեռակալ զիւր առաջի եղեւ զխորհուրդն կատարելոյ՝ յանձն լինէր առնոյր զասացեալն յերանելւոյն ըն-պարապետէն 'ի Վարդանայ կատարել։

Եւ վաղվաղակի նամականի արարեալ առ կայսրն և առ ամենայն աւագանի դրանն Յունաց և առ այլ իշխանս և կողմնակալս, առ ընդեշխն Աղձնեաց և առ իշխանն Անգեղ տան, 'ի Ծոփս և 'ի Հաշտեանս և յԵկեղեաց, և այլ իշխանաց իւրաքանչիւր տեղեաց, և առ մեծ ըն-պարապետն Անտիոքայ։ Եւ զայս ամենայն Թղթեան կնքէր նախ ինքըն իշխանն Սիւնեաց Վասակ իւրով մատանեաւ, և ապա ամենայն տանուտեարքն Հայոց։ Եւ պատրաստեալ ձանապարհին Յունաց կազմէին զիշխանն տանն Ամատունեաց Վահան, որպէս զայր մտացի և խորհրդական, և սուրբ սեպուհն զՀմայեակ՝ զեղբայրն երանելւոյն գօ-

րավարին Հայոց Վարդանայ 'ի Մա-
միկոնեից տոհմէն, և զերանելին
Մեհրուժան՝ զեղբայր որդոյն Ա-
գանոյ՝ 'ի տոհմէն Արծրունեաց:
Յորոց ձեռն տուեալ զնամականին
իշխանին Սիւնեաց Վասակայ և ա-
մենայն նախարարաց աշխարհին Հա-
յոց, յուղարկէին առ կայսր և առ
այլ ամենայն յառաջագրեալ աւա-
գանին Հայոց:

ԼԳ. Եւ սպարապետն Հայոց տէրն
Մամիկոնեից երանելին Վարդան՝
առեալ ընդ իւր 'ի տանուտերացն
Հայոց, որք ջերմեռանդ սիրով ձե-
պէին մարտիրոսութեան ժամանն
պատահել, որք էին այսոքիկ. Խորէն
Խորխոռունի, Արշաւիր Կամսա-
րական, և Թաթուլ Դիմաքսեան,
և Արտակ Պալունի, և Գիւտն Վա-
հեւունեաց, և Հմայեակ Դիմա-
քսեան, և այլ տանուտեարք և սե-
պուհք, և բազումք 'ի զօրացն Հա-
յոց, որք ինքնայօժար փութով
փափագէին լինել վրէժխնդիր ուխ-
տի սուրբ եկեղեցւոյ, և տալ զան-
ձինս 'ի մահ 'ի վերայ սուրբ Ճշմա-

ըստ հաւատոյն Քրիստոսի. և այլ գունդք 'ի զօրացն Մարդպետական պլրուձից, փոյթք 'ի գործ պատերազմին առաքինութեան. զօրս և չարախորհուրդ իշխանին Սիւնեաց Վասակայ ծանուցեալ ոչ հաւանս իւրոյ չար մտածութեանն, կալմեալ առաքէր ընդ նմա. և զօրոց գիտէր զհոլովումն 'ի վատթար կողմն և ոչ ուղղակի 'ի խորհուրդ ուխտապահութեանն՝ 'ի տանուտերացն Հայոց և 'ի սեպհացն, որք էին երեւելագոյնք. և յայլ ռամիկ բազմութենէն, զայնս արգելեալ առ իւր պահէր:

Եւ հրաժարեալ երանելի զօրավարն Հայոց տէրն Մամիկոնէից Վարդան, հանդերձ ընկերակցօքն իւրովք և այլ զօրուն արամբք՝ որ էին ընդ նմա, յիշխանէն Սիւնեաց Վասակայ և յայլ միացելոցն ընդ նմա ուրացանոյն, ողջախորհուրդ մտօք գնային 'ի գործ պատերազմի: Եւ մտեալ 'ի տուն Տեառն, որ է սուրբ եկեղեցի, երկիր պագանէր տեառն Աստուծոյ ամենակալի, ա-

ռեալ զսուրբ աւետարանն և զնշան
կենսատու խաչն ողջունէր, զնե-
րով անյագ 'ի վերայ բերաց աչացն և
ճակատու· զնոյն առնէին ջերմե-
ռանդն սիրով և որք ընդ նմայն էին
ամենեքեան· և ողջամբ գնային ա-
մենեքեան յորդորմամբ սիրոյ: Նա
չէ ևս հեռացեալք` տեսանէր[1] օթե-
ւանս ոչ բազում յԱյրարատոյ`
երանելին սպարապետն Հայոց Վար-
դան. և իշխանն Սիւնեաց Վասակ
վաղվաղակի գաղտ դեսպանս առնէր
առ Միհրներսեհ հազարապետն Ա-
րեաց, և զիւր նենգաւոր խորհուր-
դըն նամակաւ ծանուցանէր նմա:
Նոյնպէս արար նամակ և առ Նի-
խորական Սեբուխտ, և առ այլ ա-
ւագս` – զորս արարեալ էր Միհր-
ներսեհի 'ի վերայ Հայոց, և զՎեհ-
շապուհ հաւատարիմ վերակացու
արար, որ էր 'ի ժամուն սենեկա-
պան արքունի, յետ այնորիկ ապա
և դարպասպետ եղև Արեաց, – յո-
րում գրեալ եցոյց նոցա նենգաւոր

1. Խառնակ կամ սակաւ է 'ի բանիդ:

իշխանն Սիւնեաց Վասակ զիւր խա-
բէութեանն կամս. Դուք, ասէ, ան-
հոգ լերուք յեղելոցդ ընդ Վարդա-
նայ 'ի վերայ ձեր, և մի ինչ զար-
հուրիք. վասն զի չաստք այն են՝ զորս
ես աստէն պահեցի առ իս. և զայլս
բազումս ընդ այր ընդ այնր ցրուե-
ցի, և դա յոյժ սակաւուք է և ոչ
բազմօք: Եւ զայն ոչ յիշէր անօ-
րէնն, թէ Սիրտք իշխանաց 'ի ձեռս
Աստուծոյ են. քանզի որով կարծէր
չարախորհուրդն շնորհ ինչ առնել
նոցա, առաւել ևս զօրութիւնն Աս-
տուծոյ 'ի բարկութիւն սրտմտու-
թեան փոխէր. և այնու գրգռէր
զնոսա 'ի վերայ նորա. որ և 'ի ժա-
մուն կատարեալ՝ կուտեցաւ 'ի
գլուխ նորա ցուցակութեամբ:

ԼԵ. Եւ հասեալ յԱղուանս երա-
նելւոյ զօրավարին Հայոց Վարդա-
նայ տեառն Մամիկոնէից, ազդ եղև
զօրագլխացն Պարսից եկք Հայոց.
որոց լուեալ փութացան անցանել
ընդ գետն մեծ, զոր Կուր գետն կո-
չեն, և ընդ առաջ եկին նոցա մինչև
'ի գեօղն որ կոչի Խաղխաղ, յերկրին

Աղուանից : Եւ տեսեալ սրբոյ սպա-
րապետին Վարդանայ զանթիւ բազ-
մութիւն գնդին Պարսից, և յին-
քեանս հայեցեալ թէ յոյժ սա-
կաւք են, սկսաւ խօսել ընդ զօրն
հայոց, և յիշեցուցանել զբան մե-
հոգւոյն, զոր մայրն մարգարէին
Սամուէլի՝ ցնծութեամբ քաջալե-
րեալ 'ի Քրիստոս երգելով ասէր·
թէ Մի պարծեսցի հզօրն 'ի զօրու-
թեան իւրում, և մի պարծեսցի
մեծն 'ի մեծութեան իւրում· այլ որ
պարծելոցն իցէ՝ յԱստուած պար-
ծեսցի: Քանզի ոչ ինչ է 'ի նուազս
և 'ի բազումս յաղթութիւն և պար-
տուին, այլ յԱստուծոյ ակնարկու-
թեանն հրամանի: Եւ զայս ասա-
ցեալ երանելի զօրապետին Հայոց
տեառն Մամիկոնէից Վարդանայ,
հայեցեալ և 'ի կամս ընկերակցաց
իւրոց և ամենայն գնդին որ ընդ նո-
սա, թէ որպէս ջերմեռանդն սիրով
զօրացեալք էին և քաջալերեալք,
խրախալից մտօք փառաւորէր զփըր-
կիչն ամենեցուն զտէր Յիսուս Քրիս-
տոս:

'ի ժամ մարտին,

Եւ հասանեալք հայեցեալ տեսանէին ըստ օրինի կարգման նկատելոյ զգունդսն Պարսից : Կարգէր և զիւր գունդն երանելի զօրավարն Հայոց Վարդան ըստ բաւականին այրուձիոյն իւրոյ ընդդէմ նոցա . յերիս առաջս բաժանեալ՝ տայր 'ի ձեռս իւրաքանչիւր զօրագլխի . որում աջոյ կողմանն կացուցանէր զօրագլուխ զիշխանն Արշարունեաց զԱրշաւիր Կամսարականն . որ էր և փեսայ զօրավարին Հայոց սրբոյն Վարդանայ տեառն Մամիկոնէից , ունելով զդուստր նորա 'ի կնութեան . և նիզակակից տայր նմա զՄուշ զաւագ սեպուհ՝ յազգէն Դիմաքսենից . և զահեակ կողմն տայր 'ի ձեռն Խորենայ Խորխոռունոյ . և զօրավիգն ընդ նմա կացուցանէր զՀմայեակ Դիմաքսեանն . և ինքն սուրբ զօրավարն Հայոց Վարդան՝ պատրաստէր զինքն միջոյ տեղւոյն յարձակման : Եւ այսպէս յօրինեալ զճակատն , և յԱստուծոյ խնամն ապաւինեալք՝ յարձակեցան 'ի վերայ թշնամեացն :

Ցորս նախադային յառաջեալ 'ի
տեղի մարտին՝ Կամսարականն Ար-
շաւիր և Մուշ սեպուհն Դիմաքսեա-
նից, որք յանդգնութենէ աեղեացն
գիւղեան Թանձրախոր սաստիկ մօ-
րից· Կամսարականն Արշաւիր և
Մուշ 'ի յառաւելապէս զինեցմա-
նէն երիվարացն, անկեալք 'ի տիղմն
հանդերձ երիվարօքն խրէին· անդ
կատարեալ պատկեր երանելի սե-
պուհն Դիմաքսեանից Մուշն՝ 'ի Խո-
րականաց [1]: Իսկ Կամսարականն
Արշաւիր իջեալ յերիվարէն 'ի հե-
տիոտս՝ սպանանէր զԿուրկն՝ զեղ-
բայր Լփնաց թագաւորին, և 'ի բաց
ձգեալ զերիվարն 'ի սաստիկ խոր
տղմոյն, ուր և մոյկ մի զերծեալ
յոտանէն՝ թաղեալ մնայր անդէն 'ի
մօրին, և ինքն Կամսարականն միա-
մոյկ տղմաթաթաւ հանդերձ ամե-
նայն զինուն հանեալ զերիվարն 'ի
ցամաք, անվեհեր քաջաբար նման
թռչնոց յերիվարն հեծանէր. և
զարհուրեցուցեալ զթև իւրոյ կող-

1. Գուցէ 'ի Նեխորականաց:

ման Թշնամեացն՝ փախստական առ-նէր։ Եւ հայեցեալ տեսանէր զերա-նելի սպարապետն Հայոց զտէրն Մամիկոնէից Վարդան՝ հանդերձ ըն-կերակցօքն իւրովք և ամենայն Հա-յոց գնդաւն, զի արարեալ փախըս-տական և նոցա՝ ածէին առաջի իւրեանց զբազմութիւն զօրացն Պար-սից. յորոց զկէսն սրովք իւրեանց դիաթաւալ յերկիր կործանէին, և զկէսն գետավէժս արարեալ հեղ-ձամղձուկ առնէին. և զայլսն ՚ի նոցանէ դաշտացն և անտառախիտ մայրեացն ցրուեալս վանէին։

Իսկ ոմանք յաւագորերոյ Պար-սիցն ելեալք ՚ի նաւս՝ յայնկոյս գե-տոյն մերձ՝ փախստեայք լինել ձե-ալէին։ Որ և զԿամսարականն Ար-շաւիր զիշխանն Արշարունեաց ստի-պով փութացուցանէր երանելի զօ-րավարն Հայոց Վարդան՝ զկնի փա-խըստէից նաւացն ՚նետաձիգ լինել ՚ի հաստատամտութիւն և յանվրէպ դիպողութիւն առնն վստահեալ։ Իսկ Կամսարականն Արշաւիր, որ-պէս և միշտ կամակատար էր քանի

որդոյ զօրավարին, վաղվաղակի հաւանեալ առ 'ի նմանէ հրամանին՝ զկնի նաւավարացն և փախստէիցն նետաձիգ ընկէր : Եւ խոցեալ զնաւավարն և զայլս բազումս 'ի նաւսն՝ կարեվէրս առնէր · որոց ընդ տապալել վիրաւորացն կործանէին նաւքն · և բազումք 'ի նաւավարացն և գըլխաւորացն Պարսից գետասոյզ եղեալ կորնչէին : Եւ այսպէս չնորհեալ նոցա յաղթութիւն՝ վերին օգնութեանն՝ դառնային 'ի բանակս իւրեանց, գոհանալով և օրհնելով զԱստուած :

Եւ դադարեալք անդէն 'ի տեղւոջն զօրն զայն, 'ի վաղիւն չուեալք անցանէին ընդ գետն մեծ, անուանեալն Կուր գետ, և հասանէին 'ի պահակ որմոյն, որ է ընդ մէջ իշխանութեանն Ագուանից և Հոնաց · և գտեալ անդ զպահապանս պահակին և այլ զօրականս պարսիկս բազումս, յորոց սուր 'ի վերայ եդեալ կոտորէին · և զպահակն յանձին առնէին Թագաւորազնի միում Ագուանի՝ որում անուն էր Վաչան ·

և զնոյն արձակէին դեսպան 'ի Հռոմ՝
և առ այլ ամրականս աւերելոցն,
զօրս հաւանեցուցանէ միաբանել նո-
ցա գնդաւ. որոց կամաւ և յօժա-
րութեամբ զօգնելն յանձն առեալ՝
հաստատէին երդմամբ:

ԺԶ. Եւ մինչեւ այս ամենայն կա-
տարէր այսպէս՝ յաջողութեամբն
Աստուծոյ ըստ կամաց նոցա. յան-
կարծակի դեսպան հասանէր առ
երանելին զօրավարն Հայոց Վար-
դան, և առ ամենայն գունդն որ ընդ
նմա էին, զոյժ ուրախութեան և
համբաւ չարաչար աւերման. թէ Արգ-
ամեայ անօրէնն Վասակ ուխտին
Աստուծոյ, և նենգեալ դրժեաց
աւետարանին երդմանն, և 'ի յետս
կացեալ ապստամբեաց 'ի միաբա-
նութենէ ճշմարտութեանն. նոյն-
պէս և միացեալքն ընդ նմա ա-
ւագանին Հայոց՝ յետս կացեալ ընդ
նմա ապստամբեցին, և դարձուցեալ
զերեսս իւրեանց 'ի ճանապարհէն
արդարութեան՝ մոլորեցան զհետ
սատանայի. դեսպան արձակեցին 'ի
Պարս, և նամակօք ուխտադրեցին

ընդ նոսա . և զբերդեան ամրոցն Հայոց 'ի նոյն կալան , և զեւրեանցն բերդակալս ապարտեալ՝ զդուշագագին . և զորդիս աւագին Մամիկոնէից և Կամսարականաց և զայլոց տանուտերացն ժողովեալ յիւրաքանչիւր զայլեկաց , յամուրս բերդէց իշխանութեանն Սիւնեաց ետ անցուցանել , և հրամայեաց պահել զամուրսն զգուշութեամբ . և այսպ նենգաւորն Վասակ այս առնել ցուցանէր սա Թագաւորին Պարսից :

Եւ որք խոստացեան զինի ստանալ ընդ ուխտանենգին Վասակայ՝ են այսոքիկ . իշխանն Բագրատունեաց Տիրոց . իշխանն Խորխոռունեաց Գադիշոյ , իշխանն Ապահունեաց Մանեճ , իշխանն Վահեւունեաց Գիւտ , իշխանն Պալունեաց Վարազշապուհ , իշխանն Աբեղենից Արտակ , իշխանն Ուրծայ Ներսեհ , և այլք յաւանկաց , և սեպուհք անունք յուրացողսն առաջ :

Եւ լուեալ զայս ամենայն գործ աղէտից , զոր էր գործեալ նենգաւորն իշխանն Սիւնեաց Վասակ և այլ

նախարարացն որ ընդ նմա, երանելւոյ սպարապետին Հայոց տեառն Մամիկոնէից Վարդանայ՝ հանդերձ նախարարօքն և զօրուն որ ընդ նըմայն էին, չտրտմել ոչ կարէին. և զանձինսն և զգերեալ տղայսն 'ի պահպանութիւն ամենահնար աջոյն յանձն արարեալ նուիրէին, ասելով այսպէս. Ահա առեալ հեծանոց 'ի ձեռն՝ փրկիչն ամենեցուն Քրիստոս, սրբել զկալ իւր և ընտրել՝ զցորենահատն ժողովել յերկնից 'ի շտեմարանն, և զյարդն մատնել անշէջ բոցոյն [1] կիզուց անխնայ: Եւ եղիցուք մեք սրբեալք ցորենահատ, և ցանկութեամբ սպասեսցուք աւուր նահատակութեան մերոյ. յորում թէ արժանի եղեալ դիպեսցուք մասին սրբոցն՝, վախճան մեր բարի զմեզ պսակէ: Եւ զտղայս պահպանեալ սնուցանէ, և 'ի տեղիս իւրաքանչիւր և յիշխանութիւն ածեալ հասուցանէ, և զորբանեակս ամա-սատանայի բազում զղջմամբք

1. Այլ օր. հրոյն:

ընկուցեալ նշաւակէ տատ և 'ի հան-
գերձելումն :

Եւ տարեալ զայս երանելոյն. չուեցին միաբան ամենեքեան յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց 'ի գաւառն Այրարատոյ. և անդ զաւուրս դառնաշունչ օդոյ ձմերայնոյն ըստ սովորութեան իւրեանց դադարեալք, փութային առ հասարակ անձկով զաւուրս գարնանային ամսոյն տեսանել, և յօր իւրեանց նահատակութեան պսակին հասանել: Քանզի ոչ ևս լինէր այլ ըննաւ ածէր զնոսա ոք զյաղթութիւն և կամ զպարտութիւն, այլ ցանկացեալք որպէս ծարաւիք բաժակին փրկութեան՝ իւրեանց կատարմանն պատահել և ընդունել զնոյն:

Իսկ նենգաւոր իշխանն Սիւնեաց Վասակ ոչ երբէք դադարէր գրել նամականի առ իշխանս և շինականս և քահանայս աշխարհիս Հայոց. ցուցանէր իմն բերելով 'ի դրանէ ուխտս սուտս և վկայութիւնս ընդունայնս, թէ արքայից արքայ ըզքրիստոնէութիւն շնորհեաց աշխար-

ցի. և զհետ կատարածի մնացուցն
մնացորդք. և զառաջնորդութեանն ա-
ռէ, թէ ընդա և յիշել իսկ ոչ. մինչ
թէ 'ի բաց գտանիցի 'ի խրատուէ
և 'ի բանից Վարդանայ, և մի կարծեն
ցեն ընդ գրոց. Եւ գիտենան զրէ սու-
րանենցն Վասակ, թէ եւ լինել
մեծարանս անձանց, և անձնաւ
սպանել զսքանչելի Հայոց. Եւ
առաքեալ 'ի ձեռս սոսա քաջանակեց
զգլխաւորն՝ նենգաւորին Վասակայ,
որոց անուանքն են քաջանակացն
սոյա. Զանգակ մի անձն¹. Սահակ
Զայրակ, և միւս անձն Գեդէոն Եր-
կաթի. Եւ էին Սահակն և Գե-
ղարդն 'ի դատաւէն Սիւնեաց, յո-
րոց ձեռս առեալ զաւառ յերանելի
բոց ձեռս առեալ գաւառ յերանելի
ապարատացն Վարդանայ՝ նենգա-
ւորին Վասակ՝ զգլխաւորն չքնաղա-
ւորին Վասակ՝ զգլխաւորն քաջաց Հայոց. զոր
ցանկեալ ընդ սպանանել Հայոց. զոր
րաւեալ թագաւորեցն 'ի հրաման և
նոյնպէս հանապազորդ բանից
անուանեցն. հաստատելով բանից
նենգաւորին՝ կորուսելին. Իսկ ավերքն

1. Թուի խանգարեալ անուանս Զան-
գակին.

ութեան ածեցուցին՝ կորոյս
և մերձաւորութեան անձանցն բանս ցնորելով ․
ընդ զայս ամենայն նշանակաց գործառնութիւն ․
եւ առաջել նշդեալք միջնութեանն
և առաջ առաջեացեր [illegible]
և առաջ առաջեալ յառաջել ։
իրերաց կառուցանեալ զառաջին ձեռ-
ԽԵ․ Եւ կատարեալ [illegible] ․ և հաւանեալ
գոյին զկառանեալ բանակեցան առ-
'ի սոյն մեծ գաւառին , և անձանցն ազատաց
առաջինքն , և առաջութեան ընդ
եղե խորհրդութիւն ․ զանցեալ խաւարութեան
մերձեալ ․ բանից խաւարութեան ա-
զարդութեան եղեն ընդ միաբանու ա-
ռաքելոյ յառաջութեանն կենդանու-
թեան ․ զոր առնեալ առաջնորդութեան
գաւառաձեռնացն ։

Եւ յետ սակաւ ինչ աւուրց ան-
ցելոց լուան եթէ զօր եհան բազում
'ի Հեր և 'ի Զարեւանդ գաւառս ։ Եւ
երանելի սպարապետն Հայոց՝ անդէն
Մամիկոնէից Վարդան այլ ամենայն
ախոյեանցն , որք յառաջագոյն անձն
աւուրն երթեալք էին 'ի առաջն
իշխանացն՝ կառավարել զանձն զաւակ-
ու ընտանեօք իւրեանց , եթէ զանձինս
բազում հանեալ զօր՝ ընդդէմ առ-
աստուածասիրացն ազատքն եղբարցն․

ըլս. արդ որ ոք ցանկայ առնուլ՝ աճապարեցէք, զի մի վրիպեսցի ոք և զղջանայցէ. և եթէ ոք խորհի այլ-ազգ ինչ, որպէս և այլքն՝ որք խոտորեցան զկնի սատանայի, դադարեալ հանգիցէ ուր և թուեսցի հաճոյ ումեք: Քանզի ոչ ոք պատժի ընդ ընկերաց իւրոց՝ թէ ոչ տանջի. այլ իւրաքանչիւր ոք անձին իւրում գանձէ զհոգեղէնն և զյաւիտենականն.

Եւ զայս լուեալ ճշմարտասիրացն և զանմահութեան սիրողացն, դրդեցան ելեելս տանելով զմիմեամբք, որպէս հօտք որ ՚ի ձայն աղի փութայցեն զկնի հովուաց: Թուի ինձ, ոչ այնպէս ընթացեալ երագունս Աբրահամայ ՚ի տանել զորթն հրեշտակացն՝ որք խոստացան առ նմա զորդին, որպէս ձեպեալ ընթանային զօրքն Հայոց զհետ երանելոյն Վարդանայ սպարապետին Հայոց, երթալ յընթրիսն Քրիստոսի և ուտել զհաց հրեշտակաց:

Եւ այսպէս եկեալք ըստ նմանութեան սուրբ առաքելոցն ամենե-

քեան մի սիրտ և մի հոգի, առաքէր երանելին սպարապետն Հայոց Վարդան՝ միաբանութեամբ աւագանոյն որ ընդ նմայն էին՝ սեպուհ մի յազգէն Ամատունեաց, որում անուն էր Առանձար, իբրև երեք հարիւր հեծելով, երթալ լրտեսել զբազմութիւն զօրացն Պարսից, և տալ գրգիռս եթէ հնար իցէ, առ 'ի փութապէս, ասէ, գալ բերել մեզ զաւետիս արքայութեան, զոր 'ի ձեռն նոցա պարգևէ մեզ փրկիչն Քրիստոս՝ յաւիտենից բարութեանցն տուիչ: Եւ երթեալ Առանձար և գունդն որ ընդ նմա, այնպէս շնորհեցաւ նմա յԱստուծոյ, որպէս զի տեսին զբանակն Պարսից. և զհզօր վերջապահ թևով միով անկեալ, զբաղումս հանէին ընդ սուր, և զայլս փախստականս արարեալ արկանէին 'ի զօրն Պարսից. և ինքեանք դարձեալ ողջանդամք հասանէին ուրախութեամբ 'ի գունդն Հայոց, և պատմէին նոցա զԱստուծոյ զօրութիւնն, զոր յաջողեաց նոցա փրկիչն:

Եւ լուեալ երանելին սպարապե-
տին Վարդանայ հանդերձ միահա-
մուռ զօրօքն՝ գոհանային և օրհնէին
զամենահզօրն Աստուած։ Պատմէին
և վասն զօրագլխացն թէ Մուշկան
Նիւսալաւուրտ և Դողվձն են.
ասյին գիտել և զայն ես[1], սթա-
փութեամբ հասանել 'ի միջոյ կող-
ման աշխարհիս։ Զոր լուեալ երա-
նելոյ սպարապետին Հայոց և որ
ընդ նմայն էին, ևս առաւել ձեպէին
երթալ ընդդէմ նոցա· նախ վասն
վաղվաղակի պատահելոյ նոցա ժա-
մու մարտիրոսութեան· քանզի ան-
ձանձրոյթ աղօթէին հանապազ 'ի
տուէ և 'ի գիշերի, լինել արժանի
այնպիսի մասին երկնաւորի· և եր-
կրորդ՝ ասէին, թերևս անդէն 'ի
տեղւոջն 'ի Հեր և 'ի Զարաւանդ
գաւառին՝ վճարին ելք գործոյն
պատերազմին· և ոչ ոք լինէր արգել
զօրուն Պարսից հասանել յաշխար-
հըն Հայոց սպանութեամբ և գերե-
ով յարձակել և աւերել։ Եւ սոցա

1. Պահանջի յաւելուլ էրկէ կամըն։

թեպէտ և ածեալ զայստակն ինչ զմտաւ՝ կամէին փութալ, սակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին գունդքն Պարսից 'ի գաւառն Արտազ, հուպ 'ի գեօղն որ կոչի Աւարայր, 'ի շրջափակ տեղին Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց յաղագս երկիւղն զօրացն Հայոց· ամուր[1] ապաստանի անձանց համարէին պատշաճ, և 'ի մէջ նորա ածեալ զակիշ բանակէին:

ԼԸ. Իսկ 'ի յաւուր ուրբաթու մեծի տօնին պենտեկոստէին՝ դիմեալ հասանէին մերձ 'ի նոյն տեղիս զօրքն Հայոց, գտեալ անպատրաստագոյն զզօրսն Պարսից· որոց թէ կամեցեալ էին՝ կարող էին մանաւորապէս վնասել երամակարձակ ծուլացելոյն, բայց թոյլ տուեալ դադարեցին յայնմ աւուր: Քանզի ոչ էր եդեալ 'ի մտի նահատակութե փափաքողաց՝ այնուհետև յաղթել, վասն տեսանելոյ հանապազօր զհոգեկորուսացն զապականութիւն, այլ

1. Յօր. ապուր:

միշտ և հանապազ 'ի կէտ կոչման և տենչալի մարտիրոսութեանն փութանային հասանել:

Եւ ժողովեալք այնուհետև մօտ առ զօրսն Պարսից բանակէին, մինչ եդեալ սահմանն ընթացից տուընջեանն կատարէր: Եւ հասեալք 'ի ժամ երեկոյին, և զկանոն պաշտաման ժամու աղօթիցն ըստ սովորութեանն լցեալ՝ զուարճանային չափաւոր ուրախութ͞բ կերակրովքն: Եւ կատարեալ զամենայն՝ առնուին հրաման 'ի սուրբ քահանայիցն արթուն խնդրուածովք կատարել ըզգիշերն յաղօթս: Եւ զցայգն ամենայն դասք քահանայիցն մերթ սաղմոսարանին գոբղայիւք, մերթ վարդապետական բանիւք քաջալերէին զբազմութիւն զօրացն, վայր մի քաջանալ և անսպառ բարեացն լինել ժառանգաւոր: Իսկ սուրբ երէցն Յովսէփ, որ և զկաթուղիկոսութեանն Հայոց ունէր զաթոռ, հրաման տայր երանելոյ առն Աստուծոյ Ղևոնդի խրատել զժողովուրդն և քաջալերել: Եւ սուրբ երէցն

Ղեւոնդ զամենայն զփշերն անձան-
ձրոյթ ատուաքեղական վարդապե-
տութեամբ զօրացուցեալ ուսուցա-
նէր զամենեսեան յորդաբուղխ ի-
մաստութեամբ, առակաց մեկնու-
թեամբք, հոգեշնորհ վարդապե-
տութեամբ· որոյ բանքն նման քաղ-
ցրութեան մեղու բղխէին 'ի բերա-
նոյ արդարոյն, որ էր լոռղացն ցըն-
ծութիւն· և ախորժաբար զնա ծա-
նուցանէր վերին ազդեցութեամբ
լուսաճաճանչ պայծառութիւն 'ի
նմա ներքին մարդոյն, և տեսակու-
թիւն հրեշտականման երեսացն կեր-
պարանի: Զոր և յառաջագոյն ժա-
մանակի կալով 'ի քում սրբոյն, այրն
Աստուծոյ Մաշթոց վարդապետն
նորին՝ հանդերձ աշակերտօք ի-
րովք երանելեաւն Կորեամբ և Ար-
ձանաւ, տեսանէին արթնութք՝
ճառագայթեալ շուրջ զնովաւ լոյս
սաստիկ, որք անդէն և անդ ծա-
նեան երանելի արքն սուրբ Հոգւով
զվախճան սրբոյն թէ նահատակու-
թեամբ կատարի· զոր թէպէտ և
նմա ոչ յայտնեցին զսքանչելագոր-

ծութեան զտեսութիւնն, սակայն
'ի բազում չնչէն՝ պատմեալ հաշա-
կեցաւ բան երևմանս այսորիկ։ Որ
յուսուցանելն իւրում բազում
բանս հոգևորս՝ յիշեցուցանէր ամե-
նեցուն զվարս և զժուժկալութիւն
առաջնոցն. և նախ զանպատումն
զհամբերութիւն սրբոյն Գրիգորի,
ապա զայլոցն ամենեցուն. Որոց
զխոստացեալ, ասէ, զվարձ և զանա-
գան կենցաղոյս զվախճան՝ ընտրե-
ցին ըմբռնել զյաւիտենից կեանսն։
Ոմանք տանջանօք և մահուամբ, ո-
մանք պահօք և գետնատարած ան-
կողնօք, այլք աղքատասիրութեամբք՝
յանգէտս ընդունել զհրեշտակս ար-
ժանի եղեն. և կէսք աշխարհաշի-
նութեամբք, և արդար դատողու-
թեամբ երևեալ՝ ընտիր գտան Աս-
տուծոյ։ Քանզի ոչ բոլորեցունց
դիպի մարդասիրութեան վիճակն,
այլ ըստ ժամանակի որպէս և բաշ-
խէ վերին տեսչութիւնն։ Եւ պար-
տին առողջն՝ արդար վաճառակա-
նութեամբ գնել ընդ անցաւորս
զանանցն, ընդ ապականացուս զան-

անց բարութիւնսն ։ Իսկ սպա-
հեալքդ այժմ մեծի և սպատուա-
կան բաժակի, փութացուք լինել
արժանի՝ հասանել 'ի մասն ժառան-
գութեան սրբոցն 'ի լոյս. զորոց ըզ-
պատուականութիւնն սաղմոսեր-
գուն գոչէ ասելով. Պատուական է
առաջի Տեառն մահ սրբոց իւրոց։
Այս և ճգնասէր Գրիգորիոս վար-
դապետն ձեր կոչէ զձեզ յերկնային
քաղաքն Երուսաղէմ, յամենա-
տենչ և անուշահոտ ընթրիսն Քրիս-
տոսի, ուստի մերժեալ են ցաւք և
տրտմութիւնք և հեծութիւնք։

Բազում և այլ բանիւք հոգեղի-
նօք և շնորհօք վարդապետութե̃ք,
քաջալերէր զիւրաքանչիւր որք 'ի
մեծամեծ աւագանոյն Հայոց՝ սուր-
բըն Ղևոնդ, հանդերձ երանելեաւն
Յովսէփաւ. որ թէպէտ և զձեռնա-
դրութիւն երիցութեան ունէր, սա-
կայն յաթոռ կաթուղիկոսութե̃ն
էր վիճակեալ արժանաւորապէս։
Որոց խրատեալ և զօրացուցեալ հո-
գևոր բանիւք զամենայն գիշերն, լի-
նէր ամենայն մարդ 'ի կամաւոր լու-

զաւակաց. որ միայն աշակերտօք՝
ըստ աստուածութեանն ևեթ հա-
ղորդեալ. Փութացուք մանա-
ւանդ ի հարազատն Քրիստոսի. և ի
հաւատսն՝ ի գունդս սուրբ առա-
քելոյն. և յընթերցումն Քրիստոսի,
որ բարեաւ զգուշան սրբութեանն՝
պահել ընդունելով զամենեսեան և ու-
րախ առնել. որոց ուրախութիւնն
անպատմելի է և անանց և ան-
վախճան. Փութացուք առանց յա-
պաղելոյ. և մի որ նման Յուդայի՝
որ յառաքելական զատուածն ջան-
ացաւ. նման նմա գտցի. որպէս և
յայտ գերելի անունք. որք մեղ-
կաւ ընդ ամենայն ընթացան.
Այլ են բարեկամքն՝ որոց վայելչ-
ութեան ցանկացեալ են՝ փափագելա-
նօք ընդունելով. և ընդ զօրութեանն
գրեամբ. Վասնզի փրկութեան ընկա-
լայն զանուն Տեառն երգեցից.
Եւ դոյն անձանցն այլ յուսով խոստ-
մամբ դարձեալ ի փառս, ի ժամ հա-
սանելոյ զօրացեալ ընդ սուրբն
Յակոբ և Պետրոս, հանդերձ անձ-
նայն բազմաձայնին զօրացեալ կա-

[illegible] կատարել, որով [illegible] [illegible] [illegible] Հոգւոյն՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] գրականն. Եւ [illegible] [illegible] Հայոց 'ի [illegible] [illegible] [illegible] եւ [illegible][1]. 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible].

ԼԸ. Վասն զի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] Պարսից [illegible] 'ի [illegible] [illegible] եւ [illegible] Եւ [illegible] Վռամայ [illegible] Սահ[illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Աշտարակ[illegible]. եւ [illegible] Մ[illegible]՝ [illegible] Ա[illegible] եւ [illegible] Ա[illegible] [illegible] Սահակայ եւ [illegible] [illegible]. եւ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] Սահակայ [illegible]. [illegible] [illegible] Թ[illegible]. [illegible] Վ[illegible] եւ [illegible] Ն[illegible] Կ[illegible].

1. Օրբ. [illegible] Տեառն [illegible]։

Իսկ այլ բազմութիւն զօրացն Հա-
յոց՝ որք առ հօրէն և ոչ համա-
մանաւանդ զի և զօրս¹ յերկրա-
ւորս և զարմացուցանելոյ յետոյ՝ որ
յերկնից բարձրութեանց յանկարծա-
կեն, անկեալ 'ի փախստեան զօրմեան
կորնչելքն զառաւօտնեաց կորստեան.
Եւ անկանել զօրացն Պարսից զմահուն
Հայոց յեկեալ և ապաստանեալ ա-
'ի կատարել զաւուրս իւրեանց. հա-
լածեալ և յայնժամ զի փախուցեալ
երթային զօրքն Հայոց. 'ի մեծա-
մեծամ բազում զօրութիւն պատահեալ մա-
նուկքն. այլ և ցանկալի իմաստ զի
ողեաց՝ կատարելոյ արժանի. Աս-
պամ այնուհետև զինա փախստեան
Հայոց անդամելին զօրքն Պարսից.
որոց հասեալ՝ զամենայն կատարեալն. և
զայլ ամենայն արգելեալ 'ի անկեալ
ամբողջ՝ արգելուլին. որոց ամենայն հա-
սեալ զմիտզասառեկ գիւղերայն զօ-
հաստատեալ. և զբազում 'ի նոյն
նեկ կատարեալ՝ զնոյնս այլ[illegible]
Եւ այսպէս 'ի փախստեան Հայոց

1. Օր. զօր. պահապանս և բազում թիւ

Աղքատաց օգտական անձին ՚ի բա-
նից, և հասարակացն օգուտ, և զայլս
բազմաց օգնեալ եղեալ ազգաց-
նաց. և Թորգոմեան փափաքելին
յայլ և այլ ամպեր Հայաստանեայս աշ-
խարհս գտանելեան։

Նոյն դար ՚ի ժամանակն երանելւոյն և
երևելիք հոգևորքն եղեն արժանա-
ւորք ընդ որոյն Կորդուայց և նա-
հապետացն, են այսոքիկ. յազ-
գին Նորշիրականեաց՝ երանելին Թա-
թին. յազգէն Գողթնեաց՝ երանելին
Մարութ Արտակէ. յազգէն Վկեա-
նեաց՝ երանելին Տաճատ. յազգէն
Մեհրունեաց՝ երանելին Հմայեակ.
յազգէն Բագրևանդեաց՝ երանելին
Ներսէհ. յազգէն Գնունեաց՝ երա-
նելին Վաչէն. յազգէն Ռշտունեաց՝
երանելին Արտէն. յազգէն Արշարու-
նեաց՝ երանելին Կիրակոս. Եւ այ-
սոքիկ հաւատով և բազում լինելո-
վք հարցեալ և ամենայն զգուշու-
թեամբ նման ՚ի ամենայն
գործարանացն պատուելեան ընդ ա-
ւագ նախարարացն. երևելիքն եւ
նմանութիւն և վէմ այլ. Եւ զայս

յամբոխացն ինքնեալութեան արդեամբ և ձայն փողոյ հնչեցին. և ոչ հա-րեր և յետոյ այր. որք լինին փո-խանակ. հազար երեսուն և մի այր[1]. զորոց ի պարտութեանն անուն Վարդանեանցն Պետրոս զոհ-ման ի գործութեան կենաց. Իսկ ի զօրացն Գագկայ որք անկան ի պատերազմին յաւուրն յայնմիկ զոր առաջին հանարեալ պատերազմին մեծ անկեալ եղեն ի պարտութեան Գագկայ. երեսուն հինգ հա-րեր զառատասն և չորս այր։

Ի. Եւ յետ վերոյ կրկին պատերազ-մին պատերազմին. և մարզպան-թին Աստուծոյ զինք արկեալ ու-թեան հաւլեոյ. հրամայեալ անձն Մովսէսին Նահապետութեան թա-գաւորն Աշոտոյ Սմբատայ. և զի գործոյ պատերազմին զինեալ այր. զօրաց պարտութեան աւերիչ. և յանուանն զհամար անձինքն մե-ծացուցն կարգաւորն պատերազմին. Զօր քաջաց արգելին Սմբատայ

1. Վարդանեան Համբերթ 1038.

յերկիրն Գուգարաց. Եւ Թագաւոր Աշոտոյ մարզպանն ազատորդին Հայոց. բազում Թագաւոր խաղաղութեան առնէր 'ի ամենայն աշխարհս Հայոց աշխարհին. Թէ եկեալ չէր ցորդեաց անհնարինութեանն. և մի Թէ զօրաւորեալ. յորս գրէր և նկարագրայր բանն. Զորպէս առնել զայն զկարգ դժուարութեան աղետ և նման է բան խաղաղութեան համայ. Որք 'ի Հայաստան' խաղաղութեանց 'ի Գուգաց և 'ի Սիւնեաց մարզպանաց ամենայնեան.

ԻԱ. Սա և 'ի ժամանակ մարզպանութեան առ Երուանդեան Հմայեակ յամենայն Տայոց' գնաց հովուել աշխարհն բազմութեանց 'ի Գուգաց և 'ի Սիւնեաց. և յերկրորդ բանակաւ իւր գնացն' նորոգել հայոց զօրագլուխ զԱշոտն զարթեան և զԱշոտ... զօրաւորն. Թագաւորն խաղաղութ թագաւորեալն Հայոց. Նախարարք և ժողովուրդ. ամենայն և ամենայն գիտաւ 'ի յերկիրն Տայոց. Մարզպան առ Հմայեակ եղբայր որոյ Երուանդայ Վարդանայ. որ էր յա-

մեզ յօժարեցին Յունաց. խըն-
դրել զոր է Թագաւորին. ըստ յա-
ռաջոյն գրելոյն ՚ի նորին։ Այս
կենսոյս յանդիման նոցին Թագա-
ւորին Մեղսին. որոյ լուանալ զդատա-
ման նոցա եղեռին. որպէս լինել ՚ի
նոյնմ. և յանձն առնոյր ողնել
նոցա գերին. և մինչև պատերազմա-
կից եղեն խառնամանն, Հասանել վանա-
նաւորոյն՝ վճարել ՚ի կենդանոյն։
Եւ Թագաւորին փոխանակ նորա
Մորիկիոս, որոյ և անկեալ Հայկեան
նոցա զօրեա խնդրոյն երկոցին Հայոց.
Հրամայեր զատաւոր գրեան, Թէ որ-
պէս Թէ մեզ պատասխանն տա-
նել որանդոյ եկեղյոյ յօժարեցին
Հայոց առ մեզ. Պատասխանի ար-
ձան Աստուծոյ՝ որ ՚ի մանկանն առ-
դրասանել Աղեքսանդրեայ. Փրկչին-
ն որպէս առն՝ առաջի աղջկա.
որ էր առաջ գրեան Թագաւորին. և
առն. Մեզ ոչ Թէ Հանդերձ արդեա-
նորին զօրս և զՀաստատութիւն.
զի ՚ի բարձր ժամանակաց գրեալ
է գիրս և առաջին Թագաւորացն.
և զզգալ պատերազմաւ երես մի խառ

խնդրել. ժամանել զինի սուրբ եկ-
ղեցին խորոյ. և վաղվաղակի ընկեն-
ներ. զի հայեցեալ Աստուածոյ ի վե-
րայ ամենի՝ հաստատեր զհոգևորա-
կան. և պատիվեր զառուրբն։

Իսկ զորն ուխտապահացն որ
առ արքայն Հռոմայեցւոց ժողովեալ էին.
եւ րեւ ականանեքն զիրան՝ ի տեղ մե-
ծամեալ ի վերայ հարձանակին. յամե-
նայն ամենեքին յայս ինչ մխիթարու-
թեան. այլ անձնանց անձին այր խ-
րոխտանութեր զինքն վասն մանկա և
ըստրուսյար հոգանական հաստատեալ
անսանելր. զարհուրեալ անդէն ի
վեր ի ըրեանն զաստուածն ի Գաղ-
խտեր. հայթայթանս ինն առ չարի.
և առաջ պատահմանեաց մեծի և ա-
հաւոր հաւատոյ արտաքսաւթեան հա-
ւատին. Եւ յաւելեալ Աստուծոյն
մարդպանեին Հայոց զայնչափ ըստ
արանց զբանս ի ցանցն Պարսից և
Մինանց. թերևս և առաւել արքա-
յութեանց խաղելր. այլ յորժամ
ըսեր զխափանան հրամայելոյն որ-
րոյն Մարդպանաց և Հռոմայեցւոց. մխի-
թարեալ առաքելոյ մեծարելն։

հանդերձ զօրութեամբ սպառա-
զէն բազում զօրավարացն.

ԽԲ. Խորհեցաւ 'ի մտի առնուլ թէ որպէս հնարեսցի որսալ զարան փախստականս տանն Արեաց երկրաց. և ընծայել ըստ կամաց և 'ի հարկատրութիւն կացուցանել զաշխարհն Հայոց՝ և յայս միտս հաստատեալ կայր. թէ բայց միայն առաքեսցէ և անպատիր խոստմամբ հաւանեցուցանել զմիտս որդւոյն խորտոյն տանդ կառայց. Առաքէր առ նոսա մարզպանն Ատրպատականին 'ի բանին սրբոյն Յովհաննու. և երդնոյր նոցա զուաւ թէ ոչ զոք ապականեսցէ 'ի նոցանէ, և ոչ զաւերութիւն և զրաւթս հանեսցէ յաշխարհէ. Եւ այսպէս ներելով հաւանեցոյց զնախարարսն՝ կոչել զամենեսեան և առաջի կացուցանել 'ի դրան Արեացն. զԻշխանն մեծ Արծրունեաց զՆերշապուհ, և զիշխանն տանն Վանանդեաց, և զիշխանն տանն Արշարունեաց զԱրշաւիր, և զիշխանն տանն Անձեւացեաց զՏիգրան, և զիշխանն տանն Ամատունեաց զՎահան, և

զիշխանն Պէլթունեաց. և զիշխանն Աշոցոց. և զիշխանն Անձաւացեաց Ձորոփորոյ. և զիշխանն Տայոց զՀրեն. և զիշխանն Արծրունեաց զԱսորոն. և զայլսն ՚ի սահմանակալացն և յաւագ ազգացն, հրաշագործանեալքն ՚ի դուռն Թագաւորին Յունաց. Կեսարեայ զու ամենայն գնալ ՚ի դուռն և յերն մեծապատիւ իշխանն Սիւնեաց Վաղինակ. որոց ձեռն առեալ հրամայեցանէ յառաջնորդին քան զայն.

Իսկ ՚ի սուրբ քահանայութեանն Հայոց՝ զորս կարգեաց եր նախարարսն և երեսն ՚ի սեղանս սեղանս յանձնարարեցին Արշակայ. զառաջին եպիսկոպոսն Յակոբէ. որ զհայրապետութեան թեմն առեալ զանձն ՚ի Մծբին. և զայլ Գինդն. և զառաջնորդեայն Աղբիանոս զայր Մանազկերտ և զայլ Աղբիանոսն. Ընդ որս կարգեաց առնելն և զսուրբ եպիսկոպոսն Բագրատունեաց զայր Սահակ. և զՏրդատ եպիսկոպոսն Արծրունեաց Ներսեհեան՝ զայր Մուշեղ. և զսուրբ եպիսկոպոսն Աղբիանոսն և զսուրբ առաքինեալն զՎրթանէս. Որոյ զսուրբ եպիսկոպոսն Խաղտեաց զայր

թագին՝ էր յառաջագոյն տուեալ ամենայն զօրագլխացն Պարսից 'ի Խուժաստան. ըստ գուցէ իշխանին Արեաց. և անդ ինքեան կացուցանէր զանձս: Տայր խաղաղութեան և ըղձային. զոր կալեալ էր ինք 'ի ասեն Մաշտոցնիկից և Կամսարականց. և 'ի յայլ տեղեաց իշխանացն Հայոց. կարծեցեալ տանել մեծապէս տալ Թագաւորին Յազկերտի և ամենայն աշխարհին Արեաց, և անդէն զգաստի Թագաւորութեն և զզուգելս: Որ եա առաւելապաշտս էր նոր Աստուածոյ ամենայն ժամանակ յառաջ Թշնամանաց իւրոց, յորժամ նուաճելով խոյատաւորաց զնա Յազկերտ՝ ամենայն առաքինով զործն, ըստ անհրաժեշտ արարք նոցա 'ի վերջնում աշխզաթեան աշխարհակալին Սասանակայ:

Արդ խաղաղութեան զինու զօրավարաց առաջի իւր յերկիրն Պարսից՝ նենգաւորին Վասակ, յերկրորդամենորդում ամի Յազկերտի արքային Պարսից, և ինքն զօ

Եւ որք [illegible] զմիջոցաւ Նա- [illegible]. որ զառաջին [illegible] [illegible] [illegible]. [illegible] 'ի մերոյ [illegible]. և բազմու- թեամբ [illegible]՝ որ էին ընդ [illegible] [illegible] Վասակայ. [illegible] [illegible] [illegible]. Եւ նոցա [illegible] [illegible] և բազմութեամբ այս, [illegible] 'ի [illegible] թէ Սիւնեաց [illegible] է. և նոյա [illegible]. [illegible] [illegible] առ մեզ զայ. [illegible] 'ի Հայր- [illegible]. [illegible] և սուրբն Յովսէփ Հայր- [illegible] [illegible] Աստուծոյ՝ Ղեւոնդ. թէ [illegible] թէ [illegible] զայ 'ի մեզ [illegible]՝ [illegible] [illegible] մեզ [illegible]. և [illegible] [illegible] [illegible] և [illegible] մեզ [illegible]. և [illegible] [illegible] մեզ։ Եւ որոյն Ղեւոնդի պատասխանի [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի մար- [illegible]. Յոր [illegible] [illegible] [illegible]. [illegible]՝ [illegible]. և [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible]. [illegible] թէ [illegible] [illegible]

զօրքն ձօնել ընդ նմա յօժարե-
ալք. Եւ յառաջելով ասելով մի՛ ըն-
դորքն Վասակայ 'ի Դոգանն.
ձայն զինի եղեալ սրբոյն Ղեւոնդի՝
իբրեւ ընդ պատասխանւոյն ամենեւին մե-
ծամեծն. Սիւնեաց տէր. Սիւնեաց
տէր. Եւ նորա յանդգնապարտ պա-
տասխանի տուեալ. Տեառն. զինչ
տէր. և սրբոյն ասացեալ. Զամե-
նայն ինչ մեր ասացեալ ընդ քեզ՝
զխրատն և զաւանդել օրհնութեան
ձեռաց հրաժարել, թէ ոչ եր-
թալ. Եւ ձեռնասունքն Վասակայ
ընթացեալ զուրս և 'ի մեծ արքունութեան
ընդդիմեալ՝ ասէր զարմացնողաց. Եւ
ասելն իւր եղեալ՝ զանանց 'ի ձեռանն
ըստ արժանի մեծ վասակեանն զչա-
րայան մեծ. Եւ սրբոյն Ղեւոնդի
պատասխանի տուեալ ասէ. Կարծե-
ցուցանէ՝ զքեզ զեզ՝ որ պատրեալ
ազգեաց զքեզ նենգել ասողք առն-
ապաւինի աշխարհ, թէ որպ մեծին
Թագաւորութեանն աշխարհին Հա-
յոց կարէն Աւերի առալ զքեզ ըստ
արժանի վասակայ զոյգ զչարա-
յան. այլ և ոչ մի իսկ է որ կարէն

[illegible] բայց թէ որ- [illegible] ՚ի [illegible] ՚ի Հայս աշխարհ. [illegible] Աստուծոյ է [illegible]. Եւ [illegible] Վասակայ. [illegible] ՚ի վերայ [illegible]. [illegible] ամենայն.

ԽԴ. Եւ արդ հասեալ ՚ի գաւառն նենգաւոր իշխանն Սիւնեաց. և [illegible] Թագաւորին Յազկերտի. ընդ [illegible] Թագաւորին և ամենայն [illegible] և [illegible]. Զի թէ [illegible] ամենայն [illegible] Վարդանայ և [illegible]

առեալն ըստ դրդութեան սորին գիտէինն. այլ լուսաւորեալք՝ որպէս ըմպելեաց պատուականն զնա՝ որպէս զնոյր հաստատութիւն և բարեգործ. մինչև ամենայն հաւատացեալքն 'ի գաւառն զատուրբ թագաւորացն Աստուծոյ, և զաւակս 'ի աստուածաբանն Յոյնց. 'ի ճշմարտութեան՝ որ ասացաւորն էին. ընդ նոսին և 'ի առաջինն Մակեդոնէից և Կեսարացւոցն և այլ ազգաց գաւառ մանկունեան ազատամտացն. զորս նախնեացն առթեալ ներգործութիւն կարգաւորելի առաջի հոգարագեանցն Միհրանեանն էի և այլ ասպարիզաց գրաւն.

Եւ անդրէն հաղորդութեան Արեւոյ կոմսոյին նախ զքահանայոն ամենայն զաւազեաս, և հարցանէր զատուրբ եկեղն Արամայ զՍամուէլ, և զնորին Ջնոյոյ որդին զատուրբ առաքեալն զԱբրահամ. որոց զերանին անցանելոյ էր զԱրտաշատ. Արդիւն համարձակութեամբ և մեր հրամաննա խնդրէր ընդդէմ զՍուրբին

1. Գրչն լուսաբերի:

Թաղանթելով անձանց մերոց զայդ-
ով բազում մեծագործութիւնն
գիտեմ խաւսեցեր․ առնելեցեր զա-
ղաղանն․ ասացեցեր զայնպիսի
նա խաւսին․ որ յառաջնոյ
ծնողաց Արեւոյ աշխարհին ի պահ-
պանութիւն էառ և Հնազանդեր ի-
րոյ․ որ ի Թծանելոյ առաւել յոր-
դեմն ի մերոյ մեր և յամենայն
երկնից․ այն կրակէնայն անձինա
դրեալ էր զմեզ և պատեհին․ Սոյա-
նէ ընդդեմն․ կարաւելի մերով
ներգործութեանն զայնպիսի մաք
աղխարհաւ, զի ողջամտութիւնն
էր Արեւոյ անտառն․ և զմնծանմն
գործոյ նորա յիշաւն առ Արեւոյ
աշխարհին․ զոր բազում զգա-
ցեալ և այլ Արեւն յիշեն․ ընդ որս
և նորա խաւս եղեւալ էր․ այլ և զոր
իր խոյ առառաւածանմամն անտառն
իրական այլք առանալ էր ի Սար-
գսեան [1] զնորա քաղաքացութիւնն․
Ստեփ․ մարգենն են յԱրեւոյ աշխարհ-

[1] Մերձաւոր, գետ և քաղաք ի
Սարեաց աշխարհին Վարդեաց։

[illegible]

Խոյ յաղագս առաջնաստեղծութեանն աւե-
լոյ՝ որ անկեալ. և կամ կրակեղէն
ապականեալ. առն 'ի մէջ գրի. Աս-
տուածոյ՝ որ զերկինս և զերկիր ու-
րոյթ. կարգեաց 'ի ներքոյ երկրի.
Կամ զի կրակն 'ի բազում նիւթոյ
լինի. և է զի յորոց նիւթոյ լինի՝ 'ի
նոցանէ և չքանայ. և է յորմէ լինի՝
'ի նոցանէ ամենայն բորբոքի. Արդ
ծնանի հուր յերկաթոյ և 'ի քարէ
և 'ի ծղոյ և 'ի փայտից. այլ է և այն
ազդումն՝ որ 'ի նմանէ լինի հուր-
ցին 'ի կատարածութեան հուր. յոր-
ժամ ընդդէմ արեգական որ շողա-
ցուցանէ զեկն. Եւ ծնեալն յերկա-
թոյ հուրն՝ թէ կատարեցեալ 'ի մէ-
ջոյ նորա երկաթ՝ կարծեցի. և ե-
լանէ 'ի քարէ՝ եթէ ծածկեցեալ
էր թագաւորք՝ անցանէ. նոյնպէս
որ 'ի ծղոյն և յայլ նիւթոյ. իսկ ե-
լանէ 'ի փայտն հուր՝ 'ի փայտն
կանաւոր զօրութեամբ. այլ ոչ հուրն,
այլ փայտն արտաքանի և անտեսանելի
աստուածն, որ և ծնանի և կենդա-
գործէ. Արդ ոչ արարողէն էին, յետին
մարմնաւորութեան հուր. զիմարաւորութեան մի-

զի բաց մտօք հարկաւորեցինք ա-
ռել ի ձեռն Թաւէլ զանդրդուելութիւն
մեր որ ողբման և յոյժ նաւա-
սափ վերջան և նուաղեալ նաւա-
կեց՝ որք ոչ կարացեալք այսպիսի
խորհրդեան ծառայել. բազմաքնին
մեզ համարձակեցաք. Թէ սուտ են
զշնորհաւորեալ մեր և անձնաւոր վարը-
դապետութեանց. և յայնժամ. զի բըղ-
խութեանց՝ չխրատեալս ոչ սակս նա-
խօսից. որպէս և այժմ. յապաղեալ
որոյ ոչ հանդարտեալք. նաւան
զանձինս խորհեալ ՚ի մահ և պատու-
հասին. որոյ և մեր զանձնականս
նոր և արդարեւ նշմարեալս վարդա-
պետաց նոցա.

Եւ տատանեալ զայս ամենայն որք
բոլոր սակս Աստուծոյ, Պետրոսի. որպէս
բոլ ի մեծութեան զօրէնս աստի պա-
հանջեն մեծախօսն բարբառոց. և
արդարեւ եղեն յայտ. Եւ յաւելուլ ըն-
մեծապարգեւ զօրութեան արդարն.
և զհրաշալիսն նորոց նոցա ան-
ձանց անուրէն Միհրդատեանն և ամէ-
նալիսն Արեւոյ՝ որ նաւակին ա-
ռանց նոցա. ՚ի յայտնութեան բարբառ-

թեան եղեւալ. առ ցնծութ. Ու հրամայեն մեզ օրէնքն մեր ցանկացեալ աւեր. մինչ չէ ինչ լուեալ ՚ի բերանոյ նորա. այդ դատաւորութեանց ինտեսար զնեղ ընդ խօսս ազնուորին. հրամանից այդորիկ. զորս յանձն առնելով լուեալ է մեր զամենայն գործս. և ընթերցողացս վերջապետութեան գործ, որով երկրոր զպետանն այդն չափոք Վարդան և զընկերս նորին. ըստ որոյ արժանի պատերազմական պատուանդանի գանձ ընբռնաք համարձակութեամբ և ժամ. Ուրեմն զգաց գտանել առաջ մեզ՝ թէ և մեր նոյն բանք են, զոր ժամանակաց այդ երկնից անհրաժեշտ համարձակութեամբ յանդգնեցաւ և խօսել առաջի մեր.

Եւ առաջին Յովսէփ և առաջին Իառաջեալ եղեալ պատասխանի ետ և ասէ. Զամենայն բանից և զպատասխանիսն, զոր ըստ արժանի երեց ազգութեանց ասաց՝ Աստուծոյ ունակութեանն բարձրելով և խօսեցաւ ընդ մեզ առից Ղևոնդ, ՚ի մերձաւոր ժամանակաց բազմաց ան.

[illegible] ամենայն [illegible] [illegible]՝ [illegible] այսօր [illegible] [illegible] [illegible] մեր, [illegible] եր մեր և [illegible]: որք 'ի [illegible] [illegible] ամենե- [illegible] և 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] զի [illegible] [illegible] 'ի [illegible]: Իսկ [illegible] [illegible] զայրացս. [illegible] Թշնամանեցեր զՆա: [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], և զի և [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] Թշնամանեաց, զի [illegible] եք [illegible] [illegible] [illegible]:

Եւ [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

տալ հրապարակաւ։ Եւ իբրև ո-
կամեցայք լսել. ըստ բաժանմանն խո-
հոցդ ձերոց և հարկաւորութեանն
յանձին կամաց առնուլ զպատգամն,
զոր չկամեցայք տալ երկրային մեծա-
րեցայք տալ. կամեցեալ զօգնել
նեղից մի խորհրդութեանն զերկնից
ձեր. և արարիք զործելի համարի-
ցուք զզարդն և աշխարհ. եղեալ ի
մահ զերծանել զմարդիկ և երկրաւ
յանխառնն ձեր. և թողուլ զու-
խարդն ձեր և զձեռն կեան և որդ-
ւոցն. և երթալ կորնչել յաւուր
երկնից։ Զոր նախ բան զամենեսեան
ըստ անմնացուն խորհրդոյն երկն-
ւն ըստ աշխարհին իշխանաց՝ ծա-
ռայն ձեր Վարդան արարք. զոր զե-
տեն և զհայկն բանից խոնց այդ
պատրաստեալ յաւուր առաջնոյ. որ այժմ
այժմ են և առա են առ ձեզ։ Աստու-
ւած զՏէր կէին և զանմահս իւր՝ զեն
եղեալ զձեզ փափագանաց 'ի ձերոց
երկրային յերկնից Թովմայ։

Եւ զգուշացեալ զայս տեսանել
Սրբոյն Վարդանայ, փութով զինս
զեաղջէն արարք զաւուրս տանել.

ակայն և ահեղաձայն. և զաւրքն
բազմութեան, և զաւրքն գիրս որի-
նոյ մերոյ Քրիստոսի իւրաքանչիւր մատեանն,
ամ, որով և երգարանն իւր, եւ
անկեալ առ նա. Ընդ որ յղեաց և
գիր. և գրեաց 'ի նամակսն առ նա
այսպէս. Թէ Զի՞ են փոխանցեալք,
և յաւ զինչ և երկինս ըստ՝ յորմէ
գոց երկնիցն, և ինչ որ յայտնե-
ցիր. որդ մի փոխեսցիր և մի երկըն-
չիր յամբողջ. զի Թէ յԱնրեաց
աւանդն և 'ի նորին ասացեալ զաւր-
հնեալ եա, մի երկնչիր. զաւրաւոր,
և նամակ ասանեալ առ կայսր. և
ընծայեալ մեր նմա 'ի ծառայութիւն
ամբ. և նա հաւատացեալ՝ Թէ զայս-
պիսի մեծ աշխարհ նմա մեր կատարե
'ի ծառայութիւն առաջ, խնդութիւ
և կամաւ յանձն առնու, և զաւր առաջ
նոյ. և նոքա և մեր միաբանեալք՝
միա աշխատ ամենեքեան զաւրքն Ասորւոց
և Յունաց. Ապա Թէ կայսրն արքայ-
[illegible] ինչ խորհի և յանձնառու
գիր գրեաց, և եւ մինչ Վրաց
մարզպանն եր և Պատմ Աղուանից
մեծամ մեաց եր, բարձրամ զարս.

գլուխք Հայոց[1] ընդ իւր բարեխօ-
սութեան [illegible] և երգմանցն. և այ-
որ [illegible] երգմանց երգեսցեն ա-
ւր. և հարկէր ամենայն աշխարհին
Հայոց առ իւր էր. և զօրաւորս
ամենայն յիշատակ [illegible] էր, և այլ
ևս բազմամ կարգաւք՝ զոր ի պա-
տիւ զօրաւորացն հանէր՝ որ առ ի
Հայս էր. և յիշեալ զանուն [illegible]
[illegible] զի [illegible]՝ Հայոց աւագ
[illegible]. [illegible] [illegible] [illegible]
հանդէս Հայոց, որպէս զի հայրն Գոր-
[illegible] [illegible] [illegible] [illegible]։

Եւ գրեալ գոյր ամենայն երգ-
մանց Վաղարշակայ Արշակունեաց [illegible],
զօրաւոր [illegible] [illegible], որ էր
[illegible] [illegible] խոստովանոյ, որք ոչ են
[illegible] [illegible] խոստովան-
թեանց։ Եւ տեսանելի զոր գրեալ
առ Վարդան՝ Արշակունեաց [illegible]
է, և [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible]։ Եւ յայսպէս [illegible]
[illegible] [illegible] [illegible]։ Եւ որ ի

[1] [illegible]

[illegible]

1. [illegible]

միջի ձերում անձնիշխանութեանդ։ Բայց զայս զհրամանականսն զամենայն՝ զոր գրեալ և կնքեալ է առ կայսր և առ ամենայն աշխարհսն Հոռոմոց. և կամ առ այլս բազումս, անուանել հրամայեցեր զայն. և որպէս մեզ Արեաց կամ է՝ հրաման տուեալ հաստատեցէք ՚ի վերայ մեր. Զի որ գրեալք և կնքեալք ՚ի միջի են, որպէս մեր արդարութեանդ, անեղծ բանից և ճշմարտութեան պէտք անդ ոչ են։

Եւ բերեալ զայս ամենայն կարգաւ ՚ի Կամսարականն Արշաւրոյ արքային Պարսից և ամենայն առաջնոյն գրածն, անկեալ զհրամանականն՝ զոր գրեալ էր Վասակայ Սիւնեաց տեառն, և ՚ի վերայ համբաւ մնացելոց հրամայեալ Թագաւորն Յազկերտ և ամենայն իշխանաց գրածն զարմացան։

ԽԶ. Յայնժամ յառաջ կոչեցեալ Թագաւորին զիշխանն Սիւնեաց Վասակ. սկսաւ ստել և առաւելապէս զայրացեալ սրտիւ խօսել ընդ նմա և ասել. Է՛ արդարև բանսալ մեր զայդ ամենայն նենգաւոր իրա

րե զօրութեամբ. բայց արդ ա-
ղէ սա, զինչ խորհեալ և կամ
ապաւէն քեզ գտեալ ածեալ զայդ
մեծ իրս ի ձեռաց խլեցեր ձեռն-
արկել և գործել. քանզի դու եր-
կեալ և գլուխ աշխարհին Հայոց,
նախ [illegible] բանիւ զճշմարիտն,
որ 'ի նախնեացն դրեալ 'ի մեզ,
որ ասեն մեր կարգաւ. աստու-
ածութեամբ [illegible] կացուցեր. երդմնե-
ցեալ [illegible] և [illegible]-
ն [illegible] ծառային մեր [illegible]
Վարդան և զընկերակիցս նորա՝
խաբեցեր [illegible] առ կայսր և
առ նորին [illegible]. երդմնե-
ցեալ նենգով [illegible]
և [illegible] և [illegible] մեր
զՎարդան և զայլ ընկերս, և գոր-
ծեալ [illegible] ընդ զօրս յԱ-
[illegible]՝ 'ի վերայ Պարսկաց [illegible]
[illegible] համարձակեցուցեր երթալ,
[illegible] [illegible] [illegible]
Արեաց կորուսեր, և կատարածի
[illegible] [illegible] ծառայից Արեաց և
Անարեաց եղեր [illegible]. Զի՞ [illegible]
[illegible] ծառայ մի զմեր, որպէս [illegible]

գան. և կայսր և կամ հեծելոց ու-
րոյ թագաւորութեանն յերկինս հասանել
կամեցին. ամենայն Աբելայ ամենա-
կեանքն և շնորհի հանդերձել. միայն
սուրբն յետ հանդէպ. Եւ որք զա-
ընդ որ մեծն զայնչափ ծառայի
ասպանէր, և զմեծ և զպաշտամն ա-
խարհ մի կարաւանք, և զա ...
ցէր լուսաւոր առ մեզ իւրն ա-
ցեալ որ նենգաւոր գործոյք զա-
և զմեզ ամենանել։ Բայց զայս գի-
տեմ. զի յայտ հետև Սիմենեայ
ասէր չէր. և զյորդեան ամենայն զոր
խորհնեցաք և կատարեցեր. կատարեա
զի ամենայն 'ի մերոյ շնոր զգեստ մը-
Եւ զնորքեր զխնդ աշխարհին Հա-
յոց և կամ զՊարթևացն՝ զոր աղա-
ներն. և զհարաւային աշխարհի՝ զոր
համեր. հրամայեցաք խնդրել 'ի
աման թաւանք և յորդւոց նոյ՝ մեծ-
չէ մեծարելոյ ամենայն.

Իսկ ազգապետ յուն խատարող թագաւորն Վա-
ռակ Թէոդոսն և կամեր խաւել Իէշ և
առաջ պատաւաճառի. չէլեր որ անձն
թանկ և կամ ափսորմեր. վասն զի
ախոյանեցութիւն որոյ ամենայ.

րանք. և բան ամենեւին կրօնաւորացն ամ Աստուծոյ Ղեւոնդի եկեղեցւոյ հա-ւաք ի վերայ նոցա, պատուեալ փա-ռաւոր պսակօքն զնա։ Որ թէպէտ և [illegible] [illegible] ամենն առ Պարսիկս. և ընդայր ցուցանել ՚ի ժամանն, և այն ողջէնք էր [illegible] [illegible] ատանել եւ ՚ի դատապարտութեան եղեալ զինուորին նմա։ Եւ կա-տարէր առ նա բանն առաջնորդեցին, թէ ՚ի պատուասիրական խորհրդեան եղեւ զա-ատապարտեալ և աղօթք նորա ՚ի մէջ զորընդին. Զբանունն այսր Թա-գաւորն Սահակայ անուրն զառա-ջնոր կողմանեալ ՚ի Նմանն Թշնա-մանեաց զանհնային պատուհան զոր ա-նէր. և հալեալ զնա պայծառն՝ մեր-կացուցին զնա. մերկացուցեալ ՚ի նմանէ զզարդարանս պատուոյ աւե-տարանն, հանին զնա խայտառա-կանս արտաքս բանն [illegible] [illegible]. Եւ ՚ի նմին աւուր [illegible] [illegible] նորա [illegible] [illegible] զա-ւարին [illegible] [illegible] ՚ի վե-րայ [illegible] Սրբանեայ կողմ[illegible] [illegible] ժամանակս հա-

ձեռն ընթերցանութեանն Սիւնեաց՝ բա-
զում արդարեւ անխրատութեան.
և բազում աւանս մեծագործոյն մի-
նեալ յաշխարհին Սիւնեաց. ՚ի
գայթակղութեան աւանն խորոյ. բազ-
մաժամանակեայ աւանդեալ ՚ի գիւղ
ըստ յաւաժողովելոյն՝ զատն մա-
հուանն առաքեցաւ չարաչար.

Եւ նենգաւորն Վասակ կալեալ
՚ի գրաւն առն ինչ կարգի վկայիցն և
նենգութեանց բազմաց, մարթէր զա-
ւարաւեր հաւաստելով և յոգւոյ հա-
նելով զամենայն որ և զհամ. մինչ
թշնամանեալ բազմաց ձեռնանել
զԹաթու ձեռաց խորոյ՝ Բիւրքի զգե-
րեայն ձեռներ զգեստն առեալ։ Աշա-
ընկալ զայս ձայնա. աւեր. զոր եւ
ընդ ... զիղ ... նահատակութեանն որ-
բոյ աւետարանին և արեան նահա-
տակութեան որդոյն Վարդանայ
Մամիկոնէի և այլոցն զանկայլի հա-
զորդելոյն ընդ նմա. որոց մասամբ
զեալ զխոստովանեալ կենաց՝ ընկա-
լան զանսան բարի յերկրի և անանց
յաւիտենական յազգս լուսաւորեանց. Եւ զա-
ակե. մնայաւոր անան իմ. կեաւ խորհ

նէ և յաւել մեծաց զօրականութիւ-
նարար քեռորդւոյս, և պատերազմա-
կան զգեստս մեծամեծացն և ամե-
նայն գեղեցկին. Եւ զայլազգիս բանա-
կապեալս նորա և ըմբռնեալ մինչև
յոր մաշեցան խռովք՝ խաւարին ընդ
մէջ զայս արդարադատութեան ասպա-
տակն նորին իշխանին Վասակայ.
Որոց և վերակացուն էր անուն յեր-
կին Պարսից մոգպետ. ըստ բանի
ան Աստուծոյ սրբոյն Ղեւոնդի.

Եւ իսկ զսուրբ քահանայսն Աս-
տուծոյ. զտէր Յովսէփ կաթողիկո-
սն և զտէր Սահակ Ռշտունեաց
եպիսկոպոս, և զերանելին երէցն տէր
Ղեւոնդ, և զտէր Մուշէ գրան երէցն
Աղբակայ Արծրունեաց տանն,
և զտէր Սամուէլ երէցն Արածոյ,
և զտէր Աբրահամ սարկաւագ, և
զտէր Արշէն երէց Եղեգեցի, և
զտէր Քաջաջ սարկաւագ. զաստու-
ած քահանայս և քրիստոսասէր
հաւատով նախարարսն Հայոց. որոց
անուանք են այսոքիկ. ի տանէն
Սիւնեաց երկու եղբարք Բաբգէն և
Բակուր. ի տանէն Արծրունեաց

Ներշապուհ և Շաւասպ և Շնդիթ և Մեհրուժան և Գարջոյլ և Տաճատ. 'ի տոհմէն Մամիկոնէից Համազասպեան և Համազասպ և Արտաւազդ և Մուշեղ. 'ի տոհմէն Կամսարականաց Արշաւիր և Թաթ և Վարդան. 'ի տոհմէն Անձաւացեաց Վահան և Առանձար և Առնակ. 'ի տոհմէն Գնունեաց Ատոմ. 'ի տոհմէն Դիմաքսենից Թաթուլ և Սաւայ. երկու ևս այլովք նահատակեցան. 'ի տոհմէն Ամատունեաց Շմաւոն և Առաւան. 'ի տոհմէն տանուտէրն Առաւեղենից Փափակ և Վարազդատ և Դատ. 'ի տոհմէն Արծրունեաց Ասպրամ. 'ի տոհմէն Մանդակունեաց Մուշեղ և Փարսման. 'ի տոհմէն Տաշրացեաց Վրէն. 'ի տոհմէն Ոստեանենից Բարզէկ և Ուլհան, և զատ եղբարս և մի այլ 'ի նախարարացն Հայոց, հրաման տայր Թագաւորն Յազկերտ խիստ կապանօք պահել անդէն 'ի Վրկանի, մինչև յամս վերջաւորութեան Թագաւորութեանն իւրոյ:

ԻԵ. Ն. յամի վերջաւորութեան

մարդոյն և կարծէին եթէ աղաւաղութեանց զայս պատահմանս նորա, և 'ի մեծ պար-ծանութիւն[1] զգուշանալ ընդ հակառակ թագաւորութեանն, հաւանեցան. թէ որ-պէսն վասն նորա եղև այսպէս և-արքայն զօրացն իւրոց. վերջնայինն հրաման տայր՝ նախ զնոսա որ ընդ իւր թագաւորացն էին. զօրսն և ընդ Սամուէլ և զօրսն արքա-յացն Աբրահամ, յանդիմանեալ սաստ-իւ տանել զնա 'ի կարգաւորեն հ-ապ. և անդ զնդեալ, յայնպէս լեզ-ուանեալ ասպաս 'ի զօրավարացն և պատահեալ զօրաց նորա. Իսկ յառաջ զան զօրավարացն զնոսա հրաման տայր զօր մեծան կորել զօրացն Սամուէլի, և զնել 'ի մե-ջին անուան Աբրահամու. նոյնպէս հրամայեաց՝ և զօրսն Աբրահամու կորել զօր մեծան, և զնել 'ի մեջին անուան Սամուէլի. Փոխանակ, զի-զի իշխեցին նմա, զնեաւ իւրեանց 'ի պատուանդան կրակն և աղանդոյն և այս արդ կորել զզուխս նորա։

1. Այլ. զարմանքին։

[illegible]

[illegible]

[illegible]

Թողին կողմանս 'ի Նիկոմիդիայ դղեկին. Տայր հրաման վկայն ղօրացն ամբարտաւանին՝ ամենեցուն ելից երկրաւ եւ այլ ազգաց փոխեալ ր ստացուածոյն. զՁիթիլեան՝ ճարտարեալ զ րանէին. եւ զՄովսէս անդրանկապետն 'ի Սեբաստիա մահապատժօք մեռանել, երթալ փառօք յաւուր գահ գի րըն. եւ հանեալ զաւուրս քահանայն 'ի բանակէն՝ որ էր կողմանցն նոր եւ նախարարացն Հայոց. եւ ամեն զնոսա հանէր 'ի գաւառին յանկէ եւ յանդարպաս ամէն. եւ անդ ըստ րաց ամենեքեան. որպէս եւ կամէին. բարեկին զնոսա 'ի կենաց. Բայց յայն պատուիրանաւ զզուշացու- ցանէր Թադէոսին վկայէինքն ով սուր ամէնք զինաւ՝ որ զաւանս է զդեռ զնոսա 'ի գաւառէն. եւ զ զՅանկապարցն՝ ընդ որ անցելոց. եւ ով զանելի մահուանն՝ որ ազատա- նեցին զնոսա. Բանից բանեց է. ամէն. մեր սաստ զանՁեալք. Թէ ա- ռնել. ամէն. զորն այլոց կարգի խի- զան 'ի մահ՝ որք 'ի մեծացն ազատացն են քրիստոնէից. զի արդեօք ամէն.

գործակցեալքն 'ի Վենդենշատա-
ւոյ: Նոյն սուրբ քահանայքն իւրե-
ամն՝ խնդրոյն գիտացին ազդեցու-
թեամբ սուրբ Հոգւոյն զգաստանալ
րոյն ժամ յուսոյ նախահաստատու-
թեան խաբեութեանց. սկսան խօսել ընդ
նախարարս Հայոց. ընդ որս կա-
պեալ էին, և տան. Թէպէտ և կա-
մք այդպէս Վենդենշատայոց թա-
գաւորել զճշմարտութեան բանն՝
ը խաղաղ. քանզի երկուքեան մեր
ոյք էին այդպէս կատարեալք էին,
որպէս և բանանն խօսել 'ի նմանէ ամե-
նեքեան. զի գոյք իւրե սրբու-
թեամբն Քրիստոսի արժանացեալք էք
'ի կարգաւորս, և մեր զօրութեամբ
սուրբ Հոգւոյն կատարեալ զաստ-
[illegible]
ւածային, զինուորս եղէք 'ի ընթեր աշ-
խարհն մեր և յայտնեալս՝ որք զգուշ
ացեալքն էին և օթեւանք աղբերն,
'ի բանակ աստուածաբանութեան և յարա-
րէն ամենեցուն Քրիստոսի, որ ա-
սացն. Ուր եսն եմ՝ անդ և պաշտօ-
նեայն իմ եղիցի.

ԿԱ. Եւ սոյն գիրս են խօսեցեալ.

առատութեամբ սուրբ Հոգւոյն մի-
մխիթարեա [illegible] ուրախութեամբ
[illegible] մը. [illegible] մը [illegible]
[illegible]. և [illegible] 'ի [illegible] [illegible].
Եւ այսպէս որդեակս զհրամանս
հաստատեցան. և հայր Աստուծոյ
յանձնեաց. ասեն. Նա պահեսցէ
զձեզ ամէն, և Հոգւոյն խաղաղութեան
մխիթարեսցէ զձեզ հանապազ. և
զայս մի մոռասցիք. այլ ուրախու-
թեամբ ուրախ լերուք յայն' որ ա-
սացն. թէ ոչ թողից զձեզ որբս.
զամ, ասէ. առ ձեզ. որ եկեալ եմ
է. և է 'ի միջի ձերում. որ արդա-
րել զձեզ 'ի հրապարակաց յորում կայ.
և պահեսցէ զձեզ յամենայն [illegible]
[illegible] [illegible]. և այսպէս ասէ ձեզ
համարձակութեամբ պարծանօք. թէ
Վասն մեր մեռանելոյ զօրհնութեամբ
համբերեցաք [illegible] [illegible] 'ի [illegible]
[illegible]. Եւ [illegible] [illegible]
[illegible] 'ի [illegible] [illegible] [illegible].
[illegible] և [illegible] [illegible] զձեզ
'ի [illegible] [illegible] [illegible]. և [illegible]
[illegible] զձեզ 'ի [illegible] ձեր. Պա-

մեծ զատանս ձեր, անուանեալ զաղջայս
ձեր, մատանեցուցանեն զաւանկի ձե-
րում զկենդանի հօրդ իւրեանց։ Նմա
փառք և պատիւ և յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։

Եւ հաստատեալ սրբոյն Ղևոնդի
ջանս վարդապետութեան և մխի-
թարութեան այսպիսի՝ ըստ հրա-
մանի սրբոյն Յովսեփայ և սրբոյն
Սահակայ, որոց և նոցա օրհնեալ
երանելի նախարարացն և զայլ մա-
նկունսն ընդ նոսա, յանձնեցին
զանձինս սրբոյ Երրորդութեան,
և հաստատեցին զաղօթս։ Եւ եղև
անձնայն անձն երանելի կապելոցն
նախարարացն որպէս զանձինս այ-
նոցիկ՝ որք մաղձեալ էին 'ի վերա-
տան և բնակէին ընդ աւուրս տառա-
պանացն. մխեալք աւուրք Հոգւոյն
Սրբոյն, քաջալերեալք և սպասա-
ւորեալք 'ի յոյսն երկնաւոր։

ԵՐ. Եւ մինչդեռ տարախուզեալ
կենայր անձնայն խաչարանն յաղագայն
որպէս բազմախորհրդաբար անուանաձայն
Նորոգեցայ՝ հանդերձացեն վարդապետ-
ութեամբ սաստկաբեղմանն վարդա-

պէտացն. զոյգս համեմէք ըն
կերծակի բաղմանութիւնք գանձոյ
յանկարծակիական. հանճիք բաղձ
աստուածայնս լուցեալք. զոր
ըստ անձանց և անձկոտիկ մայրա
մակութեան յառաստածայն հա
մեմատութեանն' թըչնոց. մա
նր այնուհետև հաւուն խաւսր
անհեռուլ ընդ նմանա բաղմա
թեան զարթնոյց զործածոյ աղան
տաւորութեան խրխանց. ամենայ
և ստասանքն. կանանց և խարտ
յոլոր. խարտաեւ և կարեւ և 'ի բոյ
համեւ զէրխանան 'ի ձեռաց և յա
ակց և 'ի պատրաստեալ որոցն. և զի
այն կարդալն կարեւ խորտացն
սատանքն ջարդեալ զրեիս եղե
թայն. զնեւալ 'ի վերայ ամբիծն ըն
կեալ համբուն 'ի բոյ. Քանզի ը
տարաւուր եկն և ծանուցմ քան զմ
նութիւն անմեղայն երկանթայ. որոց
զայլ մահաբարանան կասպեղն. զոր 'ի
նոցա խոկ անուն աւուրս եր անեւ
մայացն. որպէս յանուն որոց
վաստակորաւարկց և աղխարհական
աղ և աստուածապաշտաց. և մա

նուանդ չքնաղ որոյ կաթուղի-
կէին Ցովսեփայ. զոր եւ տեսանել
յան զուարճութիւն այնց չքնա-
ղին տեսարանագոյնս տանելին զնորայն
և անձկեցեա։

Եւ անցեալ աւուրք քահանայիցն
Աստուծոյ զեկեալ՝ ի դաշնանցն ընդ
Վենետիկեանցւոյ, և զբազմութիւն
զօրացն, զխառնեալ՝ տարածեալք
կամքն առ հասարակ. վասն զի
յանկանայն երկնահրաւիրաց կու-
սանն՝ նոյն զարդու, զոր յաղագս
անուանն Աստուծոյ արժանի եղեն
կոչել զոյնչափ ժամանակս կամա-
ւորութեամբ ՝ի մարմնի իւրեանց.
Թէ և հաճեալք նախանձ ՝ի անկեալ ան-
հատութեանն, որ եղեալք ար-
ժանին յունականեց փառացն, անդ
ապա զնելով յետս մինակեցութեանց
զթոյն և զգեղապատն երկրորդին
նահրութեանց այդր ալեկոծեալ կա-
մին աշխարհեցով. Փառացն զոր ար-
ժանի փառացն յանձնայցայց արք և
կանայք, որք անհրաժեշտութեամբն հա-
մեմեալք աւելով և սրտառութեան
ակամբք և մարգարտով կոչեն

տխրութեամբ զհոգւոյն անձանց ը
նեռաս և զատս և զպարտանաց, զը
թէ որք 'ի թշնամեաց և կամ 'ի բը
նաւոր իշխանաց կապէր առ քան
դի և նովիմբ տայր կալ և չնմն
րաց. տառապանայն փրկութեան
չուառելոյն ժողովէ և առ վայր մի,
որոց նեղեալք զնեղեալս կապէ,
չհամարէին ծանր և ոչ զգան. այլ
զօր յայլում առաւելն յայնպի
սութեան՝ նախանձին թէ ընդէր
այն եւս 'ի մերում զարգացաւ չէ. բա
րերն այլոց կայ, եւ ոչ նա երկեաւ զ
զօր [1] առաջի. և թէ կուսանք ըզ
մեծութիւն նոցա առաքինի պատուա
կանութեան 'ի մերում այնպիսեաց
մինչև հեղձամղձուկ եղեալ խը
դէր՝ չասաց չառէր։ Բայց և ոչ այ
այլոցն երկրին պատճառանաց
ցաւոր զարդարելն՝ այնպէս զեղ
ցեկը և չարեցը և ամենայն առաք
պատասխանեաց. որպէս երկիւղն հա
րամնման որոցէք նախապատկեն Պետ
րոսի՝ ցանկալի չքնաղագեղն կը

1. Յոհ. գլխ.

ձեր և հրեշտակականմանք. զոր ու-
նէին գործովք և խոնարհութեամբ 'ի
ւոր ձեռս խաչեալց և 'ի աղօթա-
նսի. Յորս մատուցեալ զօրինին
ի հրապարակ ժամու քանդեցեալ խար-
տեաց և այլ ազգի ազգի հնարիւք.
և ոչ կարացին կորել զհաստատու-
թիւն քնեանցն. յետոյ ապա ե-
ղեալ 'ի վերայ աւերիցն և ռուամբք
խորգեալ. հագիս զերծուցեալ հա-
նքն զերկաթեան 'ի մարմնոյ սրբոցն,
ըմբռնեալ կատարեցան և մկրտութե-
ան զմարտիրոսն նոցա. որք զանհագի-
ցեալ փառացն առ ոչինչ համարեալ.
Ձի և ձգեալ յերկարեալ զործն
փչէ յերրորդ ժամ առաւօտն. հան-
գերծ ընդ նոսա կատարելովք նախա-
րարոցն Հայոց. աղօթիւք և փա-
ռաւորելով զպսակաւորածցն զՔրիս-
տոս օրհնելին.

ԾԵ. Յայնժամ հրամանն առայր
Վեհդենշապուհ, և որք ընդ նմա
ազնուականք էին՝ կոչել 'ի ծածուկ 'ի
դեհկերի գաւառանու որ ասի Տանհատատա-
նին, նշխարս և զերելեցս անանոս 'ի
մարգացն. և պատասխանքն նոցա հրա-

մանաւանդ արդարոյն․ Դիր, տէր, զնոսա 'ի մասն զհաւատարմացն քոյոց անձինս առն, և յիշեցէք զերկրի Թագաւորաց, որք նման աստուածոց եղեն առա-նմանել և կեցուցանել, պատուել և անարգել. և մի զոք յորժամ յայս-մանէ մինչև ցբովանդակել ամենայն կարաւանին արդարոյն և 'ի Վրկան համանել. զՀայ այր՝ ուսանի և էջէ, կամ 'ի մանկանց կապելոց նախարարացն Հայոց՝ որ 'ի Տաճատանիսն, և կամ 'ի մանկանց կապելոցս երկրացանցս՝ զորս մեք այսօր 'ի բաց առաքեցաք, և կամ բնաւ Հայ զոք՝ որ յանկարծ թէ և այլուստ ուստեք եկեալ էջէ այսր բնակել, Թողուլ արտաքս քան զդուռն Տաճատանիս. և զառանցեք ասանց ամենայն Թողութեան ազգաւ հարկաւք և գաւառն մաշու մեռանիցեք 'ի Թագաւորէն. և մեր անձինք անպարտ լիցին յայնպիսի չարեաց՝ որ 'ի վերայ ձեր հասանիցեն. այլ զգուշացարուք երկիւղիւ և հոգալով հասուցանել բարի ճշմարտահաւատութիւն 'ի վերայ անձանց և մեր և ձեր հա-

[illegible]ղեկաց։ Քանզի ըստ հրամանի
[illegible] երկնիցն, Թէ ոչ զա-
[illegible] է զ ի մանկանց նախարարացն
[illegible]՝ զատա այլ[illegible]եալ հե-
[illegible] զայն ձանձրացուցանէ զնա-
[illegible]ելոյ։ Զոր փրկիչն Քրիստոս
[illegible] խաչ առաջելով եւս զզա-
[illegible] զկայանս աշխարհի գաւառա-
[illegible], եւ նորա նման Հրեշտակն՝ Պետրոս
[illegible] զորան հրամայեցին առաջեւ
[illegible], զոր Բանն Աստուած
[illegible] բացեալ յայտնեաց զնա-
[illegible] հաստատեցելոյ յանուան նորա-
[illegible] ազգն եւ կատարեալ եղեւ-
[illegible] անսատ զատուցանել խոր
[illegible]ուր. Թէ Որ հաւատայ յիս՝
[illegible] զոր ես գործեմ նա գործես-
[illegible] եւ առաւել եւս գործեսցէ։
Եւ կատարեալ զաւհճեալն զգործն
[illegible] հրամանին Վեհապետացն,
[illegible] յայտնեալ հաւանեալ ՚ի Տա-
[illegible] զատուցած փառաց [illegible]։
[illegible] եւ [illegible] զայն նախարարացն
[illegible] ընծայեցին ՚ի գլուխն Տաճա-
[illegible] Մասաց եկին ՚ի կատարածն,
[illegible] եւ առաքինութեանց ՚ի

յորում երկնաւոր՝ աներկիւղ համարձակութեամբ առաջի ամենայն բազմութեանն հրապարակին Գորկաց օտարացն, և որք անդէն ի Շահաստանին, անկեալք յոտս ի քահանայիցն Աստուծոյ խնդրէին ի ուրախակերպ համբուրելն յեկար ողջունիւ զոտս նոցա, աղաչելով և աղերսով. թէ յիշեսջիք զմեզ անմոռաց յուրախութեան ձերում և յաղթութեանն։ Նոյնպէս ի սուրբ քահանայքն Աստուծոյ ընկալեալք ուրախիւք և զուարթալից երեսօք ընկալեալք զամենեսեան ի գիրկս խարեանց ասէին. Աստուած զօրութեանց օրհնեսցէ զձեզ. և տացէ ձեզ անեղութիւն ի փառս անուան իւրոյ, և զօրացուսցէ ըզձեզ առաջի ազգաց հեթանոսականաց. և արժանեաւ զմարմինս ձեր յերկնից կապանացդ՝ յորում կր-առաջնորդեսցէ ձեզ յաղթածնեցեան ձերոյ, և ի գիրս հարց ձերոց հանգուցուսցէ զանուանս ձեր. և յանձնելոյ կապանացն աստանօր արժանեաւ զոգիս ձեր, ածցէ զձեզ

ի բռնած՝ ուր զմեզ յուղարկե-
ցէ. և բնակեցուսցէ զմեզ ձեռա-
կերտ յաւիտենից յարկան, ուր
Քրիստոս է ընդ աջմէ Հօր:

Եւ տեսանել անօրինացն այնպիսի
ողորմելից հրաժէշտ ՚ի միաբանից
սրբոց քահանայիցն և նախարարացն
Հայոց. այպանէին ընդ միտս իւ-
րեանց ծաղրելով, համարէին զնոսա
յիմար անգէտս հրամանի թագաւո-
րին. և ասէին զաղաղս ցմիմեանս. Զի
թէ զիարդ երկրպագանէին զմահն՝ զոր
պատրաստեալ է նոցա, ամենեքին ար-
ձակք բազում աւատուրաց լինել զին-
չեանս. այլ այպանել ծիծաղել և
արհամարհել ոչ կամէին հարկաւ: Եւ
այն ոչ գիտէին ամբարիշտքն՝ եթէ
այն էր ցնծութիւն և նոյն լոյս ու-
րախութեան. և ընդ այն զարմա-
նային անդրայն խելսութեանն հրա-
մարեալքն և միաբանեալքն: Եւ այ-
նուհետև զմիաբանս առաքեն քահա-
նայսն և նախարարացն Հայոց.
յուղարկեալք զնոսին՝ կապեցեալք
ի պարտկանս. Եւ երթեալք առաքին
քահանայքն Աստուծոյ կապեալքն

ծնողով․ եւ այլ մանկունք 'ի պատա-
ւորացն երանելեացն․ որք եկեալ
էին ընդ նոսա ճգնակամ յօժարու-
թեամբ յաշխարհէն Հայոց․ սրբա-
նեկել նոյա եւ պատաւորել 'ի կա-
պանսն․ որք եւ վիճակի բարւոյ մա-
սինն լինել արժանիք անձնայինն։ Եւ
մանաւանդ առաւել Խորէն երէց,
որ էր 'ի գաւառէն Այրարատու,
'ի գեղջէն՝ որում անուն էր Որկով,
եւ երանելին Աբրահամ երէց, որ
էր 'ի գաւառէն Տայոց․ 'ի գեղջէն՝
որում անուն էր Զենակս։ Զոր տա-
րեալ Վեհդենշապհոյ եւ որք ընդ
նմայն էին, եւ հարցեալ՝ թէ դուք
յո՞ կացէք․ եւ լուեալ 'ի նոցանէ՝
թէ առ զհոգեւոր առաջնորդ մեր եւ
զվարդապետս ասանիք․ ընդ դառն
պատրաստ եւս երթալ 'ի կեանս
կամ 'ի մահ։ Եւ սրամտեալ Վեհ-
դենշապհոյ՝ հրաման տայր բան-
տարկել զնոսա եւ պահել անդէն
'ի Նախճաւանին․ պատուէր տայր
բառս առաջին հրամանին զգուշանալ
նոցա բազում պահպանութեամբ
մինչեւ յամառանակ մանանեկոյն ան-

նոյն գործոյն ազգութեան յաստանն. և
նոյն. ամէն. Իջեւեալ ծառայ ող-
ջոյ. [illegible] ժողովրդեանն Հայոց և-
կեղեցւոյ նահատակեալն ի դէմս ար-
դարութեանն, որ և տառապեա-
լն յաղագս խորհրդոց։ Զոր երկ-
[illegible] երանելեաց քաջանուանելոյն
[illegible] և Արտաշամեան զօրավա-
րաց [illegible] անդրանիկ զնոստա ան-
[illegible] ի Նահատակելոյն. [illegible]
[illegible] նահատակութեանն. [illegible] ան-
[illegible] զամենայն այնպիսի երկնա-
[illegible]. զոր և [illegible] են [illegible]
[illegible] նոցա՝ [illegible] Նահա-
տակն Գրիգորի։

Դ. Զամէր այնուհետև ամբա-
[illegible] Վեհ [illegible] հանդերձ
քահանայիցն ՚ի Նիւշապահ՚ ՚ի
[illegible] ժամու [illegible], ընդ [illegible]
[illegible] որ եկեալ ՚ի Վրկանն։
Եւ [illegible] զայս [illegible] [illegible] [illegible]
[illegible], որ էր [illegible] Խալիֆէ.
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] ՚ի Հայս, որ և [illegible] հա-
[illegible] [illegible] [illegible] [illegible] զե-

տէր. և էր ինքն այր 'ի մանկութե-
նէ խոհեմ կեցեալ առաքինի վարուք.
եղեալ որդի քրիստոսասէր և հա-
ւատացեալ ծնողաց. որ և զերանելի
քահանայան Աստուծոյ և զնախա-
րարսն Հայոց՝ որ 'ի կապանսն էին,
յոյժ ընտանութեամբ գիտէր, ա-
ռաւ և բազում ծախս յընչից և ըն-
պատասաւորութիւն արարեալ էր մինչ
'ի Վրկանին էին, ուշադրելով զա-
մենայն որ և ակն ունելով մասն
նշխարաց սրբոցն 'ի կատարումն նո-
ցա լինել արժանի. սորա լուեալ
զհրամանն Թագաւորին՝ ձեպով և
անձնապաստ ուխտիւք զգուշացեալ ամենք՝
Թաղելոյ և զզօրաց իւր և զհարամն
'ի մանկունս իւր և յընչերս, և իւր
առեալ 'ի զօրաւորաց իւրոց զօրա-
ակունս և ուժեղս, և նմանեալ
ան կարաւանի՝ գնայր ընդ ճանա-
պարհ՝ որ երթայր յԱսոր ա-
խարհն, և ուղեկցեալ ճանապար-
հորդէր ընդ ամբարակապետին ընդ
Վեհդենշապհոյ. ցուցանելով նմա
զճանապարհորդին և յոթեանս ա-
հանգիստն՝ բազում արժանութեամբ

ստութեամբ. և համայն եղեալ ձեռնադրողացն աստուածային գործ հըղաւորութեան Թաւմէսին՝ արդեօք գեր յոյժ և խոստովանելով ողջունի. քանզի Աստուած էր՝ որ յաջողէր գերն։

Եւ եղեալ համարձակագոյնս յընդունելութեան մեծի իշխանին՝ Թաւմէսին. հարցանէր սա ՚ի սկզբանէ լուր առաջարկեաց զԹաւմէսին՝ յաղագս գիտնոյ և ծննդեանն, թէ որպիսի էին և ուստի։ Եւ Թաւմէսին զամենայն պատմեալ խօսէր ընդ նմա զկարգութեամբ, առաւել պատմելով և զհայրս բանսարկութեամբ եղելոյ ընդ նորա գործոյն։ Որպէս եղեալ էր նա, առ ի ծննդեան որդւոյ, որոյ ՚ի նախնեաց իւրեանց երկուքն և որբացեալ հաւատարմութեամբ եղեալ էին ծառայք. որոց գիտ ՚ի նոցա յանձնեալ է ՚ի մանկութենէ իւրմէ, և նորա պահպանութեամբ կացեալ էր ՚ի մեծ մեծութե զայրացեալ և կամ. Զա րաժեալ յայտնապէս յանձին իրաւ զառաջնոյն սրբութեան. Յիշելով և յանձնելոյ Թաւմէսին

զպատճառագրութիւն վարդապետին հեթանոսաց Պօղոսի, որ երբեմն հաւատոյն փարիսեցի լինէր, և գործեալ այնուր հանդիպեցի. որ ոչ էր յայսցանէ 'ի ժամուն և ոչ վերայ հաւատոյք աւետարանին քարոզ էր և վարդապետ, և քաղաքս 'ի Կիլիկեցւոց գաւառէն էր տարսոնացի, մանաւանդ թէ սուրբ և հոգեղէն վերին զօրացն էր դասակից. բայց զմիտս լռակացն առ վայր մի ապաթարեցուցանէր այսր անդր, զի զճշմարտութիւն անձեցուցեալ հաստատեսցէ. այսպէս և երանելի Յուժինն պատրոգականն բանիւք զմտաւ Վեհգենչատահոյ խնդացուցանէր 'ի ժամուն, որպէս զի զիւր ընթացիցն անձնական արարեալ 'ի գլուխ կատարեսցէ բան կամի։

Իսկ ամբարտաւանն Վեհգենչապուհ որպէս թէ յաստուածոց համարէր զպատահումն նմա Յուժկին, անսանելով զայլն յամենայն յաջողակ, և առաւել փարթամքր հաւատարիմ և ընտրեան զօրեաց 'ի բացն՝ յոր եկեալ. վասն որոյ

յարգը թողլ տան և ոչ ժամ մի հե-
ռանալ միմեանց. այլ 'ի տուէ և 'ի
գիշերի մեր ունէր առ ինքն բազում
յորդորմամբ և սիրով. և հաստատէր
զնա զխորհուրդ Թագաւորին և ըղ-
ձեա զործոյն՝ յոր երթայր. վասն
զի էր յառաջագոյն տեսցելոցն.
Նմանաւոր էր որ անմտեալքն զերան
ըստ խորոց կամացն 'ի գաղտնութեան և
յանձն անօրէնացն. և յորժամ և 'ի
փառս Եկեղեցւոյ խորոց սրբոյ: Եւ
կատարէր բան սուրբ Հոգւոյն՝ որ
ասէ. Թէ Խորհեցան ոչ իմն, և
զօրին կալեցին և ոչ խնամ բանին:
Եւ ապականեցան ամէ. Խորհեցան
խորհուրդ՝ զոր ոչ կարասցեն հաս-
տատել:

Արդ պատմանեալք երանելի Խու-
մենի զենաս ինչ զերաց անհատանել այն
ար. և խնդրէր ապաշխարով հրաժեշտ
'ի Վեհզգենշատահեայ. որով յամենայն
դատակարր խրատ և կարծեաց հեռա-
ցուցեալ զժխտա աղանդաւորութեան՝
սատանայ հաստատարանագոյն ցուցա-
նէր նմա զինքն, զխանելով յագգե-
ցուցանել սուրբ Հոգւոյն, եթէ

ջատայ ¹ Թող Աստուած արժանել զՔեզ նմին ։ Իսկ Վենետկեցւոց ե րեսս իսկ ոչ տանէր յանձն լսել բանից Խուժկին, այլ տակաւ զե գարջոյ. եթէ Դու որ օրինօք սնեալ ես և կեաս 'ի փառս կրօնից, ոչ կաս առ իս յօժարութեամբ և ան սանձես զկորուստ անօրէն կրօնա ւորաց մահապարտացն, և սրբա խանձաս ։ Եւ երանելոյ Խուժկին լուեալ գայթակղիչ բանս յանդուգն ութեանն, մեծաւ երկրպագութեամբ ընդդէմ անձինք սիրոյն Վենետկա ցւոյ. այլ 'ի սրտի խորում փառ աւորեալ օրհնէր զամենահզօրն և ըն յարգաբերեալ ամենայնի զԱստուած, որ տայր խօսել ամբարշտականին և տաղանդել զգաւառական նոյնպէսագն այլ բոցն՝ երկնաւոր ընդ նոսա 'ի սեղ նաշահատակացն Աստուծոյ. այն որ լինելոց էր յետ և խայտառակ թագաւորին հրամանի, և ցուց և բարձրեալ մեծի և երկնաւոր գա ծոս սորայն ։

1. Յոր. գայ.

Իսկ երանելոյն Թումէկին համ-
բարձեալ առ ակն Աստուած զա-
րածն սրտի իւրոյ. խնդրէր 'ի Տեա-
ռնէն շնորհել նմա ուշ և լայնու-
թիւն սրտի. որով արժանի լինի
գէթ հասանել 'ի տախտակս
մտաց իւրոց՝ որպէս յարձանագրի՝
զամենայն հարցմունս բանաւորացն
ի քրիստոնէականսն և զգօթան,
զոր խորհրդանշէր ոչ սրբոյն 'ի ժամ
խաչելութեան մատուցանելը Աստու-
ծոյ. որպէս զի պատուեսցէ ձեռնադրա-
ցեն քարոզել 'ի կարգի առ 'ի յի-
շումն ամենայն հաւատացելոց նա-
խոյ յազգս յաւիտենից։ Եւ ընկա-
լեալ 'ի յախորժակսն 'ի սուրբն
Սիոն ճանաչեալ խնդրոյն իւրոյ՝
պատմել անդադար զնմանն սրտիւ
ամենայն ուղղափառ ժողովրդոց.
յամենայն անկիւնս 'ի զարմացումն և
ի փառս անուանն Քրիստոսի.

ՆԵ. Իսկ Վեհ Հզօրագունոյ 'ի սկիզբ-
բանն ոչ համարէր արժանի պատա-
ռել Թումէկին զաւուրս բաժանմանցն,
զոր ինչ գործելոց էր ընդ նմա,
այլ ասէր՝ Թէ 'ի Վերջան ամենայն և

անձանց արձակեալք : Եւ երթային այն օր 'ի գեօղ մի՝ որում անուն էր Սեւան¹, հեռի 'ի Նիշապհոյ որպէս հրասախօք վեցիւք և թէ աւելի ես, ըստ չափոյ համարոյ Պարսկաց, և դադարեցին անդ մինչև ցառաւօտուն այգուն : Յարուցեալ փութով դադար, այնինչ զգացուցեալ ամէք 'ի գեղջէն, և ոչ ամենեցունց զօրս ընդ ինքեանս, բայց միայն երանելիք Խուժկան և անօրէն դահճօքն, առեալ ապստամբեալ էին զաւրքն, ըստ հրամանի թագաւորին. գնացին 'ի գեղջէն լանելայն : Եւ առեալ զաւրքն դահճացն գնացին զքաջանդակ մնացեալ մասն 'ի գիշերոյն ընդ անկոխ անապատն հեռի 'ի գեղջէն՝ որպէս ապարանի հրասախաւ միով և թէ աւելորդոյն. և ընդ ծագել առաւօտուն հասանէին 'ի տեղի մի քարուտ, առապարաձոր, աւազուտ. 'ի տեղի՝ յոր ոչ հասանէր

1. Խնդրելի է տեղին յորմէ եկեալ հեռաւոր 'ի Նիշապհոյ (որ է հեռի ընդ 35 [illegible] 'ի Խորասան), զի յայնմ կողման նշանակին ընթացք և առաջարկք :

պատուիրան. և ոչ բնաւ անցանէր ընդ նա ամպն. վասն ոչ գիտելոյ երկիր ՚ի նմա Նախախնամութեան :

Եւ որպէս առժամս երևեցուցանէր խորանայն՝ Մովսէսի, ամբարշտութեան վրէժխնդրապատուհաս, և Զինեալն մնոյպեան արքայն և Սողոմոն անդերձագեան: Նոյն երևեցոյց Յուդիթին հանդերձեալ առ աշխարհն ամենայնի ընդէն:

Եւ հաղորդեցաւ զօրութ մասնաւորն յառաջնի՝ առ զեղում վեհազանութեան. Բնութեամբ և անձնաւորութեամբ գործեալ է ձեր. և բնութեամբ Արքայն կառավարածս պարտաւոր երից ընդ մեզ երևեցաւ և կամ երից անձանց մաքուր պատուածոյ. եկեր. առաջին մեծ եր. և չէ էր արժանի կե. Թող ընդ այնպիսոյ աշխարհին ձեռքս. որպէս Հայրն էր, և այնպիսի բնութեամբ արժանեաց՝ որ անդ հեղանն. և ամենայնի այնմ զօրս եր պատուածոյ. և ձեր առանձնական և խորհրդական ամենայն գործն այն. Եւ ՚ի փառս այդպիսի ձերոց յանդգնութեան և մաքրապատուհանն՝ առաքելոց

արքայ առ ձեզ կարի բարեբարու-
թեան տայր . զի մեզ հրաման եւս
տայ . Թէ հատանելին արեգական և
կրակին երկիր պագանել և զմեր օրէն-
սանանն աւանդեալ պաշտել, նոցա զնա-
հապարտութիւն թողում, և զաշտա-
րակարան որ կապեալ է՝ արձակեմ ՚ի
Հայս, և զիւրաքանչիւր ուրուք ըն-
տանեաց տէրութիւն տամ և զգահ
և զպատիւ : Արդ դուք յիշեցէք՝ և
զձեր անձինդ զմտաւ ածէք և զայն
չարիս կապելոց զոգիս, որք ՚ի բանտ
էին . և զի զհրամանն արքայից ար-
քայի կամաւ և ախորժելով յանձն
առէք . և որպէս եղէք պատճառք
բազում արեանց, լերուք այժմ
պատճառք բազմաց կենդանութե-
ան. ապա թէ ոչ առնուք յանձն, և առ-
կացէք ՚ի նմին ապաշխարութեան յամա-
ռեալ կեայք, դուք մեռանիցիք, և զնո-
սա հրամայէ սպանանել . և անձամբ
արքունիքն որ յառաջն հեծեալ և զ-
այրամ հեծելոց են, ՚ի ձեր յագու-
խնդրին յառաջասցեն : Եւ զայս ա-
մենայն բանս խօսեցաւ Վեհշեն-
պուհ հանդերձ ընկերօքն իւրով-
քեղ առաքեալն :

Հրաման տայցէ երանելւոյն Սա-
հակայ եպիսկոպոսին՝ թարգմանել
զորդւոյն Յոհաննիսեայ և որդւոյն Ներսէհի
և զորդւոյ ընկերակցացն․ քանզի սա էր
եպիսկոպոսն միայն գիտէր պարսկե-
րէն․ և այլ ոք ՚ի որդւոյն ոչ գիտէր։
Որոյ անդրէն պատասխանի տուա-
րեալ սորա եպիսկոպոսին Սահա-
կայ՝ տալ զՊեղեպատրոնէ և ցայլսն որ
նոքին ընդ նմա․ Մի տայցէ ինձ, ա-
սէ, տալ ցգտանս բանս, որ ոչ են ար-
ժանի տալոյ լսողութեան․ վասն զի
խօսք՝ որ ինձ տանելի թուին և ար-
ժանի ծաղու, զի՞ եւս տանեմ ցնոսա,
Եթէ գիտեմ թէ խորհեն լսեն՝ և զննել
և զրկեցան ՚ի միաբանին անդրանենի։ Ա-
րարեք զմեզ և կարծիք․ և մի յերկա-
րեալ խօսիք ընդ մեզ բանս անմտս
և պարապանս ընդունայնս։
Եւ որոտմամբ Պետրոպատրոնէ և այ-
լոյն՝ տանն ցաւուրին․ Պու. հարկա-
ւորութեամբ տառս ցգտանս, թող զի-
տացուք և զգոյշ լինիցին և զկամս։
Եւ որդւոյ եպիսկոպոսին կարծեցա-
ւոր զդանեան և զպատգամս թագա-
ւորին տանցեալ ցաւուրս ընկերա-

կիցան իւր. և որդւոցն լուեալ՝ մեծա-
ձայն ծաղու. անդամանեցին զբանիւքն.
զոր և խնդացեալ ամօրէն իշխանացն՝
տաւաւեղացէս զայրացան: Սակայն
պատասխանի տուեալ որդւոյ կա-
թուղիկոսին Յովհաննու ասէ. Թէ
Նզև հարցումդ այդ ասենաս ՚ի
դրան տաճին հազարապետին ա-
րեաց Միհրներսեհի. և լուեալ ՚ի
մեծին զբանս մեր և զհասմս, զոր և
թագաւորին գիտել եա. Նոյն են մեր
ամենեցուն կամք և բանք, և ոչ փո-
փոխեմք զբանս մեր. որպէս երբեմն
խոստացեալք էաք և զանխորհուրդս. և
այժմ զղջացեալ ապաշաւեմք իբրև
զմեղապարտաւորս: Այս եւեթ խորհուրդ
և խնդիրք որ յան զոր առնէ ՚ի սիրտս
մեր. թէ ընդէր ոչ այժմ ժամ զե-
րեկն և զեռամեղն յուզանի զօրն
յանձինս մեր լուութեան և արա-
բաւան բարւոյ ՚ի հաւատոյ՝ յորում
եմք. խորշել ՚ի այն և կեալ ամե-
և ՚ի մեղանին վախճանել: Այս յա-
ղագս երկրպագութեան արեգա-
կանդ, որ ասէք՝ թէ հրաման եւ-
թագաւորին, զոր թէ յանձն առեալ

ճանաչիք, ասէ. Ներայք դուք և ա-
ղօթեսցուք՝ որ 'ի կատարման են. և
ինքն յանձնական՝ չկամիք առնուլ
յանձն, և դուք մեռանիք և զնոսա
ճանաչելով առաջնորդել. մեզ՝ մի լիցի
ապանով զշնորհատուութիւն և ծա-
ռայել ասա առանձնակաց առաքելա-
ծոց, որ ոչ են առաքեալք. և մերով
աղօթութեամբ ու մեք 'ի հաւատա-
ցեալ կատարելոցն՝ մի լիցի արձակումն
և 'ի յաւիտենից ամենայն կատարման
անձանց. զոր և նոքա ասեն առա-
քելեալքն զմեզ խնդրեն յԱստուա-
ծոյ. զմեր վասն Աստուածոյ զխոնա-
րհն՝ քան թէ զկեանսն մեր ուրա-
խութեամբ։ Այլ թէ Հնար էր ձեզ
աչօք զիտել մարգարէութեամբ,
թէ ծրագիրս (վասն) առաքելութեան աշ-
գարին՝ զոր բերել առ մեզ հրամա-
նաւ Թագաւորին. Թուէր մեզ[1] ան-
ձայր և կարուանօքն և դուք և որ
զձեզն յղեաց, աղօթելին զանձանձիկա
ձեր և զԹագաւորին քան զամե-
նայն ենթագայեալց 'ի մարգարէսն

1. Յոր. և Թուղթ դ՞եր.

հաշտաւէք. բայց զոր ինչ կամիք՝ ա-
րարէք վաղ, և կամ երբ կամիք։

Եւ տեսցեալ զայս սուրբ կա-
թողիկոսին Յովսեփայ, արտաքսեալ
զայլազգսն Վեհշնասպուհ և որք
ընդ նմա հաւատուրացքն էին, և
հրաման ետ սրբոյն Սահակայ ասել
ցնա. Զի թէպէտ և թուին մեզ ծանր
թշնամանքդ՝ որով թշնամանեալ ա-
տեցեր զմեզ անմիտս և կորուսեալս,
սակայն առ համարձակապէսն յան-
դգնութեամբն՝ զոր իշխեցեր յա-
տուածանման թագաւորին ասել
բանս անարժանս, իբրև ոչինչ թը-
ւին 'ի մեզ կարգին թշնամանքդ մեր
անձանց և թեթևութիւն. Բայց դու
գիտես, զի քեզ զէն զկորուստ անձին
խնդրեցեր և տանց, և կեալ քեզ այ-
սուհետև անհնար է. սակայն պար-
է մեզ և զխորհրդակցացն զայլոց գի-
տել զկամս և զմտադրութիւն,
վասն զի որեք մեր այսպէս առն.

ԾԶ. Եւ հրամայեաց սրբոյն Սա-
հակայ ասել ցնոսա, թէ մի անձամբ
անմիտս բանից զորս, և զանձինս մեր
յայդպիսի խոհս խրատուք 'ի բաց

կեցցէ. և մարդկութիւն զկեանս ըն-
դունիցի յաւէտ զմահ. Եւ զա որ ինքն
զմեզ կենաց խօսել զայդգունակ
բանս մահապարտութեան, վասն
զի մեռանելի է և չէ արժանի կեալ.
իբր իսկ վասն գործոյն չարաւն զմա-
հու. իսկ զուր թէպէտ և էր տա-
նելի իւր մտաւորութեան. և զհամա
թագաւորին եւէթ անձինք և արտ-
գածն երկիր պատգամինք. Հրաման-
տաց զմեռանել թողուլ մեզ. և զմեզ
դատապարտեալ ազգամանդամ ի տանն մեր
արձակել:

Հրամայեաց եւս Վեհապետեղաւաղուհ
և այլ հաւատարիմքն որ ընդ նմայն
էին՝ որպէս Սահակայ, առել ցերա-
նի այրն Աստուածոյ Ղեւոնդ. Թէ
Սեր ընկեալ է վասն քո՝ Թէ որէնաց
զհրամանն իբրև զգեղ որ անզգեալ
է. և ի քո խրատուն առնելի եւս կա-
րեաւ աշխարհն Հայոց. արդ՝ այդ-
պէս մեծ և խմաստուն մտաց պարտ
է հանդարտել զաւրինացն արդարն զբա-
րեպաշտութիւնն, զի զայնչափ մեծ
մարտ մեզ և մեզ հանդերձ Աս-
տուած ծառայութիւն: Արդ՝ որպէս և

զէր խրատատու և բազումք մեռան ՚ի ձեռն աղանելոյ. ըէր այժմ խրատատու կենաց, և թող կեան և գործս և այլ բազում անթիւ անձինք. աստ ցգոյա զի պայծծեն արեգականն երկիր և կեցցեն. և դու այնպիսի պատիւս գտանես ՚ի Թագաւորէն՝ որովք անուանի լինիս ՚ի քում աշխարհին և յամենայն ազգս: Եւ սուրբ եպիսկոպոսն Սահակ երկայնմտութեամբ և ծառայելով Թագաւորին առ. վայր մի սրբոյն զամենայն բանս ամբարակապեանն և զնորուն անօրէն գործակցացն, որպէս զի ծանուսցէ անօրինացն պատասխանեաւք սրբոցն՝ զիւրաքանչիւր անձին զերանելեացն զկամս և զփափաք և զանձարծ հաստատութիւն նոցա ՚ի հաւատոն:

Եւ սրբոյ առն աստուածոյ Ղեւոնդեանն եկեալ խօսել առանձինն ընդ սրբոյն Սահակայ՝ ասէ. Թէ Ահա գոյա պատասխանի այժմեան պարտ է տալով, որչափ արար պատասխանի փրկիչն Պիղատոսի յատենին: Բայց զի ծանուսցէ անօրինին դդանկաթեանս մերոյ զխնդիրն, ասա ցգո-

ամենայն աղօթեք առաւօտին զոր ինչ լսեալ է ձեր վասն իմ, եթէ որբնոցն մերոյ անկեալ եմ, և բազմութեան ժողովրդոց եղեալ եմ սատակիչ. յայտնեմ ձեզ առ իմոյ մերձաւորութեն ՚ի կատարումն։ Եւ արդ զմեղաւորութիւն լաւ գիտութեան իմոյ՝ ուսմունք իմ մնասցեն՝ զի ուսեալ եմ յԱստուծոյ և ոչ ՚ի մարդոյ. այսոր յաղագս երկնային մշտնջենաւորս և անցաւոր մարդոյ՝ մեռանելոյ փոխանակեցի, և կորուսի. բայց լուիք. և լսեալ յանդիմանեսցէք բանիւն, եթէ որ ուսուցէք զբազումս՝ զանձն քո ոչ ուսուցէք։ Եւ վասն պատուոյ և փառաց՝ զոր խոստասցուք տալ, մեզ ի ձեզ առանձին զգաստացուք ՚ի հոգեղէն և ՚ի մշտնջենաւորս մարդոյ, զոր ցեց և առաւել անապականելի և զօր ական հաստատեսն և ամենայն, որ զգեցեալ նալ զգուշաց և զուգաւորեաց յերկնաւոր և յանմահն աշխարհն թագաւորեալ, զոր ոչ երկնիւք և ոչ երկրիւ և որ ՚ի ներքս պատուասիրութեան ինչ են՝ արժէն ոչ կարեն. Մի ինչ պակաս է ՚ի մեր երանելի փառաւորութեանս.

բարձակ մահուց. որում երբեք զղջա-
ցեալ ծառայութ փութանք ընդել։
Արդուցէք վաղվաղակի, և Թող ու-
րախացեալք զերծանիմք յերկրա-
ւոր ախտաւորական կենցաղոյս. և մի
եւ յերկրաւորեալ ձգաէք զանձինս և
զմտաւակար բանս բանդագուշեալ
Թագաւորին ձերոյ։

Եւ որոյ տան Աստուծոյ Ղեւոնդի
կատարեալ զեւր պատասխանին,
աղաղեցին զասուրբ եպիսկոպոսն ըզ-
Սահակ երանելին եւեցն Մուշէ և
երանելին եւեցն Արշէն և երանելի
արքեպակաւայն Փայլաչ՝ առել ցանորեն
իշխանսն և նոցա բանիւ. Թէ զոր ինչ
ասացին առուրբ վարդապետքն մեր և
հոգևոր հայրքս առեր Յովսեփ և ամ
Ղեւոնդ, զոյնեն մեր կամիք և խնդրեմ
կատարեցէք վաղվաղակի յոր և
կեալ եք. և մի յապաղէք. և խըն
դրեմք յԱստուծոյ պարգեւել մեզ
և արժանի առնել զմեզ յաւիտեն-
կան պատուոյն և երկնից արքայու-
Թեանն։

Եւ լուեալ զայս Վեհդենշապուհ
և անօրէն գործակիցքն, և ի որում

ամենին բարեխօսութեան զօրացուցանելք՝
խնդրեմ և այլ պատարագականն բանիւ
ի խոր ընդունայնս խօսել ընդ մեր
նշանակին. կարծեցեալք թերեւս
խորացին ձեռնել զբէ ՚ի գնդէ ան-
բուն մխիթարութեանն, որում ան-
հնար էր ընծել. ահաւոր աղաչել և
այլ բանիւք եպիսկոպոսն Սահակ,
զի Թարգմանեալ նոցա և այլ զօր-
թէ կամեցին խօսել ընդ աւուրքն:
Եւ որոց եպիսկոպոսին Սահակայ
պատասխանի աւելով ասէ ցնէն-
զեղչագոյն և ցայլ գործակիցս նո-
ցա. Թէ Նա որ միջնորդն ցայժմ կա-
մեղասար ծանուցայ ձեզ և զաւա-
ցեալն ՚ի ձեռն Թարգմանեցի սրբոց,
երբէ ոչ ետ Թէ ձեզ և կամապատկառակ-
ւանից Թագաւորին ձերոյ կամեցայ
արդանեկել. բանիւք զինեղ արդերք
հարկ ՚ի վերայ կայ մարդոյ՝ որոշ
մայր իւր առ իւր են և զգայ խելաց
իւրոց. զայսպիսեաց զձեր բանդաղա-
ընծայ բանիս՝ իւր խաւ խել. Թող Թէ
յանկանելս այսպիսի խոստովան և
եպիսկոպոսական մարդոց լռելն առնել.
բայց այդպիսի միայն՝ զի առաւել եա

ծանիցի ձեր յիմարութեանդ նշա-
նականք. և 'ի մեզ զօրացեալ հա-
ստատեսցի ճշմարիտ և աստուածա-
յոյց քաղաքութեանն մերոյ անշար-
ժութիւնն:

ՃԼ. Նա արտմնեալ անօրէն երե-
ցունց իշխանացն, ոչ ևս առ 'ի յեր-
կարուն համբերել կարացեալ սըր-
տոցն, որպէս չարեաց անձնըն թա-
գաւորին ընդ այնչափ թշնամանեաց
զնա. յարուցեալ ինքնին Վեհդեն-
շապուհ աւագի գործակցաց իւրոց՝
հարկանէր առաւելապէս զնա որոյ
եպիսկոպոսին Սահակայ. և հալա
'ի գաւառին մերձեցուցանէր զմերձն.
և նոյն եպիսկոպոսին 'ի սաստիկ հար-
մանեն զրդուեալ՝ ոչ զօրեալ անկա-
նէր յերկիր. այլ 'ի բարեխմ յեցեալ
հաստատէր. և որպէս 'ի բերանոյ
ամենայն որդոցն եկեղ առնել այս-
պէս. Պոռնկանամբ դրեն, Քրիստոս,
որ բարձեալ անկեալ կենդանութեան
զաւանդք՝ անմահական զենման մա-
տակարարեալ անմահութիւն բաշխե-
ցաւ 'ի ձեռաց մերոց. իսկ արդ և
զմեզ իսկ մաքրագործութեամբ այրա-

րեալ ընծայեմ՝ ընկալով զամենեսեան արժանաւորապէս զպատարագեալն զոր ՚ի հոգս անձանց։ Եւ այսա-պէս զորս եղբարցն այսպէս, Քրիստոս և յորդեալ հաւէքն վասնզի արժանն ՚ի վերայ սորբոյն, առաւելն կայ զօրացեալ ուսումն ընդ հզօ-րն. որպէս զի բնաւ չիցէ վերաւո-րեալ։

Եւ ապա հրամայեցին և զաւուրս ... զՅովհաննէս զվկայաբանել զորս. և մերկացուցեալ զաւ հանդերձն զպատուէրն՝ առաջ երկեցա. Դարձ անձին ... ՚ի հող և ՚ի հանդերձանս, զի առնել ... պատարագ ... և այսպէս ընկա-լաւ զբովանդակն կատարելու-թեանն։

Իսկ յաւուր սորբոյն Պետրոսի հր-ամանաւ ... զաւ հանդերձն՝ ... ՚ի մերկացուցանել զաւուրն և կատարեալ ... ։ Եւ այսպէս ... ժամս, մինչև զամենայն ... սորբոյն ... և զՅիսուսեանն ... ՚ի մարմինն, մինչև առնել-

րացն մերկանալ ՚ի մարմնոյն. վասն
զի զերանելի այրն Աստուծոյ զՂե-
ւոնդ առաքելագոյն աւելի ամենայն
Պարսիկք խրատատու և պատճառ
լինել ամենայն խրացն Վարդանայ և
գործոցն՝ որ ՚ի ժամանակին յայնմ
գործեցան յաշխարհիս Հայոց. Եւ
մինչդեռ կէաք ՚ի դաշնանցն բարբէն
զերանելին Ղեւոնդ. այլ թէ կորեցին
սրով զգլուխ սրբոյ երիցոյն Մու-
շէի և զսուրբ երիցոյն Արշենայ և
զորբոյ սարկաւագին Քաջաջոյ. ո-
րոց ՚ի ժամ վախճանին կատար-
մամբն տացեալ. Տէր Յիսուս ըն-
կալ զոգիս մեր:

Եւ ապա աշխատեալ դաշինքն
որ քարշէին զսուրբն Ղեւոնդ. ամբ
՚ի նոյն տեղիս առաջ հինչ որով. ու-
և այլ առաքելքն կատարեցան, և անդ
հատին զգլուխ սրբոյն առաքելա-
որ ՚ի ժամ խորոյ կատարմանն զբ-
ւարթագին ձայնիւ ասաց. Փառա-
ւոր զքեզ, Քրիստոս, որ բազում
գթութեամբ քո օգնեալ պահեցեր
զիս ՚ի մանկութենէ իմմէ, և հա-
սուցեր ՚ի ժամս յայս, արժանի-

[illegible] սրբոյ քոյ. 'ի ձեռս [illegible] յանձն առնեմ զհոգի իմ։ Եւ սուրբ եպիսկոպոսն Սահակ իբրեւ աւարտ ասաց. զորոյ յետ [illegible] աստուածեցուցն' կատարեցին [illegible] աւարտեալ. որոյ մասուն-[illegible] ձայն աղօթս, եւ [illegible] աստուածեղէնսն զօգնին։

Եւ այսպէս 'ի վեշտասաներորդում ամի թագաւորութեանն Յազկերտի, որ էր քսան եւ հինգ երան-ամն հրոտից' պատահեցան սուրբքն Երանելիքն. Տէր կաթողիկոսն Յովսէփ 'ի Վայոց ձորոյ. սուրբ եպիսկոպոսն Սահակ յՌշտունեաց. Տէր երէցն Արշէն 'ի Բագրեւանդայ. Տէր [illegible] Աստուծոյ Ղեւոնդ երէց 'ի Վանանդայ. սուրբ երէցն Մուշէ յԱղբակոյ. սուրբ սարկաւագն Քաջաջ յՌշտունեաց. յԱպար աշխարհէն, մերձ 'ի գեօղն [illegible] որ անուանեալ կոչի [illegible]։ Եւ որպէս [illegible] եւ [illegible] Կամսարականին Արշաւրայ հարցեալ զերանելի [illegible], եւ [illegible] 'ի [illegible] [illegible]

տարրալք և զկախմանն որոցն, գրե-
ցաք հաւաստեաւ։

Եւ գնացեալ 'ի բաց 'ի տեղւոյն
Վեհգենշապհոյ և այլ իշխանացն որ
ընդ նմա էին, ընտրեալ առս ին
Թոռով Թողին 'ի տեղւոյն կազմ գի-
նու. ընդ որս նախ աստղքն ըստ Ա-
տուծոյ ազդեցութեանն զերանելի
Յուսիկին ընտրելի Վեհգենշապուհ
և Թողոյք ապաշխարով, որպէս զհայր
սեպհականացուցն և ուխտոյ իւրում
հրամանելին. Որոց հրաման տուեալ
առաքին յապահապանան, Թէ մինչև զա-
ւուրս աստ և կամ ես աւելի զա-
հեացեն զզուշութիւն զգիտակուձոզ.
որպէս զի զխշատեալք 'ի Թալանդ՝
ընկեցցի այսր անցք ասկրանին, 'ի
զլուխ լեռանց և կամ 'ի խորամոր
տեղիս քարանձաւաց, մինչև եկեալ
անցցէ 'ի բաց կարաւանն արքան-
դուցէ, առն, եկեալք 'ի զիխանեկ-
հրապարակն յամենայն եկեալ, զամե-
ցեն զատեկերս զօրաց, և առեալ ափշա-
ցեն յամենայն զինուորեալս, և
ամենայն զամեննեան մեծապարզեւ ատամն-
Թագաւորին։

Ի ծագելով սոյն պաշտպանութեան
բառ հրամանին Վեհապետութեան և
Մեծ աբբահայրութեան և Միաբանութեան
մերոյ. և կացեալք զայն ա-
ռաջի. խորհէր ՚ի միտս իւր երա-
նելին ծառայիցն. եթէ զինչ ազնիւ հնա-
րիւք ցուցանիցէ Աստուածային Նախա-
խնամն. որով արժանի լինի
բարձրագոյն զինուորաց արդարոց յայլոց
պաշտպանութեան: Եւ մինչդեռ երա-
նելին յայնպիսի խոհականութեան
հանդերձ կայր. յանկարծակի ՚ի
նմին աւուր յերեկորեայ զինչելոյն՝
ըմբռնէր շարժումն մեծ ՚ի աւելորդն՝
բանիւք աստուածոյ և ձայնիւ աղա-
ղեաց յանդգնութեան հոգւոցն. կոչմամբք
բարեպաշտութեան ամենայն զօրութեան ծած-
կեալ. ձայնիւ արտասուաց և փայլա-
տակեալ զօրութեան աղաղակութեանն.
և ապա լուսոյ լոյս որինակի ծիա-
ծանին ելեալ յերկնից՝ շուրջ պարու-
րեալ զնահատակաց զմարմինս ծրա-
րելոյ. և կործանեալ յերկրէ պա-
հապանին կենդանեաց լինելին. շքե-
ղագոյն այր զինելոյ ընդ այրեաց
թէ արդ իցէ. այր և զօրեալք յեր-

կեր՝ ոչ կարեւին կալ հաստատուն, վասնզի զօղուտն մեծի շարժմանն 'ի վեր առաւուցեալ զնոսա ընկենոյր յերկիր. և այսպէս կքեալ ոտիւք և կարկեալ խօսիւք՝ լինէին խուսափեալք ամենեքեան։ Իսկ զերանելի Խուժիկն այլ հզօրին պաշտէր անհոգա. ուրախալից մտօք փառաւորէր զԱստուած, իմացեալ այնահետև՝ թէ այդ հաստատս կատարքն բաղձմանամանակեայ յամենայն կամաց խորոց խնդրէրք։ Եւ կատարեալ միապէս երկեւղիւ զգիշերին ամբողջն և զտունն բաժանդակ և զերկրորդ եւ գիշերին մինչև 'ի ժամ արեգական ծագման, և առաջս լուէին ձայնք ազլընդոյն հնչմանց, և որոտմունք ամպոյն փորատեալ ցածմունքն, և դադարէր երկիրն 'ի շարժելոյ. և ցայտմունք փայլատակմանցն ափոփոխին յերևելոյ. և լինէր այսպէս շարքն զանցեալն խորին առաւօտեան երկնայքս։ Իսկ պաշտօնեայքն յաշաղին ապշութեան թմբրութեամբ ակաւին մի ողջ առեալ՝ այս անձին փախուցելոյ 'ի անկողնէն. այլ 'ի լայ

ընկճեալ արտաքոյն երկիւղէ՝ ոչ կա-
րէր համբառնալ 'ի յերկրէն. ըստ
հոգւոյն նեղ ընդ միմեանց դէմ, և
խաւլ թէ ոչ կարէին։

Բայց զկին ժամու տասուրն եր-
րորդի յարուցեալ երանելի Յու-
լիոն, որպէս թէ կամաւ՝ կայր 'ի
վերայ հայելով զկնի իւր՝ փախչէր 'ի
անդուստէն, զի զնոսա զօրացուցէ 'ի
համբառնալ և զկնի իւր հետևացուցա-
նել 'ի վայրացն։ Արդ անսեալ զե-
րանելի Յուլիոն զի երկթայր խնկ-
ռիս յընթացսն. ուշաբերեալք առ
վանդէ՝ զկնի նորա արանայլին 'ի
անդունդն. չխնելցեալք ընդ դատ-
նալ և հայել 'ի անկելոն առ երկիւ-
ղի. և տնեցեալք դհետ Մեհրներսե-
հոյ և զօրծանկցացն նորա փութային.
բայց երանելի Յուլիոն ընդ այլ
Ճանապարհ սրաշէր 'ի նորանէն։ Ա-
հաւասիկ պատահաբանացն առ Ի-
խանան յառաջ վերցերորդի. պատա-
ճին զամենայն անդս ազեալցն՝ որ
անցին ընդ նոսա զանին մի և զգի-
շերս երկուս. զորոց զգալն երևացն
անսեալ Պենչապահել և ընկերացն

նորա . և զանձս աշխարհին իւրեանց մի ըստ միոջէ լուեալ՝ զարհուրեցին : Եւ տագնապեալք 'ի բազում ժամս հիւանդացին . խորհուրդ 'ի մէջ առեալ՝ ոմանք կարէին իմանալ հնարս . բայց զպահապանսն ևեթ լռեցուցանել զանոյին . պայմանել ամէնք ամենեքին , և ոչ ընդու յերկնչել ամէնք զմահ քաջանայիցն և կամ զայնպիսի նշանաց երևմանն : Բայց նիւթեանք միայն խանձանելով տառամնեցին զարմացմամբ որպէս յանդգնութեան ընկերին , առնելով 'ի Նիւշապուհ և Ջնիկան զօմանան՝ եթէ Ո՞չ են իմ քրիստոնեայք թեթև իմն և գուզնաքեայ . այլ հասարակաց մեծ է զօրութիւն օրէնաց նոցա և հաւատոց . և մեք յանզխասութեան մնալով կորնչիմք և չզգամք :

Իսկ երանելի Ատոմիկն զխօսեցեալ՝ թէ յանձնէ Աստուած զամենայն կասկած յամենայն կողմանց , այլ և զպատասխանիսն խրատանոց րուա՝ զոր ինչ պատահարանագն առարին . և թէ ոչ որ առնէ փորձ առաջոյն որպէս . առնեալ ընդ իւր առա

եւ ոչ ընծեր. զորոց կարի փոյթ
լինել ընտանեալ քրիստոնէութեան,
ածեալ ընդ ինքեանս և զգրաստս,
կամ խորհրդանշեր ամենայն սորոցն
սրբոց չորեքկուսեան. և գնացին
ընկերօքն 'ի գեղերի յերկրն [1]. և մեր-
ձեռս 'ի վայրն՝ վերկացեալն 'ի տեղ-
ւոյն՝ ուր մարմինք սորոցն կային,
քանզի յոյժ աղջամղջին էր գիշերն.
և սփռեալ էայք սա վայր մի, սորրա-
ցին ամբարձեալս կարծեցեալ զմն-
ճին գնար երկնաւոր զանձանն։
և մինչև նոցա խաւսեալ յա-
ռեն ընդ առաջինն, և առ՝ա յանկար-
ծեալ 'ի նմանութիւն լուսաւոր ար-
ծուոյ աղացեալ հաստաներ յերկնից.
և իջեալ նստեր 'ի վերայ մարմնոյ
սրբոյ առն Աստուծոյ Ղևոնդի. և
ընտաշրեալ ամեցին սասուեալ եւ
զան 'ի տաւն՝ երևեցին յայտնապէս
մարմինք խորհրդանշխեր սորոցն։ Եւ
նոցա առնախազեալ արգաւոր զուար-
ճացեալք երկիր պագանեին անուան
Աստուծոյ, և ձեռն 'ի գործ ար-

1. Առացեալ յարքունիսն։

կեալ՝ ժողովեցին զիւրաքանչիւր ոք
յականէ 'ի մի մի տապան, որպէս
նշմարեալ երեւեր [illegible] գրով երա-
նելի Յուսիկին. յորոց բուրեալ հոտ
անոյշ 'ի մարմնոց սրբոցն՝ ցեալ
զուարթացուցանէր զամենեցուն զը-
գայութիւն խելացն.

Եւ բարձեալ վաղվաղակի զդա-
տուց՝ փոխեցին յայլ տեղի յանա-
պատին. հեռի 'ի տեղւոյն խրճե ե-
րիւք պարտէզ հրաշափառք. եւ զարդա-
րեալ [illegible] եւ [illegible] բազ ցան-
[illegible] խրոց երկիւղին, այպա մարթե-
ցին զմակերա սրբոցն յանուաշնա
մարմնոցն. զոր եւ պատեալ արժա-
նաւորապէս կատարէ՝ Թաղեցին պա-
տուով անձինն յանապատին զգու-
շութեամբ. եւ զմակերան առեալ ըն-
թերին 'ի շահատանն, եւ աւուրս բա-
զումս ունէին առ խնդրեանս 'ի ծա-
ծուկ։ Այսպէս լուեալ սկսանէին
տալ եւ ամենայն [illegible] զրխա-
նեաց՝ որք 'ի կարաւանին էին. այլ
ընդունէին՝ հաւատով զփրկու-
թեան ոգւոց եւ մարմնոց։ Եւ սակ
աւով յիւրաքանչիւր աշխարհին ա-

մին հատուցանել վաղվաղակի․ յո-
գուս երկնաւոր կենդանութեան
ընծանեաց միանգամայն և զաւա-
կն․ Նոյն զաւակին պտուղ տա-
ռածայնոյ՝ մեծի գանձուն ըն-
ծեալ նախ երանելոյն Յուսիկին մա-
տուցանէր կապելոց նախարարացն
Հայոց․ որք էին արժանի եղեալք
ընդունելոյ զայնպիսի փրկութեան
չերեանց զիտան, անդէն և անդ
ձանձրէին թէ այցելութեամբ այց
ամէն նոցա Աստուած․ և երբ և է
արձանքն ՚ի կապանացն, բարեխօ-
սութեամբ սակերաց սրբոցն․ բաւ
րանի սրբոյ առն Աստուծոյ Ղևոն-
դի․ զոր ՚ի խորանէն իւրում ՚ի դի-
տերքն աւետաւորեաց զգիտելեաց նո-
ցա ՚ի շնորհէն Աստուծոյ․ տեսա-
նել զաշխարհն իւրեանց․ որք կապա-
րելոցն էին տառապեալք սրբոյն ՚ի
ժամու իւրում։

Սկսեալ այնուհետեւ մի ըստ միո-
ջէ պատմել կապելոց նախարարացն
Հայոց երանելին այրն Աստուծոյ
Յուսիկն․ զոր անուանեալ յայսմ
հետէ Յուսիկ ծանրանամ․ և զա-

նուն պարանծելոյն ոչ որ հոգացեալ պատասխանոյ մեզ, այլ ամենայնգեան գրեալ պահէ յոր մեծ այցելութեն, և պարգևէ առատապէս զվարձս վաստակոց նորա ընդ հանձոյս անուան Խրոյ. ասէր և ոչ լսէր զեր-նամս մեծամեծս և զօգնութիւն հզօրին զոր արարեալ էր նմա. և թէ որպէս 'ի Վարդգէս յայտնեալ Քրիստոսի զխորհուրդ Թագաւորին ծանոյց նմա, և նոյն ուղեկցեալ առաջնորդեաց նմա յուսով: Մեծարոյ, ասէր, և հաւատարիմ առաջի Դիեղնաւաչոյ համբարականեալ երևեցոյց զիս, մինչ զի աղաչելով զնա և բանիւ աստանելով անօրէնսին 'ի ձեռն հզօրին Աստուծոյ 'ի աւելի ամենայնի նախահաստատութեան որդոյն, որում կամաց Հօրացորս է ամենայն, որ եղև արժանի տեսանել զամենայն, զոր ոչ կարծէի լսել և տեսանել մի-բոտ միօքէ, որում ոչ արժանի լսելոց համարէի զանձն իմ. զհրաշագան բանաւորութն և զպատասխանեան միոյ միոյ որդոյն, զազգս և զխատարումն զիւրաքանչիւր անձին,

ածք հարցաւ և լուայ. այնա որդ և մեծ մասամբ մերոյ անձանձրոյթ խնդրելով զնա անդարմանս աշխատանս որոյ շնորհ տուող Երրորդութեան, մինչև երկնաւոր գանձուն նշխարացն որոյն զատոյ լինել մեզ ընդող. փոխոցյ անթեթեւ զպաշտպանական ազգապետեալս, զորշուրեցայց զան-հատա զեկեղեցւոյն զանիրաւս, ջանաց զանձին Թագաւորին ըղ-խորհուրդս, և բարձրացեալ զանուն եկեղեցւոյ իւրոյ սրբոյ. Զայսպիսի բանս պարծանաց և խնդութեան պատճառ անձանձրոյթ երանելի վար-դապետացն՝ ամենայն հաւատացե-լոցն ՚ի Քրիստոս. որ էր երբեմն վար-դապետն երկրաւոր գանձուն, և եղև յանկարծ վաճառականն բարի գործովք պատուական մեծի երկ-նաւոր գանձուն մարգարտականն նշխարացս.

Նոյն խոսք և միաբանութիւն էր յուսեա կատարելոյն նախարարացն Հայոց յետ և ՚ի մահուան իւրեանց. ՚ի նմանել ՚ի տան և յայտնել. ՚ի անձն և յամենայնութեան. զոր և պատմեաւ

անձեայց ցնծութեամբ՝ զուարճաց-
ցանէին նորոգելով զամենայն մա-
կեաւ միտս լսողացն, և հաստատէին
'ի հաւատս արդարութեան. Եւ
մանաւանդ տէրն Արշարունեաց
կամսարականն Արշաւիր. որ յա-
մենայն ժամու 'ի տուէ և 'ի գիշերի
վարդապետութիւն սրբոցն, և մա-
նաւանդ խօսք և հոգեոր խրատ սըր-
բոյն Ղեւոնդի, և պատասխանիք իւ-
րաքանչիւր ուրուք ըստ հարցման
ապաշխարողացն, և աղօթք միոյ միոյ 'ի
ժամ կատարմանն եղեալք, այն էր
նորա հոգւոյն կերակուր և որոճումն
քաղցր. զոր առէր և ընդ զուարթայ
ապաշխարօքն միաբանեալ՝ պատմէր ան-
ձանձրոյթ հանապազ. Զոր և մի-
ջնորդացոյն լուեալ 'ի հրաշալիս Կամ-
սարականէն՝ գրեցաք յօժարապէս
հոգալով. զոր թէպէտ ըստ ար-
ժամանութեան միոյ ոչ եղեաք բա-
ւականն յիշել զբովանդակսն 'ի կար-
գի, այլ և ոչ ընդու զանեալ անձամբ
յառաջադրեալ մասանցս ինչ ծաղ-
նալով.

ՃԻ. Սա մնեալ Թագաւորին Յազ-

միայն բաց կարգելոյ ժամանակին ամենայն 'ի Վրկան. և միահամուռ ամենայն աւազակացն և զօրացն՝ որ ընդ նմա էին. համարձակութեամբ գնացեալ այսպէս բնակիչք Շահա-ստանին. որք 'ի Նիւշապուհն էին ըստ հրամանին Պենճապհոյ. Նախա-րարացն Հայոց՝ որք 'ի գեղեկին 'ի խորանն էին. արձակեալ զմիան-գամն յերեանց և կամ զօրքն որ ընդ նմա ընթէին՝ 'ի այնմա արտա-նելութեան սար և կամբջեին. Զոր իբրև լուան երանելիք եղբայրքն Թոփին և Արտաշամ, փութապատակեալ փութով 'ի Վրկան հասանէին. և անկեալք հրապարակաւ առաջի ամբարտաւանին Պենճապհոյ. բողոք բարձեալ ասէին. Եթէ Պու. յոր-ժամ զհոգեւոր առաւրան մեր և զմանր-ցապետս 'ի Նիւշապհոյ առեր զնա-ցեր. ընդ որս և մեք կամեցաք ա-ղեկեց ընդել, և զոր բանտարար հրա-մայեցեր խոսա պահպանութեամբ արգելուլ զմեզ անօգնեն մինչև ցայժմ. արդ եթէ ապաշխարել որոշեր մերկեր տարբե անգապա անօգուցել զնա.

առնելով բարեբարութեան պա-մնջէք մեզ՝ երթալ և մեզ և լինել անդարձ ընդ նոսա. այլ կեալ ան-դէն և վախճանիլ պատարագ եմք. տեսանելով եւեթ զնոսա ցանկամք արժանի լինել. և եթէ սպանէք զնո-սա, կամեցարուք և 'ի վերայ մեր տալ զնոյն հրաման, զոր պատուա-կան և մեծարգոյ համարեալք զմահն այնպիսի՝ քան զանմահայն զկեանս և և զմեծութեան աշխարհիս:

Եւ Վեհդենշապուհ լուեալ զայն-պիսի բանս 'ի նոցանէն, և ընդ հա-մարձակութեան աներկիւղածութեն արանցն զարմացեալ լինէր և ան-նոյն բարձրութեան հրապարակին, պատասխանի տուեալ առաջ ցերա-նէլեան. թէ Հանապազ վարդապե-տացն ձերոց ոչ ոք ցուցանէ. բայց վասն ձեր հարցանեմք ցանկալեց արքայ. նա իշխէ զոր ինչ հրաման տայ 'ի վերայ ձեր՝ Եւ մնեալ 'ի ներքս Դենշապուհ պատմէր թա-գաւորին Յազկերտի զամենայն ըզ-բանս և զխնդիրս երանելի երիցանցն: Եւ Թագաւորն հրաման տուեալ ա-

ւ. Թէ 'ի ձեռս վերայ ձեռաց ինչ որ
յայտ առնէ, և պատասխանեաց որ չէ
գին. երկիր պագցեն արեգական
և պատուելով զերկինս յանձն առ-
ին, և ընկալեալ զպատուէրս մեծա-
ձև 'ի մէջն՝ արձակեցին յաշխար-
հն իւրեանց. այլ թէ չհաւանէին
ցեն յանձն առնուլ զմեր հրամանն,
պատուհաս կրեսցեն խնդութեամբ,
և երթեալ յԱտրպատական մերձակա-
թեան զօրացն ընդ այլօրսանք մերձակ-
ան. և 'ի հարկի կացցեն մինչև
ցկոխման իւրեանց։ Եւ եկեալ
Ներշապուհ տայց ցերանելի երկուց
իւրն. և ցերանելի երկուցն Սարա-
համ՝ զհրաման թագաւորին։ Եւ
ընկալեալ զայս պատուականն հրամա-
նացն, ետուն պատասխանի որ-
պէս ընդ մի բերան և ասեն. Մեք
զմիայն խնդրեմք ևեթ պատարաս
նել փառս անուանն Քրիստոսի, այլ
և զերանեաց և մնջաւ։ Այլ փառս
արեգականն երկրպագութեանց՝ որ
առնէք, մեք ընդ ձեր մոլորութեանց
աղտութեան տրամադրեալ խառնեսցուք.
և խնդրեմք յԱստուծոյ զչարն ձեր

՚ի թմրութենէ անզգայութեանց ոյ-
գորէն. Թող թէ մեզ՝ նմանեալ ձեզ,
և մի լիցի թողեալ զպարտիցն՝ սր-
բածոց երկիր պագանել։

Եւ լուեալ զայսպիսի պատասխա-
նիս անհերքելիս՝ իշխանացն ՚ի բերա-
նոյ երանելի երիցանցն, կատարե-
ցին զհրամայեալսն ՚ի թագաւորէն։
Եւ կտրեալ զերկոցունց զականջսն,
ետուն տանել յԱսորեստան՝ ՚ի
գաւառն որ անուանեալ կոչի Նա-
բուլ[1], կալ անդ նոցա ՚ի հարկի և
առնել մշակութիւն արքունի։ Եւ
լուեալ զայս հաւատացելոցն աշ-
խարհին, որք յԱսորեստանին էին,
զերթս երանելեացն անդր, ընդ ա-
ռաջ ելին նոցա խնդութեամբ և պա-
տուեցին զնոսա որպէս զնշխարս նա-
հատակելոցն սրբոց, որք և արժա-
նի իսկ էին այնպիսի մեծարանաց։
Նոքա և զկարաւի իւրաքանչիւր ա-
ւուր զինչ և ունէր՝ բերեալ դնէին
առ ոտս երանելեացն, առնուլ ՚ի

1. Համաձայն գրի առ Սեբէոսի. լաւա-
գոյն Թերեւս Համփուլ։

հասարակարարել ՚ի այնս հոգևոր
Նոյն ՚ի փրկութիւն անձանց իւ-
րեանց և ընտանեաց. Եւ երանելի
եկեղեցւոյն ընդհանրական յընծայիցն հա-
ւատացելոցն՝ ըստ արժանի մեռան
Բր. Նոյն իսկ տայլին տանել յԱ-
ղէր աշխարհ՝ կապելոց նախարա-
րացն Հայոց. որք խնդութեամբ և
բազում յօժարութեամբ իւրաքան-
չիւր ոք աղաչէր զերանելիսն՝ տա-
նել արժանի այնպիսի հոգևոր ճա-
նապարհի. Էր՝ զի երանելի երէցն
Արտաշամ աւանէ գաւառս հարա-
ւային կողմանցն Ասորեստանեացն՝
առեալ մատակարարէր կապելոց
նահատակացն Հայոց՝ ըստ իւրա-
քանչիւր պիտոյից. և արարեալ
Նոյն այնպէս բազում անգամ կար-
գաւ կարգաւ՝ քրիստոնէից աշխար-
հին. և այսպէս իսկ ինքն երանելի ե-
րէցն Արտաշամ բազում ամօք՝ մինչև
յարձակումն կապելոց նախարա-
րացն Հայոց աշխարհին, անմիջեր
լինէր նոցա թոշակատար ՚ի հաւա-
տացելոց աշխարհէն Ասորւոց. Եւ
կեցեալ ամս երանելւոյս երիցոյն Խա-

բենայ անդէն յԱստուածային վախ-
ճանիւք։

Իսկ երանելին երէցն Աբրահամ երաշխաւորութեամբ հաստատեց-լոյ աշխարհին, որք զատանս իւրեանց և զարարս փոխանակ ընդ հարկի նորա դրեցին յարքունիս՝ ցխափման նորա, և կատարեցին զհարգեալն անձնեհեր յաղագս նորա, արձա-կեալ զերանելին այլն՝ եկն ՚ի Հայս. որոյ անուն իսկ իւր առանց ամենայն երկրպագութեան զեկեղապարանս հրե-շտակի ցուցեալ ծանուցանելր ամե-նայն անասղաց զայլն. և ձեռնա-դրեալ յաստիճան եպիսկոպոսու-թեան աշխարհին Բիւթանեաց. բա-զում ուղղութեանց աշխարհին մարդ-կան լինելր ուսուցիչ. և վախճանելր ՚ի նմին կարգի ՚ի բարւոք ծերու-թեան։ Որում արժանի եղիցուք և մեք ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր. ամէն։ և նմա փառք յաւիտեանս. ամէն։

## ԴՐՈՒԱԿ Գ.

ԺԹ. Արդ դարձեալ անդրէն յառաջին գրուածն՝ գրեսցուք ՚ի կարգի. Իսկ յամին եօթնեւտասաներորդի Յազկերտի արքային՝ իշխանն Վրաց Աշուշայ ապաշաւէր զաւագա դրանն արքունի, բարձեալ և անհամար կորուսի ծախեալ իւրոյ գանձուց ամենայն. և մնացեալսն անօրէն հաղորդացելոյն Միհրներսեհի. զոր ձեռն ջանիւք և աստուածեղ աշխատութեամբ հաւանեցուցեալ՝ առաջին աւէ ցնծացուցին Յազկերտ, զի հընազանդեցին նմա զօրքն երանելոյ նահատակելոյն Համայեկայ՝ ՚ի ատեանն Տամբերանեաց. զորս առեալ էր նենգաւոր իշխանին Սիւնեաց Վասա-

կայ 'ի գայլեկաց՝ որպէս զորդիս մա-
հապարտաց, և տարեալ 'ի դուռն
զի մեռցին. որք էին յոյժ տղայք:
Եւ մարգարէին Աստուծոյ բարե-
խօսութեամբ սրբոյ արեան հայց
նոցա հաւանեցուցեալ զմիտս թա-
գաւորին՝ պարգևեաց Աշուշայի որ-
պէս կարի առն սիրելւոյ և վաստա-
կաւորի՝ զանձնահաւատալի ամենեցուն
զմեծ նորա խնդիրն:

Եւ Աշուշայի տեսեալ զայն և ըն-
կալեալ 'ի թագաւորէն զմեծն պար-
գև, յարուցեալ 'ի խորանին առաջի
ամենեցուն անկեալ յերկիր հո-
վէր արար և անդր, և ապա հարկա-
նէր զգլուխ 'ի գետնին. այսպէս կա-
տարէր զերկրպագութիւնն: Եւ
տեսեալ զայս թագաւորին և ամե-
նեցուն որ 'ի խորանին էին, և զար-
մացեալք մեծապէս՝ թէ զինչ արար
այրն. հարցանէր զնա թագաւորն.
թէ Վրաց բդեշխ, զինչ է այդ նոր
իմն գործ՝ զոր ցուցեր դու մեզ այ-
սօր: Եւ պատասխանի տուեալ Ա-
շուշայի ասաց. թէ Նաբերան ար-
քայ, դուք ինձ նոր պարգև շնոր-

հիւծէ՝ զոր այլ ումն ¹ ընկերաց ծա-
ռայից 'ի մէնջ չէր գտեալ. և քեզ
արժան է նոր երկրպագութեանս
երկնից պատգամաւորդ մեզ. զոր մեր յայլ
ծառայէ զայսպիսի երկրպագութիւն
երբէք չէր ընկալեալ: Եւ լուեալ զայս-
պիսի բանս Թագաւորին յԱստուծոյ
և ամենայն բազմութեանն առաքա-
նոյն. յայժմ զարմացեալ զայլն և մեծա-
պէս զարմացան:

Դ. Եւ հեցեալ Յազկերտի Թա-
գաւորին Պարսից զիւրոյ ժամանակի
հինգերորդ՝ վախճանի՛ր. 'ի փոխա
նոր ². Եւ Թագաւորեցին նորա եր-
կու որդիքն հակառակելով ընդ մի-
մեանս. և զինեալք 'ի վերայ մի-
մեանց պատերազմաւ, յաղթահա-
րեալ աւագն կրտսերն զաւագն, և ինքն
Թագաւորեաց. որում անունն էր
Պերոզ: Եւ 'ի նմին ամի Թագաւո-
րութեանն իւրոյ առաքեաց զՅե-
զամփիսայ զեւր զարեհկոզինն.

1. Օր. խեհ ընկերաց ծառայից:
2. Օր. 'ի փոխանակ նորա Աշոտ ընդ
հինգն ամաց՝ իւր յառաջ անուն
...:

զոր կարի յոյժ սիրէր առաւելա-
պէս, և հրաման ետ արձակել զՆ
նախարարսն Հայոց 'ի կապանաց, և
կարգել նոցա ռոճիկ 'ի Հրէս. Կայ-
ցեն, ասէ, անդէն ազատութեամբ, և
կատարեսցեն զգործ որ ինչ և գիտէ
նոցա Առաստա հայրն Վռամշապհո-
յոյ։ Եւ եկեալ Վռամշապուհն ետ
նոցա աւետիս ասելով. եթէ Ար-
քայից արքայ զմեծ հաւատարմութիւն
եդեալ ձեզ, և 'ի կապանացդ հրա-
մայեաց արձակել. և կարգեաց ձեզ
ռոճիկ 'ի Հրէս, և կանանց ձերոց
յաշխարհէն իւրեանց։ Եւ ձեզ հրա-
ման ետ կալ 'ի գործ արքունի, և
լսել ամենայն բանի և կատարել՝ զոր
հայր իմ Առաստա հրամայէ ձեզ։ Եւ
լուեալ Նախարարացն Հայոց զայս
ամենայն բանս Վռամշապհոյ.
ետուն փառս Աստուծոյ հօրըն
իւրեանց և բարերարի. յորժամ և
կատարելագոյնս և այլ բարեբա-
րեխնամութեամբ նշխարաց սրբոցն
ապաւէնին երկրպագութեամբ։

Եւ 'ի տանելն զՆախարարսն Հա-
յոց Վռամշապհոյ, և աս [illegible]

ողջու ընդդիմութ ընդ նոսա , շնոր-
հիւ զօրացեալ յաստուածային ամեն-
[illegible] ՝ խնամատարելով . սիրելոց
[illegible] Աշտարակի ըստ սր-
բոյն Յովհաննու [illegible] . յա-
ղագս և այլոց նախարարացն Հայոց
[illegible] բարեխօսութեամբ հանա-
պազ Տեառն այնուհետև զնախա-
րարսն Հայոց ՚ի Հռոմ , և կարգեալ
[illegible] . զու-
[illegible] զնոսա ՚ի ձեռն Աստուածոյ՝
[illegible] զնոսա ՚ի գործ պատերազմի
[illegible] յաղթեաց առաջի
[illegible] զնդին . յաջողեալ նոցա
[illegible] երևելապէս . այլ և առաջի
[illegible] քաղաքացեացն Հրեայ և
[illegible] . շնորհելով անձն [illegible]
[illegible] բազում և ազգի [illegible]
[illegible] ՚ի [illegible]
[illegible] . զոր [illegible]
[illegible] նոսա էին՝ զաւազ առ [illegible]
[illegible] հրաշալեաւ ա-
[illegible] . վասն որոյ [illegible] և յամե-
նայնեցուն ՚ի զօրավարելն և զօրա-
[illegible] զաւրաւորին՝ [illegible] և [illegible]
նայն . Եւ [illegible] Հրեայ [illegible]
[illegible] զնոսա [illegible] Հա-

յոց յոյժ, և զգուշութիւն նոցա, զլաւ բարս և զմարդկութիւնն՝ բազում անգամ զգոլ ծանուցանէր Ածամեծայն 'ի գուռն, և խոյոց սէրկլեացն՝ որք 'ի հրապարակին էին։

ԿԱ. Եւ վասն զի բազումք իշխէին խուզել զերանելի կապելոցն զախրանաւ խեղ մարմնով. զնոյն և չարչանել յանդգնելին. որոց մացեալ յերեանց ակամն զերանն, ըստ բանին փրկչին, անձնահաճ՝ մապարծութեամբ մատուցեալ յայլոց ակամն զխեղ կրկաւն։ Եւ իմ լուեալ զայս, դողացեալ զարհուրիմ. քանզի հայեցեալ 'ի կամաւոր նոցա յաղագս յաւիտենից յուսոյն զանազան ամենչանաց մասունս, և անեալ զմեծ նոցա զանազութիւն համբերութեանն, արհամարհելով զմեծութիւն, առ ոչինչ համարելով զիշխանութիւն, հեռանալով յմջեց. ապաւինել անձնեալ զանձինս 'ի մահ, և բազմամամանակեայ համբերել կապանաց, առաջեալ բանդից և թշնամանաց, յանձն առնուլ զանարգութիւն բանն գիտաւս, անձինք

ջ ղօթից . հաւկէ ՚ի ծառայութեայ . ա-
ակ ռամկաց յղփութենս , ախոր-
ժակ զեղխութեան վիճակն , ա-
ժէ ընդդիմութեան , ակնկալեալ
մարդիկ ըմբռնողութեան . և զայլ բա-
րոմ մտաւոր կարևոր զանձնա-
ձօք և առաքելս , զոր յերկրեանց
մարդիկ մարդկին այն կեցին ա-
խորժելով . չխոհեմ ըմբռու և ոչ յի-
ձկ զանխտրացեալ մասին ինչ յայն-
գնեաց անձինս . որպէս զերանելի
մարգարէիցն և զառաքեալս առաքելոցն
բազում ինչ անմանելով ուղղու-
թեանս . չենք արժանիք և ոչ նկա-
տել զի ինչ մասին մարդկայինս ՚ի
նոսա , որք ընկալեալ ևեթ բիւր շա-
րեաց . զոր անգամ և ոչ յիշեսք եր-
բեք զձեռն . և կամ զմտաւ ածեալ
ըմբռնեսցեք : Մի միայն է արդար և
սուրբ . որ ասացն՝ թէ նա միայն
յաղթեցի աշխարհին :

Իսկ ամենք ՚ի կարգելոց նախա-
բարոյն յայնգամանս , որոց ակա-
նաւոս իսկ եղաք . արդարև յերկ-
րի երկնաւորք եմք և ՚ի մարմնի
հրեշտակք եղելոյս . որոց կարգեալ

անձնամբ անձանց և դպրոց. և ա-
ռեալք զհաստակարանս եկեղեցւոյ,
հոգևոր կրօնիւք զանապատական ի
առաքինեաց զձորս տապաւորեալ
յանձինս խորեանց. անվեհեր կա-
տարելին կարգեալ կանոնս դաւ-
դայից. և կարգադրմանս ընթեր-
ցուածոց. դպրաց և դպրեկ յոր-
մէքին ՚ի նոյն անդադար ՚ի գումար-
տակին՝ որպէս ՚ի տան. երբեմն յայտ-
նի և երբեմն ըստ ժամանակին ՚ի
ծածուկ զնոյն անձնցուցանել ոչ յա-
պաղէին, մանաւանդ զինու ընդ միոս
խորեանց պաշտէին. յարձակեալք
՚ի վերայ Թշնամեաց՝ յաղթս
կայքին ՚ի սիրտս խորեանց. և յամե-
նոյն կասւոյ օգնականութեամբ հը-
զօրին ամենազամբ յաղթօղք և ա-
նուանեալք զաւանդայքին։ Եւ որք յաղա-
դրս ծերութեան և կամ ծանրամ-
տութե ըստ մարմնոյ յանութե՝ ա-
մանել ոչ զօրէին, համայն յերկար
աղօթիւք և անվհատաբար յաւն կա-
լով սատեալ եւ կամաւոր յամա-

1. Յոր. ղանդարան ։

ութեամբ անդրուն և անձնահաճութ-
եան. և էր ամենայնիւ զամենեսեան
գործք լուսոյ և մանկութեան ազգայնու-
թեան:

Նոյնպէս և ՚Կանոնքն՝ որոց նահա-
տակեալ մարտիրոսացն ազգին, և
յորդորն¹ Կանոնաց՝ որոց էին ՚ի կա-
գանն ազգին ՚ի Հռոմ, բաղձում ազատ-
ծնական ազատութեան մի զմիով.
կենաց ամենեքին՝ զոր ամենայն մեռա-
նելով ամենայն ախտից. բաց բանի
Նորգավեքին կենդանի մարտիրոսաց
էր, առ որս յաղթի բան աստ որու-
շութեամբ զաստուածի վարուցն նու-
չա նշանութիւնս, որք անցուցին բո-
բաղում արարմքք. և զբնական ան-
կարութիւն մարմնոյ կանանց զօրա-
ցուցեալ առաւել քան զարանց՝
քաջայաղթողք եղեն: Կանոնքս փա-
փուկք զամուրք նախարարացն և
կանանց ասպարզ՝ փոխանակ նաշ-
խոյ կարկեան սատկին, և փոխանակ
պարգ գինւոյ՝ ջուր չափով բմպելին.
փոխանակ կերակրոյ ամենեցուն

1. Յոբ. դպրս.

զգեստուցն՝ խաչիւր որդեայս զգե-
ցուցին. և փոխանակ ուկ րաղմագիւն ան-
կողմանցն՝ փոխարինեալք 'ի վերայ երկրի
զնանաստառածք ընկեցին. և որք յա-
ռաջագոյն յամբառնայինն 'ի քուն, նը-
մանեալք վերնոցն անդրուանք եղեն։
Զօծանն խաղով. Ճառամարեցին ան-
արորք ջնէր զգեղոյ իւրեանց. և որում
անձնաւոր է յաղթել կանանց՝ չա-
խօսութեան և առեալ ընդ քաղով այսր
անդր հայեցողութեան զայս ածե-
լոյ 'ի առեալ. և ցանծուցին զեղջու
իւրեանց յաւելորդ խօսից։
Յորոց խնդրութամբ և 'ի վառատեւ
'ի միանտին արանց և կանանց ամե-
նողորմն Աստուած հայեցեալ՝ ըն-
չեաց զնահատակութե որոյն Վար-
դանայ և զամենայն միաբանելոցն
ընդ նմա, և զքաջախօսութիւն վը-
կայելոց քաջանայեցն Աստուծոյ.
ընթրհեալ աղաղեւոց զանձաւ կա-
ռելոյն յաշխարհ Հայոց։ Որք եկեալ
'ի տուն իւրաքանչիւր յամի վե-
ցերորդի Թագաւորութեանն Պե-
րոզի. և կեցեալք իւրաքանչիւրոց
բառ առաջնեալցն 'ի Տեառնէ, վախ-

ձեռնարկ Թադէոսեան ՚ի գիրս հայոց
խնդրեաց թագաւորութեամբ ընդ Ա-
ստուծոյ հանճարեղն. որհնեալք ամե-
նիշեան ՚ի ընթերանաց աւուրք կրթու-
թեանն Գիւտոյ։

ԿԲ. Քանզի յետ կատարմանն որ
կաթողիկոսին Յովսեփայ՝ յաջոր-
դաց զկաթողիկոսութիւնն յա-
խորհին Հայոց տէր Մելիտէ, որ
էր յազգէն Մանազկերտացւոյն. և
զկնի նորա տէր Մովսէս, որ էր և
նա ՚ի նոյն ազգէ։ Եւ ապա ընդ Ա-
ստուծոյ առաջնորդութեանն յաջորդեաց
զկաթողիկոսութիւն աշխարհին Հա-
յոց՝ տէր Գիւտ, որ էր ՚ի գաւա-
ռէն Տայոց. ՚ի գեղջէն Արահեզայ.
այր մի զգօնութեամբ հայրենի և ա-
ռաւելեալ յանձին, յորդառատ
բանիւ և առատատուրութեան վարդապետե-
ութեամբ. զոր ոչ երբեք արգելուր
անդիմութեանն աղօթութեանն. այլ
զծածուկս աստուածեղէն Հոգւոյն՝ նորին
տարբ Հոգւոյն ընդ յորդ յայտ առա-
քեալ նորա բանաւորապէս ստու-
գանելի բազմապատիկ մտաւորական. որոց
բանք իւր նման յորդառատ անձրե-

ւի զամենայն լաւողի ծաղկեցուցեալ պտղաբերէր զոգիս։

Եւ զմնացեալ դեռեւս 'ի տղայու- թեան հասակի զորդիս նահատակե- լոցն ընդ որդւոյն Վարդանայ, որք 'ի նոյն տոհմէ Մամիկոնէիցն էին, և կամ որք 'ի տոհմէ Կամսարական- նացն և կամ յայլ ազգաց, կանայք նահատակելոցն արանց և կապելոց 'ի դրանն՝ թէպէտ և 'ի նեղութեան էին, սակայն ուսուցեալ և բազում հոգացութիւն ուսուցանել ուսեալ և խրատեալ, ոչ իբրև զանփոյթ և զանձնիշխան կանայս, այլ իբրև ըն- տանեայս՝ զաստուածսիրեայ զօգաւորս շքեղաւորաց հրահանգս մանկանցն հոգացեալ լնուին։ Եւ մանաւանդ կին նահատակին Հմայեկայ Մամի- կոնէի եղբօր որդւոյն Վարդանայ, որ եղև կին անուանի և առաւելեալ ա- մենայնիւ լաւ և մանաւանդ մասամբք յամենայն կանանց 'ի Հայաստան- աշխարհիս, որ սնոյց և խրատեաց զորդիսն իւր յաշխարհին Վրաց 'ի տանն Աշուշայի Վրաց բդեշխին, զոր- բդեշխին Վրաց Աշուշայ խնդրեաց

գորգեա ՚ի յառաջայէն ապաւրանից Յաղ-
թերթ. ըստ առաջագրելոյն կար-
գի. և ամենայն եա գմայլ իւրեանց.
գործ ամենայն էր Զաւիկ. մաւն զի-
գոյքն Զրահայ ունէր ՚ի կենաւթեան
բարձրագոյն Աստուծոյ, որում ամենայն
էր Աստուածամ։ Եւ անուանեալ անդ
ձայնիւնդքն և ուսեալ՝ յառաջա-
գէտք էին յամենայնի և հաւաստա-
սարդ. որք միայն գետ եա ՚ի ամեն մանա-
կաթեան էին՝ ամենայն ատեանց
մեանց երեքին աշխարհաց և զարմա-
նալիք. որում ամենայն էր աստղ-
նոյն Վահան, և երկրորդին Վասակ,
և երրորդին Արտաշէս։ Բայց էր
նոցա միա եա եղբայր կրտսեր, ա-
նուն Վարդ, որ էր մեծագնեալ ազգաց
՚ի դայեակս իւր ՚ի Տայս։

կզ. Զատաս աւետեալ՝ որք ՚ի
ժամանակին իւրաքանչիւր՝ ՚ի ատեան
որդիս զազատացն հայրենեաց իւրեա
գանձատանս զատանելին, ՚ի Պարսկաց
զատանատորութիւնն գնեալ սո-
ցութեանս ըստ անհատ[illegible]թեն,
և ոչ [illegible] [illegible]
ութեանս իւրեա [illegible]

որք անձինք և ժառանգորդք. ան-
պիտանիք և ոչ պիտանիք. վնասք և
ոչ քաջք, որոց անձանց 'ի լեռնա-
խոյզ աւազակաց 'ի մէջ անցեալ ու-
րացութեանց վերատեսին. և անձանց
կատարելութեանց աստուածածնէն.
և զաստուածս և զանձինս վաճա-
ռականան 'ի միասին Թշնամանէն.
անձամբքն 'ի տայց մարդկանէ և
անարժանիք և անծանօթք յաղցէ
տուհմից. Նա էր այնու հետև տեսա-
նել յաշխարհին Հայոց զլաւութիւն
հեռացեալ. զիմաստութիւն կորու-
սեալ. զքաջութիւն հեռացեալ և
մեռեալ. զերախտաւորութիւն Թա-
գուցեալ. և որ երկրին քաջանան
զօրքն Հայոց 'ի մէջ այլ զօրացն ա-
մենայնի երկրին. և զօրագլուխք ա-
նուանիք և յաղթողք. այսպ ծաղ-
կին ամենեցուն և կատականք. մն-
չև իբրն իսկ Թագաւորն Պերոզ
յայտնապէս նախատելով երկրին
տուաչի ամենայն աւանդին ասէր. Թէ
Այր անպիտան և գունդ յեղին.
որ զամ մի յիմ՝ իշխանութեանն է՛
Ասորոց է. բայց քան զԱսորիս՝ Հայք

լեռամբ և անապատաւ։ Նա էր էայր յետոյ ըստ այն արժանի լուսոյ և օգտակար։ Ընդ այնպիսի անապատան իշխանաց ժամանակին երկրին առաւելին որ ըստ գէթ ճանաչման յառաջադիմութեան յորդոր տայցի նահատակելոց Սա միջնեկին, զոր ոչ ՚ի ուրացութենէ ձորոց փառաւորեալ ունէին յանձինս, այլ օգնութեամբ վերին խնամակալութեան, ՚ի բարեխօսութենէ սուրբ արեան նախնեացն իւրեանց՝ զոր ՚ի վերայ սուրբ եկեղեցւոյ Հայոց հեղին յաղթութի, կայքն անդրէն երկիր դառնային ՚ի մէջ անուանաւոր իշխանացն Հայոց, որպէս ՚ի մէջ Թշնամեաց։ Թէպէտ և արհամարհեալք էին առ նախանձու, սակայն լաւագոյնք էին և երեւելի յամենայնի, և ականաւորք ՚ի խորհրդի, իմաստաւորք և խնամատադիւտք. ՚ի նուաճողութեան գեղեցկածինք և գիտելեացն գործք. յորս՛ Թեթևաշարժք և նախապատուք. մերկացուցանող ձեռաց աջողակք, և յամենայն կողմանս աղդակիցք և ընտրեալք. զորոց ձանձրացուցա-

նէին բազմածաւալին գանձատայցըն գրուցան, խնդրելով հնաւանդ գրքոց այլ և այլ ազգաց, և կամ ողջատաւմութեան և մեծագին գիւտոյ խնդրոյն ըստ իւրաքանչիւր ախարհաց : Նոքա չբերկանայինն ընթրեր ամենայն տանուտերանց Հայոց՝ Նոքա զարդարեցին յամենայն տանտարք և ընտանիք : Նմանեցուցեալ ճիշերանց ՚ի յառաջանալ փութայն և զորդիս երանելոյն կամարականին Արշակունեաց ասեան Արշակունեաց, որք և աշխարհաւն իւրեանց էին ծնունդք զանէր մարախլոսն Վարդանայ, խրատել և հրաշագել ըստ իւրեանց իմաստութեան և արուեստի ջանայինն :

Եւ զայսպիսի ինչ բարւոյ մասունս անուել տաւասն և հոգալ՝ առաւել եւս կամաւոր յօժարութեա յորդորութեան էր առ որդին որբոյն Համայեկեայ, որում անուն էր Վահան : Բանզի էր այր մաքրիաստուածախորհուրդ և բարեկեր. յազորդ և ձեռն արկանէր փորձել անէր յանձորքեր ՚ի ձեռնարս և գր

րանեցը․ Նա և գործակալք Պար-
սից որ գային ՚ի գրաւել․ Թէպէտ
և խոհեմ, այլ ընդ Աստուծոյ սա-
րելոյ անցեալ զնա և պատուէին։
Ինք և տանջն Թագաւորին Պարսից
զօրքն զչարութեան տան, և անձնա-
նոյ մեծէին․ մինչև ինքն իսկ Թա-
գաւորն Պերոզ զգեստուքն ծանուցա-
նէր, և առ չափ ունէր, և յանդգնե-
ման ամենեցուն գովէր, և արժանի
պատույ համարէր։ Նոյն արժանի
բանի նորա խնամոյն և քաջութեան
Թէպէտ և ամենայն զմտաւ պատուեալ
էր․ այլ մեծեալ զհարցն և զնախ-
նեացն նորա զերս և զգործս, և որ-
պէս համապատասխան ընդդիմութեամբ և
պատերազմաւ աշխատ կալեալ էր
զնոսա․ յարատեւալ կառէր․ և ըն-
ծայ՝ Թագաւորանէր զարժան պա-
տիւ առ նոյն․ մնասմանէ ինքն
հաղթական լինէր զնախանձորդացն
զդաւանակցութեան, որք առ ժամանդե
ժամանակի ամենայն նահանգս Հայոց ա-
նուանեալ էին, զորս կարէր առաւե-
լապէս երկնցուցանէր յաջողուքն
յառաջադիմութեան մանկանցն Վա-

հանդոյ․ կասկածէր երկիւղիւ առ
յառաջիկային զանարժան զօրա-
ցելոցն ընկանել¹ զմրրութ.
Իսկ լաւ որ այլ յանկարծ եւ կա-
արժանաւոր թէպէտ եւ էր 'ի ժա-
մանակին, որպէս լաւ այլ Բագր-
ատունի եւ կամ գարանջելին Անձա-
ամատունի եւ կամ այլ որ նման նո-
ցին, 'ի հոգեպատուութեան մաքրեալ
Թագաւորին եւ 'ի կատարութեան ա-
պաշտպանել ժամանակի իշխանացն
որպէս նախապատահէ 'ի սրտմտան
գիշատիչք արծուեաց 'ի ծերոց մ-
անց եւ կամ 'ի մնացորդաց աւելի
մայրեաց զոհեալք Թագաւորին. կամե-
լոյ համարելին համբերութեամբ՝ ի
քրիստոնէական կարգի մխիթարել
քան թէ փառաւորելոյ յաճախ-
պատուաճել ուրախութեան եւ կայն-
ձել: Լաւ համարելին բառ բանի զգոյ-
զնախախնամին վասն Գրիգորիսի. հա-
ուաժամանակ մի թաքնել ըն-
անուանի փառաւ աշխարհին, եւ յաղ-
անելով անանձնականն լինել արժան.

¹. Յոր. Բնիյանէ։

ւոյ․ որք երբեք զՏնօրինականն Հոգւոյն
ոյ ամենայնին բարձրացեալ զամ_
բարբառութեանն կեցուցին․ և ոչ որ
կը որ չիմացանէր։ Միաբանեալք նոքա
ւքն ևս ամողք քահանայապետին
Հայոց Գիւտեայ, որ ոչ երբէք լուեր
յարատասուելոյ զմխիթարութեանն զմտ_
ղութիւն, որ խնդրէր լսելեացն
պանձարանս հայթայթանաց հան_
գիտողք․ երբեմն փախչէլ յուսա_
ւութիւն, և երբեմն 'ի խնդիր լինել
օգնականութեան և ապաստանելի։
Առաքեն զաղտ և պատգամաւորս
փանդամ և երկիցս առ Թագաւորն
Յունաց Լևոն․ որոյ թէպէտև յանձն
առեալ կամէր օգնել․ յերկարէր
ժամն և խափանեցին խորհրդեալսն։

կգ. Մեռանէր այնուհետև Տր Կա_
թողիկոսն Հայոց Գիւտ առ 'ի չժա_
ժալ որոյն՝ յայտնապէս ունիթի
գրգռել ընդ անօրէն ուրացելոյն, և
սիրել և պատուել զնորին սուտա_
պետով հաւատացելոյն։ Եւ մանա_
ւանդ առ փառաթորս ունէր և որ_
համարէր զմխիթարն Գագիկայ, որ
դրացելոյն և քաջալերիչն էր ա_

մենայն ամբարշտելոյն դատաւ. ո-
րոյ չհաւատացեալ ամենեւ արհամար-
հանաց սորա կաթուղիկոսին Հա-
յոց Գիւտայ. զօդեալ ըստ բան-
թշնամութեան՝ ամբաստան լինել
զնմանէ առ թագաւորն Պարսից Պե-
րոզ. ասելով. եթէ Զմարզիկ՝ որ
զհամաց քոց զհրաման կամին կա-
տարել և զքո օրէնս խորհել յանձն
առնուլ և սիրել. կոչէ առ ինքն, և
է՝ որ ինչ ասելով, և է զօրս քաջս
բանիւք պատրէ, և յիւրացն ՚ի բաց
դարձուցանէ: Վասն զի բազումք
եկեալ են առ իս և յանձն առնել
ունել զօրէնս քո, և նորա կոչեալ
առ ինքն պատրանօք՝ ՚ի բաց ա-
ռեալ է թողուլ զնոսա և արհամար-
հել. այլ և զմեզ՝ որ զքեզ սիրեմք և
արեգական և կրակի երկիր պագա-
նեմք և կամաց քոց ծառայեմք, ա-
տեաց և թշնամանէ: Եւ ինքն ըն-
կայսեր խօսի և պատուական ըն-
ծայիւք հպատակէ նմա և մեծամե-
ծաց՝ որ ՚ի դրան նորա են: Եւ ա-
րարուած բանիւք ըստ օրինի թշնա-
մւոյ խաւսէր ըստ կամի:

Եւ հաւանեալ զաղաչանսն բանս ամ-
բաստանութեան Թագաւորին Պար-
սից Պերոզի 'ի մախանացն Փաղիշչէ,
հրապուրեցաւ սրտմտութեամբ Հրա-
մայեաց՝ որպէս կաթողիկոսին Հա-
յոց 'ի զնդան ճատանել. և անդ սպա-
նանեալ տանել բանից դատաս-
տանն։ Իսկ երանելին կաթողիկոսն
Հայոց Գիւտ կամաւ և յօժարու-
թեամբ 'ի զնդան երթայր. և յանդի-
ման լինէր սաստկագոյն դրանն։ Որոց
ամէն չերզացուցեալ զառաքելոյն
գրութեան Հոգւոյն սրբոյ [1], ան-
տանէր ամենայն մարդ զերեսանդրա
երեր զերեսս հրեշտակի. յորմէ և
հեթանոսք մեծաւ զգուշութեամբ
խորշեալ պատկառէին 'ի նմանէ։
Այլ զբնասանելեացն և եպիսկոպոսն
Տեղրանի և Խուժաստանի և Հրե-
մայ, և ամենայն կողմանցն այնոցիկ
երիցունք և սարկաւագունք՝ եր-
կուցեալ զաղանին 'ի գեղմակուն 'ի
մարզպանէ անուն Աստուծոյ։
Եւ հաւանեալ Թագաւորին Պերոզի

1. Օր. չեայր Հոգւոյն սրբոյ։

զերծեալ սորայն Քրիստոսի . յերկրա-
ծառ մի ըստ միոջէ զամենայն բա-
ամբաստանութեն Մախաղու . զհի-
զառակամանայն զորդի Աշատայ
Միհրանն տանել ։ Եւ որոյ հաւա-
տենեաւն Քրիստոսի պատասխանի ա-
ռաջնեալ բանին թագաւորին՝ ասէ.
Ոչ են ամենայն ատացեալք Մա-
խաղու զինեն առ ձեզ՝ տուաւ . այլ են
որ արդար են , և են որ ոչ են արդ-
արդար ։ Քանզի սիրել զերկրա-
ւորութիւն և որ ոչ զերկրաւորեալ է,
զայդ ոչ այսար ընդարձեալ պաշտ-
յամենայնին խմոած , այլ 'ի մանկութեն
խմմէ . և զամենայն մարդ՝ որ վեր-
աբեալ է 'ի շնորհապատութենէն՝ առնե-
և կամիմ՝ թէ ամենայնի որ 'ի շնոր-
հութենէն մերժեալ կամիք և զնա
զմնաստական որ ոչ է ուղիղ . և զոր
հնար բանութեամբ և կամ տպա-
գել . այլ թէ և կարասցէ կարծ-
հասանեցուցանել , քանզի յամենայն եր-
մնաց և ոչ ասայի կորուսել ամենայն-
զամենայն կարասցեն ։ Ա՛ն որ անձն-
թէ երթեսցէք նորա 'ի Հայաս , ո-
րպա զորս կարծեաց և խաւսքն որ-

դէմ ին իւրն. քանզի սուտ է. այլ
հասն զի զպարտութիւն պիտոյութեան
մերոյ և զխնամս բանաւոր ստամանց՝
յանձնարարին Հատտմաց տանելեան, և
Նինանդ ծանօթք բաղում և ու-
սանիկքս. այլ և զհերապատան
հանգերձիցս զոր ունինչս մեզ՝ անդաս
զննեց. վասն զի և ոչ յայլ աշխարհի
գտանի աս ուրեք՝ բայց անդ. հար-
կաւորեմք անդաս զննել զայս բառ ժա-
մանակին աշխարհէց. Այլ զհնագան-
դութիւն ծառայութեան՝ որ էնք իսկ
մեք պատուիրեն հաստատանել ան-
բանց՝ զհերապատն և զարժանաւորս։
Եւ տարեալ զայս ամենայն բանս
պատգամաւորին առ Թագաւորն.
խնդայն ծանեաւ Թագաւորն՝ Թէ
տայց և մատուցեալ են խորք որբ-
րայն, և սուտ և առ քինաւորութեան
խօսի Մակեդոնաց զինմանէն. զոր կեղ
և տանէ. Վասն զի և Արտասանն բառ
հաճոյից որդոյ առնն տայր՝ իսկ
Թագաւորին զխոստ նորա. բայց զի
մի Թէ Թեանցուցանել զնորին երկնայն

1. Եզր. Բայէ.

խորոց երեւեցուցէ քրիստոնէից, լռեալ Թողո՛յր զխօսս Մաղխազին. եւ չհաւրցանէր ինչ ծանուցանս. Բայց գրէր առ երանելին կաթողիկոսն Գիւտ. Թէ Մինչեւ ցայժմ քո իշխանութիւնդ առանց իմ հրամանի կալեալ է. եւ ծառայ մարդիկ էին՝ որոց ձեզ զայդպիսի մեծ գործ տուեալ է. եւ ոչ ինչ յինէն ունէիք վստահութիւն։ Բայց այժմ եթէ զիմ կամս առնես. եւ զիմ օրէնս ունիս, եւ արեգական երկրպագանես, զզօրդ զայդ քեզ եւ քում ազգի եւ որում դու կամիս՝ պատարգեւ[1] տամ մինչ յաւիտեանս. եւ զքեզ պատուով այնպէս արձակեմ ՚ի Հայս, զի հօրոյ ուրուք ՚ի մեր դրանս պատիւ եւ շքեղութիւն այնպիսի չեղէ զահա, որպէս դու գտանես։ Ապա թէ յամառեալ չհաւանիս կատարել զհրամանս իմ, զեղխակապատութիւնդ ՚ի բաց առնեմ ՚ի քէն, եւ ՚ի գործոյ ՚ի բաց հանեմ. եւ դու անարգանօք եւ թեթեւութեամբ երթաս ՚ի տանդ եւ յաշխարհն։

1. Թուի երդումն կամ կնիք նշանակել

Եւ երանելին այրն Աստուծոյ կաթողիկոսն Հայոց Գիւտ լսեալ զառաքինեալն առն Հոգւոյն, ասաց ցպատգամաւորսն արքունի. Կամէի՝ թէ այդպիսի բանից պատասխանիս եւ քննել անձին առաջի Թագաւորին. քանզի ոչ է հնար ինձ եւ ոչ իշխեմ համարձակապէս պատասխանել Թագաւորին իմով զամենայն լուսաւորն ՚ի ընտանեաց խնդրէ. Եւ պատգամաւորքն պատասխանի տուեալ ասէ ցնա. որքն համարձակութիւն տուեալ է, ասէ, Թագաւորաց՝ ասել զարդար լուսոյն ՚ի մէջ երկուց կողմանց, եւ լսեն պատգամաւորքն. եւ չիշխեն եթէ լսեն. Եւ ասաց այրն Աստուծոյ եւ պատասխանի եւ ասէ. Ասա՛ ցԹագաւորն. Թէ յաղագս գործոյս զոր ասես՝ Թէ ցայժմ քո ՚ի ծառայից եւ ոչ յինէն կալեալ գործակալութիւն, Թէ դու կամ Թէ որ ՚ի ծառայիցն քոց որ եկեսն, եւ առնուք յինէն, ապրանս եմ եւ կամիմ. վասն զի յաշխարհականաց հոգոյ եւ կարեաց ապրելոյ, անձին պարապեալ եւ աղօթից. Իսկ յաղագս եպիսկոպոսու-

կան ձեռնադրութեան՝ որ առես ի
՚ի բաց առնում ՚ի քէն, զայս երկ-
ւոր ձեռնադրութեան պատիւ՝ ա-
նուղ յինէն ոչ թագաւորք և ոչ իշ-
խանաց որք — այլ մահ, — ոչ իշխ-
քանզի և կարէ իսկ ոչ. և ոչ ընա-
երկնչիմ ՚ի մահկանացու մարդոյ
առաջնորդութեան զայս իմ և կամ ա-
նուղ յինէն։ Բայց վասն օրինաց
քոց որ իմն ունել հրամայես, յա-
ղագս որոյ և պատիւս և պարգևս
խոստանաս առ իմ, ոչ ունիմ և
յերկրաւորացս պատիւ մեծ և իշ-
խանութիւն հզօր առաւել քան
զքոյդ՝ որ ունիս. բայց վասն անպի-
տան և գարշելի օրինացդ քոց՝ զոր
ունիցիս, զոր խնդրեսն զլխովին որ թա-
գաւորդ ես, և ամենեքեան որ զայդ
օրէնս ունիք, մեռեալս համարեմ
էք յաչս իմ, և ոչ կենդանիք. և զպա-
տիւսդ և զփառս՝ անարգանս հա-
մարիմ և մահկանացու ծաղկ և կա-
տակաման։

Եւ լուեալ զայսպիսի բանս պա-
տասխանւոյն ՚ի սրբոյ կաթուղիկոսէն
Հայոց Գիւտայ, ամէն ցերմանեքն.

Թէ արդարեւ ՚ի վերայ գոլոյն բանից պնդեալ կայր, այսր անդր ածել՝ թէ չէինա ասանել զաստուածացեալ իմ ա Թագաւորն, և խրատ ածէին. զի ու ուրուք երբէք այդպիսի բանս աստուածպաշտութեանն յղեալ է ա- յր Թագաւոր. բայց տես, թէ հը- նար է փոխել զխօսսդ. ուշիմ լեր. Եւ որդոյն պատասխանի արարեալ ասէր. Տեառնս, զի դու ընդդիմա- նաս պատուիրանին Աստուծոյ, և չկրեմչես. վասն զի դուք ասէք, թէ որ ոչ զհրամանն Թագաւորին լուծա- նէ՝ զԱստուած անարգէ. և դու ա- սացեր՝ թէ Թագաւորաց օրէնք են չխափել պատգամաւորին նուաղեցու- ցանել բան մի ՚ի բանից առաքողին և կամ յաւելուլ: Արդ երթ աս զոր լուար յինէն. քանզի ինձ ոչ է ճարակ խորհելու այլ ինչ և կամ ասել:

Եւ երթեալ պատգամաւորին ա- ռաջի Թագաւորին, ասէ ցԹագա- ւորն. Ոչ իշխեմ ես զխօսեցեալս ան յանդգնաբար երկրորդել առա- ջի ձեր. բայց եթէ ՚ի ձեռն հրամանին առնում. Եւ հրամայեալ Թագաւո-

րեն՝ տալ համարձակապէս զամե-
նայն լուեալսն առանց երկիւղի . ի
պատմել այնուհետեւ մի ըստ միոջէ
զամենայն բանս առն Աստուծոյ Գիւ-
տայ : Նա լուեալ թագաւորն զամե-
նայն աներկիւղապէս խօսեցեալն
Գիւտայ . ՚ի զայրացումն սրտմտու-
թեան գրգռեալ . կամեցաւ տալ
հրաման խստութեանց . եւ յանկար-
ծակի դադարեցուցեալ զինքն՝ առ
վայր մի լռեաց , եւ ապա սկսաւ խօ-
սել եւ ասէ . Չէ հնար եթէ ոչ կառա-
րեն կամք խնդրոյ նորա , զոր նայ
կամի , եւ ոչ տամ համբերել քրիս-
տոնէից զկապանս նորա , եւ ոչ ե-
կեղ պապանձել սակերաց նորա , ո-
պէս առաքինութիւնն . Լուեալ է իմ
զպաշտամանց նոցա , թէ չառնեն
զայն պատիւ կենդանեաց , զոր այդ-
պիսի մեռելոց առնեն : Բայց սա-
նա՝ թէ այդմ՝ պատուոյ չառնեմ քեզ
պատուահել , զոր դու ցուցանէիր
զիս՝ դատանել կամիս յինէն . կայ ար-
եւ կամիս , բայց ՚ի գործոյ կաթուղի-
կոսութեան հեռի ես , եւ չէ քո :
Նա լուեալ զայս սրբոյ կաթու-

վիճակն Հայոց Պետրոսայ, մնացածք ճոխ ուրախութեան, և միաւոր եւս մնացածք արտաքսեցան մինչև 'ի մահ. յանձին լսելով՝ եթէ 'ի գործոյն 'ի բաց եղև, ուրախութեան համբուրելով 'ի շրթանց ուղխառատիս. և ըն-կալ՝ թէ ոչ կարգադրաց եւ հրաման 'ի թագաւորէն վասն նորա և ոչ մա-հու՝ որում ցանկանայր 'ի բազում ժամանակաց. անձնայր ընդել ար-ժանի. խառնելով արտասուս անմխի-թար վասն չարաչարչարելոյ ցանկալւոյն և ամ խնդրոյն՝ որում փափագէր հա-սանել։

Կոչեալ այնուհետև 'ի գրան ըստ իբրում կամեցեալ սուրբ կաթողի-կոսն Հայոց Պետրոս, բազում հա-մարձակութեամբ պատուեալ, ոչ միայն 'ի բարեհամբաւելեաց և 'ի քրիստո-նէիցն, այլ և աստուածել 'ի հեթանո-սացն՝ որ խնդրաքննէին ամենայն գր-ասմէն ընդչխութեան յաղթելոյ որոյն. և այժմ 'ի քրիստոնէիցն կողմանցն այնոցիկ ցանկանայցն 'ի սուրբ աթոռ առն Աստուծոյ գտանել մեծանձնութեան. Յորոց զմանա

ձեռնադրեսցէ յեպիսկոպոսութիւն, և զայլս բազումս յաստիճան երիցութեան կարգէր։ Եւ այսպէս պատուեալ յամենեցունց՝ ուրախալից շնորհութեամբ հրաժարէր գնալ յաշխարհն Հայոց. օրհնեալ զամենեսեան յանձն առնէր Աստուծոյ, յուղի անկեալ գնայր յաշխարհն Հայոց։ Եւ կեցեալ տասնեակս պատուովք քան զառաջինն ՚ի Հայս, հանգչէր երկրային ծերութեամբ, և եդեալ ՚ի գիրս հարց իւրոց խաղաղութեամբ՝ ՚ի գեօղն որ կոչի Սըմուգեօղ, ՚ի գաւառին Վանանդայ[1]։ Եթող օրհնութեամբ զամենայն ժողովուրդն իւր եկեղեցեացս Հայոց։

ԿԵ. Եկեալ ՚ի դրանն և մայրաքաղաքն Պարսից, և ժողովեալ տանուտեարք ուրացողացն, որ թէպէտ և ուրխանայքն զառամանակեալ թող ծանրից ուրախութիւն կենդանեացս՝ տակայն իւրեւ առեստենքն զմեծամեծ

1. Վերադարձ՝ յէջ 333 Միրաջեաց Հայոց տեսց գրիքսա. գուցէ անդ ծնեալ էր. բայց ծանօթներ իւր տեսանէ ՚ի Վանանդ գեղ եղեն։

նմին Վահան այնպիսի երեւելի յառաջ
մանկութեանց հաւանեցեալ. ներկեալ այս
խոհեմն և ծնեալ թագաւորականին.
խնդրեն ՚ի վերայ նորա հնարս
գաղտնագործս. որով զնա և զեղ-
բայրս նորա կորուսանել կարասցեն.
այլ զիարդ մեծամեծաց զրկանն.
ալ կերպիւ և որ թագաւորին. թէ ոչ
լինէր անձն առանց աղաչաւանքու-
թեան կեալ ՚ի Հայս. Ցրուեցու-
ցեն Արշակ և զհամախմբեալն նորա
ընկերս. թէ ով ՚ի նոցանէ ոչ խառ-
նեցաւ ընդ Արշակայ աշխարհին. և ոչ ա-
րար մեծամեծ վնասս և մահուան-
ցն՝ երբ և է, ամեն, առ զնոյն խառ-
նակութիւն յարուցանելոց և ՚ի վերայ
նոր. Որոց լինել զայս ամենայն
բանսարկութեան ՚ի սակս այն բանսար-
կուաց. կասկածելին ՚ի համբաւոյն.
և հայեցեալ յառն յանձնապահութիւն
և յիմաստն, արքայութիւն առ ակն.
Տեսեալ այսուհետև Վահանայ
զայն համ յարուցմանն նախանձա-
ւորացն ՚ի վերայ նորա, թէ ոչ եր-
բեք կասեալ լինէ ՚ի չար նախանձա-
ւոր խոկոյ. չկարացեալ ամենել հա-

մատաղջահեայ բանաւորհուԹեանն,
երԹեալ 'ի գուսն՝ ակեպրանայր 'ի
հասատան. և եկեալ 'ի Հայս, ա-
կայն և այնպէս խնամով գրերանս չա-
րախօսացն ոչ կարէր: Զի որ ոք բան
ուղիղ 'ի հրապարակի առաջի իշխա-
նի չգիտէր խօսել՝ զնա ատեայր. և
որ ոք յորս կամ 'ի Թիւրախնա
չգիտէր ձգել՝ զնա պարսաւորէր.
Նաև. ատէին, և ամենեցուն անձն
աանէ: Եւ որ ոք անմտուԹեամբ ըղ-
գործս արդարունի չմարԹէր գործել,
'ի նա բերէր զպատմառան. Նա, ա-
ռէին, յառաջէ յամենայն 'ի գործս.
և չարայ ինչ ումեք գործել կամ ող-
ջալ: Վասն զի էր նորա [1] գործա-
կից՝ որում անուն էր Վրիւ, անա-
նուն բառ ազգի և անփորձ իրի. որ-
դի առն Ասորւոյ. բայց չարախօսու-
Թեամբ և ընդդիմայրաբանուԹե ատա-
ւելեալ, նմանէր ազգի Ասորւոց. որոյ
չմարԹացեալ գործել զգործ ար-
դարունի՝ երԹեալ լինէր ամբաստան
զՎահանայ առաջի Թագաւորին Պե-

1. Յոբ. Նա.

րբի. առնելոյ. Թէ ինձ 'ի գործ սու-
հնարս չևս ինչ¹ նմա երթալ. և
իբր ժողովեալ զամենայն ասէր սու-
րբքն՝ խորհի երթալ առ կայսր և
խօսել յաղագս Հոնաց. և առնել
րքին՝ կամս խնդրել զօրս և աղա-
չել։

Եւ լուեալ զայս ամենայն բանն
ապստամբութեան զինքնեան խռովու-
թիւնս Վաչագանայ. առնեալ փու-
թանակի զթագաւորութիւն աշխարհին
և հասանէր 'ի գաւառն։ Եւ լուեալ
թագաւորին Պերոզի զմտադիւր եր-
թալն Վաչագանայ. զարմացեալ ասէր.
Թէ Ե՞րբ Վաչագան այսպիսի եղաւ՝
ընդդէմ և բանիւն Կիւրոսայ.
մանաւանդ՝ թէ բերեալ եմ ինչ է։
Եւ եղեալ յանդիմանութիւն թագաւորին.
աղերսանայր 'ի նմանէ թագաւորն
Պերոզ՝ թէ արդարև բերեալ ինչ է.
և լուեալ զՎաչագանայ զհրամանատու-
թիւն թագաւորութեան աշխարհին զօր
բերեալ էր. և ուրախանայր յոյժ.
Արդ և յանդիմանն Վաչագանայ ասէր

1. Ձեռ. ինչ.

առնել Վրթանայ զգանձն՝ զոր առեր
զնմանէ յառաջագոյն. Եւ լուեալ
Վաչագանայ զամենայն աղաչելոյն
Վրթանայ. ետ պատասխանի առաջի
Թագաւորին և ասէ. Գիտեմ և ես
զանխարդախութիւն անձին իմոյ, զոր
ցուցանելոյ ընդ ձեզ Վրթանայ. բայց
առաջոյն այնպիսեան կայր չեմ՝ թէ զմի
րեւաց այժմ և անեանելի անգամ չեն.
սեմ. որոյ ուժոյ զբաղեալ այլո
ապաստանեմբաց հարեալ է առատիկէր
էլիուցիս, և հնազանդեցուցեալ ընդ
ձեռամբ իւրեանց ունին։ Իսկ եւ ա
ապաստանիմեալ կամիմ ընդ զօրս ա
ւելորդ. զայն իսկ խնդրեմ՝ զի թ
շտաայ չզատանի իմ որ խնձ խոստե
բութիւն առնէ, և ոչ երկայց կամ
երից պատանեայց խշխեմանելոտոյ.
որ խնձ երկեւցիս ապաստանին. զնչ
իմ այժմ այդ է. Բայց եթէ ձեզ հե
էր խնձ 'ի ձեռս, և ապրէր յառաջ
երկիրս զնեալ և կործանել կամիք. զայս
յասի առեկս այսօր զի բերեն. որ զնչն
զմնան իմ. Թէեւ կարօղ չառ եմն. ի
մեամ անձինն այլ և առաջարկ երջ
իս թայսակ չառ էր և բառապամն. և

զՄիլ որ սատանեկան ձեռ յիմ վերայ եկն հեղուցեալ. որ թէ ինչ 'ի հարկէ այսր ընթեռլայոյ ղայգշեալ բազմութեան ասկայ։ Բայց թէ վասառակել զհանեմ ձեզ. դուք կարող էք որ զիս թէ կամիք կեցուցանել. վաղվաղակի և առաժամայն մեծացուցանել. որպէս և կամիք։

Եւ լուեալ զայս Թագաւորին Պերոզի և այլ աւագանւոյն զայնպիսին խնամատարութեամբ խօսս 'ի Վաչագանայ. ամենեքեան իրաւացուցին զխօսս Վաչագանայ քան զխօսս Վրացւոյ։ Եւ եղանէր Վաչագան արդարացեալ յատենէն. և որդին Աշտարւոյն Վրին եղանէր ամաչեցեալ և արհամարհեալ։ Եւ հրաժարեալ Վաչագանայ 'ի դրանէ՝ մեծարանօք և բազում շքեղութեամբ, եկեալ հասանէր յաշխարհն Հայոց։

Եւ քանզի ոչ էր խաղաղութիւն ծառայ՚նորա զամենայն որ վասն վասն մեռանին առ թագաւորութեանն, զոր նման նահատակեալ հարցն իւրոց պատճառանօք և ոչ ճշմարտութեամբ իւրե յիշխեան, եւ առաւել 'ի

զօրն պայծառութեամբ ՚ի դրան՝ տաճարակուսակք յանձն իւր. Թէ և զօրսն պատարեալ ՚ի փառս աշխարհիս՝ յանձնեալ մոռացմունք զերկիր հանդերձեալ աշխարհին, և հնարեցի: Եւ այսպէս ցանկ մաշեալ ՚ի մեռս իւր, ծանուցանէր առ ինքն միջոցաց զերկրն հոգալ. և հնարս հայցէր. և անդադար խնդրէր ՚ի փրկչէն Քրիստոսէ շնորհել նմա ժամ բարի, ամենայն ընդ մեռ իւր. Թէ Մեծաշքեղ[1] ամեր Աստուած ամենայն իմն հնարաւոր է, և ակարանօրէն փրկեա և ողջոյն-դաւ Տէր, ապաւէն իմ լեր. շնորհեա ինձ ժամանակ դարձի խոստովանութեան. և տուր ինձ առնել զկամս քո. զի դու ես Աստուած իմ:

ԿԶ. Եւ մինչ դեռ Վահան յայսպիսի յուզմունս մտաց կայր տարակուսեալ, լինէր յանկարծակի խռովութիւն յուզմանց յաշխարհին Վրաց Վախթանգայ արքային հանէր զօրօքն դաւանութեամբ Վրացեն՝ յամմի բամանեալ

1. Յոբ. խբ. ժբ:

զի հիմնեցելոցն Պետրոսի առաքելոյ։ Զօր-
ութեամբ Հայոց աշխարհիս մարզ-
պան, յորոց բազումք այն ամ յԱ-
ղուանս էին՝ յապաստանսն ամրակա-
ցայն կամաւք, որոց բովանդակ բանակին զօ-
րագլուխ էր Զարմիհր Հազարա-
ւուխտ, եւ Հայոց աշխարհիս Ատրվշ-
նասպ Յոզմանդեան էր մարզպան.
իսկ քրիստոնեայ մարդիկն Հայոց,
որ այն ամ անդ 'ի կասուին էին, հա-
րեալք մաշէին տառապեալ եւ յարհա-
մարհանաց եւ 'ի նախանձուէ 'ի յե-
տին իշխանացն Հայոց, որք ուրա-
ցութեամբն գոռոզացեալ ամբար-
հաւանէին 'ի ժամանակին, քան թէ
'ի քննութենէ պարսիկ զօրագլխացն
գործոց։ Որք 'ի ժամանակին երրե-
լեան զապստամբութիւն Վրաց
աշխարհին, ցնծային ուրախալից սր-
տիւ։ Վասն զի գայր առ նոսա համ-
բաւ թէ Վրաց արքայ ասէ. թէ Ես
միաբան առնեմ զկնի չասամ անեամբե-
ալ աշխարհաց հանեմ Հոնս, որում
ոյ կայսերն հարկանել 'ի գլուխ զօրացն
Պարսից։ Զօրացեալ յոյժ անհնարին
համբաւոյ քրիստոնէասիրացն, եւ ան-

ընծայէ է. ո՛ գիտէ և բաղդաւորագոյն Աստուած հայկեանց ՚ի վտանգս մեր և օգնեսցէ մեզ. և հանդերձեալ Վերջ Թերևս կարող ընծայեսցի առ ասելս մի ջնջատանել զՊարսիկս: Նա խոր- հեռ այսպէս ասելս ամենայն ՚ի Հայ նախարարացն. ընկէր ընկէր խոր- հուրդն և յոյժ ամենայն. և որպէս յԱստուծոյ առաջնորդութիւն միա- բանեալ կամաւ և յաջողութեամբ ամենեքեան որք ընկէր զխորհրդեանն:

Ցայանեցին այնուհետև համար- ձակեալք ՚ի գեղեցիկ միում զբանս համաձայնութեանն խորհրդոց մանկկո- նին Վահանայ. որոյ խորհ լուեալ ամբ զամենեսեան. Գիտէին ամենք Թէպէտ և ոչ անմոռայինքն՝ որք էր ՚ի խորհրդին յոյժ. Թէ որպէս վատան- գեալ առաջնորդին յամենայն մարմա- ջանգս առաւ անհունական՝ զօր առն- լութեամբ կրկին յանդիման խնամ. զի մերձեալ յերեկոյն՝ կատարեսցեն զգա- ռավարն. և հասանել յառաւօտն՝ երկնքին ցերեկոյն, հայելով ՚ի վիշա- Թանակին և անդյայս կենդանաղոյս ժամա- նան՝ որ երարագանք է և յանկար-

ծանէք. Թէ գուցէ այսպիսի անուամբ գծեալ յաղթութիւնս. ապա կամիք է ընթերցողացդ եր ինձ՝ Թէ ինչ է ծննդեան իւր չէր զիս նոր իմն յաղթութեան. և զաւակին Տիգրանայ չէր ծանեալ ինձ 'ի խորհրդոց որ նեղեն զիս. արդարեւ զՄովսէսեան անգամ արար. Բայց միաբանեալ խորհրդոյդ՝ զոր գուցէ խորհիս. և առեալ ձեզ՝ Թէ լաւ է խնամոց և արարիչ. ոչ կարեմ առեալ և չիշխեմ. վասն զի զԱ րեաց ումն և աստուածպաշտութեան բազ գիտեմ, և զՀռոմայեցւոց զթագաւորութիւնն և զհարկաւորութիւնն. և զՇնչն ծանօցեալ է վարձիս իմ, Թէ մարդիս հարանց մերոց ուսուցանել երգեմք և առնեցին. և վասն Վիրաց արքայի և Հնդկաց՝ զորս առնէ. Վիրք ասեն. ձեն Թեթև ինձ աշխարհն են և այլ ուժնով առաքաւորաց. Բայց վասն Հնդկաց՝ և գիտաց. Համառօտին զայլ Թէ ոչ. որք չեննն 'ի միջի և չերեխին. Բայց զասն զամենայն եւ առաւել՝ յանձանց երկերում. վասն զի մարգէ առաջ էր և անխոտակէր. Բայց եթէ զիս Հարցես և զբանն իմ առնես և

հաւանիք. Թողէք 'ի բաց զբանսերդ. և չեղեալ ապաշխարեցէք միայն՝ զը-ամենայն հնարս իրացդ. որում գիտէին է ամենայն զոր ինչ և կամի. այլ ընդ-ունայն և յանդգնաբար խորհրդա-ձեր՝ զեղ մի այխատ ամենեքեան։

Եւ լուեալ զայս ամենայն բանս նախարարացն Հայոց 'ի մանկանե-նէն Վահանայ, եասուն պատասխանի փարանաւորեամբ և ասեն. Թէ Զա-մենայն զոր ասացերդ՝ մի ասացեր որպէս վայելէ քում իմաստութեան, Տխմարիս ասացեր և արդար. բայց զայս մի ոչ 'ի Հաւատս եղեալ է և ոչ 'ի Հանս. բայց նախ յաղօ-թութեանն Աստուծոյ. բարեխօսու-թեամբ սրբոյն Գրիգորի. և 'ի մահ նախնեացն՝ որ նահատակութեամբ իրեանց համարձակ եղեն փրկչին Քրիս-տոսի. և առաջ 'ի մահ անձանց մերոց. քանզի լաւ համարիմք մի ժամ մեռանել՝ քան թէ զամենայն որ զեկեղեցւոյ և զպարտականեաց ուրհաւատարանաց անհանել և զբան-սամն.

Եւ լուեալ զանուն մահուան մա-

միաբանեալքն Վահանայ և քաջքն եղբօր նորա Վասակայ, քաջալերեալք զօրացան. և ընթացեալ առաջի Հայոցն ճակատին յորդորեցին. Սկսաւ կոչել մանկանցն Վահան և ասէ. Դուք գիտէք՝ զի Վարդ իմ եղբայր 'ի գրաւն է. և գիտեմ, թէ լուեալ է զխորհուրդս մեր Պերոզայ՝ կալեալ զնա և մատուցանեն. բայց 'ի մահ յանձն առեալ եմ քան թէ այլպէս կեալ ուրացութեամբ. և յայդ բան հաւանեցի ձեզ. որ որ կամիք առնել. Եւ ամենայնիւ հայեցեալ 'ի զօրն իմ. և ծանուցեալ թէ որդւոյն յամենայն ազատ է իմ գործն կամք. առաքեաց մեծ նշան բարի և զօրացուցանէ առ իս զմանկունս եղբարցն իմ զՎարդայ այլ. և տացէ անտանել զնոսա աչաց իմոց և ուրախանալ. և տացէ կատարեալ 'ի վերայ իմ զհամբոյրն իւր. որ ինչ թուէր յաչս նորա.

Եւ զայս ասացեալ՝ յամենեցուն ամենեքեան միաբանութեամբ երիտասարդքն և ալեւորացեալքն. և յարձակեցեալ խնդրէին զաւետարանն եր-

Եւ հասուցեալ յառաջ սորոյ զօ-
հանդերձ՝ զօրամ ամուն Աթէնք. որ
կը ըեր նոսա 'ի բանակին, այլ բա-
նջման բանին և խորհրդակալուն սոր-
ափս. յերեկի գեղջէն որ կոչի
Բէոյի. և ընկերակալ աւուրբ աւետարանն
ազգաձնին ամենեցունց. և երեկոյ ի-
րագանցեալ աւուրց զձևս 'ի վերայ՝
ասելն. Թէ Որ ոչ խոստովանեսցի
ըստ ամենայն զոյգ՝ զոր փրկիչն ամե-
նեցուն և ոչ Աստուած Քրիստոսի փառ-
գալուստ գրեալ 'ի ամսն, և Որ-
դի մարդոյ խոստովանեալ աստցի
զնա առաջի Հօր իւրոյ, մատուցե-
ցուցանել նմա զերկնից թագաւ-
թեանն. Եւ որ ոչ խոստովանեալ ու-
րասցի 'ի հաւատալոյ յայտնութեն, և
ննջեցելոց աւետարանին երգ-
ման. և Որդի մարդոյ ուրացեալ հա-
նէ զնա 'ի խաւարին արտաքին, ուր
լալ աչացն է և կրճել ատամանցն։
Եւ այսպէս երդուեալք 'ի գիրքն
և հաստատեալք 'ի հաւատն Քրիս-
տոսի և հրամայեալք 'ի միմեանց,
փոխադարձեալ վասն զնոյին հանդ-
ջէս։

ՆԷ. Մի ումն անգղէն և անդ 'ի նախ-արարացն Հայոց. որում անուն էր Վարազ-շապուհ. 'ի տոհմէն Ամա-տունեաց, եղեալ 'ի խորհրդենէ մա-րանութեանն. որպէս մերձեցա Յունաց 'ի գնդէն տուարտաարելոյն, գնաց 'ի նմին գիշերի և պատմեաց մարզպանին և այլոցն ամենեցուն՝ զխորհուրդ միաբանութեանն և զեր-դումն ուխտաւորացն, և զնոսա ա-մենայն նախարարացն Հայոց։ Զոր իբրև լուեր մարզպանն Ատրպատականն և այլ պարսիկ մարգիկն և չոկք ու-րացուցայն Հայոց. պատրաստեցեալ զօրհուրդն և անդրանիկ ընծայն զմե-նացորդ մասն գիշերոյն յերկիւղէ։ Հասանելք 'ի ժամ առաւօտուն, զաւէքն 'ի անկողոյն և երթեալ բա-նակեքն մօտ 'ի պարիսպ քաղաքն՝ որ անուանեալ կոչի Անի. և առ այնմ՝ խորտակատեար խաղաղութեն և մարզ-պանն կատակածանք կոյսն զանի զայն անգղեն. ծանուցանելով այլոցն տառագիր թէ և վաղիւն անգղեն լի-նին. Նա 'ի նմին գիշերի հեծեալ միաբանեցին երկիւղաւ մարզպանն

և հաղորդակցեալն և որք ընդ նոսա միաբանք էին՝ փախստականք լինէին։ Զայս լուեալ նախարարացն Հայոց՝ չհաւանեցան լինել ընկերք փախստէիցն. և վասն զի ամրացեալ աստանօրդք փախչէին մարզպանն և հազարապետն. ոչ ընդ ուղղորդ անկեալ ճանապարհացն, այլ ընդ այլ և այլ անցս զերծեալք անկանէին ՚ի բերդն Արտաշատու, որոց ոչ կարէին հասանել նախարարքն Հայոց. բայց զօրավար ամենայն Պարսկացն հասեալ ըմբռնէին ՚ի ճանապարհին, և զնախարարն Գուգարաց Միհրանեանն տարին, ածէին ընդ իւրեանս. և հասեալք ՚ի Դուռն, երթեալ պաշարէին զբերդն Արտաշատու։ Իսկ մարզպանն և հազարապետն գաղտ ՚ի գիշերի ելեալ ՚ի բերդէն փախստեայ գնային ՚ի կողմանս Ատրպատականի։ Եւ անդուստ մի արծայի, որում անուն էր Վարազներսեհ, որդի Կողթեկայ իշխանին Սարծայ, որ էր յերդմանն ընդ նախարարսն Հայոց. նենգեալ ուխտանն որոց՝ երթեալ աւերէր զդաշնաւորսն Բանամիլի.

և առեալ զամենայն կարասի չաշխ- ատանին՝ գիշերով ամբառնայր ՚ի բերդն որ անուանեալ կոչի Սագրայ բերդ. որ էր բերդ ամուր իշխանութեան իւրեանց։

Իսկ տեսեալ ՚ի հայ նախարարացն ամբարշտացեալքն խորամանկեալ մարդ զանին Հայոց Արքեպիսկոպոսաց ա- ռնին. թէ Թագաւորն Վրաց ապըս- տամբեալ է. և Հոռն կամի հանել զ- քաղց համեալ չէ եւ է. և գործեալ՝ Հայոց առ կայսր զգնդէ յղեալ է. և գետ չէ եւ երկեր ՚ի միջի. և թէ- րեանքն չէ եւ քաղէ կարգեալ են, որ- պէս արժան է. և դու թէ այժմ փութով հասանես ՚ի մերոյ նոցա՝ դիւրով և թեթեւով վճարես զգործ մի կարի մեծ. և լաւ անուն յաւէտ առնելով՝ պատիւ և շատ պարգեւ զամենեքեան յարքայէ առցես և զա- և միք. ապա թէ ծուլասցես հեղ- գաս. երկնչեսցես. մի զուցէ զօրացեալ անձնաւէք և կամ ուսեալք պնդես- ցութիւն զանձնեցոյ. որպէս զի- տեսցես. թէ որպէս պատահեալ ի- րացն արքաւտարեսցես և զգուշասցես։

Եւ հանգոյն թուեցաւ բանն մարզ-պանին և ամենեցուն որ ընդ նմայն էին. և հաւանեցանէր յԱրտաշատակա-նն. և քանց առեալ և 'ի Կոպրեայ[1] մարզպանեն. և զզօրսն Կաւաշեայ[2] որ ընդ նմին աւագն էին. զայր հաստատեր յարքունիսն Հայոց 'ի գետնակերն Ե-րասխայ. կամեցեալ անցանել 'ի գետ-քն՝ որ կոչի Նախճաւան, 'ի սահ-մանակցութեանն Սիւնեաց:

ԿԸ. Այս եղև առ աւերն Բագրա-տունեաց Աշոտոյ. զոր Հայք և զօ-րավարն Հայոց Վասակ 'ի ժամա-նակին յայնմ մարզպանն կարգեին Հայոց. տալեան Աշոտոյ զմարզ-պանութիւնն. և Վասակ զտէրու-թիւն Մամիկոնէից և զսպարապե-տութիւն Հայոց, որք նախ հաստա-տեալք 'ի վերնոյն հրամանէն, և այսպ 'ի Հայոց ընկալեան զգործակա-լութիւնն. առ որս և եկք Պարսից գնդին ընդ մի եղեն. և առնաւորեա

1. 2. Երկոքին ևս նահանգք յարևելից Արտաշատականի առ եզերբ Կասպիա-կանին:

եւ անձնազանցայն զպատրաստու-
թիւն զօրուն իւրեանց. խորհէին ա-
վասն մի յանձնուր անկեալ գտանալի
Տարոյ չաւելի։ Եւ զայրացեալ զմտ-
ծայրագոյն ողորմութեան Աստուծոյ յի-
շեցուց զաւէտն. Թէ Ով է յաղթու-
թիւն ՚ի պատերազմի եւ ՚ի ուժեղս. այլ
՚ի մէջ բերն կրապաշտութեան ձեռին. եւ
մնացուածեաց մեր զօրն. որ ամենեքին
՚ի նորա յաղթութեան հայցէ. Այդ
պարտու է այլ այնինչ խորհել ընդու-
րայց առաջարկել ընդդէմ նորա զմեծ
եւ զգուշութեան յաղթութեան ՚ի
փրկելոյն բազմաբեղուն հայցել։ Խոր-
հէին եւ զայս եւ Աստուծոյ ձեռք-
կութեամբ. ձեռաւ մարդկայնին Ա-
հակայ եւ առաքելական Հայոց Վա-
հանայ մանկանաց եւ ունելեաց յայլ
նախարարացն՝ անդէն յաւուրսն. ՚ի
զօրհապետութեան եւ ՚ի բարի յոյժ եր-
թեւցն յառաջ. ՚ի զարգացման եւ
՚ի ընկերութեան արդեաց կարգման անդրի
նոցն։ Եւ որք պատասխանատու ա-
նուչեամբ ՚ի պատմականագիտ կարգ-
գամն, որոնք Հայոցն, զոր անուա-
նեցին ՚ի ժամանակ իբրեւ տեղեկութ

Սիւնեաց . և ամենայն քաջ ա-
զատ ծննդականքն Վասակ, եղբայր
սպարապետին Վահանայ, և Գար-
ջէջն Մամիկոնեայ, և երկրորդական որդին
երանեկայ կամսարականին Արշաւ-
րայ . Ներսեհ տէր Շիրակայ և Հրա-
ճատ նորին եղբայր , և երկու որդի
՚ի գնունեաց տոհմէն՝ Ատոմ իշխանն
Գնունեաց և եղբայր նորին Ատա-
տամ, և գունդ ընդ նոսա , որ էին
թուով ընդ բնաւ չորեքհարիւր
այր:

Եւ մանաւանդ նոցա յեկեղեցին . եր-
կեր պատգամէին առ սուրբ Աստուածոյ
և ապաւէնն ամենայնի և զօրաւորացն.
և խնդրէին ՚ի նմանէ. առաքել ողորմա-
կանս ընդ նոսա զշնորհութիւն սուրբ
նահատակին Գրիգորի և զամենայն
սրբոց . և զորդիս նահատակելոց
քրիստոսապաշտութեանն Հայոց և զզօրու-
թիւն սուրբ խաչին: Եւ փրկչին
Քրիստոսի զթագաւորն մարդասիրա-
գին , և հայցելով յաղթանակաւոր
խնդրուածս նոցա , առաքել ընդ
նոսա աղօթականս զոր խնդրեցին ՚ի
նմանէ , և յաջողելի խաղաղու-

թեամբ. Երկիր պաղանէին նախարարքն և ամենայն արք զօրուն որք ընդ նմայն էին՝ և հրեշտակակերպ սրբոյ կաթողիկոսին Յոհաննու. որոյ նպաստաւորեալ յուղարկեաց զնոսա իւր աղօթիւք և արդար օգնութեան օրհնութեամբ՝ 'ի գործ պատերազմին.

Եւ ապա հրամայէին յառաջեալն Սահակայ մարզպանէն և 'ի զօրավարէն Հայոց Վահանայ Մամիկոնենէ. և յայլ ընկերակցաց իւրեանց՝ որ անցէն յառաջանին առ նոսա մաղոց էին. և գնացին ամփոփեալ խնդալից յաղթութեամբ. Եղեւ 'ի մամանէին. թէ Ս'մ գիտէ կարեմք հասանել 'ի հանձն՝ առ զանգս Պարսից անցանել կամին. և դարձեալ յանկարծակի անկանել ուրեք սղառամբ. և յորժամ գիտեմք՝ եթէ կենդնդին անցեալ է ընդ գետն. անկանիմք 'ի վերայ անցելոցն. և թերևս մնացեալ լինի կարեմք. նոյնպէս և մնացելոցն 'ի նոյնանել՝ դարձեալ դիմաց կարեմք լինել զամենեցուն.

Եւ եկեալ 'ի գիւղն որ անուանի Պարագեղեայս. լուան եթէ զանգն

Պարսից անցին ընդ գետն ամենե-քեան, և էին թուով եօթն հազար: Նա քաջ սեպուհն Մամիկոնէից Վա-հան. քանզի առաջապահ էր այն օր, գնայր յառաջ 'ի գետոյն որ անուա-նի Կոտուակէր. Թերևս լինիցի ինձ հնար, ասէ, ջանամ առնուլ զգըն-դն Պարսից զհանդարտածն՝ թէ են քաջ եթէ ոչ: Նա երթեալ 'ի Կո-տուակի յոթ, յանկարծակի յառա-ջատուն ժողովել՝ հասեալ 'ի նոյն գետ և մարզպանն Պարսիկ Ատրվշնասպ, ընկեր զՄամիկոնէիցն Վասակայ՝ թէ անդ է: Նա քաջ սեպուհն Մամիկո-նէից Վասակայ զհասուցեալ զԱտր-վշնասպայ և զնոցանէն՝ որ անդ էին, հնար փրկութեան քաջութ խորհեցաւ, որով զգունդն իւր ապ-րեցուցանել կարասցէ 'ի ժամուն: Հրաման տայր երկուց երկուց զոյգ, և կամ երից և կամ ևս յոլովից, ընդ այլ և այլ անցայս տեղիս և ընդ փո-ղոցս ելանել 'ի շինէն, և գալ 'ի մի-ամանց փութով հասանել 'ի գետոյն Վարազկերտ՝ ուր նախարարքն և այլ-ոցն Հայոց էին, և տայր գիտել նո-

ցս։ Եւ ինքն քաջ ահագինն Մամի-
կոնէից Վասակ սպարապետականն բանից
բանդագուշութեանցն յանձնէր սպարապետ-
ութեան զԱսորեստանեայս. անել թէ
պատրաստամ անձին առ յեղ հնոյն.
զորս լսեալ իւր և որքանից գեղեն,
համարեալ հանձն համարձակ և զօրա-
զօրացեալ լուր՝ և Արշակայ ահագին
և Հայոց աշխարհին։ Եւ Ասորեստա-
նեայց լսեալ, Թեոդոս և զօրս ի
միասին արքունական. կազմեցեալ Թէ
համարեալ ի Տասնամեան զօրն. այս
ամենայն առ նա խաղաղութեան յիշել
աւէր. Թէ Աշխարհն մի ապստամբ՝
առ իւր զինել պատրաստամ յոյն։

Եւ քաջին ահաւորն Մամիկոնէից
Վասակայ զխաղացեալ զինուորութեան
Վարդան՝ զերծեալ անկեալ. և թէ
չէր ինչ կասկած այնոցիկ, այս
ապստամբեալ եկեղեցին յԱ-
սորեստանեայց ազգաց. Թէ Սեր զօր
ժամ ոչ վասն ինչ զօրեալ է և
արքունին իւրեանց կռուոց արքայու-
թեանց զօր ինչ հրամայեալ ամէ Թէ
ապստամբեալն. և ձեր լսեալ՝ այս-
հանդերձորդաց յաղթանակն. և Եւ

րոյց զոր թէ պարտ է առնել. Եւ
արժանի ելով զզգաստացուցանելն. և ինքն
ձեռնել յերկիւղն՝ առաջնորդել Պօղ-
ոսին որ կոչին առեք. Թէ Եւ ծառայ
անձնով ըզն ձեզ խոստացայ զերանեան
ու պարզաճառութեանն. այլ զիս ու-
րույց տա ձեզ պատրաստ են յիշել.
րույց եւ անտանել ձեզ եկի թէ որ-
պիսի թէ էր. այլ զոր էր մարդկի
ջոյց և անձուխաւան, և եկեղեաց էր
'ի վեռաւ խնդիր. և պատուաւիէր շարի
և երկնքը. Առաջնոյ տոհմիս քաղցի
ուն. զերաց ինքն 'ի բաց անձնագրու-
թեամբ և անձնականքն. Եւ եկեղեաց
քաղցն 'ի գաւառն Հայոց. պատմութեան
նոցա թէ զանձն բաղում է. քանզի
յորժամ 'ի նոսա անձնիշխանք են և
մերձաւորաց խոստովանեան[1]

Եւ լուեալ զդառնալեան բանս 'ի
կողմ մանիքէականն ամպարշտին՝ միա-
բանութեամբ արք զօրուն Հայոց,
խորհուրդ 'ի մէջ առեալ ասեն. Թէ
պարտ է զի 'ի զօրանսն 'ի լեռնա-
կողմն փախնել. խորհելով միաբան

1 Յոր. մերձաւորացն քաղաքական.

ղայս. զի եթէ հարեալք. ասէ, 'ի
գիրս. օգնականութեամբն Աստու-
ծոյ զօրեսցուք, այն աջող իսկ է և բարի.
և եթէ այլազգ ինչ գիպի, պատճա-
ռութիւն է մեր ամբարշտութիւն ընդ-
դիմամարտ կողմանն և օգուտ մեզ: Եւ եկեալ
չուեալք բանակեցան 'ի գեղջն Մա-
ռեայ, որում անուն էր Ակոռի:

ԿԹ. Եւ լուեալ՝ թէ առ վաղիւ
գունդն Պարսից գայ 'ի վերայ նոցա
'ի պատերազմ, կանխեցին ըստ
առաջնութեանն աւուրցն 'ի պաշտօն
գիշերոյն. և կատարեալ զաղօթս
առաւօտուն, հաղորդեցին և նոքա որ
անդ էին՝ ընդդէմ նոցա 'ի պատե-
րազմ: Եւ բաժանեալ զզօրսն չորե-
քեան 'ի չորս առաջս, մինն վերջին
կարգեցին զօրագլուխ 'ի ժամուն
զիշխանն Սիւնեաց Բաբգէն և զթո-
ռնեայսն Մամիկոնենից Վասակ, և
աջակողմ կողմանն զԳարեգին Մաղ-
խազ. և կողմանն ահեկ զգնունին
երկաթին, զիշխանն Գնունեաց Աշոտ.
և զնորուն զեղբայրն զԱմատունի.
և ընդ միջ երկոցունց մասանցն
զզօրսն և զմնացեալն զիշխանն Շիրակայ

զինեալքն հասանողականն եւ զնորուն եղբայրն զՀրահատն՝ պատրաստական յորդեգրեն. Զի որ կողմն ակա-ռացի, ասեն, նոցա հասանել փու-թով զօրացուցանել օգնականսն, եւ յա-մենայն կողմանց զօր ընկեցին. քան-զի ամենեքեան վառեալ էին 'ի յար-ողն՝ որպէս 'ի լուսն եւ յարդարոյն յուխտապահն։

Եւ այսպէս յորինեալ զօրագլխա-րեր զօրսն, եւ առեալ փառս Աս-տուծոյ, ապաւինեալք միաբան ասե-լով. Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր, վասն փառաց անուան քո. Մի երբեք ասասցեն 'ի հեթանոսս թէ ուր է Աստուած նոցա։ Եւ եկեալ կացին ճակատամարտ 'ի վերայ բազմ-բռնաւորականն լանջազգեստեանցն յոյա-նացւոցն [1]։ Զօրոց այնքան զօրու-թեանն Հայոց անեալ զօ-րացն Պարսից. այնպէս այլ հարին եղին. որոց էին կամաւ խոնարհեալ 'ի խնջեր մաշեալ էին եկեալքն. Եւ բոլոր

1. Թուի անուն ըլեր կամ լինէր Աղ-ւանց։

՚ի չհասատանել ապրելովք ՚ի դղեակն Պարսից՝ յարձակեալք ՚ի վերայ զօրացն Հայոց. բաղձանօք յնծանս վտարանդեացն Պարսից. և բազմօք յառաջելով հատանէին ՚ի սկզբ ա-ւերացեալն. Յորս և ՚ի ժամուն մնացեալքն Պարսկաց՝ տալով զեւս զհարկերան՝ նենգելով ստիպէ ամ-րոցանն՝ ՚ի զունդն Պարսից ան-կանել. և մնացեալքն զետեղ՝ բառ ևրա-մանին Աստուծոյ երկրաւորիցն Հայոց. բառ ընդդիմութեանն երկը հարկեցոյցն ընդ Դեղնաւէ. Այս զինեալ ՚ի վերայ զօրացն Պարսից. ազնուականութեամբ Նախարարացն յա-ռաջելով՝ զննելով այս ապաւերացն ամպէն և անդ ՚ի սկզբանն զինելա-ւոր յերկիր կորսանելին. և զայն բաղձանութիւն զնդեն Պարսից՝ ձորոց և ստացապար ամրոցացն զգուշաւով վտա-նգին. Այնպ ՚ի կողմանն բանին Վա-սակայ սեպուհին Մամիկոնենից և Սմ-բատայ Բագրատունւոյ՝ անկեալ ասպատակ Արքունեաց մարզպանն, և այլ այլ

1. Դասել և յոլ:

ազգաց եւ նախարարքն յուրաքանչիւրոյն Հայոց. եւ այլ բազում Պարսիկք. Ճնշեալ եւ 'ի կողմանէն Ասորւոց եւ Ասորեստանեայց՝ բազումք մեծամեծին 'ի զօրօքն. Որ եւ տէրն Սիւնեաց՝ զՆերսէհն պաշարելով միաբանեալ եւ զօրք ժամու. զերծեալ տարրեկայութեանցն զԹշնամին արդարութեան մաղապարտ 'ի ձեռացն Ասորւոց եւ Ատամանեայ. Բայց նախ զյառաջեալ այր 'ի գնդէն Պարսից՝ Հրահատա աղքի եղանեալ կամաւորականքն Արտաշոյ՝ հարկեալ նեղութեամբ աստուածոց:

Եւ մինչդեռ նոքա այսպէս յաջողէին յաղթ հզօրին պարծանօք խնդութ էին. այլ եւ Գուրգենայն մաքուր զգածոյն Կասպեայ՝ հանդերձ եւ այլ տարապամթերք Հայոց ուբով եւ այժմ եւ գիտաւ որ ընդ խորն էին, եւ յայլ կողմն կարթեալ ըստ անհրաժեշտ ձորոյն խորութեան՝ հանեալ կայր զինն ու խառնապահ զօրացն Հայոց 'ի կողմանէն կարծեցեալ մետադիրք զինաւ յայնմ պարապութեան կատարեալ զԹշնամին Ասորո-

ծոյ. կամէր ՚ի Թիկանց կուսէ ան-
կանել ՚ի վերայ զօրացելոցն ՚ի Պիւ-
տոս, և տանել զկալթութիւնն՝ ՚ի խո-
րհութեամբ. և անուն մեծ ժառան-
գել: Իսկ տարաւին յանկարծակիեր,
ձայն խողխողման զՀայ տանելոյ ՚ի
Կապաչոյցն լուեալ. բազում արկանէ-
ին տարս Կամսարականս. որոց յու-
սացեալ տանն՝ կամիքն ապաւինել
զնա, թէ զունդ մեծ է, և զու խո-
րհութեամբ զինն իւր կորուսանէ.
Եւ տարա հաստատեալ Ներսէհի ՚ի
լուեալն եղբօրն իւրոյ Հրահատայ,
եթէ զունդն Թշնամեաց է, զինել
յարձակեցին ՚ի վերայ այնչափ բազ-
մութեն եղբարքն եղբարքն առհաս ա-
րամբք: Անդ հատեալ հայրանման
կամսարականնն Ներսեհ, զզօրագլու-
խոյն Կաւշատաց՝ զայր հզօր և զմարտի-
հարեալ նիզակաւ անցեալ ՚ի ան-
դամն ատամնեւր. և զայլ անձնայն
զունդն արկեալ առաջի. բազում
արարեալ դիակունս՝ առնել յան-
զայլ մեկնեալս պատերազմին՝ կոր-
ծանէ[1] յերկիր վարեքն: Եւ լինէր որ-

1. Օրք. կործանէր յերկիր վարեքն:

դին՝ որ նշանաւոր ուրախութեան հաստատեցելոցն 'ի Պիւթոս, և որ անեթոյ և կորանթոյ ամենայն ուրացելոցն 'ի Պիւսատոսն. և Ողիմպիադէս կատարեալ հաստատէր բան մարգարէին որ ասէ. թէ Որոց Առուած օգնէ՝ մի զհազարս հալածէ, և երկուս զբիւրս շարժէ.

Եւ անեալ այնպիսի փառաւորագէս վճարումն գործոյ՝ Թշնամւոյն արդարութեան սատանայի, և 'ի կոր կործանեալ. խորհեալ՝ թէ կորի անհնարին ամենայն խիղ ընդդէմ խնոց կամացս գործեցան. և արդ յայլ խիղ չեղէ մեանձնաս և նիւան դատոյ. զանէ առ վայր մի արամեցուցանէմ զախրաւարքեցն, որք գեռ եա ոչ զիաէն զանգս ազեակըս խնոյ և զկործանմանն. Եւ դըտեալ խեր առս երկուս արքանեկեալս. զմին 'ի տոհմէն Կենթունեաց՝ որում անուն էր Վառգոզ. և զմիւն 'ի տոհմէն Սահառունեաց՝ որում անուն էր Վասակ. և եկեալ արքն երկոքեան 'ի վայրին Ձնդով ընդ ծաղեկ առաստաղն՝ դոյժ աղա-

ղակին լանջի առնելն յանկանելս հայ րապետութեան սրբոյ Յոհաննու. և երկո ցունց առաջ իշխանացն Հայոց՝ մարզպանին Սահակայ և Վահա նայ Մամիկոնենի. Խառնեցան, ա սեն, առաւօտեան կողմանք երկո քեան 'ի պատերազմ, - որոց թէպէտ և անեալ ևս չէր զգոյշ պատերազմին, - և զօրացաւ կողմն Պարսից, և 'ի պար տութիւն մատնեցաւ գունդն Հայոց. 'ի փախուստ դարձան, և անկեալ զօրաւորքն 'ի սուր թշնամեացն, մե ռան քաջն Մամիկոնեան Վասակ և ղու. ախոյեանն Բարգէն, և երկրորդեան որքն անուանեալք առեին Ներսեհայ Ներսեհ՝ առիթի եղբարքն իւրով հանդերձ Հրահատաւ. Եւ որքն գլ խաւորք Ատամ և Աւաստամ, և այլ ամենայն զօրքն Հայոց՝ 'ի լանջակողմ մտանն Ակոռոյ աղապատաս անկեալ զինանշանացն. և մեծ մասն մնացոր 'ի զաւակացն Յոհայ, և եկեալք պաստառեալ ձեռ:

Եւ չև ևս ափսեալ տարածանէր համբաւս այս 'ի Պարսիս, զի մի զա տակերակն ու բանակացն արգելեալ զա

գոյն՝ չար դեն, դայր հասանէր փողփողունկէ հրեշտակ աւետաւոր 'ի տաճարն Գեթսեմանեայ, որում ա- նուն էր Աստուածամօր, ձայն բարձեալ գոչեցեալ ասէր. Յաղթեաց զօրու- թիւն ամուր խաչին, և միշտ յաղթէ։ Տայր զօրս և զպատանդեալսն Աստու- ծոյ՝ զոր արար արդեան բարեխօսու- թեամբ առ խաչ ամբարելին, և զա- րաչար ընկալեալ և զամօթն՝ զոր գտեալ ժառանգեցին փաղանգ ու- րացողացն։ Եւ ընկալեալ զայս ձայն աւետեաց հայրապետին Հայոց Յո- հաննու և աւագ իշխանացն՝ մարզ- պանին Սահակայ և սպարապետին Հայոց Վահանայ, և ամենայն նախ- արարացն Հայոց և ամենեցուն, զի- նեալք միաբանութեամբ 'ի տաճարն Աստուածոյ, որոց հզօր է զօրութիւն խաչ, գոհանային, երկիր պագանէին միայնոյ Ճշմարտին Աստուծոյ և ան- ընդդիմակ հրամանի կամաց իւրոց։ Եւ երանելի կաթողիկոսն Հայոց Յոհան ասայս ասացմունք 'ի ասացմանն գանձերգոյն խնկերգոյն. « Լուսա- թիւ ասէր և ողորմեցաւ, և ասէր եղե

թեան սգծութեան. Պարծանաց զատիկ
յուրախութեան. զերծ մեծն Ա-
ղօթով. և թեան գեղեցիկ զուարճու-
թեան. Որպէս ասացեալ առաջին
մեզ փառք էք. և այժմ ես գլխո-
ցայց. ասէր Առաքեալն էք. յուս-
ուանն խոստովան եղեց մեզ. Եւ
հաստատեալ զգուշանմն` զաւետ ու-
րախութեան անձինք. նախ հոգ-
ւով զարգարեալ յաղօթս ձեռաւք.
և այս կիրակի ուրախանայք
ընծայից ուրախութեանց.

Սիրեալ հաւատացեալք և զոյգն 'ի սէ-
րափայլն. պատմելով զհորդ Ս-
ուրբ զօրութեան յաղթութեան`
ընդունեալ նորա զգեստ յաղթութեան
անուն. և զի հնչեալ ձայն ձեռ-
ատեսման և զարմացն զմիտս. և
փառաւորեալ զՏէրդ` հանդե-
րձքն զգեստաւոր ողջունեսցեն ուրախու-
թեան. և անձինք խաղաղութեան
'ի հանդիսի նմանութեան մանկունք.
հոգւոյն առ զաւակն զգաստու-
թեան պատերազմին.

Հ. Եւ գնացեալ առաքելութեա-
գաւառին Վրաց Վարսթանց ամենայն.

ուղ նոցա Հան ըստ բանի խոստա-
մանցն իւրոց։ Եւ նա ժամանակաւորա-
բանիւք երկայնէր զառաջացեալն
խր. և ապա ուստեք ժողովէր Հոնս
երկրծարկեր. և տայրէր 'ի Հայա-
կչէ եւ անդէսող ամիս մի 'ի ձեռ-
բանոյն՝ փոյթ պատճառաւորու-
թեամբ անգրեն տա ինքն կոչէր։
Եւ Տեարք աշխարհիս Հայոց զօրու-
թեան օգնութեան՝ Քրիստոս, յոր
պատուաբեալն էին և յուսայինն. այլ
'ի մարդկանէ ոչ ոք էր որ օգնէր
նոցա։

Առաքէր զօրավարն Հայոց Մամի-
կոնեանն Վահան՝ յերկնից և յա-
կանաւոր ազգն Արծրունեաց, և
յորդս զատաւորն Անձևացեաց և
Մոկաց և տա ազատաւորեարն Ռշտու-
նեաց. տայր գիտել՝ եթէ որպէս
յառաջնումն օգնեաց Աստուած
յուսացելոց իւրոց. և ասէր. Թէ
Զինաւորքս և զօրագլուխ օրինակս մե-
ծոյզշաւասա և զխարովութիւն՝ խո-
րոզանէին որ 'ի ձեռն զաւն գիտէր,
և ոչ էր կարող յուսալ ուսանել։
այլև զառաջարութեն իւրև զենեաց մօտ-

րութեան մարդոյն. տեսեք՝ թէ որ-
պէս տաճար այրեաց զամենայն
պղծոց 'ի տաճարաց. Արդ տա-
գիկ եւ ձեռս ժամ արդար մեղքն
Պղծառուսի. որոյ տաճար զէնձանց
որպէս զերամ խոր, եւ զդարեանն մար-
րեալ՝ յերկրէից շահամորանս ժողովէ,
եւ զյարդն անձեռք յաւիտենից հրոյն
մատնել յայրուածս. Եւ արդ որ ոք
կամի ընծայել զարենահամ՝ ընծայեա-
ցէ զինքն Աստուծոյ եւ կեցցէ. եւ
որ ոք յետս ընկրկեալ յարդեացի,
յաւիտենից եւ անանց գեհենին եւ
գեալ լուցեալ՝ այրեսցի եւ մի ժերն.
Եւ եա ոչ զոր բանդարարեալ զոր-
ծեմ յօգուտ խորհրդանեիր անձն.
այլ յորդորելով մեկեցուցանեմ ա-
մենեցուն զփրկութիւն եւ զկորուս-
տը զիտի յայտնութեան աւուրն
Փառնոցի որ ոք խոստովանեսցի զմեղս
տութիւնն, փրկեր 'ի գեհենէն. եւ որ
ոք տայթայեալ մեղօքն յաւիտե-
Ճանապարհէն, զանցեալ կորուսան
կործանի. Արդ որ ոք հողացեալ
խեղդէ զգիւտ անձին եւ անձին ա-
մահ կենացն լինել ժառանգորդ. եւ

կայր ինքնին զվրէժ եկեղեցւոյ Թըր-
նամանաց. որով Թշնամանեցաւ 'ի
բարձրաւ ժամանակաց և ամենայն յար-
ձանիրսն ուղղափառացն: Եւ որք
խորհէր զհայրենեաց երկիրդ, և ծա-
ռայէլ ցանկային մոլորութեան բար-
բաջանացն, ընտանեցեալ 'ի խաւարի՝
զիջեալք արժանի հայել յարգա-
րութեան աւետարանին Քրիստոսի. այլ
թէ հաղորդեալ և բաղդատեալ հաստատեսցէ
վարձս վարձահատուցին Քրիստոսի:
Եւ լուեալ զայս արդարադատ ջերմե-
ռանդ զաւակաց նախարարացն,
իւրն փափագելոյ այնոց կողմանն՝
զրոյց առեալ ընթանային 'ի հօտ
ուխտաւորացն ժամանել. և այնք ընդ
զառաջս այնոց մանկահասակեան
հաղորդեցան՝ զնոյն անդարձու-
թեամբ 'ի խաւարն արտաքին: Ոմն
յԱմատունեացն նախարարացն՝ ան-
ձն մի՝ որում անուն էր Յոհան,
և միւս ևս Երուանդունի՝ Ներ-
սեհ անուն, միաբանեալ 'ի խնդիր
բարի ցանկութեան, ընդ որս և
հաւանեալ և այլ այլք ճշմարտու-
թեան նուիրեցան, զնոյն խառնել

'ի գունդըն զօրավորին Հայոց Վահա-
նայ Մամիկոնենի։ Եւ մինչեւ ժո-
ղովեալ գնային 'ի ճանապարհի, մեր-
ձեալք 'ի քաղաքագեղն՝ որ կոչի
Աւեառ, 'ի ժամանակի քառասնոր-
դայն պահոց՝ 'ի մեծի շաբաթու-
գատակին, յանկարծակի յանդգնա-
կից եկեալ հասանէին 'ի վերայ նո-
ցա իշխանն Աղձնեացւոց Մուշկ ա-
նուն և իշխանն Մոկաց Յոհան ա-
նուն՝ բազում այրուձիով, ընդ ա-
ռաւօտուն ծագել։ Եւ սոցա զգա-
ցեալք՝ կէսքն զինեալք և կէսքն
թէպէտ անպատրաստ էին, այլ
օգնութեամբ Բարձրելոյն քաջալե-
րեալք՝ հարկանէին 'ի գիժն անձերկե-
ղայես․ և նախ Ներսեհ կրսեա-
գունի յարձակէր 'ի վերայ իշխա-
նին Մոկաց Յոհանու, և հարկեալ
նիզակաւ, ընկենոյր նմա և Աղձնեա-
ցոց սպահին Յոհանու, յերկիր կոր-
ծանէին։ Որոյ տեսեալ էր երբեմն
հայարապետ պարծելով զանձնա-
ցի սպաժն Յոհանու, թէ նմա ո-
գեւ կռիւ՝ բայց թէ անուր եկի
ալխափ արկանել։ այլ նա ամկիոյ

է յոյժ կեա յոգուս կամ 'ի Հռոմ:
Եւ ընծայս պատուականին յաղգա-
կցէն Յովհաննու՝ յիշխանէն Անձևա-
ցեաց Սեփոյ. Թէ Զաւարութիւն ես ըն-
կալայ. որոց արկէին գու 'ի պատրա-
նաց: Որ յաղագս ամբարտաւա-
նութեան բանիցն՝ հարկեալ կոչեցան
եպիսկոպոսն հարցուկ. ընկեալ յերկիր
յերկնքոյն և կորեաց: Եւ զայն
աղէտս զորոյն բաղձանութեան՝ 'ի
փախուստ դառնութեան. զորոց զՀեա
նելով՝ զամենատարածանելին և զՀեա-
ցեալն փախստականս արարեալ
զուէրն առ և անդր: Եւ անդէն
յայտնաբերեալ Մանուէլեալ և փառա-
ւորեալ զԱստուածոյ զօրութիւնն,
որ անհնարին ամենատարած զայնքան
բարձրութիւն զօրայն յղացելոց. զի
է փոյթ պատմեալ հնչէր լուր ան-
կարծելի գործոյս աշխարհին յամե-
նայն աշխարհին Հայոց. առ հզօրին
Աստուծոյ:

Մինչ այսուհետև սնուցանէն Ան-
ձևացեաց Սեփհան և Ներսեհ երտան-
դանեն և այլքն որ ընդ նոսա. յորոց
մեծն տէրս Աստուածած կնքանն և

զզօրութիւնն. և տեսեալ զնոսա սրբոյ կաթուղիկոսին Յովհաննու, ամն ուրախութեան և պատարագս ընդունելիս մատուցանէին առաջի Աստուծոյ, որ շնորհեաց զյաղթութիւնն, և բարձրացոյց զպարծանս եկեղեցւոյ մրոյ[1] սրբոյ, և ողջունեալ զնոսա ուրախանային ՚ի Քրիստոս։

ՀԱ. Եւ անցուցեալ զաւուրս զդառնաշունչ ձմերայնոյ ցրտոյն, հասանէին գարնանային ժամանակի օդոյն բարեխառնութեան. լսէին թէ զօր բազում խաղացեալ գայ ՚ի Պարսից. եկեալ հասանեն ՚ի սահմանս Հերոյ և Զարեւանդ գաւառք բազում զօրագլուխք, որք էին այսորիկ. Սուրէն պահլաւ, և Ատրներսեհ փուշտիպանացն տաղար, և Վեհ-խոսրովեան, և Ատրվշնասպն-տակեան, և Գդիհոն Սինեկեայ տէր, և ՚ի սոսա թեպետ և բազ գաւէց էր ազ ՚ի վեր, այլ հրամանատար և ուսոյց զօրուն՝ Փուշտիպան տաղարն էր

1. Թերեւս մերոյ կամ խորոյ։

փութացաւ և զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, առեալ ընդ իւր և զսուրբ հայրապետն Հայոց զՏէր Յովհան, յուսալով յաղթանակ՝ թէ ամենայն իրք ըստ նորա կամաց կատարի յԱստուծոյ, և գումարեալ զզօրսն Հայոց՝ ձեռնէր հարկանել 'ի գինս. և անդէն զայն անգէտք թիւրեալ ոչ, առէր. մինչև անցանել թագաւորութեանն Պարսից 'ի միջոց կողմն աշխարհիս Հայոց: Եւ առեալ ընդ իւր զնախարարսն և զազատս և զայլ ամենայն ազատսն՝ որք կամաւոր խնդութեամբ երթային 'ի գործ պատերազմին. և չուեալ 'ի 'Դունայ զօրքն Հայոց՝ ըստ առաւօտու թևանոցն երթեալ հասանէին 'ի գաւառն յԱրտազ, և մտեալ 'ի գունդն Պարսից՝ բանակէին 'ի գիւղ մի՝ որում անուն էր Ներսեհապատ:

Եւ առեալ կաթուղիկոսն Յովհան հրամանն տայր ամենայն գնդին Հայոց Քրիստոնէիցն խնդրով պատրաստել աղօթից զզինսն ոգւոյն, և խնդրել 'ի մարդասէր փրկչէն՝ բարձր առնել զանուն իւր մեծ 'ի մէջ բազ

մոլութեամբ մաղձելոցն հեթանոսաց, առաւ բաժինն պարծանաց ծառայից իւրոց. և զնման անօթոյ՝ ուրախացուցն գաւառս։ Եւ այնպէս զօրավարքն Հայոց Վահանայ Մամիկոնենին, պանծալի տաղեաւն Սահակամարգարանաւ, և ամենայն զօրքն Հայոց. յորդոր սրտիւ խնդրելով յԱստուծոյ օգնութիւն, կատարեն զառաջնմանեաւ մահու գիշերոյն. և հաներեալ ՚ի լոյս առաւօտուն, աւուր կաթուղիկեան Հայոց Յոհան օրհնէր զամենեսեան, քաջալերեցուցանելով ասէր. Յուսացեալքն յԱստուած ոչ երբեք ամաչեսցին. և ընտիր անօթ սուրբ Հոգւոյն գոչէ համարձակաձայն բարբառով և աս. Յոյս երբեք ոչ ամաչեցուցանէ. յորոց սիրտ ակըն Աստուծոյ ասելով է. Զօրացարուք ՚ի Տէր և ՚ի զօրութիւն բազկի նորա. և կարող լինի զամենայն նետս մոլխաս չարին շիջուցանել. զհրեղէնս և զանձներևոյթ. Եւ մի որ ՚ի բազմութիւն զօրաց անօրէն նոցայն հայեցեալ զարհուրեսցի. վասն զի լինելով ընդ մեզ Աստուած.

բարձրացուցին զինք ցուցանէ նոցա. և տարածեալ իւրն զձեռն 'ի սատանայն հովուեալ ցուցանեալ ընդ երկաս դաշ-տայր և բերոյ՝ մեր 'ի մեղս կորուս-եալ. Արդ որսնեաց զինք այն հը-րն և զօրացուցէ զինք. տանջանօք զնեաց և յաղթող արարաց. Նման փառք և Որդւոյ խորհուրդ. և առաքք Հօրդւոյն. յանձնայն յաւիտենակա-նացն.

Եւ տապեալ ամենեցուն զամենն. պատարագեալցուն 'ի պատուէրացն. և զինեալ զանձնս Հայոց ընդդէմ Թշնամեացն. ընկեր և երամանքն Թո-ղած յաղթեա. Մեծամեծք այնուհետև զօրավարքն Հայոց Վահան մամիկո-նեան յաղթեալ ընդ պատահմանց զեպ-րացանքեր կողմն Նախարարաւն. Գեր-կոց կողմն բաղձանս այրուծիանց առաջ 'ի ձեռն լուսի առն Սահակայ մարզ-պանին տարեալ. և 'ի կողմանէ այլոց թիքն՝ կարգեր զՆորոց վաշխանքն և զՆարգէնն արքայն և զՍատունն զնո-րն և զԹավալաւքն պաղտեանքն. խորագա-մէր այրուծիով և այլևս յանկելու-թով. և յաչելէ կողմանէ հանդերձ

ուխտաւէր Կամսարականացն և իւր ոխերիմ եղբօրորդւոյն՝ Վահանայ, Ներսեհի և Հրահատայ. և ընդ այնմ՝ խորհրդակցիւր ալրուածով գնդոյն՝ կազմէր զնիզն. Պատրաստէր և զօրս որս աւագս ընտիրս ալրուածովչաք գերծ և Վրէնաւ վանանդացով. տարս և առաքէր զՊապ Արշակունեաց՝ զայլ սատանիկն՝ զորզի Խարացի. առնէ ցխորհրդակցիւր աստաթէ Ձնշանս հզօրագոյն արանց՝ զոր յառաջնագոյն անգլեալ էին զարանց Պարսկաց և զՄամայեայց և զգնդին Սիւնեաց. տեսանեմ զի զիզեալ ՚ի մեզ գիմեալ գան. արդ դուք մեղմէ երթայք, և ուշադրեալ հայեցարուք ՚ի մեզ. Թող մեզ նախ լինել յարձակել. և եթէ շնորհիւն Քրիստոսի մեր զմեր կողմն շարժեալ փախուցանեսցէ, ապա այլ կողմանքն մեր և ձեր առաքէ ոչ կարեն կալ։

Եւ Պապայ առեալ զգօսզամեն ապարասպետն Հայոց Վաչանայ Մամիկոնեանն՝ առ խորհրդակցիւր աստուածային կողմանցն. Թէպէտ և կամէին ընդ Հրամանի զօրավարութե

ամէն. այլ անխափան հատանել զանձն Զօրաց յիւրաքանչիւր թէ կող- մանցն. ոչ ամենայն պարապել, այլ զգուշանալ զկողմն ահոյ՝ որ Ճաշին ճոճանամբ էր, փախուցանելին։ Եւ ուր Սահակ ասպետ յարձակեալ ծիծաղելու ՚ի վերայ փուշախաղանաց աղաղակի. վերաբերելին ՚ի միմեանց զնի- զակն երկերեան. և մատուցեալ մի- մեանս երիվարացն՝ բուռն հարեալ զմիմեանց հերաց և կռուելին։ Եւ անեալ զօրավարին Հայոց Վասա- նայ մամիկոնեանին՝ թէ ազգեցան զօր- քն Հայոց և տեղապատեան ասանդի թշնամեաց. ձայն արարեալ առ Վրէն վանանդացի՝ Յաստեա, ա- սէ. ՚ի վերայ թշնամեացն, և ձեռն ՚ի գործ արա պատերազմել։ և նորա զորշուրեալ՝ ասաց, եթէ Ոչ եմ կա- րող. յիս ինչ ապաստանն յայսմ ժա- մու զու մի լինիր։ Եւ զօրավարին Հայոց Վասակայ մամիկոնենի զօրա- ցեալ սրտիւ, և նշանաւ խաչին կըն- քեալ զինքն՝ հանդերձ Կամսարա- կանացն երկերեամբք, յարձակեցին ՚ի վերայ հաւլոց այսպ թշնամեացն.

և ոչինչ բնաւ առեալ կայ առաւելի. այլ շարժեալ սաստկապէս զկողմն խուրեանց 'ի փախուստ դարձուցանէին. և առեալ զմեծն գոյն՝ արկանէին զմիւս ևս թևոյն զմիջոյ կողմանն. և արկեալ առաջի զկողմանցն երկոցունց զգնդացն, անթիւ բազմութիւն արանց քաջաց 'ի փոփ-լանջակողմանն գլխաթաւալ յերկիր կործանէին, և սաստիկ արեանց հոնէին ձորապարիս: Բայց միայն Վրն Խոսեան երկու այլ զօրաւոր նիզակակցօք զօրու՝ դարձեալ ընդդէմ խիզախէր. սր[1] անդէն առ նմին բազ-զօրավարն Հայոց Վահան մամիկոնեան՝ սաստկակիր հզօրեղապէս եղև ատրպատանայն Տաճկեան՝ անկեալ Նիրակայ Ներսեհն կամսարականն, և այրքն ամենեքեան խուրապանդիք ընթացեալ առին քաջս ընկեցեալ յերկիր կործանէին: Եւ հալածեալ զայն զօրունդն՝ Սարգսի և այլ փախստէիցն Հայոց. և տեսեալ Թէրկաւ այժմ զօրու զնդէն Պարսկաց.

1. Թուի ուր:

երթան փախստականն առաջի գնդին զօրավարին Հայոց Վահանայ, որք առեալ զօրանային. և դարձեալ անդրէն և զկնի հալածչացն եղեալք, զբազում ապստամբեալսն, և զբազում արկեալ առաջի՝ հալածական առնէին. Եւ լինէր աւարացն թիւ կոտորելոցն ՚ի գնդէն Պարսից. քան թէ զերծելոցն փախստէից. վասն զի շատ ևս լինէր համար մեռելոցն ՚ի տեղիս տեղիս վիրաւորացն, քան թէ կոտորելոցն ՚ի գնդէն Պարսից անդէն ՚ի տեղւոջն պատերազմին.

Եւ դարձեալ գունդն Հայոց բարի անուամբ և բազում փառօք. լու աւարաւ և առատեալ ընչիւք առ պատուական կաթուղիկոսն Հայոց Յոհան ՚ի բանակին. փառաւորելով և օրհնելով զաստուածն այնպիսի յաղթութեան զՔրիստոս. որոյ ընդ առաջ ելեալ յաղթող գնդին ցնծալից սրտիւ օրհնէր զնոսա օրհնութեամբ բազմաւ, և զուարճացեալ դիմօք զօրութեամբ սուրբն, և աւետարանական. Արդ եւ յայժմ,

և բանիւ վճարել զխնդութիւնս սր-
տի ոչ կարեմ։ Բայց ես առաւել
զուարճացեալ ընկերիմ աղաչելով
զԱստուած հաշտ ընդ ձեզ. բանզի
յաղթութիւնս խնդացուցանէ զիս,
այլ ես առաւել ընկերիմ՝ զՄիխ-
թար աղաչելով գործակից ձեզ,
որ եմ ձեզ՝ յաղթել, և ամենեցուն
զհաստատակարգս արդարութե. Եւ
Աստուած որ զօրացոյց զձեզ այժմ,
նա զօրացուսցէ զձեզ հանապազ,
և եղեալ ընդ ձեզ՝ մի թողցէ զձեզ
մինչև ՚ի սպառ։
ՀԲ. Եւ մինչդեռ զօրացեալք ցնծալից
ուրախք դարձեալք դային ՚ի զօրա-
պատերազմին, զոր վճարեալ էին
՚ի գլուխ ազդեցութի Վերինն ըստ
կամաց հայրապետանն սրբոյն Յոհան-
նու և ամենայն զօրացն Հայոց. եր-
կրորդ ուրախութիւն մեծ և լուր
անկարծակի աւետեաց տարածեալ
բարբառեցաւ ընդ ամենայն բանակն Հա-
յոց. Եւ եկն Վարդ ողջ զերծեալ ՚ի
կապանացն զօրութեամբն Աստու-
ծոյ՝ եղբայր զօրավարին Հայոց Վա-
հանայ Մամիկոնենի. և լցեալ սպայից

ունասար հաւասարով ընդհանուր
աշխարհին Հայոց. գրոց ուսանելոյ փու-
թոյ ամենայն որ 'ի մեծ այցելու-
թեն՝ զոր արար Աստուած աշխար-
հիս Հայոց. յորոյ բազումք առ խոն-
գին՝ երբեմն ուսանելեն զանհնարաւորա-
կանսն. յերկուսացեալ՝ կեղծա-
րան և ոչ չմարտութիւն գիրն
հարթեէին. Նոյնպէս յիշելով զԱստուծոյ
զօրութիւն զանընդդիմանելոյ պատճա-
ռին՝ փառս միայն և երկրպագու-
թիւն մատուցանէին ամենահնա-
րին. որոյ կամեցութեամբ և հրամա-
նի ամենայն դժուարինք և անհնա-
րինքն դիւրինք են և հնարաւորք.
յիշելով զհրաշագործութիւն հնոցին
'ի Բաբելոնի, և զառանձնակին պա-
րիսպն եգիպտական Կարմիր ծո-
վուն, զցամաքային ընդ կրունկն Յոր-
դանանու, և զանկանումն Երիքովի
պարսպացն աղաղակաւ. Այս ամե-
նայն յիշմանք հաստատեցին խոր-
հրդոց՝ գրաւառեալ միայն զմտութն
ընդունելի աղօթիւք մատուցանել
յաւերժացուցանէին ամենահզօրին,
որ առաւելագոյնս քան զաւուրս ա-

տարեայն Պետրոս արքայ զգրու-
թիւնն. Վասն զի զնա անձամբ միայն
հանեալ հրեշտակին՝ արժանեաց
զերծանել՝ յամենայն բարբարութեան
կենաց. իսկ զայլն մասնկանեան
զՎարդ՝ ոչ միայն լոկ անձամբ, այլ
և ծառայիւք. զրամբ և կազմածով
յամենայն անկելոց շահատասանին, և
բարեձրարերն արարածոցն և յառ-
աջադիմակ բազմութեան պաշտպա-
նոյն՝ ընկալեալ իւրն դարձաւ 'ի
թեւ իւր և ընդ բազում անցուցեալ
ամեանս, ամեալ հաստուցանել խա-
ղաղութեամբ 'ի յերկիրս Հայոց.

Յայնժամ ծանուցեալ յեկեղ
ախտանկեցս՝ որք աստուածակից
զերդուն մասնկանեկին Վաճանց,
զընդունելութիւն Աստուծոյ զօր-
ծին նորա և վկայութեան և հաւա-
տոց. զոր տասոյ յառաջ միարա-
նութեան տասնչորրոյ ատենադրին.
թիւ արդարև. ասէ. ծանուցեալ
Աստուծոյ զբաղմանամնանկեաց
զԹախանձ և զերկիւղուն արարեալ.
զոր հաստուցանել յայսց հանելով 'ի մի-
արութեանն. և ընկալաւ զպատ

ցոյթանց հաստատութեան իմոյ, և հանդէպ եղև ամենագիտին խորհրդոցս իմ և ուխտ, այլ ըստ խորհրդոց զօրեղ ողորմութեանն աստուածային կարողութեան Հզօրն բարի՝ առաջի ինձ մեծ ընդմէջ անսահմանել ինձ զեղջուցն իմ զղջմանց և ապաշխարութեան։ Նա էր այնուհետև ըստ յամենայն եկեղեցիս Հայաստանեայց առաջնորդն. ՚ի միաբանս սրբոց. ՚ի տանս և ՚ի ժողովրդեան միաբանութեան, ՚ի բերանոյ քահանայից և միաբան ամենայն ժողովրդոց. յարանց և ՚ի կանանց ու հաստատեն թէ Զինչ բարի, կամ զինչ վայելուչ. այլ բնակել եղբարց ՚ի միասին։ Նա առ աստուածապաշտ քրեհայն թշնամեայն և բարձրանալ սրբոյ եկեղեցւոյ տանն աստուածաբանակնորա խափանեցան և անկան, մեք յարեաք և ուղղեալ եղեաք, և ամենայն եղբարք միաբանութեան փրկեցան, և բարձր եղև եղբարց արդարոյն։ Նա շնորհակալութեամբ գոհութիւն ՚ի մէջ տանս տանն։ Այլ մեք ժողովուրդք և խաչն աղօթիւքս, խոստավան եղիցուք առ քեզ յաւիտեանն.

ազգէ յազգ պատմեսցուք զորձս
Թիւնեալ քա.

ՀԴ. Նաև յետ աւուրց ինչ բազ-
մաց անցելոց՝ ամենայն խնամատարն
գիր մարդոց և հանճարեղ անձանց
զդպրութեան բազմավաստակն Մաշթոցէ
ից զօրոյն Վասակայ. ընդ որոց զօ-
րավարին Հայոց Վահանայ. անդէն
և անդ ծանեաւ՝ թէ վասն զի մեծ
ապրեալ էր կատարութեամբ զօրոյն. որ և
խնդրեաց յԱստուածոյ աւուրն Վա-
սակ ամենայնիւ ի մարմնոյ զինքն ան-
կալի եղբօրն իւրոյ Վարդայ, և ա-
պա զոր բազմի խնդրոյ իւրոյ ընթանել
ցնծայր. Եւ ամենահզօրն Աստուած
եղև փութով կատարիչ խնդրոյ որ-
դոյն իւրոյ, որպէս յերկարեալ յա-
ղագս զեղծանաւ աւանդ. այլ վաղվա-
ղակի և Ձենաւոր ընկալեալ զխնդիրն.
և ածեալ զեղբայրն զՎարդ և զա-
ցեալ Նորա և ամենեցուն, եթող ա-
ռաքելս առ Աստուծոյ կենդանիս ձա-
ռայան իւր. և զաւուրս վերջին իւր
զՎասակ փոխեալ առ ինքն. պա-
կեալ բնակեցոյց յարքայութեան
խորհրդանն. ընդ հրեշտակս յերկինս:

Գային հասանէին այնուհետեւ 'ի Մաղխէզան. և կամեցեալք առ վայր մի հանգչել 'ի Չերմշկէին՝ որ կոչի Վարշաւէի. գայր հասանէր դեսպան 'ի Թագաւորէն Վրաց Վախթան-կայ. թէ գունդ սաստիկ եհաս յեր-կիրս Վրաց. և ես տեսեալ թէ ոչ եմ կարող կալ առաջի. խոյս տու-եալ 'ի լերինս Հայոց՝ մօտ 'ի սահ-մանակցութեանն Վրաց՝ մնամ ձեզ: Եւ նամակ ունէր գրեալ 'ի Վախ-թանկայ խորհրդութեամբ. թէ Հոն փնդի հրաման ետու գալ. և չև ևս հասին. բայց մինչ դուք գայք՝ հասա-նեն. և այնուհետեւ դուք և մեք և Հոնք՝ զնոսա կոտորեսցուք: Բայց Թուղթին՝ թէ յորժամ Հոն հասա-նէ, մեզ ընդ և աշխատել ինչ ոչ հասանէ, նոքա իսկ մտեալ ին զգործն. զի անչափ բազմութեան հրաման ե-տու գալ:

Եւ զօրավարին Հայոց Վահանայ մարզպանին և ամենայն աւագ նա-խարարաց և ուխտին Հայոց. փառս զի Աստուածն էր առաջնորդում և խաչին ընդ Թագաւորին Վրաց Վախ-

տանդայ. յորուցեալ վաղվաղակի
և ածեալ զամենայն զօրսն Հայոց
առ արքայն Վրաց հասանէին. և
բանակեալք առ ձորն մի ՚ի գաւա-
ռին Կանգարաց գաղաւարէին. Ուր
պատրաստեալ բանիւք խորհր-
թեան թագաւորեցուցանէր թագա-
ւորն Վրաց Վախթանգ զԳուրգը-
բամակորդն Վաչականայ մանկանն. և
զայլ ուսեալ աստուածորդն Հայոց.
մերթ առնելով թէ Միհրանայ զնէր
ենք լուեալ՝ խոյս ետ ՚ի սահմանաց
Վրաց. և յԱղուանս փախեաւ առ
երկիւղի. և դարձեալ. թէ Զերհատ
ասացօք՝ և զամենայն Հայոց հասանէն.
և անցեալ երկու ամուրք ժամա-
ղիր խորհրդութեանն. այլա յերրորդ
և ՚ի չորրորդ որ ձգէր զպատմութիւն.
դրաւթիւնն. և յետ ուժերին յայ-
՚ի վէր և յեռեալ որ. Կարճեալ եր-
աւետ առայր արձակել. որս ՚ի դե-
զէն Վրաց և Հայոց. որք եկեալ ՚ի
անկերան ինչ պատերազմն. այլք երկն-
զօրացանել [illegible] կրակաց բարեկաց և
կանէր ձայնոյ զինեալս [illegible]
մանկա. [illegible] խորհրդութեան մանկը-

նացւոյ Աղէքսանդրի։ Դարձեալ ա-
սէ. Ուշ գայ գունդն Հռովմայեցւոց մեզ
'ի ձեռնտու. այլ ասեն՝ թէ տաս 'ի
գանձարս ան ցոյց մեզ զՀայս, և ա-
մենայն բանից քոց հաւատամք. զոր
դու խաւսեալ ես ընդ մեզ և երդուեալ.
և այնուհետև զոր ինչ և հրամայես
տանել մեզ՝ զամենայն կատարեմք.
արա թէ ոչ՝ չհաւատամք թէ Հայք
ընդ քեզ միաբան են. բայց թէ ար-
դարև զայս տեսանեմք, այնուհետև
զՊարսիկս 'ի մեզ թողեք, և ձեզ
փոյթ մի լիցի։ Արդ թէ դուք 'ի
դաշանս չկամենայք. և Հոն գունդքն
վասն ձեր չհաւատալոյ՝ 'ի վեր 'ի
յաշխարհէն չբազմեն ուրեք, և Մի-
հրան զաւանայ և զՎիրս առնէ, ձեզ
ձեր եկք զինչ օգուտ է։

Եւ Հայոց գունդն՝ վասն իւր ուխտա-
դիր էր ընդ Թագաւորին Վրաց.
զոր ինչ զամ մի առէր ասոյգ կամ
տուաւ, քանզի վասն առևտրականին
երկիւղի՝ զամենայն կատարել։ Զի
թէպէտ և ասէթ էր մանկանանցն, հար-
կաւորեցան իջանել 'ի դաշտն Ճոր-
մանայենս. և յիշխանացն Հայոց

ոմանք ոչ յաջող համարէին զէջս
զնդիցն Հայոց 'ի Միրս. զոր թէպէտ
և բազում անգամ ասացին, չհաւա-
տացեալ բանին [1] աւագացն՝ լսեցին.

Եւ իջեալ գնդին Հայոց 'ի Միրս,
և բանակեալք յառաջագրեալ տե-
ղւոջն. և չև ևս անցեալ աւուրս երեք
կամ չորս. գայր հասանէր Միհրան
և բանակէր դէմ յանդիման բանա-
կին Հայոց. մօտ 'ի բանակն յայն-
կոյս գետոյն, զոր Կուր գետ ա-
նուանեն. և բանակն Հայոց չուեալ
յայլ տեղի հեռագոյն 'ի բանակէն
Պարսից. և առնէին զխորհուրդ միա-
բանեալ ամենեքին. Եւ բազմաց 'ի գնդէն
Հայոց 'ի միջոցին յայնմիկ մոռա-
ցեալ զերկիւղ ահաւորին Աստուծոյ
և զահաւոր երդումն աւետարանին
աստ առն համարեալ, պատրաստամտն-
ցութեամբ գաղտ խօսեցան ընդ Բի-
բարանցին որ սիրելիս գոլով Պար-
սից. Թէ Մեք 'ի բանսութենէ զօրա-
վարին Հայոց Վահանայ, և ոչ որոշ
կամաւ անկեալ եմք յայս յար-

1. Օր. Բան աւագացն.

ալք Թուով. բայց միտք մեր և խոր-
հուրդք առ ձեզ են. և գիտասցէք եթէ
'ի ձերմէ ծառայութենէ չեմք եղա-
նելոց. այլ վասն անձանց մերոց որ-
ասցեալ անձնացուցանք զայժմ զինուաս
'ի մեզ: Բայց արդ եթէ չխլիցէք
զայս բանս մեր երբեք, և առնիցէք
մեզ Թողութիւն, դուք խղճիցէք:
Այլ մեք վաղվան յորժամ 'ի կատարելն
անցցեն զաւրքն, զմեր անձինս և զզօ-
րամս և այլ ընդ մեզ փախուցա-
նեմք 'ի գնդես: Եւ ընդունելով եր-
մանք ուխտի Պարսկացն՝ հաստա-
տեցին զբանսն:

Եւ համաւան 'ի վաղվեան 'ի տեղի
պատերազմին, խառնեալ և յայն ժա-
մու արքայն Վռամ ընդ զօրավարին
Հայոց Վահանայ և ընդ այլ աւագ
անուանեալս և ընդ ամենայն Հայոց
և ասէ. Լաւ եղև մեզ կամելս այսօր
ընդ զօրս Պարսից. քանզի մեք իսկ
բռնաւորան եմք սոցա, և չկարեն կալ
առաջի. բայց թէ այսօր եւ հեզգա-
ցեալ էր մեր, դարձեալ եկին Հոնք և
զանուն յաղթութեանն և զզօրու-
թեանս նորա առնելոց էին: Եւ

մինչև ցայժմ են միջերկրեայ խարէր պատուէր բանից:

ՀԴ. Այսպէս արտամուեալ ընդ սուտ և անպիտան խօսս աղբայրին Վրաց՝ զօրավարին Հայոց Վահան մամիկոնեան, ծանուցեալ և զթուլութիւն գնդին Հայոց. զոր առաւել լսեալ և մեղկեալ, և ոչինչ ընդու նմանս այլոց ժամանակաց փութոյն և յօժարութեան, առկայն ըզգուշին զօրացն կազմէր մամիկոնեանն Վահան ընդ որինի Նախարարաւն պատրաստութեան. և առաւել զկողմն այնց 'ի ձեռս Բարշլի վաշնունեաց և Սատանի գարբեղինի. և զկողմն աշխակ տայր Վախտանգայ արքային Վրաց. և զմիջոյ կողմնն կազմէր զինքն երեքումբք արամբքն որոց երանելւոյն Արշաւրոյ, և Երանեկեաւ անրամբն Գնունեաց. և զերանելը տայրեան Սահակ և զոփունին Բագգեն ընդ մէջ իւր և Բարշլի կայացանէր:

Եւ մինչդեռ զինեալք 'ի կախին. պակայքին Նախարարաւք երկրպեան կոմուդին զեմ ընդդէմ միմեանց՝ Գո-

կեցն և Հայոց . և որ զնահատակու-
թեան պսակն ընդունելոց էին յա-
ւուրն՝ եղուց վերին զօրութեին հայե-
ցող աչաց նոցա . և յառաջ քան
զնահատակութեն՝ յայտնապէս անմա-
ծոյն զուարճացնափոխութեան երե-
ւոյն ՚ի մահկանացու բնական տեսա-
ւութենէս ՚ի լուսափայլութեն վերին
զօրութեանցն կերպարանին . և մա-
նաւանդ զգայնութեն անձն զՎասա-
կայ մանկանէն . զեղբօր զօրավարին
Հայոց Վահանայ . որոյ փառաւո-
րեալ երեսքն լուսով փառացն Աս-
տուծոյ . մինչև թագաւորն յընկերա-
կցացն որք նիզակակից որդւոյն էին՝
հայել յերեսն փայլականացայս՝ ըստ
փառաւորելոյ երեսացն մեծի մար-
գարէին Մովսէսի՝ ոչ հանդարտէին ։
Զօր և իւր իսկ եղբայրն մեծի զօրա-
վարի Հայոց Վահանայ անեսեալ , և
մեծապէս զարհուրեալ , անդէն և
անդ գիտաց . թէ աս յինէն և ՚ի
զարդարալի կենդանացուցիչ այսօր ասա ,
և փոխեցաւ յայն բանական զուար-
թնոցն . որոյ բանականի զօրացն անեալ
և կերպարանն այս է ։

Եւ յարձակեալք ՚ի վերայ մի-
մեանց Հայք և Պարսիկք . Թէ-
պէտ և զօրավարքն Հայոց Վահան
երիցս կամսարականն եղբարբք հա-
րեալ ՚ի գլուխ իւրոյ Թշնամւոյն կող-
մանն, դէմ և առաւ առաքեալ զար-
ձակմանն ՚ի փախուստ. մինչև տա-
րեալ անցուցանելին զբազումս ՚ի զօ-
րացն Պարսից յարձակեալս Կուրն գե-
տոյն, և զբազումս ՚ի զօրացն Պար-
սից երևելիս արանց զօրուն կոտորեին
թագաւորաց: Անդ քաջի սեպուհին
Մամիկոնէից Վասակայ հարեալ նի-
զակաւ սաստկապէս զայր ոմն հզօր
՚ի զնդէն Պարսից յերկիր կործա-
նէր. որ և ընկալեալ ՚նիզակին իւր
յանկարծակի, և քաջին Մամիկոնե-
նին Վասակայ ելեալ ՚ի խնդիր այլում
նիզակի և գտեալ՝ զառնձոյն անդրէն
փութանակի առ ջախջախելոյ. Եւ զա-
տառապեալ ՚նմա կամսարականքն Ներ-
սեհի անուն Շիրակայ, որոյ և նո-
րա բեկեալ ՚նիզակն՝ ՚ի խնդիր եր-
թայր այլում ՚նիզակի, և քաջին Մամիկոնե-
նին Վասակայ ձայն ՚ի վերայ եդեալ
ասէր. Փութա՛ Ներսեհ, զառնելով մե-

ղեկ. և գործիք էին տարագ. քանզի ոչ երբէք կարեմք գտանել ժամ պատճէնի այսպիսի վաճառու. ուր մեզ զանմահութիւն և առժամանակեայս զյաւիտենականն և տալականացս զանապականելի կեանսն. վաղվաղակի, քանզի չեմք կարող անմաչք. գուցէ վրիպեսցուք յանուանէ և 'ի փառաւորեալ կատարմանէս՝ անանուն և անպիտան մնասցուք եղանիցեմք 'ի կենդանեաց: Եւ զայս լուր 'ի սորոց ամենայն Վասակայ Մամիկոնեանք՝ հաւատարիմ երդմամբ պամեր մեզ բազում անգամ խելքն ակրն Շիրակայ Ներսեհ կամսարականն:

Եւ մինչդեռ զօրավարն Հայոց՝ Մամիկոնեանն Վահան այսպէս մըրցէր հանդերձ եղանելի եղբարբն Վասակաւ և երկոքումբք որդւովքն կամսարականին Արշաւրայ. յանկարծակի փախուցեալք առ հասարակ որանայլն զանդգքն ամենայն Հայոց և Վրաց. որոց բազումք 'ի նենգաւորացն աղաղակելին առ միմեանս անհանդիստ. Թէ Փախեան Հայք. անձնապահուք եղբարք: Եւ

վասն զի ոչ ըստ փութոյ և յորդոր խնդրոյ շնորհէր 'ի ժամուն վիճակ մարտիրոսութեան 'ի վերին զուգակշռող աջոյ ամենագիտին, ըստ ծածուկ և անյայտ խորոյ կանխատեսութեանն, քանզի զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և այլոց ընդ նմա ուխտակցաց ընկերացն, որ ախորժելով անձանց բաժակի մարտիրոսութեան. և չգտան արժանիք, զարմացեալ այնուհետև զերասանակս երկնաւորացն՝ զնայինն և նոքա զհետ փախստէիցն Հայոց: Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի եկեալ պատահէր Բարգենայ ակնեայ. անկեալ 'ի զօրացն Պարսից կարեվէր. զոր հեծուցեալ 'ի վերայ խորոյ նժուգի և հանեալ 'ի պատերազմէն ապրեցուցանէր: Բայց որք ընտրութեանն ցանկացողք էին և արժանիք ընդ սորոյ առաջնոյն Սահակայ և ընդ սորոյ քաջին Վասակայ Մամիկոնենին, և կատարեցան յաւուրն, և անուանքն են այսպիկ[1]....: Իսկ զորսն ամենայն Հա-

1. Ոչ միայն անուանքն պակասին այլ և

րոյց. ընդ որս և անդրիատան զօրքն Վրաց. համանգերձ թագաւորաւն իւ-րեանց Վախթանգաւ՝ վառանեալք զաւէքն. զորոց զէնս հետամուտ եղեալ զաւագագունդքն Պարսից՝ զհրապարակս փախուցէին. և բազումք յայն և այն ամենայն զերծեալ ապրէին։

Նոյն զՆրահատան կամսարականն՝ ապաստանեալ վասն առնելոյ երկիւ-ղին իւրոյ ընկենոյր. և հասեալ Պարսկացն՝ մինչդեռ էր հեռաւոր, կալեալ ածէին առ Միհրան. զոր ածեալ Միհրանայ՝ մեծ արարեալ ու-րախացաւ։ Պատուհասէր զնա բա-նիւք խստութեան, և կապեալ տայր պահել զդաւաճանութեամբ. և առ ի եր-թալ յաշխարհն Հայոց՝ ընդ իւր շրջեցուցանէր։ Ընդ որս կալան և անդրանիկ մի սուրբն, որում անուն էր Յաղդ. և զայլս ամենա ՚ի Վրաց աշ-խարհէն։

ՀԸ. Իսկ զօրավարն Հայոց Վա-հան Մամիկոնեան երթայր առ փայլ

զեղջս մահու Սահակայ ասպետի և նորին իսկ Վասակայ Մամիկոնենի։

մի յամրագոյն տեղեաւն Տայոց. որ և անմերձենալի փախստէիցն Հայոց որ նա ժողովէին, և այլք 'ի նախարարացն Հայոց. այլ Կամսարականքն երկոքեան ընդ նմա խոյս էին միշտ, և ամրացեալ 'ի նմանէ և միաբան. Զորոց զհետ եկեալ Միհրան զնդաւն իւրով. և ջանայր կամ սպանանել պատերազմաւ, և կամ ունել հնարիւք, և կամ հաւանեցուցանել և նուաճել:

Եւ էր բանակ առատութեան զօրուն Արեաց 'ի գեօղն որ անուանի Դու, 'ի սահմանակցութեան Պարսից և Հոռոմոց. և զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան մերձ 'ի նոքօք երկուք հրամանաւք. 'ի գեօղ մի որ կոչի Մեհեկանոյ, արարեալ օպէս թէ հարիւրաւք, և թերևս ակասաւք և կամ յոլովիւք: Եւ Մեհրան այնչափ հպարտացեալ առ նա բանակեալ էր մօտ, և տեսեալ որ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան էր՝ մերձաւորութեան Պարսից թագաւորին էր. և այնչափ անակապեալ պնդեալ էր Աստուծոյ զնա

ձեռն՝ զօրութեան խաչոյ ՚ի վերայ քաջի առն Վահանայ Մամիկոնենի. որ ՚ի մէջ այնչափ բազմութեան զըն-գնդի և ՚ի զօրաւոր քաջորդերոյ՝ զօրա-ցեալ առաքեալ կայր Միհրան զըն-դաւն. փախեաւ ընդ երկիւղալից աչօք վիրեայն. և չիշխէր դիմել ՚ի վերայ և սպառնանալ զոր կամէր. և հալածել և կոտորածել զմնացեալ փախստականսն. այլ բանիւ ողոքա-նաց պատգամաւորօք ընդ նմա հա-նապազորդ ՚ի խաղաղութիւն, աւե-լով. թէ. Մի կորնչիր. և յարքայից արքայի ՚ի ծառայութենէ մի եղա-նիր. և զաշխարհս Հայոց մի տար ՚ի կորուստ. ՚ի հնազանդութիւն եկ թագաւորին. և ես միջնորդ լինիմ. քանզի վասն խաղոյ բարերա-րութեան սիրէ զքեզ. և բանից խորոյ ըով. և ես աղաչեմ զթագաւորն, և հաշտեցուցանեմ ընդ քեզ. և ինչ որ առաջեան է առաւ քեզ՝ ջնջեմ զի-նայ.

Եւ սպարապետն Հայոց Վահա-նայ Մամիկոնենի՝ պատասխանի արա-րեալ ասէր ցՄիհրան. եթէ Արեաց

տեղի որ լինի՝ արդար աւագ աղօ-
ծառայել յամենայնի մարդ իբրև զթա-
գաւոր, և արդարադատս տեսանել և
արդարադատես լսել. բան արժան
թագաւորի։ Բայց այլ թագաւոր՝
որ ուղիղ աչօք չհայի ՚ի ծառայս, և
ուղիղ հաւատութեամբ չլսէ ուրուք
զբանս, այլ հաւանակ բան իշխանու-
թեան վայրի և ոչ բան արժանի իրա-
ւանց քննութեան. այլ առաւելեւ՝
որ կարի զծննդականգոյն է և աշխար-
հի կորստեան պատճառ, և հանա-
պազ զայն առնէ, և կամի տեսանել
այլոց աչօք, և լսել այլոց ականջօք.
ծանր է ծառայութիւն այն և
դառն, և վտանգ՝ որում ոչ որ կարէ
կալ առաջի։ Վասն զի տէր որ յի-
՚ի ծառայից զնա և զխաբեութեան
ընդունել, և բան արժանի իրաւա-
չիւր ուղիղ մտաւորականութեան զվերա-
ցին ոչ կամի, այնպիսին լուծ ծառայ-
տեղի զծառայս կարէ լինել։ Այլ
Հայոց աշխարհս որպիսի՛ մեծ և ա-
ւագի աշխարհ է. և արդ զինչ
այլ մի յայսպիսի աշխարհի՛ որ իմ
առաւելու. թագաւորութեամբ

ժամանորդացելս հասանել 'ի տանու-
տէրութիւն. այլ որևար առաւագակ
և անդիմադրան, հաղթահասական և վառա-
ռոճեկ. որ զան զօրնալովի ԱԾ
թագաւորութիւն խարեն. և ընդ
երակի՝ փառս գնեն և տէրութիւն.
և 'ի ձեռն ընդ կողմն ելեալ սակաւ
մի՝ մեղեն 'ի երակն, և յանթեղ
զօղը խորհենց արկանեն, և զվա-
ճառականն և զվաճառսն 'ի մեասին
թշնամանեն. Եւ այլ լաւութիւն և
քաջութիւն և միտք և գիտութիւն՝
որով աշխարհ չինի և մինչ լինի, այն
չնչգրի և արհամարհեալ է. այլ
անդիմատն և վատատոհմակ մարդկան
պատրողութիւնն 'ի մէջ անցեալ
յարգի. և գուք առ. Ճանաչող ու-
նիք զնեզ. Լուեալ է քո, որ Մեհ-
բանդ ես, և ամենայն Պարսից՝ ընդ-
բանս զայս յԱրեաց ատեանն 'ի
Պերոզէ՝ առաջի ամենեցունց յա-
տենի. Թէ Այր վատ և գունդ ան-
պիտան Աստրի է, բայց քան զատարի
այդ՝ Հայ մարդ շատ վատթար է և
անդիմատն. Եւ ոչ արդեօք լաւ էր
մեզ՝ քան զայն լուր յանձնագիտութ թա-

գաւառին։ Եւ արդ՝ իմ երկուս կախ-
առաջադրեալ է ընդ արի մարդկան. եւ
երրորդն այս է՝ որ ընդ քեզ առա-
ջարկ՝ եւ ընդ որս զերկուս կախեալ
առաջարկ՝ ընդ այնպիսի երեւելի եւ
քաջ մարդկան համեմեցայց. զոր ինքն
Արեւաց ամէքն եւ ամենայն արիք Հա-
՚նաւչեփն՝ թէ որպիսի ոգեւոր էին։ Եւ
առատար մարդկայ մեզ չէր օգնեալ։ Հանի
կամ Հռոմն եւ կամ այլ ազգի ուսանէր
մարդկայ. բայց միայն այս Հայոց՝ զոր
դուք գիտէք, այսպէս մծարեալ է զայն-
պիսի մեծ գործ, զոր դուք ամենայն
Արիքն ըստ այդ եւ անձանք եւ ոչ բազում
ազգութեանց. այլ հարիւր արամբ եւ
կամ եւս նուաղի՝ զհազար եւ զբե-
ւրս հազարս այլ փախուցեալ է
արքայ։ Եւ յայսմ կաւէ՝ մի զայս
զմտաւ ածեալ ազարթիս, թէ ամե-
նի ինչ քաջութեանց յաղթեցեր
մեզ. այլ՝ ի մեր երկպառակութենէ
եւ ՚ի ներհակելոց եղեւ մեզ վնաս։ Զի թէ
էր այս հայ զօրոց՝ յորոց միոյ
առ եւ երկիւղ էր, որպէս Արեւաց
ամենայն մարդ ծառայի միոյ. եւ
յիշխան ձեռնին այսպէս էին՝ որպէս

ընդ իւր նախանձեացն ձեռամբք. և հա-
մարձակապէս իշխէին զկառավարութեանն
՚ի կառաւ ի տամբ և կենաց հալածա-
նել և փախուստ պատահէր տանել. և
քանզացեալոցն կարէին բարի տանել
ն պատուի առաւ. ցուցանէին Արեաց
ահաւոր և մեծ ամենեցուն՝ թէ որ
կարի զուանց յԱրբաս անդուստանի էր և
լու. բայց եթէ լուաւորեալք եա և
բանքերեփին. այլ ՚ի խառնարհ սակա-
ւք և նուաղ չարայիերեալ: Բայց արդ՝
զոր ձեռ ՚ի վասն առնեմ և յանդգի-
տան ՚ի մարդկանէ աշխարհէս Հայոց
իշխան կարգեալ էր. զորս ըստ ի-
բեանց յեւսուսթեան կրթութեն յաշ-
խարհէս Հայոց զգաստութիւն և զա-
նուան բարի և զրաւութիւն: Զի զնոյն՝
որոյ զօրապետութին վասն է, զնոյին լսա-
ցնել չէ հնար. և աշխարհէ՝ որոյ
իշխանքն յեալին են, աշխարհէին այնոմ
անհնար է յառաջագլեմ և անուանի
ցնել:

Բայց յաղագս իմ՝ զոր ամենեցեան
զիտէք. զի ՚ի Հայոցն իմոյ եա այսոյ
Խոսցի. ոչ զխառնակեա նոցա՝ որ առ
Արեաց աշխարհին լեալ է՝ զինեամ, և

ող. յանդիման նոցա հաղորդ լինել.
Բայց մինչ ես յանձինս դդալի, և
ձեզ Արեւաց տեառն արքանեկութե
արժանի եղէ, 'ի մտի եղի տալ
Աստուծոյ և մարդկան՝ արդարացոյ
Տեառն և ձեզ ծառայութիւն ա-
նել. և արդար վաստակս վաստա-
կել: Եւ որչափ ես զնան հոգայի և
'ի լաւ վաստակն յաւելուլ, և վա-
անդարձան իշխանացդ Հայոց զինչպես
բանաւորականութեանս առնէին, և զաք
ինքնեին մտաց լուծիք, և ընդ իս չյա-
յծիք ուղիղ. առի զմտաւ թէ զինչ
արդեօք այդ հնար դոյր. որով ես
կարող լինէի զԱրեւաց տեառն և
զաւագացն զմիտսն ուղղել ընդ ի-
եթէ զանհանելի ինչ ոչ պարգես, դո-
նեա լուծ աչք ուղիղ հայելով ընդ ի-
և չառ էր ինձ. Եւ իբր 'ի վաստակն
զոր վաստակելի՝ լաւ խմնամքեալ
լոյ՝ թերութիւն ոչ առնանելի, և ա-
ռաւելս ինչ յաւելուլ և վաստակել
չզանանելի հնարս. և զթշնամեաց
րերանս 'ի բանաւորութեան իմոյ
ոչ կարծելի. և տեառն և ձեր ա-
կանջք 'ի բաց եկին 'ի լսել զա-

Թէ և չխորհէր վասն իմ՛ ուղղակի. և իւրն ոչինչ գոյր պատճառանաւն ծանր տրամութեանն՝ որ կրէր յանձին իմնում իսպառ. և փոխէր յաշխարհէս յաշխարհի. խորհուրդ չար 'ի մտի ունէի. և անձամբ զանձն ստանէի. և երանի թէ լոկ զմտածմունս էր ստանալով. այլ և ոչ գործիւ և զմտօ-մինս 'ի միասին կորուսի: Քանզի ուրացայ զճշմարտութիւնն՝ զոր գիտէի. թէ ստոյգ Աստուած է արարիչ և տէր ամենայնի. և երկիր պագի ստութեան և մոլորութեան, զոր այսօր տեսանէ ձեր և ստանէ ամենայն աշխարհիս խոստովանիմ, թէ ստութիւն է և աղանդի խաբէութիւն: Եւ յետ կործանմանն՝ յուրում կործանեցայ, մաշէի յերկիւղէ զամենայն օր, թէ զուցէ մեռանիցիմ ասելն մեղօք և կորնչիցիմ դժոխականս կորուստն. կալեալ 'ի բանն զոյգ իմ՝ 'ի բաց մերժեցի զերկիւղ Թագաւորաց, ընկեցեալ յանձնէ կոխեցի զարբայութեանն խիղճ և լուսաւորեցայ: Այսուհետև ուրախ եմ՝ և պատրաստ հաւա-

ծանոյց․ աղքատութեան․ փոյթ և մաշման․ զի որում և ցերեկ վերախնամակալութեամբ՝ ուրախ եմ և անձամբ։

Բայց դու զոր խօսիս՝ և արդարև կարես առնել․ և հաւանի թագաւորն նուաճել զմեզ․ և նախ քան զամենայն՝ զխնամակալութիւն շնորհէ աշխարհիս Հայոց․ և զաղանցի վանաց հաստատէ յաշխարհէս մեմէ, զոր անզգաստան և վատ մարդիկ գնեն ՚ի ձեռն խարէութեանց, և ընկալեալ՝ ծախս առնեն զձեզ և զձեխիցն․ և զմարդ ձանձալից զամենայն զանզգաստան, և զործ խնդրեմ յիրաւանցն ձեր ումեք, ոչ կառավարութիւն, և ՚ի գործ հայել՝ առ ըստ վարդապետաց զհրամանացս, և ոչ ՚ի ընկերանութեան խարէութիւն և կարեմ զբեղ և կերել՝ թէ ՚ի մէջ րանութեան եղև ձեր յանցանս ՚ի ոչ ՚ի ձեր առաջնորդաց և յանցգնութեան, և թագաւոր․ և զառաջինն առաջնորդս ունել և զվարդապետն առ անդրանիկս․ և թէ այդպիսուածի զմեզ․ մեր ընդ անձին

և հօրդն մերոյ և նախնեաց, և մեր ծառայութեան տանելք և հպատակ լինելք։ Այդր եթէ նոյնպէս զյեղծեն առ լուան ունելք և զլուան լծոյ տանելք, և աղաւեղի մեղաց վաճառելք զեկեղեցանութեան աշխարհիս, և ոչ բառ խրատանդ հայել յարժանաւորան և 'ի աշխատանսն տայք, մեք՝ որ աղաստամբեցաւրն՝ ոչ եթէ զեռեալ եթէ մեք Արեւոց տանջի խնչ կարելք կալ։ զի և զմեր տառապանաց ուժ զխամելք և զԱրեւոց այնպխոփ մեծ և զանձնամար զնզի և ուժոյ զատականութեան, բայց միայն զմնանելն եղաք տանջի, և 'նմին պատրաստ եմք։ և առաւել եա ուրախ եմք՝ զի զանուանեն և զլուա մահ մնանեմք քրիստոնէութեամբ, քան թէ ուրացութեամբ զնել զանցաւոր փառս և զյաւիտենից կորուսան ժառանգել։

ՀԹ. Եւ մինչդեռ Միհրան և զօրավարն Հայոց Վահան մանմկամեան զայրացեալ բանս ընդ միմեանս խօսէին, յանկարծակի զեսպան հասանել 'ի դրանէ և առեալ զՄիհրան

՚ի գուռն կոչելին։ Եւ նորա չուեալ
առժամայն բարեպաշտութեամբ Ճգնով ՚ի
գուռն, առեալ ընդ իւր զեպիսկոպոսն
Հրահատ և զերանելին Յուդ և
զայլս կարգաւորսն. զորոց գնեա եր-
թայր առաքինութեամբ և բարձում
փութով ահելէ եղբայր նորուն՝
տէրն Շիրակայ Ներսեհ. որամբք
ընդունելովք. որոց առեալ զանձնա-
րէն անդադար ողբումն Ներսեհիւ, ա-
րով խանդաղատանօք՝ զբարիս նորա
յիշելով երթային ընդ նմա։ Որոյ
յորէ ամենեցուն զՀրահատն Պար-
կացն՝ ոչ էր եղբօր նորա Ներսեհի
տեառն Շիրակայ դադարեալ ՚ի
լալոյ. և ոչ էր հանգուցեալ ՚ի վե-
րայ անձկութեան. և ոչ Ճաշակեալ հաց
առանց արտասուաց. այլ և զօր ծա-
ճանկերն՝ առ չարիս դառնացեալ սիրտ
բերանն նորա։ Եւ երթայր գնա
զնդին Պարսկաց. ածելով զնա-
թէ՝ ո՞ զինչ ձեռնտուեալ արէ ՚ի զ-
տառաջայն թէ զնդին՝ անկեալ ՚ի վե-
րայ կառավարել զնա զերծացանել. և
կամ թէ ոչ զնեւայ ես զերկեայ են-
հոա հանդեացն յանձնելովթէ զոր-

մութնեա։ Նա երթեալ բաղում ամպամ սիթս զհետ, և այլինչ կարացեալ զասանել հնարս. և մերձեալ դրացէս թէ սիթեանսա միով՝ի սուրբ անգի առն նահատակին Գրիգորի, և յեհեղով զարամանկցութիւն սորոյ ընդ փրասցեալս, և զհամարձակուն սորոյ առն Գրիգորի առ Աստուած, ձայն տուաքին բարբառոյ հանդերձ արտասուօք արձակեալ առ այրն Աստուծոյ. աղաղակելոյ ասելով. Տէր Գրիգոր, որ զատաւին մեզ ամբարշտութեանն մերոց մեղաց մերժեալ փարատեցեր յաշխարհէս Հայոց. փարատեա և զիմ տատաքին մեզս տրամութեանս ՚ի սրտէս, և շնորհեա ինձ զանձկալի զերդաստան իմ տեսանել առողջ առ իս. քանզի հնարաւոր է Աստուծոյ ամենայն. և զայս խնդրեր քաջ անխարժելով կամի լսել և կատարել. Նա այսպէս մեծամայն բարբառով և ողբալով աղաղակելոյ կամաւորականն Ներսէհ առ այրն Աստուծոյ Գրիգորիոս. ոչ թէ ընդունայն բարբառեալ, այլ սորտին աղաղակելը. Նա նորա լուեալ

վաղվաղակի առայց ցՊիղատոս. և վերկ.ցին Աստուածոյ անդ և անդ հանեաւ զկառավարն Հռովմայ ՚ի շիվեանկ զգուշութենէ պաշտպանացն. արձանէկէր խաղաղութեամբ առ մրեկի եղբայրն իւր և յաջորդ։

Յայնժամ անուաւ Ղանկրկիւղակէս և զբռնաւորար եւս կամաւոկանոնն Հռովմայ զօրավիգն Արեւոց Միհրդանայ և այլ ուստաղանոյն որ ընդ նմա էին, հրաման տայր ածել զերամնելի ակարուհն Միննեայ զՅապգ՝ ՚ի նմին աւուր զաւալեալ իւրեանց։ Նա սկսաւն խօսել ընդ նմա և պատասխանել. Ոչ է, ասէ, հնար կենալ մարդոյ. որ բազում չէ առ և չարիս առ իւր իւկ նմանի մարդկի գործեալ էր. Թող թէ առ այն Արեւոց. որ աստուածանման է, և իշխանութիւն ունի ՚ի վերայ ամենայն մարդոյ սպանանել և կեցուցանել։ Արդ զԻշխանականն Հռովմա և զարժանին բաղում մահուց՝ զոր բաս նորա չար գործոյն պաշտպանել մեծ փառացն արքայից արքային՝ և ՚ի ձեռս մեր. զոր և մեք թէպէտ և

խնայել կամեցաւ և ապրեցուցանել:
ածոյծ իւր մահապարտութենէ զոր-
ծոյն ողորմեցաւ զայլն՝ չետուն ըն-
ձել նմա արքունի թագաւորութեան, այլ
ձող և կամ անդադան կերպուանեն
նաւ. քանզի 'ինքն և 'ի հզօր իշխա-
նէ ոչ փախուցեալ՝ հայրն կարէ
զանձն թաքուցանել. Թող թէ փա-
խուցեալն յաստուածոյն՝ ուր կարէ
թաքչել և ապրել: Արդ և դու ըն-
կեր նորին չար գործովք մահապար-
տութեանց՝ ոչ ինչ կարես զա-
նել նորա փրկութեան անձինդ և
ապրել. բայց թէ ապաւինեալ 'ի
կամս՝ պաղատանօք երկիւղ արտա-
սուաց, և նոցա բարեխօսութեամբ
գտանիցես թողութիւն 'ի թագա-
ւորէն և կեցցես. և մեք խնայելով
'ի քեզ՝ առաքեմք զայսպիսի խրատ քեզ,
զի կամիմք զկեանս քո և ոչ մե-
ռանել: Ի սոյն միտս յօժարեցու-
ցեալ զորդեակս բազում անգամ պատա-
գամաւորօք և թղթովք. եւ երբեք և
յորժամ յետ իւրն աս ... Պարսից
ընել 'ի բանակի անօրէն իշխանն
ընձի Պարսկաց, 'ի վերայ երանելի

Արեւմոյն սեպհին Յովսեփայ, երբ զչարչարանս և զնախանձոտ եղբարցն և ոչ զի ողորմելով տայրեացի, այլ զի ողորմութեամբ մեացի վտանգն։

Ես լուեալ զայս ամենայն բանս երանելոյն Յովսեփայ՝ ՚ի Միհրանայ և յայլ ամենայն առաքելոյն Պօղոսի. Ծանուցեալ զխաւարն և զխորհուրդս զամենայն զեղբարց՝ նոյն իւրոյ Դղե-չանի, պատասխանի տուեալ ա-սաց. թէ Զժամանակաւոր զմարմնոյ կեանս թէ վաճառէր ոք և հատանէր ինձ գնել և կեալ. յաղագս ցաւոյ մարմնոյ և սիրոյ կենդանութեան, այլ արդեօք զամենայն ինչ լուա աղքա-տութեան խմոյ զիւաւ և գնել. բայց զյաւիտենից պատուհասն և զան-չէջ զգեհենին տանջանացն գնել ըստ կարասւոյ՝ յոյժ անմտութիւն է. մնացեալն զի անցաւոր է նշանս վաճառուն. քանզի ոչ ոք գիտէ ըղ կեանքն իւր՝ զշնորհին և զժամանակն ՚ի դուռս. փութով գնեալ խնդրեցէ, և յորդորեն ՚ի վաղվին վախճանեալ յաւիտենից ՚ի խաւարն արտաքին. Այլ զայս ՚ի խաւարն արտաքին կարապետեան վա-սխն սագանեցի և կարապետեան վա-

ձուա. Թէ ուրացեալ էր իմ. ընդէ՞ր պահեմ զձեզ զդա վասն կերոյ. այլ վաղ իսկ առնուի հանդերձելոյ փառօք և Աստուծոյ պատուովք. այլ զայս ընծայեցի յորում եմս, և զայն համարեալ լոկ պատուականն, տալ. ուրախ եմ և խնդամ վախճանել քրիստոնէութեամբ, քան թէ զհաւուր հողարս ամաց կեալ ուրացութեամբ. և յաւիտենից անվախճան պատուհասին ընկնել ժառանգաւոր:

Եւ լուեալ զայսպիսի բանս անօրէն դատաւորացն 'ի սրբոյն Յազդոյ. որով կարել զգլուխ երանելւոյն հրամայեցին. մերձ 'ի տեղի նոր մատրանն տապրեղանմանն նահատակին սրբոյն Գրիգորի, 'ի գեօղն որ կոչի Բագաւան, 'ի նահանգին Բագրեւանդայ, 'ի լանջակողման լերինն՝ որ անուանի Նպատ, մօտ 'ի սուրբ տեղի մատրանն՝ որպէս երկու քարընկեցօք: Եւ կատարեցաւ սրբոյ սխրանի առաջնին Յազդոյ զընթացս նահատակութեան իւրոյ. յամսեանն հոռի, որ օր վեշտասան էր ամսոյն, և անմիջապէս նշխարք

Նորա եղած անձէն 'ի սուրբ մա-
րտանն Գրիգորի։

ՀԷ. Եւ զօրավարն Հայոց Վա-
հան Մամիկոնեան հաւանեալ գայր հա-
տանէր յԱրտաշատ քաղաք, և կա-
տարեալ զուխտ պատարագաց 'ի
Վաղարշապատ քաղաքին, համ-
գերձ ընդ իւր ուխտապահ նախա-
րարացն և այլ զօրացն Հայոց՝ 'ի տանն
Աստուծոյ և 'ի վկայարանս նահա-
տակեալ կուսանացն, զուխտս պա-
տարագաց և պատուիրական նուէրս
ընծայիցն իւր. և նախ հոգացեալ
զազգատանց դարմանս, այլ և ծա-
ցնծութեամբ ուրախանային և խն-
դրանօք փառաւորելով զԱստուած։
Եւ չուեալք անտի երթեալք հանգ-
չէին 'ի բնակեան ամառանին Հայոց 'ի
Դւինի, մինչ զաւուրս ցրտաշունչ
ձմերայնոյն սառնամանեացն անցու-
ցանելին։

Եւ մինչդեռ կամէին հանգչել ա-
սակաւ մի և ոչի ամնուալ յաղթա-
ութենէն, զայսն յանկարծակի 'ի
կողմանց Վրաց ասէր զի ազդեցին
և խնդրաշուքն. խառնելով րան-

տուտս և տեսիլս խորհրդեան, զոր ոչ էր տեսեալ, ՚ի կործանումն և յերկրպագութիւն զօրաց նորին՝ առ զօրավարին Հայոց Վահանայ յաղթանակին. և ասէին ցամենեեան. Թէ Ողջ են և կենդանի որդան չէք տապեան Սահակ և քաջ սեպուհն Մամիկոնեան Վասակ. և ըղձեզ յղեցին առ ձեզ. Թէ ՚ի փախչելն ձեր ՚ի կառույն Վրաց՝ մնացաք մեք ՚ի կուտակեալն, խոցեալք կարեվէրք. և ըստ Աստուծոյ ազդեցութեանն՝ ՚ի առատութենէ և ՚ի կարեւոր վիրացն զոր ունէաք ՚ի մարմինս մերում. մերթ ՚ի սող և մերթ ՚ի յանձին քարշութեամբ հասար առ միմեանս, և հովուեալ անկայր ՚ի խիստ թաւուտ թաւսի[1] գմբկաց. և կացեալ ՚ի վերայ մեր ըստ Աստուծոյ ցուցակութեանն առն միոյ քահանայի հովուի ՚ի տեղացն անապատէ, և ՚ի նմին ժամու բարձեալ ՚ի մէջ գմի մի ըստ անձին՝ տարաւ հեռի որպէս պարս-

1. Այլ Օր. տեղի.

կաւ մեծով հրամանատարութեամբ. չէ ես
գիտակցով թէ ով որ իշխէ և կամ
յորմէ գաւառէ, այլ ըստ աւան-
դութեան իւրոյ՝ երբև զայս յա-
ղագս Աստուծոյ մկրտութեան՝ առ-
ընչութեանն զմեզ կամեցեալ, և
կամ զիւղեալս վախճանն՝ ամփո-
փեալ զոսկերս մեր յօգուտ հոգւոյ
իւրոյ ամենեցեալ. և արդ որպէս
յանկարծակի ամբի հեռացուցեալ
զմեզ ՚ի ամենայնքն ամն՝ և ըմբռ ան-
հոգացեալ։ Սրբեալ այնուհետեւ ՚ի
վանականն իւր, բերեր մեզ կերա-
կուր ինչ զանազանաց և ջուր, ա-
ծեալ ընդ իւր և մանուկ մի մեւ
ևս այլ, և մատուցեալ մեզ աղաչէր
ճաշակել. և մեր ընկալեալ ըստ
կարգի զկերակուրն ՚ի ձեռանէ որդ-
բոյն ջամբելով զօրացուք սակաւ մի։
Եւ նորա զիտացեալ թէ սակաւ մի
բերեալ ոգի՝ բացայք զայս, սկսաւ
նա այնուհետեւ հարցանել զմեզ՝ թէ
ուստի էք և կամ յորմէ գաւառէ.
րանեցի ձեռ ձեր և կերպարանս ա-
զատ կարծեցուցանէ զձեզ։ Եւ մեր
զապաքինութիւն զառն ամենեւ։

զատոյց իւր ինձ պատմեալ ասացող ծանօ զինէն՝ յանձուանէ. և ծնիր Ը-ւեալ եմ փառս Աստուծոյ. և Թո-ղեալ առ մեզ զմանուկն զծնեալ ՚ի մեզ՝ ՚ի վանականուն իւր. Եւ ՚ի մի-ասմն եմ զինքբին ածեալ զգրաս-ձիս եւ այլ մանկանցն՝ հանէին զմեզ ՚ի գրաստն, և օժանդակելով մեզ ե-րկեան աանէին յանապատն՝ ուր Թերևանք բնակեալ էին. և Թաղու-ցեալ զմեզ առ իւր ասուրս բա-զումս. բժշկեալ ողջացոյց զօրու-Թեամբն Աստուծոյ: Եւ որպէս ա-վիրութիւն է հակառակորդ զինին ընչել յակամնջս ամանց աստուածա-սիրաց մարդոց՝ որոյ զմեզ սպանեալ էն անձանձրոյԹ, և կամին սպանա-նել. և անձանց փառս դասնել ՚ի ՚ի Պարսկաց և սպառսուս։ Եւ առաջ մանկանց ընդ բազում անապատս ակեղծ և ընդ բազում խորաձորս քարանձաւաց շրջեցուցանէ զմեզ ՚ի ծածուկ. բայց ամէն այդր առ մեզ երկինչի գուցէ. ասէ. գնեն աշխար զինում՝ պատանիցէ զմեզ և սպանա-նիցէ։ Բայց արդ փութացարուք

տարածանելով այդր զօրն սաստիկ և
զօրացուցանէր հաստատութիւն, և ասել
զինչ առ ձեզ. որպէս զի հասանայ
առ ձեզ՝ ընդոյր ՚ի միտսն վերծանել
ձերդ հաստատոյն, Ամենապատուութեան.
Եւ ընդ նմին զօրավարի սատանա-
յականն խօսս արանց անմտոց, իւ-
րոյն հաստատեցելոյ ասելն. Թէ Արդ
փութեալ եկեալ ասեն. զի յորժամ
նոքա աղօթանք ՚ի Հայս գան, և Պաղ-
ատեցաք զայն ըսեն՝ թէ արդարև նոքա
ազգ են. խաբարարքն ամենայն զօրու-
թիւնք նոցա և ըմբռնեն: Այլ մանա-
ւանդ յորժամ յանկանէին կանանց
եւ և հասս բանն արանցն իւրեանց, և
ընդունեն թէ ազգ են. – քանզի և զնոսա
անդրադ ՚ի գիշերի զաւակն և զինչ
խօսէին նշանօսւ գիտացուցին որքն
և հաստատել ասելին. – զամենայն
այնուհետև զօր կանանցն ՚ի տան
և ՚ի գիշերի, բան ասացեալ և անձին
աստա յիմութեան կանանց. այլ
զգուշեսին զակաւելից իւրեանց և զօր
զանկանոս, զգայնակս նոցա և զօ-
րավարս. փութալ ձեւակել հասանել
փոխվարակի և անել զնոսա.

Եւ զայս ամենայն բանս գիտա-
ցեալ էր արանցն եկելոց ՚ի Վրաց, և
զխաբս և զչարամտութիւնս բազում
արանցն ՚ի Հայ մարդկանէ, եւ ա-
ռաւել զանզգուութիւն կանանց և
զնենգս և զանժուժկալութիւն, որ
նման բոզից առաջնորդեն ՚ի խորհուրդս
նոցա, և ոչ ոք զօրէր ցածուցանել.
լուեալ ամենիմաստ և զգայուն մը-
տաց մամիկոնեանն Վահանայ զօրա-
վարին Հայոց, ասէր. Այդ բանք
և խորհուրդք՝ արանց վատախոր-
հրդաց են, և որք չարաչար են ի-
մաստիւք: Քանզի գիտացեալ զեկս
պարսիկ գումարտակի զօրմանի [1]
յերկիրս Հայոց, խորհեալ խմացան
զայլ՝ թէ ժամանակել կարեւորք և ապա-
տակամբ զժողովուածս զօրացն Հայոց՝
որ յաստանին էին, և այսր և անդր
ցրուեալ. ապա թէ կարի անկա-
դուանց գայ ՚ի Պարսից, թէպէտ և
ձերբակալ արարեալ՝ կորուսանեն
զնոսա: Այլ թէ ընդդէմ ամենից
բանիցս խմ ոչ թուին, եւ աշխար.

1. Ցոր. զօրանան ՚ի ծրիէ:

[illegible] ուխտանենգացն յոր-
[illegible] Հայոց՝ զերծեալ [illegible]
[illegible] ի Վիրս, և Թէ [illegible]
[illegible] Վահան Մամիկոնեան ընդ
[illegible] նախարարացն և [illegible] այր-
[illegible] ի [illegible]. յորոց վերայ
[illegible] [illegible] այլազգի [illegible] թագ-
աւորութեանն. Թէպէտ և եղեալ [illegible]
[illegible] ի մէջ՝ չկարէին տանել
[illegible] այլազգի թագաւորութեանն
[illegible]. այլ եկեղեցեացն և քր-
իստոնէից [illegible] [illegible] զնո-
ա՝ [illegible] ընդ [illegible] [illegible].
և [illegible] [illegible] ի [illegible] գիրս
[illegible] [illegible]թեան, և զա-
[illegible] [illegible] ի Թագա-
ւորն, և [illegible] [illegible] [illegible]
գն [illegible]թեան յայսմանէ. Ա-
[illegible] [illegible] [illegible] Հայաստա-
նեայց և այլ [illegible] որ ընդ
նմայն էին, [illegible] և [illegible]
[illegible]. և [illegible] ի [illegible] գիրս
ի վերայ [illegible] Հայոց Վահա-
նայ Մամիկոնենից, և [illegible] որ ընդ
նմայն էին ի [illegible]. Ա [illegible]
[illegible] ի [illegible] [illegible]. յորժամ

Հաղորդութեամբ զնմանեան ըստ օրի-
նի գործոյ պատարագողին. և կար-
գեալ զաւագանն՝ 'ի մէջոց մայրայն.
որում Խաչաբերութեան ասեն. ան-
ցուցանէր 'ի վերայ գաւառականացն.
մինչև 'ի ընծայեցուցին՝ զոր Զօլենն
եղեն.

Եւ անկեալ ապաշխարութեամբ Հա-
յոց Վասակայ զպաշտօն ուրացու-
թեան ըստ Պարսից. և այլ նա-
խարարացն Հայոց՝ որ ընդ նմա էին.
և այլ ամենայն աշխարհին Հայոց.
Թէպէտ և զանձնդրգիքնակայ չափա-
ւորութիւն իւրեանց զխաւսին. ան-
տանելով ծածկեցեալ զնշան Պար-
սից զանձանչն զայրան աշխարհական.
այլ ամենայն և ոչ կարէ զօրինա-
բեալս փոխելու փառթայսն. այլ
ըստ բաւականին զօրան իւրեանց
բամբասելով 'ի մի մի և յերկուս նախ-
արարս՝ յարձակելոց 'ի վերայ. Եւ
անկեալ զօրհնաբանութեան մասն 'ի
զնդեն Պարսից՝ բազում արար ըն-
դհուպ զհանգուեալ յերկնից նորա-
նեքն. և իւրեանց զարձուցեալ զն-
բաւանակս երկիւղացն՝ զնսյքն 'ի

րոյ գաղթարար։ Վասն զի և քաղա-
ցոյ փախստական հզօրին՝ տատանին
ն եկեղեցւոյ զաւակին առ մեծաման-
մն զօրն Բիւզանդացն գնդին. որ և
ընդ առ յայսր երեկեցաւ քաղաքաց,
և հռչակեալ ասաց զհամ և զօրութե-
ամն. Համբուրեալ առաւել էր զան-
դէն[1]. որ և զենաց քաղաքացոյն՝
համարի իշխանն Ասիանոց Պոր-
ցոյն։

Իսկ անդէն 'ի ակնկալն որք ըն-
տրեն հաւատոյ յաղթութեանն
ըստ ամենայն և հաւաստակեցան՝
եկեալ որք 'ի նախարարացն Հա-
յոց հաստատուն լուսաւոր, և զօրա-
ցեալ զօրաց ցուցեալ, երանե-
լի Սոփի 'ի առաջին Դիոնիսիոսի,
և երանելի Գրիգոր 'ի առաջին Սա-
հականայ, եկեալ ըմբռնեալ 'ի վե-
րոյ տեսութե որոյ՝ արտաքսեցան։
Եւ քաղաքայ խոստովան և փախստե
ըստ Պարսից[2]։ Եւ զաւակք Հայոց.

1. Ասացեալ յորդորակիցն։
2. Ասացեալ ամբարիշտ զնի առա առաւե-
լոյ։

բաղկան Հայոց առ Յոհան ընկե-
ցեալ 'ի ձեռն. Թողեմ կեռամանս.
Վասն զի այնպէս ձեռով հասարակցն
ապօրինի առաջնորդութեանն զիշխա-
նութիւն 'ի վերայ Հայոց. զի և ոչ
աւուրց վասն յառաջ ժամանեցին
խոյս տալ 'ի գաղտնի և անձին հո-
գալ. և ոչ իշխեն կաթուղիկոսն Յո-
հան. այլ անձնաւորք զթուղթսն
գրեցին Պերոզայ առաջնեալ խնա-
յեաց յասպարեզս համն իւր. և ա-
նեալ այն զհայրն առաջն' նզոց խա-
ղաղութեանց ժողովրդեան իւրում
և ազգախառնեցոյց.

Եւ 'ի նոյն աւուր, յետ վճարե-
լոյ գործոյ պատերազմին, զայր հա-
սանէր առաջուստ մանկանցն Սա-
րեղ հանդերձ այրուձիւքն որ էին
ընդ նմա. և կրկին այնքան ժամանելոյ
յանդիման[1] գործոյ պատերազմին
պիտոյից. դարձեալ ընդ այլ փո-
խարինեն զնոյն 'ի բաց.

ԺԹ. Եւ զրուցեալ այսր և անդր
գործն Հայոց խարդախակցութեան

1. Յոր. յանդիման.

ի գնալ զօրավարն Հայոց Վահան
Մամիկոնեան [illegible] և նախարարքն
[illegible]՝ որք ընդ նմա էին, հանդերձ
[illegible] [illegible] [illegible] և
[illegible] [illegible] [illegible] եր-
[illegible] [illegible], [illegible]
[illegible] [illegible] վայր մի [illegible]
[illegible] [illegible] [illegible]. ս-
[illegible] [illegible] վայր մի,
[illegible] և [illegible] [illegible] [illegible]
ի [illegible] [illegible] և [illegible] փրկու-
թեան [illegible]. Զօրոց [illegible] [illegible]-
[illegible] [illegible] [illegible] Հայա-
[illegible]. [illegible] [illegible] [illegible]-
[illegible] [illegible] հանդերձ. և [illegible]
[illegible] Հայոց ընդ [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
և [illegible]. և [illegible] [illegible]-
[illegible] [illegible] [illegible] [illegible]-
[illegible] [illegible], [illegible] [illegible],
[illegible] [illegible] [illegible] [illegible]-
միկոնեանն Վահան, և [illegible] [illegible]-
[illegible], և [illegible] [illegible]-
էր.

Եւ երթեալ [illegible]՝ բանակէր
նա ի գեօղն, որում անուն էր
[illegible] [illegible], և [illegible] Վար-
[illegible]. և [illegible] [illegible] [illegible].

կոյ մտածմանէն և այլ ամենայն 'ի նմա-
խորհրդոյն՝ որք ընդ նմայն էին՝ ոչ
դատանէլով. զամենայն ոչ են զօրէ
զհրապարակութեանն. յաղագս ոչ
խորհրդեալ խնդրոյն՝ որում հաստա-
տեցուցանէին և վճարեցաւ. Առա-
ջնոյ վասն կանոնին Աստուածաբա-
նոյն. Թէ որպէս նոքա կանոնին
են. ընդդիմացեալ աստուածային
ընդ մտաւ իւր՝ խորհրդով սոցաւ,
թէ որք նոցա հաստատ կարեն որ-
ուլ և ըմբռնեն զ՚իմանալն. զանձն
նոքա են նոքա սիրտ, և հաստատա-
պես զմանամունսն մտաւ թերեն. և թէ
ըմբռնեալ նոքա 'ի նմանէ ըստ թէ զամ
մ. և նա միայն մեզ աստեղ այն
որպէս. կամ նուանեալ հաղորդեցի
մեզ՝ որպէս և կամեցի. և կամ փա-
խուցեալ յատուր երկնի՝ կորիցի
միայն աստանէն. Բայց զհանդերձ
նոքա երկուց Աստուածաբանութեան,
հաստատելք ըստ որքնոյն զգիտա-
նեաց. որպէս լուսաւ էր հաստատուա-
պես. պատճառ սրբութեան և ամե-
նայն զգուշութեան.

Եւ թէպէտ ընդունեալ սԱստղաթէանէր

'ի [illegible] [illegible], և [illegible] [illegible] 'ի [illegible]' որ [illegible] [illegible], 'ի [illegible] [illegible]' [illegible] [illegible] [illegible] [illegible]. Եւ [illegible] [illegible] որ [illegible]. [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible], և [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible]. և [illegible] 'ի [illegible] [illegible]' [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible].

Բ. Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible]. Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

[illegible] գոլով. որոց հետ լինել Թագաւորին Վրաստանեայ և [illegible] առնել՝ առ Հոռոմոց [illegible] գոյին. Վաղվաղակի առ նա և այլք ևս՝ որք ընդ [illegible] [illegible] [illegible] էին. Եւ [illegible] Թագաւորութեան [illegible] [illegible]. և [illegible] գոլ և [illegible] և [illegible] [illegible]. և այլոց [illegible] [illegible] ի [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] Վրաց՝ [illegible] [illegible]. Եւ գոյն [illegible] Թագաւորին Վրաստանեայ. [illegible] [illegible] առնել՝ [illegible] [illegible] և [illegible] առ Հոռոմոց [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible]. [illegible] [illegible] [illegible] Վրաց՝ ի [illegible] [illegible] [illegible] [illegible] առ [illegible] [illegible].

Իսկ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. զոր [illegible] [illegible], [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible]

[illegible] ըստ որդւոցն [illegible] ընծայ՝ [illegible]։ Վասնզի [illegible] նոյն իսկ [illegible] ամենայն [illegible] հանդերձա- [illegible]։ Իսկ [illegible] մեր [illegible] եթ [illegible] ըստ նոցա՝ թէ մեք [illegible] եմք։ ապա զոր ինչ [illegible] նոցա՝ ընդ և [illegible]։ Վասնզի ամենայն [illegible] գիտելով [illegible] և [illegible] որ [illegible] մեզ [illegible] եմ. զի [illegible] ըստ [illegible] նոցա որ [illegible]։ ապա թէ այլ ինչ ըստ [illegible] մեր. 'ի [illegible] իսկ և [illegible]։ Թող 'ի մեղաց և 'ի [illegible]՝ ըստ [illegible] որդւոցն. [illegible] 'ի [illegible]. [illegible]։ Վասնզի և [illegible] իսկ [illegible] որ [illegible] 'ի [illegible] գիտելով [illegible] արդարութեան [illegible] երկրպագութեան, այլ [illegible] իսկ [illegible] իսկ [illegible] որդւոց՝ ան- [illegible] էր նոցա ամենայն իրաց. և [illegible] արդարութեան, և [illegible] ամենայն 'ի [illegible] և 'ի [illegible]։ Որ [illegible]

[illegible] խորհրդութիւնք. զայս և [illegible] յաւիտեան.

Եւ ըստ [illegible] Նարեկացւոյ. Թէ [illegible]

[illegible]

[illegible] և [illegible] և [illegible]. Թէ [illegible] [illegible] և ոչ վասն [illegible] և [illegible]. որ մեզ [illegible] [illegible] և [illegible]. [illegible] [illegible] և [illegible]. Մեզ՝ [illegible] [illegible] և [illegible] և [illegible] [illegible] և [illegible]. [illegible] եթէ ոչ [illegible]. եթէ [illegible] և [illegible] և [illegible] որ 'ի [illegible] է՝ չէ [illegible] [illegible]

Վահան Մամիկոնեան երկրայր ընդ ճողոպր արձակեալ ծառայն Վարդայ. և զամենայն զօրաւորսն Պարսից զինք նորա երկրայն անհնազանդութեանն. Եւ Մուշեղ 'ի ազգէն Մամիկոնէից և Ներսեհ հազարապետն ելին նի րովեալ ընդ ճողոպրեալ հեծելոց ծառան. մեծագնայք առ ժողովն ժամանն 'ի զօրավարսն Հայոց Վահանայ Մամիկոնենէ. առաքեն զօրավար երկրայն խառնեցայք. և ծածկեալ 'ի դեղ մի Վարդայ' որում անուն էր Աբութի. և հանեալ 'ի [illegible] մի ո մնացեալ էր 'ի դեղ մի. և կոտորեցին ընդ [illegible] առ [illegible] մի հանգչել. որք և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. Եւ [illegible] [illegible] Պարսկերն' թէ ոչ և [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible]. թէ ընդէր [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible].

Եւ [illegible] [illegible], որ էր 'ի [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] 'ի Պար

ձեր զօրացն՝ զի կամիք տպաւորել զայս մի կարծեցէք 'ի մէնակացն. և [illegible] [illegible] [illegible] [illegible] խոստմունս 'ի տպաւորելն. և ան- ձանց զայն Խոսրովայ [illegible] հանապազական Ներսէսի. զայրա- ցեալ ընդ անուանսն մեծամեծաց Սա- հակի և ընդ կաթողիկոսացն Ներ- սէսի՝ ասէ¹ [illegible]. Ո՞չ [illegible] [illegible] այլ [illegible]. Թէ մնալի 'ի Պարսկէն. 'ի մէնջ պա- հանջէ [illegible] Աստուած. Եւ [illegible] [illegible] Խոսրովն 'ի ձեռաց Պարսկին. [illegible] 'ի [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի տպաւորելն. Եւ [illegible] ընդ [illegible] Խոսրովայ [illegible] [illegible] Սահակայ և կաթողիկոսացն [illegible] Ներ- սէսի. և ընդ [illegible] [illegible] ընդ Խոսրովայ՝ [illegible] [illegible] [illegible]. [illegible] և [illegible] [illegible] [illegible]. Թէ չէն [illegible] [illegible]. [illegible] [illegible] 'ի ձեռաց Պարսկացն ա-

1. Այս. [illegible] [illegible].

կալ տարածեալ որ ընդ նոսա էին. և
զբազմաց երախտաւորութեանցն Ա-
ստուծոյ՝ բարեգործութեանց ձեռագործ
՚ի անկողնոյն հանգեաւ, և թաղեցին զնա.
խնդրակատար արարեալ՝ զօրինակա-
նէին ընդ կրօնաւորն ամենայն: Եւ էր
Թիւ ամաց ՚ի անկողնոյն նախկա-
սան և երկուց ամաց: Եւ ընդ
զօրականն յաղթութեան զօրն զօ-
րավարքն Հայոց Վաչէոյ մանկա-
նէր. նա փառս Աստուծոյ. որ և
տանց նորա կարգավորեաց խոր-
հուրդն Աստուած զզօրութիւն թշ-
նամեացն: Եւ ինքն դարձաւ ՚ի տու-
նեան Հայաստանեայց ընդ յաղթու-
թեամբ խոնարհեցուցանելով. և հաստատեալ
բանակն ՚ի գաւառն Արարատ-
եան. ՚ի տեղւոջն որ կոչի Սիւնիք. նա-
մեալ հանգուցեալ ամսոյ երկուսս:

28. Եւ զօրավարն Արշակայ Դե-
գեհանին փառաւորեցաւ ամբարտ
զզօրականն Պարսից ընդդէմ զնա-
պատճառս, ասելով. Թէ Աստուած Վաչէ-
նայ Մամիկոնէից փառք բանութեան
և զօրական և ամենայն աւերածն
Արեաց. և նա իւրոց և զօրաց

անձն խնամող ինչ եւ ոչ կարեմ. զի Բերիոյ գաւառին առաջնոյն ՚ի Դուռնի առնեմ փառաւորելով էր՝ նա մեզ ան- ուն իւր բարերարութեանն գործ ցու- ցանէր. բայց արդարեւ արդարոյն Թա- դէ և Աբգարու վասն որոյ մեզ այնպէս յանձնեցին. զի նորա էր այնպէս գրեցաւ՝ որպէս առաքեալն, և մեզ բաղձեալ մխիթարութեան եղեւ։ Եւ արդ ան- դր. այսպիսի առաջնոյ արարեր զինչ գործ գործեն այլն, և որ բան զոր նամակագրութեան ցուցանէ մեր և կամին։ Արդ՝ թէ ուսանիս եւ այ- լոց կարէ գտանել օրինակաւն, անձինք՝ զի նա առաւելով զմեզ զար- մացոյց և առաքինութեամբ. այլ և գտա- նելոյ իսկ մեզ անդէն անձկանաց եմ յառ։ Բայց փութամ և մի այր առն հանդիսա առանուլ. գտցէ թէ մեր նուաճմանց, և նա ամփոփեն զմեզ աշխատանօք՝ անձանցն սիրելեաց։ Եւ եթէ յետ մահն Թադէոսի զնա՝ ցուցանեմ մեզ յառաջուստ հնչեղ խնամս իւր զերդաստ. թէ որպիսի մխիթարեաց վասն կարգա- ցանեմ զնա և այլ ընդ նմանն են։

Եւ վասն զի ոչ էին գործք առնն

Դպրեանք մարդոյ հողոյ արժանի. այլ այսոն ալբեղծ որ կը ՚ի նմա՛ զա- ւանկը նմին զանձնե իւրովն. Թէ յետ նորա տաստր չար մահուանը աստ- ճեղոյ և ՚ի յաղթանդն՛ որք են ընդ մահմեսնանին Վահանայ. քանզի Թաղաւոր զանայ անձնիմբ զինի յԱստուծոյ իմանալոյն զօրքն. այնա- ջնան նման Սասունայ այր կանէ ապաքանելր ընդ. Եւ բանալ զօր- անձնոյն բանա զօրացուցին Պարսից Շապոհոյ՝ որ ասոյր զայլ անձին և որ զօրացն՝ որ ընդ նմայն էին. այլ փութով զինա անձն երկայր զօրա- մեռանել. և հասանել ՚ի անդէս ՚ բա- նակէր. կարծէր ՚ի անդրնն ապրել անձայոյս զեւսասութեն Թազէն:

Եւ զօրավարքն Հայոց Վահանայ մահմեսնեկի և իւր ևա զօրաւն որ ընդ նմա՛ զանձնա զայն զինէր հանդուրա- յաղթել քնով. և հասանենգացեալ զօրան ՚ի գետն Երիզայ. քանզի ա- մենոյն անձն երկիրցին. և կանան ըսէր զինուանն նորա. Երբ Թագա-

1. Թէպէտ զայնու անձն անդրէն:

ւորն որ կարգեցաւ իւր յԱստուծոյ ի վերայ երկրի. և ետուն Աստուած ընդ նմա էր յաջողմամբն ՚ի գործս՝ ուր և տայցէր զնմա իւր. Եւ առնուլ ընդ իւր զօրս զօրացն իւրոյ և զգե. նաւորսն զՄերեդաւոցեան, զայր նաւա. ւոր ՚ի վերայ զանկին ՚ի գլխերն. և պարտակեալ տրտմեցաւ Մերեդատոցն զանցն կառայն իւրեանց. և իւ. րեանց ըստ նմանութեան ամպա. ռարակ ընդարձակն՝ նմանմիջ առար. կութեամբ զզարմանս Պարսկայն ա. շարժեցին. Եւ խառնեցաւ ընդ մի. մեանս զամբոխին զօրացն՝ որ ՚ի զանկ. զն էին. այլ եւ առաւել իւրեանց զկրկեանս Պարսկաց առաւելութեան հա. րկաւ կատարելեն. և ըմբէր մայն բա. զդ և մայն զաւմս ՚ի բանակին անա. րենայն. Ետայց ՚ի Հայոց զօրքն Պա. րող մեծայն ամբոխ գործեցեան՝ հա. մեռագործութեամբ կատարեալ և մեծ ա. րաբեան ցուցեալ՝ խոցեցաւ. յա. րոյ վերայ և կատարելութեան այլ. ամբի յետ ամպաս ինչ առաւօրդ որ. մամբ եղեն ընդանմէ յԱստուծոյ.

2Դ. Եւ զօրավարն Հայոց Վա.

հան մանկանեան զօրանալ 'ի կո-
տորածս Թշնամեացն. Երթեալ
հանդիպէր զինուորեալ մասն 'ի գնդէ-
րոյն յՄեղին գեղջն. զոր Նախայա-
ռաջանէին 'ի գործ ածելեացն. մինչ
յառաւօտուն ծագել. և 'ի ծագել
լուսոյն՝ երթեալ բնակէր 'ի գեղջն
Նախայ. Եւ մինչ կռուեցեալ հանդ-
էլ առ փոքր մի զօրացն Հայոց Վա-
նանդայ մանկանցն՝ 'ի ծառայութեան
գնդերոյն աշխատութեանց. զորս 'ի
վերայ առնեալ ածանելին, և անձն հա-
նեալ կայր 'ի վերայ նոցա զօրա-
գլուխն Գարեգին Նաւասարդ. զայրա-
ցեալ առաջին ժամանակն երկու զը-
րան. Վասն զի առաւել յարն զարն-
ներն առաւելոց՝ այն գնդերոյն մեծագ
քաջութեան առաւել Թագեր նման և
հարկանել. որ եղեն խոնկ արգարել այն-
պես. այլ ոչ միայն նման առաջինկաց
ամենայն ընկերանէ. զոր առ ժամայն էր
անուանեցոյ և խորազա ընկերանելոց.
Եւ ամենայն զօրավարքն Հայոց Վա-
նանդայ մանկանցն զանազանարանունս
զինեցելոյն զօրաւորքն Պարսկաց
Նախանձոյ՝ ամենայն բարձրութեան

ցրուն ՚ի վերայ նոցա. Թէպէտ և ան-
դամրապատ տեսանէր զիւր զանձն ՚ի
ժամանն և կամ ՚ի նուաղս՝ տա տառա-
նաթի թշնամեաց զօրուն, սակայն
ընդդիմանէր և բնաւ իսկ ոչ. այլ հրա-
ման տանէր փութանակի կոչել
զզօրն իւր ևեթ. ձայն բարձեալ զո-
չէր սաստկանայր, ասելով. Թէ Մար-
դոյ հաստատեցելոյ միում յերկուց
վերջել անձնար է[1], և զիւրմանէ
երեքեան ամբարշտաց են և պա-
տասխան. այլ սակայն միայն յերկա-
րեան տառապել եա ամբ՚ ՚ի վեր է և
բարձրալի քան զմեան. և ոչ անձա-
մարդ և անխորհրդարդ զիւրմանէ.
որում և պատաշխեալ յերկնային.
և որ ցանկացողաց կեալ ժամանակաւ-
թեամբ և մեռանել յաւուրք. այլ
կեալն և մեռանելն մահն է պար-
ծանաց. և մեռանել ՚ի վերայ ուխտի
որոյ՝ միանգի է մարտիրոսութեան.
Արդ յաղթութեան մասանցն բա-
նում անդամ պայծառացուցեալ զԱստ-
Աստուած, և զաշ ներքս իսկ որ ա-

1. Գաղատ Թաւթ.

զօրավարքն Հայոց Վահանայ Մամի-
կոնէի. բանակեցաւ որդւոյն իւր էին
որ զօրացն ընդ նմա. այլ խորա-
մանկք զօրագլխացն՝ զօրաց նորա
ձեռն ետեն ի գետ և և պատուհանս. Եւ
մինչ գեա ձա կալաւ էր յորժամ-
նմին և զօրքն Պարսից ձանձրացեալք
կորզմամբ զայլն առաջնորդեալ 'ի
պատերազմ. հալածեցաւ անտանել զի
զանգն ամենայն Հայոց զօրավա-
րաց զէրեա յաղթեն երգմանն
ամենապատկե և 'ի խորտակեալ զօրա-
վարքն Հայոց Վահանայ Մամիկո-
նէի՝ երկթայլն փախստական անկեալ-
ցեալ. Եւ Շապոյ իբրև և յաղթա-
զօրացն Մանչէր 'ի ասհմն Մամի-
կոնէից և երկրին Կամսարականացն
որոց երանելեացն Արշարունեաց. Իս-
րեանց երկաքը կամ երկու զայլ-
կըն. և այլ Թաւամ որք՝ որք 'ի յա-
ղթանց և որ էին ևս 'ի Մամիկո-
նէից ամենեն. ընդ բնա որպէս թէ
զաւանմնեք կամ ձաւալեք են.
Նորա եւ անեակ զեւփրատեան ա-
մենայն գնդքն Հայոց առ հատուրակ
և զօրհնութեանց ամեն անն յղորդ.

[illegible]

[illegible]

կեղծեացն. յորոց և նորա բաղդաւոր
ւորին ՚ի Թողլացեալ ամենեցուն.
ցն։

Իսկ զօրավարքն Հայոց Վարդա-
նայ Մամիկոնենի հանդերձ իւրով
գործակցօքն զօրօք քաջութեան
ճշմարիտ Աստուծոյ զօրութեամբն,
կեղծոյք սպանանէին անհնարին որ-
դիս Թեւակից զօրացն Պարսից. և
թագաւորական զօրացն Ճապաչեյ և
հալէր ՚ի նոսա բաց ոչ կէինքն. Իսկ-
զի արծուի սրբեալ էր Աստուծոյ
զուն և զերկինս զօրավարքն Հայոց
Վարդանայ Մամիկոնենի ՚ի վերայ զօ-
րացն Պարսից. զի կարծէին Թէ ՚ի
հալածական բաց առն Մամիկոնենի
և յորսայն որ ընդ նմայն էին՝ մը-
տեալ ամենեցին ատանց վճարեցի. Իսկ
անյաղթական զօրացն ասպանդն որոց
ընդ զօրավարքն Հայոց Վարդանայ՝
յաղթեալ նահատակեցան ՚ի
ժամուն, երանելիքն Թաթուլ աստուա-
ծեան, և երանելիքն Ներսէհ յախտ-
գեան, և երանելիքն Արտակն անձրևն
հանգուցանէ, և երանելիքն Վերդաս-
դեան. որ էր աղջգու յոյն։

[illegible] Սիմեոնայ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] Սիմեոնայ. Եւ
[illegible] Սիմեոնայ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible]

Եւ [illegible]
[illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible] Վահանայ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible] Վահանայ [illegible]
[illegible]

զօրաց յարձակեալ՝ խորտակեաց
զամենայնն զնիզակս. և զասա-
[illegible] 'ի ձեռն [illegible] զօրաց
բազմութեան. [illegible]
[illegible]. խոկ այժմ որ-
պէս [illegible]
[illegible]
[illegible]: Այլ և [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]՝ [illegible] 'ի [illegible]
[illegible]՝ [illegible]
[illegible] Անտայոյ և Մա-
[illegible] և [illegible]. և [illegible] 'ի [illegible]
[illegible]
[illegible]. [illegible] և [illegible]
[illegible]՝ որ [illegible]՝ [illegible]
[illegible]: Այլ [illegible]
[illegible]
'ի [illegible]. և [illegible]
[illegible]: Վասն
զի և [illegible]՝ [illegible]
[illegible] և [illegible]՝
[illegible] և [illegible]: Եւ
[illegible]. և
[illegible] որ-

դեռ և զաւակ առնել, զոր ի հօ-
րոյ գործոյն: Այլ եւ զնախնին
գործոյն անհաղթելիութեան իւրոյ զնաւա-
ստեղծ յիշեմ, որ զորեմ ընդ իւր-
ձեւ թէ և կամ խնամոյ: զի Թեպէտ
և տեղիս առաջ եմ ժամանակն. ա-
հայն և որ երբեք յԱրգեայ շնոյ 'ի
զօրավարեայ: և կամ եւ արժան
ժամանակին և կամ յանձնել
զորս նախ 'ի պատերազմաց: և
Թէ սաստ արարեր որ 'ի մեծաց երկց
հայոցայ սպրեմանս արարեց յոր-
ժամեանն և զաղձայթեան զործեալ զործ'
զնոյն Բագն զերծեալ անձնաւ:

26. Եւ զայս առնեայն զմոգս ա-
ծեալ այսպես Շապհոյ. յաւեր վա-
զեան 'ի զաւառն Բասենոյ. և եկեալ
'ի զեղջն' զոր Աշխարհանքն կոչեն. և միա-
զեա առաքելութեան առանձին իւր-
հարցք զնա յերկինքն զօրավարութե
Հայոց Վահանայ Մամիկոնէի. և
եկեալ հասանէր յանկարծակի զնա-
ցան 'ի Գառնիս. ամենևին զոյն յա-
րուցեալ և ձամբահարի բազում ամ-
բայն. զոր զրեր առ Շապուհ 'ի Գառ-
նիս առաջարկերց. և Հայ' իւ բազում

ձեր աղօթականաց և մխիթարեաց, որք բանիւ առատին կատարածն Հեթ-մայրն գերմանացւոց էին։ Եւ ընկա-լեալ նորոգեալ զնամակսն, և հա-ռեալ ՚ի ձեռաց ծառոյ և կարևոր լա-լեաց. և զայնպիսի առհաւատ զրև-խան զողջունին Արևելից ծառա-յեալ ՚ի գրեալն. ՚ի մեծ արտասու-թեան աղաւթեան ընկղմեալ զօր-հասրեր. Եւ կացեալ ժամանակս ինչ անձնաւ՝ երեք թուլացեալ. ու-րեք բան կարէր հարցանել զայրն թղթաբեր. և ոչ անձին զգալ. Եւ զղջացեալ յետ բազում ժամուց որ-պէս յաղթութենէ և ՚ի թմբրու-թեանց. և կոչեցեալ զայրն առան-ձին՝ հարցանէր. թէ որպէս և կամ զիարդ աղաւաղութեան եհաս ողբալի վախճան և կործանումն Արևելից աշխարհին. և կամ ո՞ կորուսեալ զերծանել և երբ չհասանէր կատա-րածն զայնչափ անթիւ բազմու-թեան զօրացն քրիստոնէից. և կամ թէ զիարդ արդեօք մնաց աս-տուածանման սուրբն Պետրոս, և կամ որպիսի մահու։

Եւ զհայցմանն պատասխանիք ա-
ռաքելոյ ասելը. Թէ Դու հարցանէիցդ
պատշաճ է 'ի գլուխ է. որպէս ասե-
նոյն մարդ որ կամի լինել 'ի պա-
տասխանատուութեան գիտէ ախտալիցն և ըն-
ակղէնութիւնն. բայց Թէ կարի
ծանր է խոսել զնոսա բանս, և
առաւ զբայց զայնպիսի չար ողջոյ
'ի զերծմերոց փորձառելեացն. և մանա-
ւանդ յորժամ որ այնչափ Աստուած
և ընկնեն չէ պատասխան. բայց Թէքն
առատաատուածաշնորհ ուխտն Արեւոյ Գէ-
րաղ. և իբրև այնքան առն ծառայի՛
զատուածային ասել, փառս Թէ՛ մահ
է և կորուստ. Բայց փառն զի 'ի մա-
ռնա յաստուածայն չաստանեաց փառ
պատարագաւորն Երէ. ուխտն Արեւոյ և
բնակի աշխարհին, և պատասխան ոչ
որ Երէ այլ. բայց Թէքն ուխտն խո-
րամ ատեմին և Արեւոյ. ասել զան-
ձնայս և զբանակային կարգի է. և յեր-
կարգի ատենց ասելոյ. Նորա միա-
գին այդպէս խոկ էր 'ի Վերջանն Գէ-
րաղ. և զօրամարդով առաքելոյ յո-
մխանց կաղմառեւ կամեր խոսել 'ի
վերայ Հերեթիկոսին. խորհելով ա-

տանէին զԹոյն և ոչ զոր հարցանէր
'ի մարդկանէ՝ զորս ժամանակ և զանազա-
նանս. բայց զայս ևեթ գիտէր ամե-
նայն զնդին մարդ. եթէ ընդ Հեփ-
թաղին կամի կռուել: Նորեալ և սոր-
ապրեցեալ ամենայն մարդ՝ ակնա-
նէր ընդ վերով չերթալ զայլին Հեփ-
թաղ. և կամ զանազան ընդ ընդ-
թալ եթէ կամաւոր ընդդէմ Հեփթա-
ղի երթալ և կամ յայտնի երևել:
մերձեալ զօրն և զօրաշարութիւն՝ զոր
ամենայն ընդ աւերն Աղուանից և ընդ Պարս-
կիցն: Եւ յայտնի աղաղակէր ամե-
նայն բերան. եթէ մահապարտ եմք.
և արդարեւ արդարոյ զինչ արժանանալ
կամի. բայց եւս տային առաջ 'ի վե-
րայ եկեղեաց հրամայեցելոցն ապատանեալ.
քան եթէ արդ Հեփթաղին առաջ
հրապարակել զԱսորիս. որ զօրն միայն
զբուռն խաղաղէ զանձին և զԱսորեաց աշ-
խարհին դիմաւորեալ ասէին. Վասն բանս
և ամենայն ատելու՝ զրանն խօ-
սէին առ միմեանս հանդարտ. և
մանաւանդ սպարապետն Ասորեաց
Վաշհրամ. զոր և համարձակեցաւ
յաւեճանէք Պերոզի բարեգոյն տեղար

հասուցեալ. և հրապարակաւ բա-
րբառէր. և ձայն ոչ լսէր ամենք. և ոչ
գոյր և ոչ մեղէր բնաւ. զառաջին
Թշնամանս խաչատանջանացն իւրոց.
զոր եդին ամենայն և ամենայն Ա-
րեաց ՚ի Հեթեթայն. Դիմեալ ՚ի վե-
րայ աղեղանք բաղձանաց Թեամբ Արեաց
և Անտոնեայ՝ գնաց. որոյ Իբրև զմա-
հապարս ՚ի մահ. և ոչ Իբրև զդա-
տերաղմնդայ ՚ի կամակ ելեթայն.
Տայն զորդ առաքեալն անձն և
զայս եա. Թէ յորժամ մասն հասանց
ամեր՝ առաքեաց առ Պետրոս Հեթ-
Թայն. Թէ Քա ընդ Իս ասա և եթե-
մամբ՝ գրով և Թղթով. Թէ չհաւատամ
ընդ քեզ. և առաջնանս կարգեցաք.
զորաւս չեղեխեցաւ Թշնամութեամբ
անցանելով առ մեծամեծս. որոց մեղա-
զանխան և զնեղութեան պարագայամ.
Նդն՝ յորժամեն պարգևաց Իմ արժա-
նեցին զերեզ. և ոչ ազդեցէ. և ՚ի բաց
գործեր խաղաղութեամբ. և մի
մնասցեր. արդար Թէ ոչ լսեն բանից
Իմոց. որոց գիտեն զի կարասցեն
զեւզ և զամենայն զանգիտանան բաղ-
մաւԹեանց՝ յոր զաւ յաւաւցեալ եաւ.

Վասնզի էր եւ արդարութիւն ամե-
նայաջողութեն 'ի միտսն հաւատոյ ,
եւ զօր եւ անխռովագնացութեանն ու-
ղութիւն 'ի միտսն էր . եւ որդ զօ-
րս զկամս կարէր յաղթել : Եւ
ընթաց Արեաց զրահս Հեփթաղացն ,
ամենն ցկերպս . Թէ նա որդոր է ,
եւ մեք առա հաւատոյ . Եւ Պերոզի
առաջնորդեալ զզօրացեալ Արեաց ա-
ւագանոյն , պատասխանեն արքայ Հե-
պարտութեամբ Հեփթաղացն' եւ ա-
ռէ . Թէ Զօրս բազմութիւն զնզին
զօր զօրք անեամեք , կեռեալ ընդ
մեզ կռուիմ եւ կորուսանեմ , եւ կե-
ամե զնոզ անկեալցդ' ար զօրս լինի .
կրել առամ . ոչ 'ի ծովն եւ 'ի փոսն
զօր հասանն' ընդամ . Եւ ասա անկեալ-
յութեամն արասն ոչ խնամոյքն' Թէ
զխակամբ ծառայից խորոց ընդ է
զփան' զօր փորեալ 'ի կորուստ ան-
մեն խորոց եւ անկեալն Արեաց ար-
խարհին : Եւ հասեալք առ մի-
մեանս եւ հարեալք 'ի զինի . կարեւո-
րին անկեալն արգանդ խորանք եւ ար-
խարհաւ : Եւ զերծեալք 'ի կործան-
մանեն որք ասեան , եւ հասեալք 'ի

Վրթան՝ պատմագիրն ամենայնի զօ-
ամենայն անդր ըստ եկեաց պարապել. և
զամենայն որս ատամբ և զոյլ մար-
զինն որ 'ի Վրթանէն էր. փախու-
ցին յԱսորեստան. Դեսպան արա-
րին 'ի Վիրս առ Հողոբրատակիս. և
զեն այսր առ մեզ արձակեցին. փու-
թալ ժողովել զմեզ առ միմեանս. և
գումարել զզօրս. որով լինիցին 'ի
միջի և մեր անձինք և Արեաց աշ-
խարհն։

ԶԶ. Եւ ընտրեալ զօրս ամենայն
բանակ՝ Նարսեհայ 'ի գետափանին. պա-
տասխանի առնելով ասաց. Թէ իմ և
զդասուցս զոր այժմ զօր ընդ իս ու-
ղարկա, Թէպէտ և այդ ըստ հա-
րեաց չէր հասեալ. խնդրեաց պատ-
ճառս զերծանելոյ 'ի գործոյ յա-
րուոյն եկեղեց. Վասն զի այնպէս զօր-
հաւատացուցեալ ապաչխարաց և վատնե-
ղեալ աշխատանաց զմեզ ասպատակին
Վահան. որոյ խոր խոյ և արտաքոյ՝
լին արտոլ գօյոր մակածանելի մար-
կան՝ զօր մեր անեալ և ցրուեալ.
այլ Խորեն զաւազին քաջացն՝ զոր 'ի
միջոյն ատամնն և ընկեր. Վասնզի

Թող զայլ ժամանակաց գիրս և զորոնցն որ ընդ նմա են՝ յիշել զսուրբն և զամենօրհնութիւնն. զոր մի և կամ այլ առաջարկեալց որ անկանել է. այլ յառաջ քան զա-ւուրս ասան Թուով երեսուն ա-րանցն՝ ոչ միայն 'ի վերայ այսր բազ-մութեան որ այժմ աստ են և առ-աջնոյ՝ յորդորեալ կարգաւ. այլ առ երկու գնդաւ իշխանն Սիւնեաց Գրիգորիւ՝ խաղ զաւառացին այրուձիովք միով առեալ էր, և Վասակն զնոյն յան-գիմանս այն երեսուն աւուրցն յորդոր-եալ 'ի վերայ. և նմին աւուրց յա-րուցանել ժամու 'ի կողմանց երամ աշխարհացն. իսկ զոր առաջարկեցն և զայլ զամենեսեանն ընդ մերոյ և ընդ այլոց միաբան աղխից զօրացն. բառ նմին օրինակի այսր ամենայն զօրաց-զեալ բարբառութիւն զորոյն արկեալ վեր 'ի վայր զօրացն. առաջինն և զաջակողմեան զայրն զ'Վրդիկան. և այլ բաղաւոր կառուցեալ 'ի գնդեն. գնալով խորհրդոյ ամենայնքն՝ ընկեր-ցեալքն ընդ յանկարծ. Եւ արդ ոչ անմիաբանեալք և առաջնորդեալ հոգար

— [illegible] Գերմանի [illegible] զօրավիգն
[illegible] և [illegible] մեծ և [illegible]
[illegible] [illegible] Աւստրիոյ ՚ի [illegible]
թեան. [illegible] թէ այժմ [illegible]
այր. որպէս և [illegible] [illegible]
և այժմ [illegible] են [illegible]. և
[illegible] [illegible]՝ որ առ [illegible] են.
և [illegible] [illegible] [illegible]՝ որ ՚ի
[illegible] [illegible] են. և [illegible]
[illegible] [illegible] և մեր [illegible]. որպէս
մեծ [illegible] [illegible] [illegible].
[illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible]
Աւստրիոյ [illegible].

Եւ [illegible] զօրս [illegible]
Նապոլէոն [illegible] ընդ [illegible].
[illegible] [illegible] [illegible], և ըստ [illegible]
[illegible] որ ըստ [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] Գաղղիոյ. [illegible]
[illegible] [illegible] [illegible]
Նապոլէոն [illegible] ՚ի [illegible]. [illegible]
[illegible] [illegible] [illegible]՝ [illegible]
[illegible]. [illegible] [illegible]
[illegible] [illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible].
[illegible] [illegible]. Եւ [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]

[illegible]

[illegible] նաւաստացն փառաւոր[illegible] ի-
րեանց։ Զայս աւանդեաց և [illegible]
[illegible] խաւսեցաւ ընդ նմա. և
եղեւ [illegible]թեամբ. բազմա-
[illegible] ՚ի գլուխ Թագաւորու-
թեանն Պարսից։

ԻԸ. [illegible] ՚ի մէջ [illegible]
[illegible] Հայաստանեայց [illegible]
[illegible]թեանն [illegible]
[illegible] աւուր Թագաւորութեանն
Վաղարշու. իսկ [illegible] Թագա-
ւորին Վաղարշու և [illegible] [1]։ Գերող
[illegible] մեր եղբարք. որ-
[illegible]. [illegible] և
[illegible] և [illegible], և բա-
[illegible]
[illegible]թեանն [illegible] են յԱ-
րեաց Թագաւորութեանն, որք [illegible]
և ոչ [illegible] Ա-
րեաց [illegible]. Եւ նորա [illegible].
[illegible] Հայոց. որ և
[illegible] ՚ի մեր [illegible]թեանն ՚ի բաց
[illegible] են. և [illegible] որ [illegible]
՚ի բաց [illegible] ՚ի մէջ. ՚ի [illegible]

1. Եւր. [illegible]

[illegible] և [illegible]ութիւն նորա. Զե-
[illegible] յԱրշակայ [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible]. և թէ [illegible] [illegible] [illegible] և [illegible] Արշակայ [illegible]. [illegible] [illegible] [illegible] թէ և [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible]. Իսկ [illegible] Եռուանդ-Մեհրուժան՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible]. և թէ [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible]։

Ե. Թագաւորքն Վաղարշու [illegible] զՄեհրուժան-Եռուանդ [illegible] Հայոց. Թէ զինչ [illegible] [illegible] [illegible] Հայոց. և Վահա[illegible] զինչ [illegible] են և [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Արշակայ՝ [illegible] [1] [illegible]թիւն. Ե. Մեհրուժանայ [illegible] [illegible]. Թէ Արշակ [illegible]. [illegible] [illegible] Հայաստանեայ [illegible] [illegible] [illegible] Վահանայ [illegible]. և թէ Վահանայ [illegible] [illegible] [illegible]

1. [illegible] [illegible]

Եւ յաւելաւ զօրացեալ կարգեալ
քանզի Թագաւորին Վաղարշու՝ ի
Միհրանայ և Հայաստանեայց. և
այլ ամենայն Արեաց ասպարանացն,
մերում ամենեցեան զառաջեալսն ՚ի
Միհրանայ զամենայն. Թէ արդարև
որպէս են իսկ՝ նախնեացս առաջել լու.
սաւոր խնամածութեանց զօրացն.
Եւ փոխանակի և փոխեալ զնի.
սոր՝ զՄխիթարացն զայր հեղ և
մնայի և այխարհայն՝ բազում այ.
րինակի արամեք ՚ի Հայս աշխարհին.
Պատմէին նոքա ինքն իսկ Թագա.
ւորն. այլ եւ առաւել հայրապե.
տութեանց Հայաստանեայս և այլ
զգամն ասպարանին. Թէ Երթ ՚ի
Հայս, և որ ինչ որիշխանս և ե՛ ա.
մենայն բարեպաշտութեանց և սիրով
քաջ կատարն Վաղարշայ և նորան
ընկերականացն՝ նախանձոյ զորեարն
և Արեաց ծառայութեան ան.
Բայց զթուլ չէր նախ մաղձել ա.
րեղ զօրացն Աստուածայինս,
որ մեծ ՚ի Հայս իցեն, և զօրացն

1. Յոր. Իմ՝ նիէր զՄխիթարացն.

Հայոց՝ ոչ իշխեաց միաբանել ՚ի Հա-
յոց անդրէն. այլ դարձուցեալ ՚ի գա-
ւառն որ կոչէր Հեր. ՚ի գեղջն՝ ա-
րամ անուն էր Նշանարան. սատա-
րեաց նա պատերազմունս ընդ մա-
[illegible] Վաչէան [illegible] իշխ-
[illegible] գունդ. և զՄեհրուժանայ
[illegible]. որոյ [illegible] զհաւել
[illegible] գալոյն իւրոյ ՚ի Հայս. և
[illegible] հրամանաւ ամենայն ընդ ձեռ ՚ի
Թագաւորին Պարսից՝ հասանել
զՀնդ խաղաղութեամբ. և զամե-
նայն ասպարէզս՝ որ յԱթրո [illegible]
պատերազմ ամենայն ընդ ձեռ. որդ ա-
ռեր [illegible] և բռնաւորութ. և որդւոց է
ձեռ [illegible] և իշխանք. ընդ որդեացն որ
[illegible].

Եւ [illegible] Վաչէանց [illegible]
[illegible] պատերազմաւորս Նխորայ. և
[illegible] զօրս ամենայն [illegible]
[illegible] ՚ի [illegible], [illegible] ընդ
[illegible] զամենայն հաստատութիւն [illegible]
[illegible] գունդ՝ [illegible] և
[illegible] և զամենայն [illegible]. և

1. Յոր. ՅԿ։

հրամանօքն մահմետականաց Վռաց եկեղեցին 'ի Նեստորեայց՝ առեալ առաջի ամենեցուն զօրաւն Թագաւորին Վարդապետաց և զօրաւ ամենայն Արևելից աւագանւոյն. Եւ առաքեալ Առել մահմետականքն Վռացւոց ամենայն Հայաստանեայն մեծամեծաւ ըն դդեմ Նեստորեայց. առաջ յարագամանապետն Պարսից՝ որ կոչին ամենայն ծառայ պատուականին.

Եւ ժողովեալ 'ի կոչեցն ամենայն Հայաստանեայն առ մահմետականն Վռացան. և խորհեալ ժամս ընդ միմեանս զմտածելոց զօրէնս և զնենգութիւնսն. եկեալ և պատրաստեալ զՆեստորեայց յանձանձ. մինչ խորհել մահմետականն և առնել պատուականն թագին Նեստորեայց. Եւ մեք առաքեալ թուղթեան իւրեանց. և յայտնեցին կարեւորս և մահմետականս զորս առել զան միտս. բազում են բանք և կարեւորք. և չէ հնար զորս վճարել և կամ պատրաստել. բայց եթէ յանդիմանեալ խառնել ընդ նմա՝ որ Արևելից աշխարհն է. և ընդ մեզ՝ որ զօրանն առաջանան եք. Բայց եթէ բանս առնեմ մեզ. որ

թէ այս երից բանիցս պատասխանի
տանել ինձ՝ որպէս ես կամիմ և ա-
մենեքեան ազգս՝ որ աստէն կան են,
և կամք զայս երիս խնդիրս տալ-
մեզ գրով և կնքով Թագաւորին,
զամենայն զոր ինչ տայք՝ զպատանեկն
և զարժանն ամենեցն. և բանի մե-
րոյ բանկս որպէս և նախնեացն մեր
բռնանան. Քանզի ոչ իմ բանիցս՝ զոր
խօսիմս ես ընդ ձեզ այժմս, այլ նա-
յա ամենեցուն՝ աւագի և կրտսե-
րոյ. որ այժմ ձեր առաջի էք. և ոչ
եթէ այսօր ինչ խորհեալ կամ ի-
մացեալ և մեր զրանս զայս, այլ
յառաջ՝ յորժամ առաջ զանձինս ի
մահ, նախ զայս երիս ընտրութեան
խորհեալ եդաք այլ ամենայն առա-
ջի. Եթէ յանձն առցեն Պարսիկք
Թագաւորացանել մեզ զայս երիս իրս,
ծառայեսցուք նոցա որպէս զինեկ և
զհաւատարիմ ծառայս. և եթէ ոչ
հաւանին յանձն առնուլ և խառա-
նան, եղիցուք բառ աշխարհաց և կոր-
ցուք, և խնդութեամբ մեռցուք.
այլ Պարսկի առն երկիր ոչ պագ-
ցուք.

Եւ է մին յերկուց՝ հայր և առա-
ջին խնդիրս այս կարևոր և պիտա-
նի. եթէ գտանիցեմք և զմիտս որոնո-
ղաց ՚ի մեզ թողուք. և զհոգս այս
զոր մի՝ մեր ոչ առնեմք. և առնեմք յա-
ջողս մոլորութեան զաւակ և պատահ-
ըստայք. և զերախտապարտն յաշխար-
հիս Հայոց ՚ի բաց առնեմք՝ և զերե-
ւելւոյ թշնամեաց յաղթեցուք և յան-
պիտան մարդկանէ՝ որ ցոյժմ յի-
մեր՝ յաղթեսցուք մեզ ըստ այժմ առնե-
նել. և գիտնականաց մարդկան և
քահանայից զերծ և զգուշան
գիտնականութեան համարձակու-
թեան և անվրէպ ... պարզա-
ւոր և կատարելապէս բարի է. և ա-
ռաջին խնդիր մեր այդ է.

Եւ երկրորդ խնդիրն այս է. թէ
զմարդ ոչ կենդանարար ճանաչեմք.
այլ երանաւորք գիտել զբան և ըղ-
ձանութիւն. ընտրել զալիտանն և
զանպիտանն. խնամել զառողջութիւն և
զանառողջութիւն. առնել առ բաւական ըղ-
պատաստանս և զգոյշ և զգուշա-
նալն. արդ համարձակ և առ այժմ նա-
մարդել զմտան և զանպիտանն. ըմ-

րէն զխոստովանութեան և առնել զամ-
փոփոխմն, առնել ՚ի ձեռս զխնամատարութեան
և խորհրդոց առնել. և զանձինս
զանձկացուցանել, այլ և ՚ի հրապա-
րակս ևս հոլանել. Եւ յարժամ
այս առնիցին այսպիսի լինին, առն-
նոյն խոր Արևոյ [illegible] ամբող-
լինի և անմխուլ. առաջ ԷԹԷ զընդ-
գետն այլևս՝ որպես և գոյժամ՝ և ոչ
զյեղյան՝ և զօրձրն այդպես ընդդեմ
լինին. որպես և եղենց խոյ և ամ-
ափր.

Եւ երբորդ խնդիր մեր այս է. որ
ահրն է Աստուծոյ աշխարհին Թագա-
ւոր՝ կամիմք զի խոյն ակեցի խո-
րանս այսը. և խոյն ըմբռնել խորանս
ամեանցը. և խոյն զխառացն զմարդ
կու և զանձուն. և ոչ[1] այլոց ըմբռա-
նել խաղացն զղեկան. Այդպիսա ա-
րոյ ՍԷԹԷ առանց հայեցուածն և ոչ-
արդար լողումթեան. այլ յոլով
ասա խորոյն ձանձրոյն և հրամանաց
ընդունակսը. և ընսա այլ ընդ այլոց
լինի խնամած ամենայն. Եւ յոր-

1. Յոբ. ԼԸ. [illegible]

ժամ այս անձնոյն այսպէս էին. կործանելով անձնոյն վտանգի՝ և ծառայիցն կարծիքն. և ոչ կարէ կալ ազատութն և ՚ի ձեռս բնակելոյ անձրևոյ և հաստատունն. Բայց Թա. գաւորս՝ որ խորանք առաջին ազգն հայք և անձնաւորանձ ըստանութեանց լոկ և արդար բանիւ խօսք ընդ իւր ծառայս. կենդանացելով ծառայքն՝ յարգին վտանգելով. այլ յաւելեալ ՚ի վտանգին՝ որ քան զոր անձնա. ցանել ընծան զորոքն. այսպէս[1] ազատորդն չէին. և անդրն չթեղացելով այսպիսաստանաց հանդարտաց.

Արդ՝ եթէ զայդ այսպէս կարէք խոստանալ. գիտապէսելուն զորել և հիւրով հաստատելով առաջս ցեղ. ա. պա կոչեա և զանձս կամաւ և ընկեր բանիւք մերոց. և հրամանի Թագաւո. րին հաւանելով զոր ինչ առնէ. Արդա եթէ զայս երկու խնդիրս ոչ կարէք առնել մեզ. և գիտելք թէ չէ հնար. որ. պէս եղելով է մեզ մահ առաջի՝ պատա. րաստ եմք մեռանել, այլ ծառայել.

1. Յօր. այլպէս.

թիւն տանել Արեաց ատեան չկա-րեմ։ Եւ այլ բանք՝ որ ինչ են, թէ իմ լինի գալ՝ խնդրեն իսկ խօսիմ ընդ ձեզ. ապա թէ ոչ լինի դէպ գալ՝ ծառայէ բանն և իրքն։

Ղ. Եւ խօսեցեալ զայս ամենայն բանս մամիկոնեանն Վահանայ ընդ Նաղաչոյ խորհրդեան դպրի և ընդ Միհրն Վշնասպայ Յուարրեզդոյ՝ ուղարկեաց զնոսա. տարեալ և մամիկոնեանն Վահան ընդ պատա-գամաւորսն Նիխորայ և յիւր ուխ-տակցացն զԱռաչեայ արծրունի և զԱրշակ կամսարականն՝ զեղբայ-րն զԱրշաւրայ որդի, և զՎասա-կայր Հարբայէն[1], և զԱրտաւան ադ-բերբեցի և զՊառնակ 'ի Մարդպե-տական գնդէն։ Եւ հրամայեաց գումարեալ զնոսա մամիկոնեանն Վահանայ՝ արձակեաց խաղաղու-թեամբ առ Նիխոր։

Եւ երթեալ նոցա առ Նիխոր 'ի գաւառն 'ի Հեր, և անկեալ Նի-խորայ զՀայերն՝ որ շրջան առ նա

1. Յոր. Կարթայն։

և պատրաստեաց զօր յղել ի Վահա-
նայ. որպէս [illegible] սրբա-
նի. քանզի որպէս անձինք էն մար-
դիկն այն՝ զօրս բանի առաջս. Պե-
րոզն և Հեփթաղք կատարեալ են. և
[illegible] զօրութեամբ զայն [illegible]-
քն ՚ի Պերոզի զկնոյն խնդրեցոյ
են. նոյնպէս [illegible] և Վահանն
յամենայն իւր նոքա՝ զօր խորհե-
լոյ և զօրնեալ. զի ՚ի բարութենէ
ընդդէմ Պերոզի զօրնեաց. և
ոչ իսկ կամին. Եւ էս մինչև
յայսոր չէր մխիթարեալ ՚ի մեծ բեկ-
մանէն՝ որ եհաս Արեաց աշխարհին,
քանզի այդ [illegible] [illegible]
մխիթարեաց զնա այսօր. քանզի առա-
ջին [illegible] և զօրն [illegible]
որ Վահան յետ ձեռն [illegible]՝
Արեաց ՚ի ծառայութենէ [illegible].

Եւ խոստացեալ զայս այսպէս Նի-
խորայ [illegible] ամենայն [illegible]. և
լուեալ զայս [illegible] նախա-
րարացն Հայոց և այլ որոց՝ որ
եկեալ էին ՚ի Վահանայ [illegible]-
նէ. տային փառս Աստուծոյ. յո-
րոյ ձեռն էն [illegible], և որ-

արձակել ընդ պատսպարանութեամբ իւր-
ատ զՄամիկոնեանն Վահան. Սծա-
պատուիրեալ յանձնելոյ նոցա՝ վաղ-
վաղակի և անյապաղ առնել զՄամի-
կոնեանն Վահան. և հրամայեալ
էառ Նիխորոյ արձակել ափրոյն.
Եւ տեսեալ զայն աստուածապաշտ
իշխանացն, որք ՚ի միաբանու-
թեան Պարսկացն էին՝ յաղագսատ-
րացն եկեալ Հայք. թէ որպէս ՚ի
Նիխորոյ պատուեալք և մեծարե-
ցան ՚ի Պարսկացն, և իշխանք ար-
համարձակեալք են իւրեանց գանձիւքանն,
զարմանալք են անհնարին յերկիւղ կոր-
ծանելոյն: Եւ տեսեալ զայն ան-
աստուած նախարարացն Հայոց, և
այլոցն որ ընդ նոսա էին, ամեն ար-
ձեալ զօրացանելոյն միմեանց զենքանս
նոյա: Իսկ մի ամեն ՚ի յաւիտենակա-
նացն առն զինուո: Աղ էին ընդ ՚ի
բանիցն խաղալս ընդ մեզ ափրոյ Նի-
խորոյ՝ զենքս այգեգեն առեալ մեծա-
գին և շարժառուն անձամբ, և ընծա-
յել ՚ի զէնսնոյդ. Իսկ յորժամ ըն-
դարձեալ Պերոզայ և անասնիցեր
փառաւորեալ զՄամիկոնեանն Վա-

ժողով. որ և պատուաւորացն
Ներսիսի առնելով հաւանեցուցա-
նէին զնա երթալ։

ՂԸ. Եւ յաւուրս այնոսիկ ննջեաց զօրա-
վարն Հայոց Վասակայ Մամիկոնե-
նի ամենայն առաքինութեամբ զարդարեա-
լոյ հանդերձ. և այլ բազում և
խումբ զինուոր. որոց յաւուրս առա-
ջինս ննջեցելոյ ի Ներսիսի Մամիկո-
նեանն Վասակայ՝ կամաւ և զննա-
լեալ պարտս երթային առ նմա։ Եւ է-
հեալ Մամիկոնեանն Վասակ ՚ի գա-
ւառն որ կայր Արտաշ. ՚ի գեղջն որ
անուանեալ Եղնիք. պատարագէր անդ
Թէոդ և ամենայն զաւակն որ էին
ընդ նմա. և տեառնէր առ Ներսէս. և
զիւր էին առայր գիտել նմա։ Եւ ա-
ռեր ցՆերսէս Մամիկոնեանն Վասակ.
Արդ եթէ Թովի մեզ զոլ իմ և
տեառնել զմեզ. առաջ անել առ իս
պրա առաջս Արիս և յանձանձանոր
ամենայն. որ եկեալ կոյզըն առաջ առ
իմ որպէս. մինչև եկեալ էր առաջս
զմեզ. և խնդրեալ իմ և զոր ընդ
միաբանեալ՝ յուխտ ՚ի միաբանեալ զոր
ինչ ՚ի գեղջն Թամբ ամեղ տանել։ Եւ

[illegible], և [illegible] [illegible]-
թեանն ընդունէր: Եւ հրաման ար-
ձակ Նինուէայ զամենայն արս զօ-
րաւորս [illegible] մարզպանացն 'ի նմա ըստ
[illegible]: Նոյնպէս և [illegible] [illegible]-
[illegible] [illegible] 'ի նմա [illegible] [illegible]
[illegible]: Եւ [illegible] [illegible]-
[illegible] [illegible] Նինուէայ. և [illegible]
[illegible] [illegible] [illegible]՝ որ ընդ
մարզպանսն [illegible] էին՝ և այլ
[illegible] [illegible]. [illegible] [illegible]
Նինոս ընդ մարզպանսն [illegible]
և [illegible]:

[illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible] ընդ [illegible],
այլ [illegible] [illegible] [illegible] [illegible],
[illegible] [illegible] 'ի դրան և ընդ [illegible] [illegible]-
[illegible] մարզպանն 'ի Հայոց և 'ի Պարսից,
որ [illegible] և որ [illegible]
մարզպանն. այլ 'ի լաւ և 'ի [illegible]-
[illegible] և [illegible] [illegible], զոր [illegible]-
[illegible] [illegible] [illegible] 'ի [illegible]-
[illegible] [illegible] [illegible], զի
[illegible] [illegible] [illegible] [illegible]-
թեամբ, նոյնպէս և [illegible] [illegible]-
[illegible]թեամբ և [illegible] [illegible]

մեք. Վասն զի թէ զաղաւթաւորու-
թիւնս քաւեմք հոգւոցն. թէ
զնոյն իշխեցեր խորհել՝ Թող թէ
առնել. պատառաւածի առաւել ա-
ռա. թէ չ՚անաւրէնութեան Պետրոսի
և 'ի յառաջնորդութիւն՝ [1] բանադրա-
ւոյ զնա՝ մատնել. որ զծառայու-
թիւն և զխոստաւակ որպէս զազատուած
խնդրէր. և զխոստովանողն զխօսա-
ցումն առնել՝ և ոչ երբէ զմի յան-
ձն մարգարէանալ խորհեր հաստատագու-
նել. Զի քաջի առն բան զբոզամ
մասն հոգւոյս կեցեալ՝ լսա լու և
մի որ ծանուցանել զառաւթիւն
անմին և մատնել. Եւ ոչ որ յԱն-
բեաց կարէ զեզ մեղաւնիր մնել՝
խորհել զեզ աղօթելո խորհուրդ և
առնել. ոչ որ այժմ Աբեաց աեղին և
և ոչ աստուածի զրամն՝ որ զամ մի
'ի միջի էն. և զու զիտես. Վասն զի
Պետրոս աղբաւրեց աղբաւ երբէ խո-
րամ անմիթն և արգաւոց ըմբոթաց
հոգ առնել. բարի ծառայի առ ձեռ՝
լաւ իշէ զնոյն կարեր խորհել և

1. Օրբ. 'ի յետ առաջնորդութիւն.

զքեն տայր ամենայնի. և մեք Աբրահամու ժառանգելով զայն ամենայն, և յետ. նորանալ՝ ենք մեք զայն հրաժարեցաք և գնալ նովա, և ենք չեն ստացող ինչ՝ չքնաղն. չեն մերձարկեալ, այլև չա. ռնել ես պարգևելով ամենայն վա. ռաց և 'ի նորայ յետնեկաց զՃշմար. տենէք պրծնաք. նախ Աստուծոյ. տարա ցեալս. պարտականեաց. պարտաւորու. թեամբ. Եւ բայց ենք տարա և որ նոյա խոն նման մարդ էր, որ մեր խորհրդ՝ հաշտութեան քահն էր, և ոչ կարալեալ մաւնձր ընդ դեռաքն. վասն նորա և խնդութեան են ժամէր ողջունիւ ըստ զմն. Այլ որ մարդ էր և ամենայն կայր 'ի սրբէ. և զգլխովին բանս Աբրահամու տեսանեն ընկեր, որ միայն մեծազոյն և երկինս ենէ 'ի գեղ էր մեռանել. այլ ենք և առան անդամ կենայր և համաստանեալ զգույն ընկեր. առան անդամ արժանի էր մեռանել։

Վասն որոյ և մեք նորին գերա. հաւտքս գոյա 'ի միա տարեկան ինէն.

1. Պաւղն խորհ կամ խորհուրդ։

ցոյց խորհէր. և զսրբազնին ձայ-
նոյ բանն՝ որ ՚ի վերայ այնորիկ
եղեալ էր Աստուծոյ տնօրէնն. և խոյզ
՚ի նմին հաստատեալ. և թէպէտ
ծայր զմտաւ երթալ ըստ այնորի-
կըմանել և կարծել՝ [illegible] զի
բնաւ այժմ և զբաղմունս [illegible]. այլ
զի չէմք այնպիսի յիմարք և խել-
ցնորք. Թէ ամ Աստուծոյ [illegible]
թուով [illegible] մարդիկ՝ որ
չարի [illegible] բաղմութեան զորոյ
որ կարծեն կալ ընդդէմ և կարծ-
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] առաջ զայս [illegible] զմտաւ. թէ
[illegible] բնաւ [illegible] զործոց
բնաւ [illegible]՝ [illegible] [illegible]
[illegible] հաստատեալ [illegible] զա-
նոյն վկայութեանն՝ որ կայր ՚ի վե-
րայ մեր. Թէ մարդիկ որ այնպի-
սի [illegible] և [illegible] էին. [illegible]
կարեան. և անձինս եղեալ [illegible]
[illegible] այդ նոյն լինել ՚ի [illegible]. [illegible]
[illegible]. և չլինել՝ [illegible] [illegible]. Աս-
[illegible] նախ ծանուցանել զան-
[illegible]. և այլ [illegible] [illegible]
[illegible] կարծել. Եւ եթէ [illegible] [illegible]

ցեալ մարմնոյ և չեալ պատասխա-
նատուս և բողոքողեալս. Ծանուցա-
նեմ եկեղեցւոյդ 'ի մերում մեր. Թէ
արդարև որդեակ զաւակ՞ այր եւս. և
թէ որդեակ զԱստուծոյ. Նոյն
զայս նշան մի տամ ձեզ. և փորձե-
ցէք. զի զօրեղն զայն՝ որ զամ մի
Աստուծոյ յափշտակեալ Թագաւորութեն
մեծութեանն ահեղ է սրբարանաւ. և
այժմ զան՞ ամէն և պատմի. և յեա-
րադրելով զասուածս իմանն են. և
մեզ ահեղ են և զմնա և զնդի. Նրա
մանն առաջ՝ զի մարմնեղէն մարմնոյն
ամենայն իրեանց այսպիսեաց. և
մեր այս այն առեր Թուով՝ զոր զայր
զինեալ. որոց ոչ գոյ՝ ոչ սասն և ոչ
ծառայ. ոչ գունդ և ոչ սանձուած-
րութիւն. և զայս որ Աբէլ էր՝ զձեր
աղանութիւն մայր մի 'ի բաց կողմայս.
և զաշխարհին Հայոց 'ի մեզ և 'ի ձեռ-
ն Թովմէ. և որ որ կարգացն 'ի
մեծամեծն համեմ՝ նոսա ասացես. և ձեզ
ծառայութիւն արարցէ.

Եւ արդ զի մի բազմաբանութիւն
զերբարգաւուր ձեր մեծս ծանօթա-
ցուցից. այլ ընդէ զօգնան բազ-

մոյ. և շատէ անձնուր է. և զանձն յաղագս մեծի աշխարհին են բանից խոր գիտակ և հաստ հոգևորական, և հարցն է մեծ ատեան. զի մեք որ զանձինս 'ի մահ եդաք. և յԱստուծոյ աւետարան 'ի բաց կոչմամբ. զայդ է բժշկութիւն 'ի ձեռն պատարագամատուցաց դրեցի առ քեզ. և զսա նախանձու զգամ երկրպագելով 'ի Թագաւորն. մեզ այդ խնդիր միայն պիտոյ. և ընդունիցիք մեզ զգամ և ճշմարիտ 'ի Թագաւորն. Զայն բժշկ արարից յուսութիւն, որ ոչ վաստակել մարթացն՝ և առաւելիցի. հայեցեալք և ըստ խորագանդնոց արդարարութեան համառօտիւք. և մեք ըստ առաւօտ էր. և մեք ձեր ըստ ծառայք եմք. ընկալարուք զմեզ սիրով, և ծառայեցուցէք խնայելով. և զյացուցէք զօր 'ի բանութիւն յանդգանել ասացք՝ Թագաւորին արքայութեան ընդունիցիք մեզ.

ԻԴ. Եւ Նիկողայոս բանիւն զայրացեալ կարգացաւ բանիւքն 'ի մաւկթէնենեն Կոստանդնոյ. մեծարեալ ընդ [illegible] այս

տաճարի տանէին. Թէ Զօրաւորութիւն
մեծ թեկնածն Արեաց աշխարհին որ
էջոս, և զթանձրամած խաւարն որ
էջոս և մածեալ նստէր 'ի վերայ
պարսից երկրիս, համարձակապէս և որ-
գոյր խօսք Վահանայ և նուաճմանն
տանել՝ փութապէս զամենայն՝
մեծարելով ուրախացուցին զնա։
Հրամայեաց արձակել զաւանսն. և
Եր Բէն. ասէ, որպէս էր Բէժ և Վա-
հանայ այլ և բանից. խօսեցաւ որ ըստ
արժէ. և յուսացոյց զանձն մի տրտմ-
խնդացեալ առ միմեանս. Եւ այն որ
հրամայեաց Նիխոր Վահանայ տա
նմա ուրախանալ ամենայն նախա-
րարացն ուխտակցացն և բարեկամեալ
գնդացն որ ընդ նմա էին. բայց
զուխտանենգսն 'ի Հայոց և զուրա-
ցեալսն հանին արտաքոյ ընթրեացն
ամօթալիցս. Եւ ուրախացեալք այն
որ ըստ արժանի մեծարեալ ընթրեաց,
և հրաժարեալք 'ի Նիխորայ՝ գնա-
ցին հանգչել 'ի վանս իւրաքանչիւր։
Եւ 'ի վաղիւն մատուցեալ ամենայն
բազմութիւն մարդկան 'ի հրապարա-
րակն, հրամանաւ աւագին Նիխորայ. մինչ

ամրոցն իւրոյ տալ զպարգեւսն եւ զհամարձակութիւն. եւ խորհրդոյ արդարոցն դատաւ զխնդրացանել զամէն եւ զանդորրանս. եւ դարձ ՚ի յանդգնութիւն բանն դրոյն ճշմարտա-պէս' թէ Աստուած լոյս է. Վասն որոյ բառ նորին լուսաւորեալ մտա-ցին եւ երկրից տառապանօքն պաշ-տամնեցն իւրոյ բառ ծանուցութեան լուսոյն' զոր ընծայեցին թագաւորք եւ լուսաւորեցան. Իսկ ՚ի վերայ երե-սոյ մանկապարգեւացն նոյն ներքոյ-բան մանկոյն ինքեան' նմանք ՚ի վերայ ամպարշտացն. որոց մերկացեալ զե-մաց' պատարագական հոգեստանակացն երեւեցան ներքսարանս. ցուցանէ բա-ռոյց մի անմոռացիկ մաղթանս. Ու-րեմ դոյն անմեկեցանն արդարոց բառ տաղապանծինենիկեցական հանգուցին¹ ծիւրեալք. ծնեալք. երկրա-ցեալք. պատկերին նմանեալք. զորս արդարոց յայսյանցինան տառյն եր-բեմն գերշոցն խոյատանակեալ նշա.

1 Խոսքերս. մնէկէ Պատ. զարդոյ-զոյ անմէջ.

[illegible]

զինչ խօսին. Այսպէս ամ յայտնի ա-
ռնէր յաւուր ահն խորհրդոյ Հրէ-
մարդասիրութեանն զգուշացուցանողս յա-
հաւատութեան ծանրութեան որդոյն Գրի-
գորի ամենայն ծննդոց եղեն ընկե-
րացն խորանն՝ 'ի վերայ յերկրաւորա-
հանդերձ աստուածագործութեանցն բանակին,
որ զամենայն երկաս պարսիկ մարդ-
կանն և զայլն անձին և խնդութի
հայեցուցանէր 'ի մաղթիկանանն Վա-
հան. որում ասէր Պերսաս խաւսա
ընդ հոմկոյ պատուասաստասարան աղուակ
'ի գինւ խոհականութեան, ծայրա-
մաքութիւն պաստածոյ խնամոց. և
նաստարեալ եղանէր 'ի զբոսնու բան
փրկչին Պերսասոսի. գրեալն յաւե-
տարանն. Ա՛ ենն գրոց իցէր որ
խանիցէր. այլ հոգին հոր մերոյ, որ
խաւսիցի 'ի մեզ։

Ես երկրորդեալ յաւանդին զնոյն
բանս մասնիկանենին Վահանայ, սկը-
սանէր միասանգամ խաւսել ընդ Նե-
խորոյ, և ասէր. Այսպիսի խորա-
գանեցիր աւրէնս խնդրոյ և սղամ՝
որ այժմ ասա են առաջի մեր նա-
խարարք և աղաւթք և այլք յաստա-

ԿԴ. Եւ զայս ամենայն խաւսե-
ցեալ մոգպետանն Վաչագանայ, որ-
պէս լսէր զամենայն Նիխոր. և ա-
խորժելով յանձն առնոյր. Ինքն ևս
Նիխոր ՚ի Վաչագանայ գրեաց Հայոց
զգուշացեալ. Վաղվաղ, առաւ, փու-
թով և արձակեաց ՚ի Դուռն. յանդի-
ման է որպէս Պերոզի ընդդիմացեալ
Արեաց տէրութեանն՝ զաւրս զեն-
վառեալս ՚ի կորուստ անձին իւրոյ և
համաւրէնոց ընդ իւր. և զոր փութա-
արձակել զՀայս պատերազմի, որ նախ-
քան զնա եկեալ ՚ի Դուռն՝ և բա-
զում մի քան մեծ ծառայութիւնս տէրու-
թեանցն առաջի թագաւորին և ա-
մենայն Արեաց. Վասն զի և ինքն
հրաման էառ թագաւորին վաղվաղա-
կի մատնել ՚ի Դուռն. վասն զի աս-
տուածոց զայս խրատ յաւելն և բարե-
բարութեամբ վճարեցին, զի եւս ա-
ռաւել վաղվաղակի եկեալ առնցն՝ ՚ի
զէն է և պատշաճն. Եւ ուրախա-
ցեալ Նիխորայ և մոգպետանն Վա-
չագանայ առ միմեանս ոչ բազում ինչ
առաւելեալ, կոչեաց ¹ առաջնորդ զորքն

1. Այլ. կոչէ.

ուեղին ամենայն գեղին վիճակ Նետա-
պարհ անցից անհնարութեանն։ Եւ
վիճակ այս ներքն մեծ յայտնի, որ և
առ գետն հայրապետ արանց վիճակ ան-
ցանել գետոյս բառ հասի, և ամե-
նայն արքայութեան. ՚ի Ձմեռնոցն հրէու-
թեան հաւատոյն գոյթ պարտավորին
Հայոց Վաչականայ՝ վիճակ ներքն, որ-
պէս խորալկեան մեղավորացն յան-
ցանելն հրեշտակ ընդ Արքայութեան.
Եւ առաջնորդութեան յառաջն ՚ի Նուսին.
և զինորհնականութեան զաստուածային
մատուցեալ Աստուծոյ արժանա-
ւորութեան. և նորա զօրութեան ո-
ղորմածութեան բառ ամբարտութեն
հասարակաց զարդն, առատաձեռնութեն
և ճշդեալն բառ Աստուծոյ հանգստին
խնդալից որդոց։

Եւ կացեալ մնացեալ կանոնաւորն Վա-
չանայ զօրաւորն Հայոց՝ արժանիքն
՚ի Դուան, կարգեալ զգանձն ՚ի
ձեռն Վրթանայ վանականաց. ընդ
որս կացեալ արժանիք և զերծ եղ-
բարբի մի. զորեն նախատակին

1. Դաւթի մարզ.

Վասակայ զՆերսեհի. Որոյ հաւանեալ
՚ի Դուռն ժամանակս երթայր պա-
տրաստութեան գործոյ պատերազ-
մին. և հարեալ ՚ի գլխի միաբանեալ
զաւրացն երկրին, և մատնեալ ՚ի
պարտութիւն զաւրացն Զաւրէնի՝ թա-
գաւորական ընկէց. և բազում վի-
րաւորս ամենեալ յերկիր կործա-
նէր. Այս յաղթեալ հայրենական
ահագինն Մամիկոնենից Ներսէհ. զա-
ցեալ մեծ յաղթութիւն. յայնժամ մ-
ներ զաւրավարքն և զաւրացն ամեն-
գեան. և հալածեալ նորա լաւութ-
ամեան հասանէր մինչ ՚ի Թագաւորն
Վասպուր. Լուացեալ և ակապն
փառաւորեալ Վրէն. զորս երեկեցա-
ցեալ յաղթանակօք. Իսկ Զաւրէնն թա-
խուցեալ ՚ի ընտանեացն ակեփ
ամբոխանայր. զոր մերժեալ արարին
և անձին ՚ի հրապարակին արքունի.
և անդ նման անուանեաց փառաւորն
յանձինեայ**.

ԳՆ. Եւ յետ սակաւ ամաց ըն-
աթագաւորեալ Մամիկոնեանցն Վա-
հանայ զայրեաց զինն Հայոց. և ինքն է
ամենայն աւտարակեաց Նախարարքն

ընդ Նմա․ չուեալ գնայր առ Թա-
գաւորն Վաղարշ․ և գնացեալ ըստ
պատշաճի աւուրց օթևանաց ճանա-
պարհին՝ երթեալ հասանէր 'ի Դու-
ին․ Եւ չուեալ Թագաւորին և ա-
մենայն Արեաց աւագանւոյն զերթան
Վահանայ 'ի Դուին, վաղվաղակի և
ճեպով ժամ արարեալ՝ յանդիման
լինել Թագաւորին և ամենայն Ա-
րեաց աւագանւոյն․ Եւ առեալ ըն-
ծառա զճանապարհորդութեանն աշ-
խատութիւն Թագաւորին Վաղար-
շու զՄամիկոնեանսն Վահանայ, միայն
ասէր սիրով հարցեալ զողջոյն՝ ու-
րախանայր․ այլ ոչինչ ասէր բան
զայն հարցանէր զնա այն օր․ Եւ
վաղիւն ժողովեալ ամենայն աւա-
գանի դրանն արքունի և այլ ամե-
նայն բազմութիւն Արեացն, և մի-
ներ խորան մեծ լցեալ աստանիկ արե-
րով․

Սկսանէր խօսել Թագաւորն Վա-
ղարշ ընդ Մամիկոնեանսն Վահանայ․
Լուայց, ասէ, միով զամենայն խօ-
սեցեալսն քո ընդ Նիխորայ․ զոր
թէ պատգամաւորք են արացեալ․

և զոր ինչ ծանուցանէ. և զոր ինչ
զհետ յանդգնեցան քո և ծնողս իւ-
ցեալ էր ընդ միմեանս՝ պատմեսցէ
մեզ. և ոչ էր քո առնել 'ի բանիցն
զոր խօսեցեալ էր՝ և ոչ բան մի.
Վասն զի Պետրոսի իմ եղբօրն անձ-
նահաճութեան կամացն և անձնահա-
ճութեան խորհրդոցն. և անկարգու-
թեան ունիք և ամբարտաւանութե-
նէն զհետ միայն էր կարացեալ
յԱկրեայ. թէպէտ ինչ էր ձեռն-
ծառայ մի կարծէլեր. որում թերեւս
փոխանակ զաւակք. բայց ես ի-
րով հաղորդութեանն այնչափ ան-
թիւ բաղձանութեան լու որերոյ կե-
րոյս. որոց այսօր փոխանակ մե-
ղեաց առաջ և զինչն հորոյս և զոր-
գիս և զխանդայս. Արդ եթէ դու ե-
ղեալ ես պատմիչս քո կորստեան
և այնչափ բաղձանութեանն՝ որ կե-
րեան ընդ քո ձեռն, դու այսօր
հարցման արժանի էիր. և պատա-
հասի և չարաչար մահու. բայց ե-
րե այլ է պատմիչս անձինքն զոր-
ծոյդ¹ այցամ և կորստեանն՝ զոր դու

1. Յոբ. [illegible]

գործեցեր. զՔեզ ընդ այլս բանա-
թեամբ և միտօք պատասխանեալ՝ կա-
րեմանք է. և որենք մեր չհրամայեն.
Յանդի զայդ գործ՝ զոր դուք կարա-
ցեր գործել. առ Պետրոսի արքայա-
հաւ և կամակեր բարոյն բաղդաւոր
խորհեցին, յԱղեքս գործել. բայց չերեն
միաձայնաս. զի չհարցին զամենին
'ի մանչ տալ այդպիսի անձերեթիւլ՝ որ-
պէս դուզդ եռանդ. բարդը համա-
րելով զենդրդրոյս առնել. բայց
դուք ընդու առ ոչինչ համարելով
զայս աշխարհ. բանդորդ մնամ՝
որք մնամն. և եա տասել բանքա-
բար կեցցայք՝ որ տարեցայցդ և 'ի
միջի եք. Այլ երանդ թէ և այլ որե-
բայն՝ զորս 'ի զաւրն առաջա կարսյս
Պետրոս, կարդացեալ էր առնել զայդ-
պիսի բանդաւորութիւն՝ զորս դուք
արարէք. և թերևս այսպ կենդանի
էին խորհ զմեզ և 'ի միջի և առ մեզ.

Ու պատասխանի տաեալ մանկ-
կանսնդին Վասխամայ 'Թագաւորին Վա-
զարշա. առանցի անձնայն բաղմա-
թեանն, առէ. Խոսել առանցի Ա-
տուծոյ և առանցի մեր Թագաւորաց

երկրայն բանիւք՝ չէ արժան. Քանզի
եւ զամենայն գիտաս մեր եւ զկեն-
եւ զչարաչարձակութիւն գործոյն. զի
նոր զանձինս ՚ի մահ. յորոյ մեզ ի
ամենայն գրեանն ուսուցանեն՝ ՚ի ձեռն
՚նմանութեան գրով եւ ձայնիւ. զայն բա-
զում անգամ ասել՝ յերկրաւորս ի
խոսից եւ յանդիմանութիւն. Վասն զի
զխաւսն եւ զանձնաւոր բնութիւն՝ զոր
ասասցէք զոր զերկրորդն մերձ ը
Պետրոսէ. չառ էր եւ առն թագաւորի
անվարտաւոր. Իսկ ՚ի յոյլ որ որ
զեոր՝ յոր ընկեր ՚ի նմանէ բանա-
թիւն, առանց էր արգելոյ եւ կամ կի-
նոյ եւ կամ պատասխանատութեան այլոց
իսկ զմեզ հոգաւոր հարկաւորս. ո
բամ կարելով եւ մտանելի ոչ մեզ
նախնեացն եւ ոչ մեր ասացելի ընդդէմ
յոր կայ. Եւ համառօտ բազմակաս
եւ բազմեալս. Եթէ ասա թէպէտ մեզ
որբենոց ձեր. եւ մարդոց ամենայ
բարբառակերպեալ են. եւ մի բանգա-
ակք զմեզ թշնամանել՝ զոր կամա
խորհրդով պատմել ոչ կարեմք. եւ
ոչ ախորժել. զի նայր թէպէտ մեզ եւ
չհասանանէք. եւ խնամարարս եւ բա

աղանդաւորդք, զաղաղակութիւնք, զա-
ղէմ, ընծայաբերութիւն, զերկզմանութեան-
նեալս, խարդախութիւն. և ընդ այս հեր-
ձևք չենթականք մարդկան աշխարհին
Հայոց՝ հայց զարդուցն ամենայն ընդ նա-
սա, և կամ ընդ 'ի մէջ խոհ եր-
Թալ առ ծառս, զի մի ազդեսցեն զա-
ջն ըստ հրամանի աղբերց մերոց.
զայսն 'ի ձեռն խորհրդութեանց զձեր
աղբերց ամենեցուն, և ըստ կամի ազգա-
զեալ զերանին՝ զձեզ առ ամենայն
ամենեցուն։

Յաղագս այսր համարձակագոյն
մայրենի բարբառով աստուծոյ ձեր ա-
ռնեմ այսօր, 'ի բաց բարձեալ զնա-
խնութեան զխանձաւոր զայս յաջող-
ղեն Հայոց, զոր ընծայեմ առ ոտ-
զարս, և յարդարեալ որ ետուն Սու-
րբութեան. Այլ յետոյն զատուցին,
վաղուցն զգուան, և անդրեփառան զղե-
տանցն, և որդւոյ աստուածային զձեռս. և
եղանակ յառաջագոյն զամեն խոս. մը-
տեամ 'ի յետս տանել կամ եղծա-
նել, և զձեր առ ա... աղբերց 'ի ձեռն
տանելոյ զանձնաբեր յարգիս զոր և հա-
մի զորմել զարմա վեհապետ. Սոյց

աւղ՝ զոր 'ի մէնջ որպէս 'ի ծա-
ռայից ընդէր սերանց զգուշութեան
խնդրեր. զգոյշ և զվստահ և զհե-
պատուականութիւն, զօգուտ, զարդա-
րութիւն, և աստուածապաշտութեան.
զբերել մեծար զեւրոպացիներ մեծ-
գոյ լոյս խորապանցիր վասնակոյ
զօրութեան հասուցեք. Մեր ամենե-
քեան այդ բանք են, և այդ խնդիր.
նէք ձեռնհաս հաստատեալ զխնդ-
րոց զգոյշ մեզ, և 'ի ծառայութե-
նէ մերմէ զմեզ 'ի բաց ընկեսցէք հա-
նել. որպէս որդիքն են խաղաղութեան
գործ և Գիրով՝ զայդ մեզ հաստա-
տուն արարեք, և 'ի մէնջ որպէս 'ի
ծառայ որդւոց գործ խնդրեցէք և
հաստատութիւն. և մեր մանաւանդ և
ամենահայեաց աչօքն հայեցարուք
յոյր և 'ի գործ նորուն, և հասու-
ցէք զօրութեանն.

Եւ խնդրեցեալ զայս ամենայն
բանս մաքրեցաւ Վահանայ՝ ա-
ռաջի Թագաւորին Վրաստանու և ա-
ռաջի ամենայն աստուածոյ գրանն.
և բարիք մաքրէ զամենայն ամենե-
քեան և առ բուռն կալան, զօրհն-

ցեալ ամենեցուն ընդ խնամա-
թեանն Մամիկոնենիցն եւ ընդ ձեր
աշակերտութեանն բանիցն՝ որ եղենն
'ի ժամանակս նորա։ Քանզի ոչ միայ-
նաւորեցայն. այլ և անձամբ
ափոյն երեւէր բաշխումն պարգեւաց
յԱստուծոյ բանիցն առն Մամի-
կոնենի. որ առաքելական քարոզութ-
եանն ընծայէր յաղագս ամենեցուն.
Որում պատասխանի առնէր
Թագաւորին Վաղարշու՝ ասէր զմե-
միանգամայն Վահանայ և զամենայն հա-
նախարարացն ու խնամակալս Մամի-
կոնենից. Եւ զամենայն զոր ինչ խո-
հեալ է ձեր և խնդրեալ, և խոս-
տաց աստիճան մեր՝ ձեր Վահանայ
աւետեալ եղիցի ձեզ մեր գրով և կն-
քով զամենայն խնդրեալ ձեր այսօր
մինչեւ ցյաւիտեան։ Եւ զզօ-
րապետութեանն զոր 'ի բանա-
կեանն Գերգիւ և ոչ 'ի ձեր կամաց
գործեցեք՝ թողեալ լիցի ձեզ այսօր.
և մի որ խնդրեսցէ 'ի Թագաւորաց
որ զկնի գան՝ ուխտն. և կամ Աստ-
ուծ՝ ձեզ[1] զայդ կամ առանձին

1. Յօր. Ներհ.

մերևանց խոտս և կամ տապձի տան Հայոց. յաջողեսցէ մինչև յաւիտեան: Բայց զոր հաստատութիւն զոր արժան է ծառայից առ ահարա ամենէն՝ հատուցէք առ մեզ լիով և կատարեցէք: Եւ զայս առաջեալ Թագաւորին՝ արժանեցէք զաւետեանն:

ՂԶ. Իսկ 'ի վերջին խորհելով աւետարանոյ զբանն Թագաւորին Վաղարշու. զոր գիտէին թէ և նա իւրն կարծէ սիրով ախորժէ և կամի լսել և ամենել. առաւ մամիկոնեանին Վահանայ զանկրութիւն Մամիկոնենից և զպատերազմաւորութիւն Հայոց. և Թագաւորն կամաւ և սիրով յանձն առեալ՝ ծանուցանէին մամիկոնեանին Վահանայ զկամս Թագաւորին Վաղարշու, միաբանութեամբ զբանն աւետարանոյ: Եւ մամիկոնեանին Վահանայ ապաստանեալն արարեալ առաջս. Ընդդիմանալ կամացն մերոց և հրամանին՝ յանդիմանեալ խոստանութիւն. և յետ կոչեն կամք մեր և արարուած կարծ մեծ է և առաւել: Բայց կամի ասացեալ՝ թէ առաջն մի զործ ցուցանէ և տայս, որով մեզ ըստ

պարծանին հանգոյն եղեալ՝ հոգևոր ի վերայ. և արար որ թէ թաւեր մեզ և կամեցեր ամենի՝ ամենեցեր. բայց այս նուագ կամքի թէ հաճելի եմ.

Եւ Թագաւորին և ամենայն Արեաց առաջնոցն ընդունելով զբանս մամիկոնենին Վահանայ. բայց մեծացուցանէին զնա ՚ի գահս ազատութեան Մամիկոնենից. առաւել զնա քան զորինի նախնեաց իւրոց և զսպարապետութիւն Հայոց աշխարհին. Ծառայէին և այլոց առ խոստաւորաց նախարարացն Հայոց. որք ՚ի վերանութեանն էին ընդ ձեռամբ Մամիկոնենից և տանուտերութեան Հայոց Վահանայ. խորհրդակցիր ամենէ ՚ի մածանն որ թէ զխելոք էին զգուշանալ՝ ըստ անձին արքայական առաջնութեան. Եւ զի հաւանեալ զամենայն Թագաւորին Վաղարշու և ամենայն առաջնոյն՝ ի օժիտ և կամաւոր ազատական՝ ՚ի հրամանաց կարգացանէին երկու խոստովանութեանն յաջողութիւն Հայոց. Եւ եկեալ ակըն Մամիկոնենից և ազատազարմեան Հայոց Վահան՝ համարեալ ՚ի Թագաւորին Արեաց

Վաղարշու և յամենայն դրանն ա-
ւագանւոյն, հարցանէր Թագաւորն
Վաղարշ զնա և ասէր. Վահան սպա-
րապետ Հայոց. զո՞չ ես զինչն. քանզի
խորհրդ` թէ ապրիս և զիլ ես ինչ, ա-
սա։ Եւ զօրավարքն Հայոց անուան
Մամիկոնէնից Վահանայ` պատաս-
խանի տուեալ ասէր ցԹագաւորն
Վաղարշ. Զոր թէ մեր բարերարու-
թիւնդ առ մեզ արար, բայց Ա-
ստուածն որ ամենեցուն արարիչն է
և զամենայն մարդոյ կամս գրաւի և
զօրութ, նոսա միայն հնար և մայե-
լոյ էր առնել զայդ առ մարդ. զոր
և դու առ մեզ անարժանս ծառայից
արարեր. այլ մարդոյ մահկանացուի
անհնար էր. Քանզի զինեալ Թա-
զէր. զոր և պարտի առնել մեծա-
րեցէր, մեծութեան յարուցիչ
եղայք. շնորհեալ և զերբանակալ
աշխարհիս մի զանել կանգնեցէք.
Բայց որովհետև հարցեր և հաճար-
ժանեցուցեր զորդորն ասել, որ-
պէս եղեր առատատարոր իմնդրա-
նացուցիչ մեծութեանս խոյ, և
յարուցեալ իմ` 'ի մէջ արարեր.

կամիք թէ զբովանդակ անձինս յու-
րացեալ էր և ոչ գտեալ. քանզի զի
ճէտ մեռեալ անուանեմ զնա։ Եւ
Թագաւորին Վաղարշու հարցեալ
ասէր. Աղէ՛ յայտնեսցես ծանօ մեզ
զպէտս բանից, զի գիտասցուք։ Եւ
սպարապետին Հայոց անուանի Վա-
հանայ Մամիկոնէից ասացեալ. Զի
թէ էր և ձեռն էր ընդունել մեզ
զաւանդութիւնն Կամսարակա-
նին, այսպէս բովանդակապէս ընդ-
ճեալ ՚ի ձեռն անուանի զօրավարութ
անմեղայն անդամոցս կենդանացեալ։
Եւ Թագաւորին Վաղարշու հրա-
մայեալ արարեալ սպարապետին
Հայոց անուանի Մամիկոնէից՝ ասէ.
Յաղագս ոչ կարէ արտաքսեցանելոյ
զերկ ՚ի ժամանա, և զարմեալ՝ քանզի
զի նախ և առաջին զայդ արարքն
խնդրեցեր ՚ի մէնջ, եղիցի վասն զի
տանել զակերութիւն Կամսարա-
կանին։ Իսկ յաղագս անկրութեան
Արծրունեացն, թող վասն մի՝ զի զի-
տասցեն մարզիկն թէ որ ՚ի նահանգն
են, այսպէս ինչ արժանաւորապէս
ցուցանել առ մեզ, և վասնակս թէ

յորում Աշոտոյ աշխարհին վաստա-
կել. հոգեւորութեան տայր և մեզ յաղ-
թանակ: Բայց դու այժմ ՚ի մէնջ
զրկեցեր զոր ինչ էր. և զամենայն աշ-
խարհն ուժով տիրապետել լինել յայսմ
հետէ և արդարութեամբ և աշխարհա-
կալ. և երթ բարեաւ ՚ի քո ընտա-
նիս և յաշխարհն. և հաւանեցայ եր-
կիր ՚ի մէնջ հրամանի կալով կեալ և
պատարագաւ:

ՂԱ. Եւ հրամայեաց Թագաւո-
րն Պարսից զօրավարութիւն Հա-
յոց՝ զոր ունէր Մամիկոնեանն Վահան,
և զամենայն նախարարս Հայոց՝
արձակել խաղաղութեամբ. Եւ ե-
կեալ զօրավարն Հայոց տէրն Մա-
միկոնեանց Վահան յաշխարհն Հա-
յոց. ամենայն ուխտապահ նախա-
րարքն Հայոց. որոց ընդ առաջ
եկեալ սուրբ այրն Աստուծոյ կա-
թողիկոսն Հայոց Յոհան, պա-
տուական նշխարօք խաչին և սուրբ
նշխարաց Ծննդեանց նահատակին
Գրիգորի, որովք և յուղարկեալն
խաղ ՚ի գաւառն զամենեսեան. Եւ պա-
տահեաց որդւոյն Յոհաննու կաթու-

զինուորն՝ զօրավարքն Հայոց ամեն Մամիկոնէնից Վահանայ և այլոց սպարապետն Հայոց որ ընդ նմա և ամենայն զօրուն բազմութեանն, այնս ներ զնոսա որդւութն հաւատարի և ամենայն ուրախութեամբ սպասէին. Սմա- ցն ամենն իմ ՚ի Տէր. զի զինեալ որդւոց եկեղեցւոյ խորոյ Ընծայ զանիրաւն՝ որ ձեռն ամենայնն Վերի- տասխ քրտանեցան. հանդերձ զօրքա- սութեանն. մարդկաց զարդս գլխո- ցն. լուսոյ զօրինն հաւատարմու- ականաւորահաւութեան կրոնք. և զկե- ցոյց ամենեցուն հանդերձ փրկու- թեան և պատմուածն ուրախու- թեան. և որպէս փեսայից եկ պսա- կօս. և որպէս հարսն արքայութե խորոյ զարդարեալ զմեզ զարդու՝ Ներդաշնակել բարեխօսութեամբ սրբ- բոց խորոյ՝ զարդարել զմեզ և այժմ զարդու՝ որով զարդարին առա- քեալքն և մարգարէքն յառաջն Քրիստոսի. զորոյ զարդու այսպի- սութեան անեղծութիւն. զոր աչք ոչ տեսին և ունկն ոչ լուաւ և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ. զոր պատ-

պատուեաց Աստուած սիրելեաց իւ-
րոց։

Եւ տարածեալ զայս ամենայն սր-
բոց կաթողիկոսին, և օրհնեալ զա-
մենեսեան, նախ գային 'ի քաղաքն
Վաղարշապատ, որ այժմ անուանի
Նոր քաղաք։ Եւ բազ ամբոխութեան
խրախոյս աղաղակեան Հայոց Վա-
հան ուխտակից նախարարացն Հա-
յոց՝ որ ընդ նմա էին, կային անդ
աւուրս, և կատարէին զուխտս և
զեռուեր 'ի սուրբ եկեղեցւոյն Կա-
թուղիկէի, և ապա միաբանութիւն
անկեալ նահատակելոց կուսանաց. և
հաւաքեալ նախ զպետս գաւառանաց
աշխարհացն՝ սկսեալք կատարէին։
Գային միաբան ամենայն նախարարա-
քն Հայոց և այլ բազմութիւն՝ զա-
մենայն որ մեծամեծ ցնծութեամբ
աղմկալից և ճոխից հոգևոր վար-
դապետաց եկեղեցւոյ սրբոյ, ուրախ
լինէին զուարճացեալք առ զօրա-
վարին Հայոց տեառն Մամիկոնեից
Վահանայ, և առ միմեանս։ Եւ կա-
ցեալ անդ աւուրս, ապա յուղեալ
զօրավարին Հայոց տեառն Մամիկո-

նէից Վահանայ՝ գայր մատնէր ան-
ձայն Հայոց բաղձանութեանցն ՚ի բռն
ատեանն Հայոց ՚ի Դուին. որ ձեռնէր
և փառաւորեալ զաւուրս Սպարապե-
տութեանն զօրութիւն.

ՂԸ. Յայնժամ գայ յերկիրն Հայոց
մարզպանն, որում անուն էր Անդէ-
կան. այր խոհական. մեծագէտ. խնա-
մածուեալ. որ գիտէր ձեռնհասու-
թեանն արգելել զխռովութիւնս յաշխար-
հէն և զկալ ՚ի խաղաղութեան. Որ
անուանեալ էր ընդ որս զօրավարսն Հա-
յոց զանուանն Մամիկոնենից Վա-
հանայ զխռովեալս զգաստացուցա-
նել. զօրագաղափարութեան. զօ-
րագլխաւորութեան, զգաստութիւն
սրտի. զգեղեցկութեան պատուական յա-
ձեռնայն իւրոյ. ՚ի բնութեան զգաստա-
սիրութեան, անուանելս և զայն՝ թէ յի-
գորս և յամարեցուցանէր զհի-
թեցեալ և կարգս ՚ի զմտաւորսն.
Տէր յաղթողէր ՚ի ձեռն նորա, և ան-
ձայն զիւրեան մեծութեան անձանձրոյ-
թեանց. Եւ ընդ այսքանս ատենա-
ծառայր խոնարհեն ամենայնութեան
որ բնակեալ էին ՚ի զօրաւորսն Հա-

յոյ անուան Մամիկոնենից Վաչա-
նայ. զամենայն որ ընդ որս ասպա-
նելով Աշոտեանն և զծառս ածելով
զարմանալեացն 'ի միտս իւր 'ի ծածուկ.
և ընդ բարեաց մտաց իւրոց ուրա-
խանայր։

Անկեալ զնոյն Աշոտեանն, և 'ի
զօրան ամենայն աւագանւոյն դրանն
ատեան և իւրոց ընկերելոց զինուորա-
ւոց մտեալ առանն ծանուցանէր։ Տայր
զինել և Թագաւորին Վասպուրա-
կան զամենայն, հանդերձ հօրեղբարբն
յաջողարինս Հայոց և թիկն Աշոտե-
անն 'ի զօրանն. զամենայն աշխար-
թիւնս զօրավարքին Հայոց ասպետն
Մամիկոնենից Վաչանայ. ընդ Թագա-
ւորին Վասպուրական՝ առաջի ամենայն
դրանն աւագանւոյն յոյժ զարմանա-
լով. Թէ նա յամենայն հրաշափառ ըստ
խոստացաւ՝ զոր իմ առ ձեզ բա-
զում անգամ գրեալ էր և այժմ թէ-
ձեզ առաջի, առաւելագոյն և որ
քան զոր լսէիք ասպանեալ անձնեամբ.
և ոչ փոքր ինչ երկիւղ նուաճեալ 'ի
ննջէն 'ի այսն յաղթանակագրութեան։
Սաղազաւորոյ հաւատարմանին առաջի

Ձեր առնել յայտնապէս. Թէ առնի ձեզ և անդէն՝ որք մարդկան ի ցուցանել: Փոխանակ այլ մարդկան երթայ 'ի յայտնապէսն հայոց. և առաջին [illegible] [illegible] ըստ այլոց այլ առնի. զի յորժամ առնի այլոց [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] որ [illegible] [illegible] և [illegible] [illegible] 'ի վեր. այլ որ 'ի մարդկանէ [illegible] առնեմ. Թէ առնէ որ է՝ որ [illegible] [illegible] է [illegible].

Եւ զործելով՝ առաջ մարդկան որ երթայ յայտնապէսն Հայոց. այլ խորհրդն մեծ է. յամն երկնաւոր և երկնային հարցն [illegible] [illegible] այլ [illegible]՝ զերկրն և զերկնայինն. առաջ [illegible] [illegible] զանազանեալ և [illegible]. և [illegible] ըստ [illegible] [illegible] 'ի [illegible]՝ [illegible] [illegible]. [illegible] [illegible] որ [illegible] 'ի յայ[illegible] է. [illegible] 'ի [illegible]. և [illegible] առ [illegible] [illegible] առ [illegible]. Առաւել և որ [illegible] [illegible]. [illegible] և առնեմ

մեզ. մարդկանն պարտին՝ որ եր-թայ յաղթողին. կեաց երկնից և արդարոց. դրախտ և սիրելեաց. ծառայից և աղախնեաց. և այնք ամենեքեան թէ Աստուծոյ տեառն զաւակին ասեն. չէ տակաւ ծառան. և թէ զաւակութեան ասեն, ըստ փոխանց հասանել ազատութեան մարդկան. Իսկ նա թէ ըստ՝ զինք ասեն համբար ասել, և ամենայն յաղթանակ զանձն համարել. և արդրանք իւրոց ազատութեան. Եւ յասն Վաճառոյ ՚ի բնութեան հայելով և յաւիտենականութեան՝ ՚ի բարոյս մանկանց խորհելով ՚ի միտս իմ և ըստ համարելով ազատութեան իւրոց և արդրանի. համարձակեցայ ասել. խորհել զարմանն և ասել՝ զայս գիտելի. եղբարք.

Եւ բաւական զայս ամենայն բանս յԱնդրէասեայ Թարգմանչին Վաղարշ և ամենայն գրեան առաքելոյն, համանայ ընդ բանն ամենայն Անդրէասեայ զարմացման ամենեցեան որք ըսանն, և մեծաւ գովութեամբ ասացեալ հանդերձ զԱնդրէասեան՝ որպէս զոյր սիրելեաց և աղախնացն.

ԽԱ. Վաղարշապատ հրամայեաց թա-
գաւորն Վաղարշ. Թագաւորութե-
ամբն աւագանւոյ դրանն և Արեաց
հրովարտակ առնէլ ՚ի Հայս. և ըստ
այնմ Մամիկոնենից և սպարապետ
Հայոց Վահան՝ մարզպան ՚ի վերայ
աշխարհին Հայոց եղանէ։ Եւ յե-
տոյ հրովարտակին մարզպա-
նութեանն՝ այսին սպարապետին Հայոց
յանուն Մամիկոնենից Վահան և ա-
ռել հրովարտակն Աստուծոյ մարզպանն ՚ի
վերայ աշխարհին Հայոց եղելոյ
հաստատութիւն.

Իսկ տէրն Մամիկոնենից Վահան
սպարապետն Հայոց և մարզպան՝ ՚ի
կալեալ զնախարարութիւն մարզպա-
նութեան ՚ի ձեռաց զօրացն
Թէպէտ և զխնամածութեան իւ
մարզպան զխոնարհեալ՝ ծանրաբեռ
ըստ կամս. այլ աստուծոյ և ոչ ըստ
մարդոյ հրամանի Թագաւորին ի
խելք և անձնապաշտ ինչ. Աստ
զնախարարութիւնն խնդրէր վաղվաղակի
անզգուշաբար՝ երթալ ՚ի աշխարհ
Աստուծոյ։ Եւ բաժանել զոր ինչ
կամին՝ որ ՚ի հրամանի. դիւր առնել

առ հասարակ ամենայն մարդոյ՝ նախա-
րարաց և ազատաց. ռամկաց
և աղքատաց, որբոց և կանանց, ծե-
րոց և տղայոց. այլ և հարուածք
անգամ յաւազակաց մատնեցաւ
առ վայր մի առ խնդիր զաւնի
հարստութեան, զինեալ ընթանա-
լին յեկեղեցին. Եւ մի քանեաւ
ընդունելով զամենեսեան առեն Աս-
տուծոյ. ընդ որ արարչի արարչ
եկեղեցւոյն և փողոցս և ամենայն
անկեալ հրապարակացն բարբառա-
նին. Եւ եր այն որ անյայտ խնդրու-
թիւն և անդադար աղօթութիւն
աստուածային բարեկարգն և ող-
ջախոհութիւն մեղաց քաւութեանց,
և առաց թագաւորաց և սրբու-
թիւն անկեալ՝ խոսկանացն և
խորշախոյ.

Եւ սորա կաթողիկոսին Հայոց
Յովհաննու անուամբ ղանհարմեկի
աւետարանութիւնն ընդ հեռու յԱս-
տուծոյ ՚ի ժամանակս երանելւոյն,
բերելով զնշխարս որոց՝ առաջ
առաքեալ ՚ի ժամուն. Յեկեղեցիս
արձանագրեցաւ զԱստուած, և զՏէր յաղ-

բնութեան Իսրայէլի. և կարգաւորեալ
հրամայեաց զանգի եկեղեն Իսրայէլի ի
ծառայութենէն փարաւոնի. և ի
Թագաւորութենէն՝ ընծայեցաւ
ծըն՝ որ Թագաւորեցոյց ՚ի նմին
զորդին իւր զՍողոմոն. Եւ եկեալ
Բերն ՚ի տեղի լուսաւորութեան տաճ.
ձանին. և տանել զխաղաղութիւն
ազգացն և ամէն [1].

Ժ. Բազում եկեղեցարանաց և այլ
գի այլոց յաջողութեամբ փրկեն
մեր և այլ Աստուծ Պրիստոս զի.
բայ զաւրանալն և մարգարէից
՚ի ստորին և յառաջատեքն Նա.
ման ծրագրեալ՝ յայտարարեալ մեր
զորինակն ՚ի սերունդն. Մարմնեան
զերանելի կայան. եղիպտացին որ
յանդգնութեամբ՝ զանդորրու.
թեան հրեական որդւոցն. զինուոր
զաւթն՝ զաղատութեան Իս.
րայէլի. որոյ ձեռամբ զաւթն զի

1. Պաշտի բար եկեղեցեաց և յա.
զ[illegible] հայրապետի [illegible]
և [illegible] բայ [illegible]
և [illegible] [illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible]

մանց՝ փրկեալք էին ամենայն արտա-
քինք. Յովհան Ամենապարգևօրգու-
թեանն՝ զաւազանին զնորանշան-
թիւն. Հեղձամաւ Սեբաստացւոցն՝
զկեանս մարգոյն մահաւութեան. ՚ի
Ծագմանն Ամենապարգևօրգեաց մա-
ղձերգեանն պատուհասն, ըստ գրե-
լոյ ՚ի կարգին. երկնաւորն բացե-
ալեալն ազգերցն, և եւթանասուն
արձանանաց ծառայն. Ըստ բերոց.
ասէ. Փրկեալ այլ եւ եւթանասունս,
զոր և ասացեալ ՚ի բռնութիւն
հնամեղաց. որոց թէպէտ և պատուց
Ամենակալն զհամն քաղցրութեան
անձին յիշեսցեն, այլ ամենայն արձ-
կարկեալ ՚ի ամբողջն՝ ցուցան ազ-
գաց (?)[1]. Նոյն էր երկնաւորն ազ-
գերոյն յորդորուղի անկանց ՚ի բաց-
արձակ անզեր (?) [illegible] ցա-
ւանս ծառայելոյ անդաստանս ցա-
մաքն ծաղկանցն և պտղաւորս և
պտղաբերս. որք զբերանս երկն-
աւորաց առաքելոցն անձինն զեղեր-
պարգևս, զորոց և պայծառ ազգաց.

1 Սաղմոս Թ. գլուխ.

[illegible] . [illegible] . և [illegible] . [illegible] . [illegible] . [illegible] . [illegible] և [illegible] . [illegible] 'ի [illegible] . [illegible] . [illegible] . [illegible] . [illegible] . [illegible] . [illegible] . [illegible] 'ի [illegible] :

Ո՞ [illegible] և [illegible] . [illegible] և [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Դաւթայ աղաղակեմ առ Աստուած, զոր ինչ դրուատեաց զգուշութեան նա յաղագս որդւոյն իւրոյ Սողոմոնի ճառագայթնէր Աստուծոյ բարձրելոյ՝ բան. Օրհնեալ ասէր Աստուած Իսրայէլի, որ ետ ինձ ՚ի զաւակէ իմմէ նստել յաթոռ իմ, և աչք իմ տեսանեն. Զայսմանէ կցեալ ընդ մարգարէին ասէմ ընդ այն և ես. Օրհնեալ ասէր Աստուած Իսրայէլի, որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյ, որ ինձ հաւատացան, պատուով շնորհութեանն պայծառացեալ ՚ի Քրիստոսիւ. Հրեշտակքն պատգամաւորեցին, առաքեալք ամաչեցին. Փախեաւ Ադամն, որ առանց Աստուծոյ կարծէր թագաւորել. որդւոցն նոցն զդեցեալ զանձն՝ աստուածեաց ընդ անզգամութիւն թագաւորին. Թագաւորեցին, ասէ, և ոչ յինէն. զաւրէին իշխեցին՝ և ոչ իմով կամաւ. Ո՞ր են առանց Աստուծոյ գաղթականքն. ո՞ր են առանց Աստուծոյ իշխանութեանքն. ո՞ր են արքայութիւնքն, ո՞ւր են դատաւորութիւնքն. Տեսէք ինձ, ասէ, զԱրիական առաւօտուն. և զԱստուած

ոչ խնդրեցին. և զաւէր զօրութեանց ոչ ճանաչեցին։ Ո՞ւր են եկեղեցւոյ թշնամանիչքն, տառանջարուք որդի-նոցն. որդութեանն աղծիչք, չինիչք մոխրատանցն, մաուսցողք ճշմարտութեանն, հայհոյողք արդարութեանն. – փախեան, կորացան[1], ամաչեցին։

Ո՞ տայր զգլուխս իմ ՚ի ջուր, և զաչս՝ յաղբերս արտասուաց, և ընդարձակ լայի զնիզակայեղեալսն կորուստ։ Աչա անէսք, աչա մեռանի իշխանենչն. այլ մի տայք մեռանել։ Սատակի տաղի անզղանոյն արինահեղն. այլ ոգնել փութացարուք։ Պղծատոտ Սինկի. այլ ձեռն տուք զթագով. չէ տառ, առաջէք։ Սաղոմանի. և ոչ ՚ի քաղեցէն տալս զդեաւ անթագութիւնք որբոցն։ Պղծատաս է տառ. ծածուկ հարէք անմեղոյն հեթանոսք. որ առէ, թէ Նկանիք առ խա անմեղոյն ազխատանեալք, և ոյք անձիք զրեաւինս ծածանեն, և են հանդացանեմ զձեզ. Նա զարձեալ, թէ Ռ-

1. Օր. Երոջան։

և կէս հոգւոյն զարդարեալ. այլ զմեղաւորս յաստուածգիտութիւն.

Այլ և մեզ պատուիրեալ հրամանաւ մնիցդ և կարողացդ. Եւ 'ի սոյն որ կարողդ էք՝ զանկարողութիւն ուկարողացն բարձջիք. հովեցելոցս գոյք 'ի Քրիստոսէ և բաղձեալս. պատրաստեալս առնել զնոյն երկնաւոր. հոգեցէք և ընդ մեզ զնոցին և զնոյին և զՅիսուսիդա. և մի այլ Թովմասիւ ընդ Արամենայ և ընդ Բաժողովոյ՝ զեկեղեցւոյ անզամայն բարձ հարկանել[1]. որ է անգամ մարմնովն անբեղանն ըստ բանիս, և անհնամ ըստ Ճոխութեան. յամենեցուն. Պիտել կամելն յաժարեցուցեր զաղխեան 'ի անձնագաղանութի. և յայրախարար բարձեալն ընդելել ուսուցէք՝ յանդուգնաբար արախոսութիւն որոյոյն փրկութեանն. յայժմ կամին և 'ի զիմնայ՝ զոր ըսատուածայինսւ խնամակալան Ազամեն ընդրհոր առ որ Հաղւոյն յԱրքա երգոցն առայ. Քանզի զեղեցկացն

1. Առաւեր պահա Թոփ բան. և մեծամասնայ՝ խոստովանի թէ.

ամէնք զօ. զոյգ իմ հօրան, քանզի գեղեցկացեալն ամէնք զօ 'ի գիւղս. Բայց 'ի Թոնդրակեան գիւղայն հրամարեցուցեր զանխիղճան և զհիւսանդացելոցն ողամ զընկերան, զոր 'ի հրէական ժողովրդոցն արարեալ անաստուածութեանք. Արարան գիրք[1] մեծ մարգարէին՝ յանդիմանեալ յիշատակէ այսմ և մինչ 'ի վախճանն. «Նստաւ, ասէ, ժողովուրդն յուտել և յըմպել, և յարեան 'ի խաղալ»: Եւ մի զարմեալ 'ի գիւղայն յայնմանէ, զոր Պօղոս և Նոյ արարին. Եւ մի ընդ Սինէի եղանել ասայր արտաքս քան զԵրուսաղեմ, և մանաւանդ յանձնել 'ի խնդրել որդւոյ Հռոմոր. Զհրաշամանկայ անգր սերել զզաւակ. և 'ի նորա խնդրել 'ի զաւակէն զմարդացելոցն Աստուծոյ. Քանզի զհօրն որդեկին 'ի քարեցեն զրեալ ասելն՝ համակ խաւսեխն քարոզէ զաբասարարայն և չարայ. զոր և Պօղոս

1. Առաջին Գիրք Կորնթացւոց, բայց ու 'ի նմա [illegible] (Ժ, Է) գրեալ է բանդ.

Զկարգաւորն առ Մատթէոս աւե-
տարանիչ ասէր. և Զօրէնս. ըղձա-
ձեռն առ կեանս դառնային՝ որ այսօր
գաւառք և Պրիսկոսի. ըստ առաքելոյ՝
առ առաքելն զրադարապաց. ըստ բա-
ցայս՝ առ արքայութեան գամաւորանն
և փափախեալ Պետրոս. Եւ զին առ եղէ
թէ որ բան ըղձիւ և զօրասաստա-
ու արածանելն. Բայց մերոյն՝ ի գրաւա-
րայն՝ հայցէ աղերսանաւութեանն առ
գաաաաանան.

Եւ արդ մէկ որ բան ըղձանրելս
կացցէ ինքն և Թէսսաղոնիկեան, որ կամն
խնամ աղաաաաւոյ՝ յերկնից արդա-
յութեան մերմաւոր գամանկյթն. և
կամեցան ըղձեան հա հրաւէրք և եր-
կանն. որ ընդ ամեն որ բառ որն
աղաաաաւոյ՝ ըստ խանձից բարբա-
ռութեան ժամանակին. Բանդի նոյն
զինն ածխէջն և կամ զօրէջ և կամ
ըստ որ՝ ի կարելոր բարձկանայ աւե-
աանձկր մանաւանդ. ոչ առաջոյն բարձր
բարբառոյ. և ըստ հրեշից և այլ առա-
ձաւ ոչ կամկեր. Եւ արդ՝ ըստ դին խոկ
զօրին աւաանն հանդարտ մանաւանդ
տաանին. և անշէջ հրոյն երկին. զ և

զեհնչմն տարածանելոյն յիշա-
մեր զերկրպագութեան խոյզաւ, և զա-
յորդորս անձինս հեզգաս. զնոյն
համբերութեան խոկ և կամաւոր վայր մի
կարկելս ընկէ և ոգի տանաւ:

Հաւատացէք. զի են ընդ բանս
խոկ զարհուրեալ զողամ. Վասն որոյ
զձեզ աղաչեմ զձեզս հաստատամտութեան
զերս և անդայթեցք. մի նման-
ցուցանէք զաղթս ձեր Փարիսե-
ցւոյն. Թէպէտև ընդ բարեաց զան-
ձինս զատանիցէք եղեալ պատճառս,
այլ տեսցէք, եթէ Մասայր անդրե-
տանէք եղք. և մի տաանց խող բառ-
ծայցն՝ ընդ անձինս կուսանաց Ձոնգ-
պարծուրեցէք 'ի համբաւմն, զան-
ցի փոփոկ իւյն զաւանն. և Մեդյէք
ամենծալին արդասարն: Նա մանաւանդ
զաւք՝ որ զամեն ըստ ցերեկութեան
աղխատանութիւն զաւթոյ և զեբրանա,
զՀատատակէս և զանուզութեան յա-
տաասանայյին այլեզործութեն ամփի-
ւոյ յաղամ տարոք. յամենայն
մրճացիցէք. և զբնուան կարգաւանք-
ցէք:

Արդ եղիցի մեզ ընդ այգայիչ

դարձաւ՝ և զերկնից փափագելի զգենուլ զզարդն. և անդ այսպիսի առաքինաբար պսակի. որ Թագաւորութեան պայծառացուցանէ զհա-յոց իւր. զլուսաւորին և երկնաւոր պսակին, զանապականն և զմշտընջենաւոր ընդունել՝ յաջոյ փրկչին մերոյ և տեառն Յիսուսի Քրիստոսի. Լսել զփառաւորեալ և զերանելի բարբառն. Թէ Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք ըզպատրաստեալ ձեզ արքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի։

Որում լիցի մեզ արժանի լինել և ամենեցուն, շնորհօք և մարդասիրութեամբն տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ. վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

# ԹՈՒՂԹ

# ՂԱԶԱՐԱՑ ՓԱՐՊԵՑՒՈՅ

---

## ՄԵՂԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՍՏԱԽՕՍ ԱՐԵՂԱՑՒՈՑ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹՂԹՈՅՍ

## ԱՌԱՔԵԱԼ ՅԱՄՈՒԹ ՔԱՂԱՔԻ։

Լուսաւորն մըշտ ծնողն աստուա-
ծային՝ ջահըրոյս արդարութեան. և
մանաւանդ զայնոսիկ՝ որ աստուա-
ծային բանին պարապեցին քննու-
թեան. քանզի ասած 'ի Պրիտաւոլ,
որ ասէ. Քննեցէք զգիրս. Զի ըստ
մեծ անձանց համարեալ զերկնաւոր
բանն՝ մըշտ կերթ ամենայն զնոյնն. զի
թեաւորեալն զգիր խորհրդոց և
զխորոզոյն՝ այնոցիկ մտաց ապաք-
նութեան. քանզի պատմանս զբըրու-
թեան և իմաստութեան ընծայեալն.

ուսեալ 'ի մարգարէն. «Որ չան զդատաստանսն յանդուգն՝ ըմպէ լի եղիցի»: Քանզի բան ձեռագրե արդար և արժանաւոր 'ի հրամանութիւն մագաղաթեաց՝ ծանուցանողա զարհուրելն զոգիս լուսոյն երկնաւ լուսովն: Այսպէս զորն հանգանակ նաց ընդ ծով և ընդ ցամաք այլա սաստիկեալք՝ վասն յորդ ամենայ գլխաւորաց մասոյն անդադար երկնաւոր զանձուն, առ որ խնդրել 'ի նոցանէ զբանն աստուա ծային 'ի գիտութենէ իմաստութեան անձի

Յորոց մի յայտնապէս երան ելն Ղևոնդ՝ նախանձաւոր և ա խստական աշխարհի երկնաւոր ա րանէ առ. անձկամբ 'ի մանկութե ռանցն ամենայն առաքելոց բանակ գիտութեան՝ Յովսէփ յայտնապէ Տանուտեր վարդապետ. և առ և սաստիկ մարդոց պատուարի մահ զմարգարեան՝ զբանն աստուա

ծայրն՝ ընկալեալ յԱնգլիան, եկեալ հասանէր յայս աշխարհս.

Սա քանզի առաւելապէս վարդապետութեան բնութեան զի խնամատարն և մշա-մշակն գնեն 'ի վաճառականաց ըն-կերութեան և զարգացականս հան-գերձից. զի երևելի և պայծառ երևեցին ամենայն մարդկան յերե-ւելեաց. այնպէս և սորա գիտու-թեան քանի. ընկալ խնամոն և գիտուն մարդոյ ընթերցուածոյ պատուիրանացն Աստուծոյ՝ զօրէ-ցին. և խնդացին նոքա յամենայն ժամ եկեղեցիք և վկայարանք սըր-բոց և անցեր վարդապետարանք. ծաղկեալ լինէին հոգիք ընդունն 'ի ընթրեացն որ նշանէին 'ի բերանոյ նորա. և 'ի մէջ հայրապետացն և եպիսկոպոսացն իւրեանց զարդարեալ պայծառացեալ երևէր քաղաքեան գիտութեամբն.

Կանգնեալ մեծի խնամատարութեանն

Վահանայ մարզպանին՝ եղբաւրն Հայոց՝ Տեառն Մամիկոնենից. յետ իւր աստանել վերջաւոր և ժիրե ամենայն. Յարգէր նմա չնչաւոր և զախճանաւոր ամսոյն 'ի նոր քաղաքի. որում անուն էր Աւշյր կո. Թողինն եկեղեցի. վանացն. և նորա ընկալեալ զգահն մարզպանին՝ իւր նախանձէր զաւեղին։

Պատահեաց նմա կրել արտածա. Թիւն 'ի վայրապետք մարզպանաց. զի 'ի հրոյ Պետական փոյթանակերպն և եկեղեցայն. Վասն որոյ ամենայն ընդ սաս և յանկարծ զգանն Պարսից. զի յանձնայն ժամանակ ամենայն սասանեալ զինուց խաղիւ մասանց եկեղեցին, որպէս ասացեալ ամենայն ասելոյ. « Խնդրեմ յՄատենագրաց. զի մի լուր Բիւզանդացւոց ասելն ալսք ». յայնժամ եկեալ նմա զնաւ 'ի կողմանս Յունաց. եւ ամենայն յՄիհր գաղղիոյ. և անդ առ ժամանակ մի զաւեղի անուանք. Տեա.

[illegible]

մխիթարեսցի զնոսն արտասուէ ՚ի ձեռն գրոցս։

Եւ աւանդեալ ՚ի ձեռն գրոց գիտութեան, զի յաջողեալ երևեսցի. և առաջի զգօնագոյն ՚ի ձեռն բարեաց մեծին պատմութեան նախահարցն՝ Սրբոյն Հայաստանեայց, որ և պատճառ իսկ եղև նոցա այսպիսի գործին. զի յաջորդեսցեն գիտութեան նորա արդիւնքն միաբանեալ մարդկան և ազգ-գործերս մեզն Աստուծոյ շնորհա-բութեան։

Վասն որոյ և շնորհաց պատմա-թիւնս Հայոց՝ կրանելի է Դալար պատմագրեաց։ Որոց նմին գրեցաք և զնուագս, զի ընթերցողքն ըն-պատմութիւնս կարդացեալ ընդ նմին և զնուագս ընթերցեալ, զգոյշ առցեն նորա բարութեան բանին։

Փառք մեր և Տէր Յիսուս Քրիս-
տոս՝ որով զշնորհազարդութեանն սա-
տուերն Աստուծոյ. Թէ Աստուած
զամենայն արդարութիւնս կատա-
րեցէք՝ ասացէք. եթէ ծառայք ան-
պիտանիք եմք. Իսկ ընտրեալն և չորեքար
մէջն Աստուծոյ՝ առաքեալն Պօղոս,
զնեալ իմն երբեմն վասն որոյ
խանդաղատելով ընդ մեծ շնորհին որ էր
'ի նմա, և բանս անճառելիս խօսե-
լով ընդ նորագործ աշակերտութեանն՝
'ի կործանման լուսոյն. զորս ա-
նաւանդարձելով սաստ մշակին հոգին. և
ընդարձակեալ ասելով զայլաբանու-
թեանն՝ արտաքոյ Քրիստոսի կանոնա-
նին վարեցաւ, և անձամբ զանձին
ըստութեամբ և զկծանս մեծամեծ
պարծանաց գրեալ մի ըստ միոջէ
կարգեաց. և ոչ իմն ապականեալ խա-
ղեցաւ. այլ կայ մնայ 'ի նմին ա-

ապիկարութեան պատճառացն. Եւ
եթէ ընդդէմ այս պարգեւս մեծի՝ ծա-
ռայէ քմահաճ, թէ կարասցէ. այլ
թէ ոչ՝ ընկեցէ։

Արդ դու, Տէր, այր քաջդ ես և
խոնարհամիտ և արդարադատեսնոյ և
հեզահոգի, և հաւատոյ Աստուծոյ
տառուէ ընդամէն՝ որդւոյ և ամե-
նայն նախանձն քո։ Եւ ես անարժ-
անս և անմեղուած եղկելիս՝ թէ-
պէտ և երկիւղիւ առաջի Տեառն՝
ամենայն երգս. երգս զանգուած
որդւոյ մեծ աստուածային Պօղոս. այլ
զոր Տեառն՝ զգեստաւորութեամբ
առաքելով՝ մերձեցեալ անդրանկութեան
խնամ. ընծայ զիս երգս զանգուած։

Զանուղ զիմ 'ի աղաչանութեան
զոյն Տէր խոհ բարձրն զաղ զիսն.
Տարեալ զիս բաւ վարդապետաց
խեղց հրամանի 'ի Հռոմա. մանա-
ւանդ եւ անդ. և եկեալ առաջի եկե-
ղեցւոյ Կոստանդնուպոլսոյ՝ յամենայն ամ-
բոխսն, մինչև յամս նորոգութեան մե-
րոյ. Եւ զմեզ աւետարանի որդւոյ թէ
ամենայնակալ յաղթութեան մտա-
թիլն՝ կամեցայ պարզապէս աղօթս

և հանդերձ։ Եւ երթեալ 'ի Սիւ-նիս՝ եկաց անդ ամս երկուս. զինեալ 'ի զօրացն իւր առաւ միով հազարիւ 'ի բնակչաց գաւառին յանձնեաց հրամանատարութեան, որում անուն էր Մաղաքիա, և անցին՝ [illegible] և զամենայն քաղաքս ամրոցս [illegible]՝ [illegible] աշխարհին՝ առ Մաղաքի, առնելը զնա առ Թիլին, [illegible] 'ի հանձն։

Արդ՝ զատաւորին եկեալ ինքն ընկերս՝ առ Ներսէս և Հրաչեայ 1 հաւատարմացն՝ զնոսին. զՍիւնեցին՝ յառաջագոյն [illegible] նախարարացն։ Եւ զոր յայս եկեալ իւրն գրել զնա, և զանեալ յաշխարհին յայնմ՝ առնել 'ի [illegible]. ոչ [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible], և ոչ [illegible] 'ի [illegible] և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible]։ [illegible] որ [illegible] [illegible] 'ի [illegible] աշխարհին և [illegible]

1 Ցաղղբրն Հրաչ.

մեզ ասէին՝ Տէր Աստուած՝ որ Տեառն ցանկն էր։ Նոյն այդմ մասին ի հոգւոյ մերոյ Տեառն անձն էր։

Խորհեսցուք, եղբայրք իմ, մայրն որ յարդարեալ առա բողբոջեալ ած զմեզ[1], որ բանիւ գրեան և զմեզ ուսուցանելով, — ամենայն Թեզեփա և բար առաջնորդութեամբ բան զմեզ եւր. որ մնեցուցաներ եւր մեզ և խրատեաց, եդեալ ՚ի խորան զարդարեալ մեր զԲանն մեր, — մեռուցանէ մայրն մեր որդեկան և Աստուծ — Վասն[2] բան խորհրդոց հոգեւորութեանն և զմեզ ընդ մեզ՝ որպէս զմեզ։ Այլ բան այժմ ամենայնի ընդ Տեառն անձն էր։ Իսկ բան առաւելեալ ընդդէմ. զոր եւ ինձ Փրկչաւս, եԹէ արժանաւորի կամ անարժանի, զայն ասացի բան զԱստուծոյ։ Այս արդարև մեզ խոյ և արժանի։

Վասն զի ՚ի գործոյ յայսմ զօր զաւակութեանց զորոցուցելով որդ մանաւանդ մերն խնամակալութեան

1. Տես էջ 559։
2. Տես էջ 535։

րան ըստանձնեցուածոյ. որք էին և կամ որ այժմ են 'ի Հայս. և զիմ ընթերցն՝ րան զբաղման պարգևադատութեանց. Այնա անդրդուելիցոյ և ծնաւեմ. Ներսես, աղաղեմ. փոքր մի անդրդուանութեանս խնդ. Այդա առողջ՝ առաակք րեղ խոկ էի արժանի.

Եւ եմ ես այն 'Նողար՝ ըստ առ'ի գիծն և այլոց բաղմոց առաջածի, որում ոչ որ գոյ փոխանակ. Իսկ այժմ առ նախանձու ողեալ՝ բազումք ներբանն ընկել իմ փոխանակ. բայց ևՌև իցէն.

Փանգի 'ի սեպհական որպաբանոց բազում անձինս գործեալ նախանձ՝ յաղխարհի. Աչքեն և անդ 'ի սեպհման զնախատածեղծն ընկենով նախանձու բանսարկութե՝ գործոյց զնա 'ի հող. և մեռեալ գիր 'ի Կաթուղիկէան. ԹԷ Նախանձու բանսարկութե եսեւս մահ յաշխարհ. Երեւոյն մեռեալ զնա ևս յԱդամմայ ծնելոյ՝ յաշխարհ. Կայենի և Հաբէլի. որպես 'ի փորձել և 'ի նեղ՝ յանդրաւ ընտանութեան սիրելւոյ հայեցուցեալ. զԿայեն նա-

տան և ըմպել։ Այլ և չարախօ-
ցութեամբ և անհնազանդութեա-
թեամբ եկեղեցին. ասեն, Ընդէր
աշակերտացն Յովհաննու և Փարի-
սեցւոցն պահեն, և քո աշակերտացդ
խառն ուտեն։ Կոչեցին զնա և զի-
նարբու։ Ո՛չ, ասեն, ասայց ասելի,
թէ Սամարացի ես դու, և դև գոյ
'ի քեզ։ Եւ մաքրելով սուտ վկայու՝
ստ մոլեգնութեան զիմաց՝ զնէ
գնեաւ ասային խաւել, և զորպահն
խորամանկելոյ ասացի զատապարտն.
ոյր ծանուցելով Պիղատոսի ընդ
վկայութեան Աստուածութին. Թէ
ստ նախանձու մատնեցին զնա, լուա-
ցելով զձեռս՝ ասէ. Անպարտ եմ
ես յարենէ սորա. զի ոչ ինչ գտի
'ի դմա վնաս արժանի մահու. զոր
ասել և բաւ ձեր արեանց զատակա-
րաց։ Եւ ընկեցեալ զնա յարենան
և 'ի մարդասպանս, որք կին եղե-
րեան մահապարտք՝ և մարդասպանք
Հրէիցն և արեանն. Որոց չնանգաւոր-
մեալ զիւրեանց նախանձուն՝ մինչև
կեցին մահու, և ոչ արդեօք այլ ա-
նձնից. հերձ զղջացողն և մար-

չէ զամենայն ծածկել զերբնա. և
տարադէն բարբառեալն 'ի պատմու-
թիւն. Տեառն, ասէ, որդւոյն Աս-
տուծոյ զզգեստս մարդկան՝ խոնա-
րհեցման ընդ ձեռս. Առաջադասորդ
էրէց համարեցաւ այնպէս մեծ սր-
բութիւն Աստուածային փառաց
ազդէ յայդ մեծի յանխանան. եթէ
ոչ յաղագս հարկանելոյ զերդա-
գնացին և չարեաց ընդ գնացին զՄատ-
րոբ հանդերձ Աստուածային բազեան,
և յանձնագանելոյ զբարբառութիւն Աս-
տուծոյ. Արդեամբ պատուհասի զգ-
ուան և ըստ հաւատոյ արմտեց 'ի
մեծամ պատուէրացն անձնան 'ի ծա-
ռայութեան Տեառն. Աստ ոչ արդա-
րեն քաւն անձնանձնար խոսքըն՝ բազ-
մամ ամենամակեայ քննականութեամբ
արդեանս յերգարքն.

Կամիցին զօրացն անդամքն 'ի
մասնաւորապէս պատմութեան և յայ-
լոց մարդարեից ընդ հրեշտակացն.
հայեսցին ընդ առաքելն Յովհաննու
հարցն աստուածաբանութեան. – Այլ
Աստուծոյ՝ Եղիա, ընդ ամենայն
զնայուն արժանաւորութեամբ և զէ-

տեալ հաշտ Աստուծոյ՝ յանձնահա-
ւան փոխեցաւ վախճանին։ Նոյ՝ բազ-
մամեանակեայ պաշտելով զկուսու-
թիւն մինչեւ 'ի հինգ հարիւր ամ,
և չինի այսորիկ յաղագս որդեծը-
նութեան ամուսնացեալ սրբութեամբ՝
երկրորդ աշխարհիս ծերելոյ գլ-
խաւոր պատճառաւ։ Ըստ այնմ և մեծն
'ի մարգարէս Մովսէս, այնուհետև
և պաշտօնեայ նորին պարկեշտա-
կեաց կուսութեամբ պատուեցաւ Յե-
սու։ Իսկ զզարմանալի զաճեն զԵ-
ղիայ՝ ո՞ որ բաւական իցէ ասել
բանիւ զզգաստութիւն, որ 'ի մարմնի
զանմարմնոյն բերելով զհրեշտա-
կութիւն՝ հրեղէն կառօք 'ի հո-
գեղէնսն վերացաւ 'ի կեանս։ Իսկ
եթէ 'ի [illegible] ճառեսցեն
զաղօթից բազմայիցն զմնանս, ըղ-
ձազգեստ զայեն և զզարհուրե-
լիս, որ զրնաւ զործեցոյն միջոցի
ընկեցեալ միգամածախառնութիւնս, և
զոր զպատճառս անձինց հայեց-
մանսն՝ ընդ կատարեալ չուութեանն
լինելոց Փրկչին առնելով։ Թէ ։ Որ
հայր 'ի կին մարդ՝ 'ի պատճառս

թիւն մի անուանեալ 'ի միջի մե-
րում ։ Եւ ասացեն առ նմին . թէ
« Զայս գիտասջիր . զի ամենայն դա-
նին . կամ ազգն . կամ ազգաց . որ է
կառավարելու . որ ունի մասանցու-
թիւն յաջողութեանն [illegible] ։

Արդ . այլ առաջին հերք և թը-
շուառականք . ընդէր առ նախանձ
որկանձիցեն զանձինս ընդ անօրա-
կութ մեղք ։ զորոց և ¹ յիշէ ա-
ռաքեալ . թէ « Են մեղք որ մահա-
ցուի են ։ » զոր և յԱնհաւատալեաց
հարցան զանց և զանց ամենն իւրեա
զորհամարհեաս . թէ որ « Հայհոյես-
ցէ զՀոգին Սուրբ՝ մի թողցի նմա ,
մի յայսմ աշխարհի և մի 'ի հան-
դերձելումն ։ » Այլ զորձէ որ մեղա-
ռաս թշուառութեան մարմնոյ . որպէս
և եաս՝ որ մեղաւորս եմ յան զաան-
նայն կենդանիս . այլ ասել զմեղան
յայլ մեղս՝ որոցիմ արհամարհեաս և
անձնարկեա հոգի կորիցէ անել զգե-
տաս ։ Իսկ որ Նմանայն պատճառն

1 . Պակասեալ ասեալ յիշողին . որ է Սուր
հանձնս ։

և զարհուրեալ որպէս հարոց լի-
ցի փոխեալ 'ի գեհենն՝ կորստա-
նէ պատուականի թողութեան. Իսկ որ
կամիցի ապաշխարել ըստ ձեռս ան-
ձին խոստովանող՝ շնորհի ողորմու-
թեան:

Այլ աւաղ: Աշխարհաւոր է. և
զոյգ ամէնք ծանուցանէք անձի-
ցանց չնչկէն. զոր հաւատացա-
ցեալ 'ի ախտարածման՝ թերի զնոր-
գապետութիւն՝ ձորհքն որ էր 'ի
մեր, հայեցուցանէք. Որ և զանձն
անկամ աղանդոյն, որով բամբա-
սէք յանցցմանցն՝ կարէ յոյժ հա-
մարիմ աղաւեցի ծանուցանել զոյժ:
Այլ մեծասամն հայհոյանացն զնա-
ցանց իսկ զառաւելագրեցուն ըսել
զնմանս, թերեւս և ընչքեա հանա-
րէլ զապանձեալեցն գրոցնա:

Բայց իմ ըստ կարի առաջադրեալ
յանձանկան ասամանցն, և ըստ զօրէ-
ն ախտարածմանութեանն իմոյ կարգա-
ցեալ զնէրս արարեցն սորայ. որ
վասնայն Սուրբ Հոգւոյն զնոս՝

1. Յոբ. Լրդադրութիւն.

զորըս հոգեփողոս ադանդաւոր ուսմանցն գործոցանենին անդրէն ՚ի մէջոս ծոցանց. և զաղէզանօ ծոցս փերեցին. և զերկեազօրն վարդապետութիւնն խորհանդրով մեզ աւանդեցին՝ հաղորդեալ խորհ զօրդարն ողեսիր հայր, զամենայն աշխարհակերհաւորդ մարդոց զդաւան. զորոց յերկար որ[1] և ջերմ սիրով ընծայեցեալ գրերալը, անձնաս և զխաթաղերն կարդ լծնել հրաժանդ նեանց չար ձգողացն. զորոյն աւետ զԱթանաս Աղեքսանդրացւոյ, և զերկուց միաբանութեանցն, զԿիւրղէ Աղեքսանդրացւոյ. և զԿիւրղէ Երուսաղէմացւոյ. զՄարկեղէ Անկարացւոյ և զՆերսիսէ Նաղաղացւոյ, որ և յաղագս տառապեալ ՚ի ձեռս չարաց՝ Աստուածածնին յորջորջեցաւ. և զմիւրոյն առաքելականման նահատակին Գրիգորի՝ զվարդապետեանն Հայոց. և զնոցունց նմանեացն, որք զնոյն չափիւ ստուգութեանն հետևեալ վարդապետեցին. Յաղագս

1. Խոնարհն մեհենաց.

որոց և զայլոց ամենայն և զորս ա-
նուանս արարեալ՝ ծառայք նորա ամե-
նայն գրեալսն[1], զԱրիոսի Ա-
ղեքսանդրացւոյ և զԱպողինարեայ
Լաւոդիկեցւոյ[2], և զՆեստորի զԱն-
տիոքացւոյ, և զԵւտիքեայ Կոստան-
դինուպոլսեցւոյ. և զԿամրիրեայ
ասորւոյ, որ և յետոյ Մանի զհետ ա-
նուանակոչեցելոյ. ասաց և Մանի-
քեցիք կոչեցան աղանդաւորքն նո-
րա. և զայլոց բազմաց զնոյնանման
հերետիկոսաց հանդերձ գրովք իւրեանց.
զորս ասէր կաթուղիկէ և առաքե-
լական Եկեղեցւոյ նզովեալ և ար-
տաքս ընկեցեալ՝ յամենայնէ 'ի բաց
և մեկուսացեալք 'ի յԱստուծոյ ուղ-
ղափառ ուսմանէ, մինչև ցայսօր մա-
րին նզովեալք իւրաքանչիւր աղե-
տիւ, անծանօթագոյն մնալով, և
յայսմիկ են ամենայն ուղղափառ
ժողովրդոց։

Եւ արդ Թէոփիլոս և զԹեւոն արար
անդրանիկութեամբ հրաման 'ի հայոց.

1. Պատառէ կամ խառնակեալ է բանն։
2. Ցայտնի՝ զԱպողինարեայ։

ովին. այլ սակայն բանիւ և ոչ գոր-
ծով. զի ըստ մարմնոյ պարկեշտու-
թեան յանձնւոյն ճգնութիւնս մի
զմիով երկերս տանեն, և մանաւանդ
'ի կերակուրս և ըմպելիս և 'ի դի-
ջութեան մաւմկալութիւնս.

Իսկ Հայոց աշխարհին աղանդ՝ զոր
ասեն, անանուն է ըստ վարդապետի
և անգէտ ըստ բանի. Ի հաւատոյ և
յուսամանէ ազգաց երեսին, և 'ի
գործս ծոյլք և անժոյժք. յորոց՝
ըստ անգիտութեանն՝ որ է 'ի նոսա,
և ըստ անկարգ վարուց[1], այդպի-
սի իսկ արդարև աղանդոց վայել էր
բուսանել, ըստ յղփութեան տառա-
պելշարժնութեանն. թէ . Ըստ խա-
զի հարանցեցիցն՝ կոյանջուր բաղա-
նիք.. Մի արդարև պատահեցի այս
'ի Դեթ, ըստ բանի ողբոյն, և մի
լուիցի 'ի դրունս Ասկաղոնի.. իսկ
որ ընթեռնուն 'ի միտ առցէ.

Այլ ես թէ և գիտեմ զայս յայտ-
նաբանայն՝ ընդ մեզ գտանել և կամ
պարտաւորել անձնեաւքս ոչ կամիմ.

1. Տեսցիդ՝ ամբողջ ըստ նոյնոյ.

վասն որոյ կարծէին շարաթութիւն.
Թէ և ես նմանեցայց նոցա. Քանզի
տեսեալ էր 'ի Փռիւգէն, որ ոչ կա-
մեցաւ ամենեցունց՝ յանդորրս խեղել զ-
րանս 'ի ցորենոյն՝ փոխել 'ի ժամա-
նակ հնձոցն, և տարապէս զհերձուա-
ծոյ 'ի ժամանակի հնձոցն. զոր
կամ հերձուածս խուն առնէ, և կամ
ծնծղայից վարդապետս, որպէս տա-
վար էն զվարդապետս հերձուածս
անուանել առաւօտնեղէն Պետր.
որպէս և զխնամս՝ տառատնս առ-
ասցէն մարդարքէն. Իսկ ես ոչ հերձ-
ուածս և վարդապետս, և ոչ երբեք
խոկալեմ նշխարս բանիւ այս քաս եր-
բեք 'ի Հարցողաց աղօթից կանոնս
գործոյ խոնարհութեան [1] և ոչ երբեք՝
Քանզի յաղագս առաքելոյ զխա. — Թէ
բեռ արգելք և քաս անհանգստու-
թեան, — առաքելոց և անդարձուածս և յա-
մենայն մեղաց ազատ առաւելցէք
Հայոց՝ թող 'ի մեծամեծ մեղաւ.

1. Պահպանի թէ կամ խորհրդեան և, իսկ թէ բանին յայտնի լինել փոփոխող կամ հեռաւոր առաջնութեան.

ցուցանել զխօ, յեղեղակարգութիւն և կամ 'ի նոյն յառաջին դիրաւութիւն, և կամ յեկեղեցւոյ դատաւորութիւնս, այլ և քարհապանացու ոչ չարաչ, զոր Պօղոսիկք և այլք ամբարշտաց գործեն և այժմ:

Իսկ ամենայն զանձն յանդգնեցուցանել 'ի վարդապետութիւն, որպէս և զբանդագանձ ամբոխելի յանդիմանդոյ. այնպէս յանձնայքն տանեն սարսելի' 'ի Յակոբոսեան. որ բազաքեն ցանկ, թէ «Մի բազում վարդապետք լինիք, եղբարք. գիտացէք զի մեծ դատաստան ընդունիցիմք»: և ոչ զգուշանալ իւրեւ յղանալին սպրդ և վատթար գործովք, որոց չնոյնցեալ յերկանց գերանն' յայլոց մատուցեալ յականն' զշիւղն հանել ջանալ: Եւ այսպիսի կեղծեալ հնարին կարծեցուցանել այլոց խորհի զանձին արդարոց. և այն ոչ երբէք ծանիցի, այլ եւս առաւելեալ յանկեղծանելի կոսական ամենայն բարեկութիւն յառաւելն բարեկութեանն. և չունին զՊօղոսի բարեկն, «Թէ զանձինս զատեցաք»: Եւ այլք ապաշխարութեան

տիեզերս վարակեալք՝ արկանեն ընդ ագարակաց զարդարս և զշէնարդարս, և կարգացեալ նոքա ընթանայ զհանդոյն՝ յաղագս որոյ խոստմնն. այնուհետև զամենեսեան արդարութեամբ անեն և անեեղս. և զմարդարէն Աստուածոյ ատաենական զաղաղակ՝ մեծնասանաց Թէ Նովաւ զՍուրբ Հոգւոյն, Թէ « Վայ որ պատէն զաղահաւԹեան յայր 'ի տան խորանս »:

Դարձեալ ասէին Թէ զամ ի ախիղծ որ է և չարագործ՝ Ղազարոս վասն այդ են, և ոչինչ զնոսա: Եւ զայնպիսի բանից զառասպելագրաց ըղձըմ՝ ետ ասելով լսել, զի ոչ ինչ է ինձ հարկ ասել. բայց որ ամենայն և անձայտա Քրիստոսի՝ չլսել. այլ անընդ բազումն մտաւնել: Եւ անհնարինն բարեկամութեան եղբարաց արդեօք զդի դրաւականն զգա անեանն եղբարցդաւէ[1]: Եւ ամենն երկրեանցն զամենայն անձնեան և խորասուտ մեան

1. Խաւանակ և ապաւ կայ 'ի բանից. ԹԷրբեա զգին այստե կայ ընԹեռնուլ զերևին, և Նշանագրեալ զ'Նշանագրեալս

և զիրահանդ՝ հոգեւորս և մարմնա-
ւորս. և զծանօթութիւն աստուածային
հաւատոյ՝ յորդորելոյ 'ի մարմին քաւեալ
և 'ի գիրն 'ի Տեառնէ. Նա են որք ու-
թերահաւատաւորք են հաստակս և
կամ ախտաղծք. այլ յամենայն մտա-
ւորութեամբ և ալիրս արդարութեան
էին և կատարեալք. Ընդ նոսին և
զԱրեգելդենց ամեր. որ և նա 'ի յոր
Տեառնախրոյն և յամենընկալ բարե-
րարութենէդ ունի զամենայն յար-
դարանացն իւրոց և լնելոյ 'ի միջի զգաստա-
նոսա, և առ 'ի Տեառնէ. և են 'ի
Քրիստոսի շնորհէն ամենեքեան ողջ
և 'ի միջի. Հարցցեն բան մարմնոյ ըղ-
հայրութեան խնդոյ խրատոս և զդառ
հոգւոյ զվարդապետութեան խնդոյ
զբան, և զոր ինչ լուեալ է յոր յի-
նէն. չանելով պարտաւորութիւն
յոգնս իւրեանց, ասացեն ան-
ուսա.

Բայց սիրելին եկեղին եղբարքն
զմանման Սրբոյ Կաթուղիկէին՝ սրբո-
զակք և ամենայն ախտայինք. որոց
իւրաքանչիւր ուրուք առաւ յայտնե-
եր՝ և զրամ. Մեաց 'ի ահեղանծն. որք

արդարև քո Տեառն կամօքդ զգա-
երեւեցան կամակատարք. Վասն զի
յորժ յօրինեցան, դու Տէր, ըստ քո
անպարագրանելոյ խնամոցդ յանձնե-
ցեր զնա քո ընտանեաց. զգաերեւե-
ցան յետ հրամանակատարք բանի
քում. ուրոյն ըստ կամի զպաշտպանե-
րութիւն ամենայն հաստատեցելով.
և ուրոյն զիմ պէտս և զհարստու-
թիւնս հոգալով. այլ և զբանս իմ
յոյժ ախորժելիս և պատուականու-
թեամբ ընդունելին՝ որպէս և զա-
ռողջ վարդապետութիւն. և պատուելին
որպէս և զհայր. և մանաւանդ ա-
ռաւել քան զՀամադասաց, որում
ետուր Տէր այցելութիւն, որպէս և
տանն Ոնեսիփորայ. բարեխօսութիւն
առաքելոյն զբանն. զի բազում անգամ
հանգոյց զնա և ի հալածմանն կիրա-
կելոյ իմ եղև։
Նոյնչափ ես և այլ նոր ինձ բանս ա-
ռեալ Տեառնդ, զոր եթէ թուիցի ար-
դարախնդիրի ձայնդ՝ նախ քան զա-
մենայն աղաչեմ զանկցոյ ընդէլ զայդ՝
յոյժ մեղադրանս հասանել ի վերայ՝

կամ զարմանալիք և կամ խառնակալ[1]
իբրև զոչ. արգադոր՝ անդրանիկալիքը ։
Վանդի յորև յարմենէնեալ աաարար
գու. Տէր, զնա 'ի անեղից. մինչև յոր
հալածման խնայ՝ 'ի մանից անեղութեղ
և կամ երեխայրեաց մինչև ցդրամ
մի յանձանն իմ ոչ է յարեալ, և յիրա
խնայ պխանցից ասնեք ինչ ոչ էր
առնեալ. և զխառն զայս ընակնալքն
ընդ խա։ Այլ առատութեանըն այր մի
Անգիմ անուն, որ եկեալ 'ի անեղից 'ի
Գուրգմանայ վանաց՝ 'ի նմին աստր
յորում հիմն արկաւ անեղութեղ, և
մինչև ցդնալն իմ 'ի անեղութեն էր.
և արդ լուայ թէ աա Անգլըն է. նա
աստուածն զխաւ՝ քանզի յոլով նորա
արբանեկեալ էր զակեալ անեղութեղ.
հարցի թէ կոյ ասէր և ասացի.
Այլ կարգեալքն ինն լրա ատարեալ
'ի անեանն Ներսեսին և Հրաշայ 'ի
այնա գործմանայ և հանդերձոյ և
մինչ՝ յայտնի է, նոյնպես և 'ի յա
Տեառն յեղբօրորդեացն. և այն իւր

1 Յօդազին, խառնեալ էին ոչ արա-
գոյ ։

շատ լինիլ ինձ և բաւական. այլ և ր-
րեր և յաւելորդացն 'ի պէտս աղ-
ւոյց ծախելը յիմոցն. Եւ յայլ բերելո-
ցըն իմ յԱստուածեղ և 'ի Վրաց և 'ի
Աղուանից և յԱրշարունեաց, և որ
'ի գաւառաց իւր 'ի մեր Տեառն եպիսկո-
պոսացդ. առաջնոյն իւրոյ պատուիրի
աւրաւք տաւրն արժանաւորութիւն մեզ 'ի
անկողնի դրամ. և զիս հանդէս մեր
և Թշնամանաց յամենայն արարչու-
թեանց. զոր 'ի մանկութենէ արարել-
եր. Զի անդամ և զհատամ զգեստ
ոչ եստան զինի իմ. որք կան այլք
ընծեցեալ 'ի կերակուր ցեզոց. բայց
արգեալ կարգացեալ ըստատուարե-
ցին 'ի գաւառէն բնակելոյն 'ի անկողնի
և կամ զայլս ըստատուարեցն.

Եւ դու. Տէր. զայս և մի ինչ ոչ
գիտացեալ. բայց գիտել արժան է-
րանդի ըստայ. եթէ ասեն զինի իմ.
եթէ բերել ինչ 'ի անկողնի. Զի ամե-
նայն կարծեա կարգաւորեալ եթէ ա-
կաւ մի եկեղեցւոյ նուաստեալ բան զայ-
նածին. որք յերեկներ անմ ընծայ-
վաճառականքն՝ յանձնարարեն զանձնս ա-
մանի կալյ. Զի Թեալով մեծանդամ

և երկնիցս քաղցեցուս. բոլոր կամքն յանձնատուութեամբ չնորհաւորութեան, այլ զերբեմնեանթե զփառակցելեալ եր Տեառնդ՝ և պահանջմամբ յիմեն համար, զեմ յանցխանս զերեկելիս զուարթացե քո ընդդրութեան, զօրութեան և կամ պարսաւանաց եր արժանի: Բայց հա ընդ ամաւէլյան և եթ այսր անդր[1].

. . . . . . . . . . . . . . .

Զի տրտում եմ անմխիթար մինչև ՚ի մահ, որ նման զայլոց յարձակեցան յարայս իմ և զկշտակցին յանձինս, անանապ զիս՝ եթէ մերձեցայ յաչաց քոց: Նա որդ խնամ ընծայեա ըզքեն ապաւինայն՝ ծառայ ապառնել զիս: Այլ որ եմ ՚ի անկցելն մեղաց իմ, աղօթս եմ և գնեմ, զի ՚ի առաքս և ՚ի հօգեւոր անկեալ մեղաց:

Պարտեալ այլ ըղձանց րանիկ զայրացուցանել զանձն. Տէր, ընդ իմ փութայից. թե մնաւորի մի հազարապետ անկցելոյ չնորհի ասանել: Նա հեղ հրեշտակ որ ոչ մարմնացու, որ թերևս ըստ հոգեկին բնութեանն

1. Աստեն թուի թողթ անխես

ածանող զաս 'ի ծածուկ ձգեալ ը-
բոլորովին իմաստութեանն՝ մարթէր ըղձ-
ձանալ և յանձն առնուլ լինել ին
երկնային մարդ. զոր և առնէր։

Այսքան և անդր հասանել մտաց ան-
հանելին 'ի զուարճանութիւն[1] եկե-
ղեցւոյն. և արբուցեալ հրապոյր-
պղտորս՝ ամէնն. Մ՛ի առնելով մարդիկ
ընդէր կատարեալք յանկարծատ. Մի
ըստ 'ի զուր 'ի խորհրդածութեան ան-
գործը. և խորհրդութեամբ անձնաւանայ
լինել. Զի են 'ի Մակեդոնէից ամե-
նայն ծառայք ասելոց և այլ զա-
հանդոյ ասաց որ է 'ի ամեն. որոց
ընդ մեզ բանք են երգեմակ. Թէ
երբ և է 'Նազովրայ խոհ զառամ հանդ-
գեալ այգը. Թող թէ նորա ասէր։
Եւ այսպիսի բանիւք թուլացեալ
բոլորն. այծուհեաւն 'ի շրջակայ խը-
րհեանց՝ աստուել զաւն 'ի ամեցին՝
փառաթոյթն համբերել։ Սակայն ես
նման մեղաւ բերելով յամենայն
հոգեմանց՝ բառակեան լինել և ծախ-
զայն և մթերից անկեալն։

1. Տողալիքն ի զուտանունութիւնքի։

Բայց. դու Տէր. այր յերկարա-
ձգաց ես եւ անձանձրոյթ. մնալոցանդ թէ
ցա 'ի քեզ հաղորդութեանց՝ եւ
ճաշակ ես խորհրդոյս ընծայից. ըն-
ծայեալ պատարագաւն երանելւոյն Յով-
հաննու՝ Կիւրղայ կաթողիկոսի եւ
ժողովրդեան. քեզ Տեառն 'ի Սեբեայ
գրաւականն՝ յարգանօք մատեանց. որք խոս-
տանալով քեզ Տեառն՝ կարգաւ,
խնդրեմք զամենեցունց. Եւ քո Տեառն կա-
ցնկալ զանէր Վարդ՝ զօր եղբայր
եւ զՃշդեցին եւ զիմ անարժանու-
թիւնս. հրամայեսցես միաբանութեամբ
երկրորդել տեառն Յովհաննու ըն-
պատարագաւն. յոր առաջեալ քո
Տեառն եւ այլ բազում ինչ բանս,
զորս պատարագի պատասխանեալն
արարեալ. եթէ Պետրոս եր նորա խոհ
ածել զնոսա եւ զայլայլոց ինչ ... 
ա խ. բայց սրբոց ... նորա ան-
ձնաւորեալն. առաջին ես զայլայլոց
գրեանց ... զմտաւորս եւ բազում
... թեանց զծածկս՝ վասն վա-
... թեանց ընդ թէ եւ ընդ
առ ոչ կարեմ. եւ ոչ զհոգեւոր եւ
... զանձն՝ անձրեւոյ եւ

անցաւոր կարասւոյ փոխանակել:
Եւ ընդ անուան Յովհաննու դըպ-
ցոր. Թէ բնաւ երրն զեղ ամէն ըն-
կալ էր արժան զղջացանէ րան-
Թող Թէ առ իս բերէ:

Եւ ես վասն զի անկարացեալ ի
անզգուշացող այր եմ՝ յերկրաւոր
մտաւ. որ զգայի ժամանակն գոյցէ
այլ դարձաւ էր փութով և երագ և
բաց անհնանել յառաջ արտասուաց
և աղաղակել, և 'ի բաց փարելէ
հոգաբարձութենէն անցեալ. Եւ
առաջ ընթէք արծեալ 'ի շարաթը
ժամանեաց զաղանացն. որք յայնմ-
ամէ զարդարանմանեալք 'ի ծածան-
և բառ անձնանուր մեծութեան ի-
բերանց առաքելի կարապետաւ[1] գետեղ
բաղցած յետան՝ որեցին որպէս ա-
ռեր զլեցաւ ի բերանց և Թովմէ խեղ
կէմ 'ի ներքոյ չըթանց. Եւ իմ ո-
մարթացեալ աղթել իրրն գլխա-
ւորացն. Թէ. Պաշէա. Տէր. 'ի
մեաաց մեղաւորի և 'ի մարդոյ չարէ
փրկեա զիս ». որոց հեռանահեղ

1. Յաղագ. կարապա.

այնուհետեւ խափանեսցին զգնացս իմ. եւ հատանել խոցոտեսցին զիս 'ի մահ։ Այլ խնդամ ցնծացելով. զի այն վերջ է որ յառաջնոցն խոցանելով իմ հոգիս մերձ՝ առողջացելով զօրութեամբ։

Եւ այսպէս վճարեալ զամենայն կամաց խնդիր 'ի վերայ իմ՝ այնուհետեւ սպասեսցեն որպէս 'ի կատարելութեան աւուր զուարճացելոյ։ Որոց սպասեն եր լաւ զիս իբրեւ զանցուցեալ՝ ծառայել շուրջ զինեւ 'ի սենեկի. եւ պատրաստել իբրեւ զվերակացուս եւ զեղ զինել. այլ զօրացեալ հաստեսցին զհետեւանսն. այսպէս սանձելով պատուեսցին շուրջ զինեւ. 'ի սկզբա իւրեանց խնդալեօք. «Եկեսցեն 'ի վերայ իմ զգեստուն իւրեանց եւ առասցին. վաշ վաշ ասասցեն այլ մեր»։ Եւ զի ոչ լաւ քանզի ընդդիմադրութեան է զօր ասեմ, այլ Յեհովաթայրեն որդեծնաց փորձիւ, յան զիմեալ կացուցանեմ Տեառն ըղձանս։

Զերեկելի սեպուհ մի յանձնառար ատեան՝ առաքելցի առ զեղաւոր

Հայոց թագաւորութեան, առ Վռամշապհոյ հօրն. ասեմ. Եւ ի թագաւորութեան վերակացուաց ժամու, հանդերձ յօգնել. խրատելով 'ի թշնամեացն անձինս ձեռնարկս. կարգեալ եւ մեզ 'ի մէջ. զեղ և պատուհասն հարկ' զեղն զեղ և պահել. կամ թէ մեծամեծք' առնել 'ի չքոյս և թագել. Եւ նա պատուհասէ զարեան առաջ առ[1] պատերազմելն Ծանրանալով Պրկանակ' ազգ. ըստ. և այլն[2] ոչ ինչ թէ թէ. եթէ Եւ և ի առնանել խոչ չափելով զգեղ առ երկիրքն. զառ առաւ, եթէ զամ թագեմ և կամ թագեա. Մի զաւակ ընզգեղաւլութեանցն և զիւ ըստ մեղ թագեցէ.

Ո՞վ անդրկեղութիւն յաղէ հաւատ է. ո՞ր հաղորդութիւն արդար ասացեալ. ո՞ր գրկատարաց արդար հայրապետի. Արդարեւ ապարէն յաղագս մեղաւորաց զիտեմ եղել. ըստ թիմիովեալ

1. Բազմիցն էս.
2. Տեղոյ. այն.

համբերելոյ, հալածելոյ և թուք յե-
րես առնլոյ, և փշեղէն պսակի,
համբերել սոյնպէս եւ մեծամեծացն.
զոր և քաջ անձամբ սրբեալ ընդ ե-
րեսս Թագաւորացն վիրաւորի. ոչ եղ-
ծանել 'ի մարդկանէ երկնիցն: Մանաւանդ
մարտուած զցանկանեն 'ի Տեառնդ-
ասցի զԹանկն՝ զզինս զարմանալոյ
Հեծանողաց՝ 'ի առաքեալ համբարձելն,
և զՀեծանելոյ հանեալ 'ի պանդխտու-
թեան՝ ընկենել որպիսայս բացագամ ան-
փոփոխութեանց: Փրկիչն Քրիստոս
բարձր նշանակն զանձնոյն որ խնդրեն
զմեղաւորս: «Եկայք առ իս ամե-
նայն աշխատեալք և վաստակեալք,
և որք ունիք զբեռինս ծանունս, և
ես հանգուցանեմ զձեզ»: և Պօղոս
զանդրադարձեալ զորհնութեան զանդրայն
զխոստմանն յաւիտենից՝ չէ ես զը-
րելոյն զգուշացուցանէ, գրելով առ
Գաղատացիսն. «Եղբարք, ասէ,
եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք 'ի
մէջ ձեր և իցէ յանցանս, դուք
որ հոգեւորքդ էք, հաստատեսջիք
զայնպիսին հոգւով հեզութեան,
զգուշ լինելով անձանց, զի մի և դուք

Եւ արդ՝ ո՞յր ուրուք 'ի այլոց՝ թող թէ ստախօս մի և 'ի չհաւատա- լոցն. ոչ զարթնուցու մտօք. չէ- ահիցէ խոնարհանն. ընկալեալն 'ի գամենայն Սուրբ Հոգւոյն շնորհ և շնորհս. մանաւանդ որ ըստ խոստո- վանութեան ոք՝ և ոչ հաղորդակից գիտութեանց մտաց յաւելն, 'ի ընդդէմն յաղթու՝ և ոչ յանձինս պահանջել գիտութեան. Զի եթէ ընտիր Աստուծոյ անօթն Պօղոս՝ առ իւր աշակերտեալսն յԵփեսացիս- աղաչելով. «Աղօթս արարէք. ա- ռ. և վասն իմ. զի ինձ տացի բան 'ի բանալ բերանոյ իմոյ». և արդ եթէ որ հաղորդակցեալն էր խոր- հրդոյն Աստուծոյ՝ աղօթից կա- րօտէր և աղաչէր. ո՞րչափ ևս առա- ւել այժմու մարդկեա՝ զգամենայն բազում օժանդակութեանց.

Իսկ Հայոց արեգակնս առա զա- նաշանց նախանձու. որ մերօքս և 'ի մերում դարու՝ զնոցանց հակա- ռակեն եղելոց. և արդարև ըստ ա- ռաջադրի մարդարոցն՝ յղանան զյուսա և ծնանին զանօրէնութիւն. աղօթս

թող չտանեն 'ի վերայ տաոգին. այլ և եթէ յանկարծ շնորհի բան 'ի մարգարէիցն՝ հեղձնուն 'ի նախանձանս։ Եթէ գոյ ուսանեն 'ի ժողովրդեանն եթէ գովէ, ծաղր առնելով ամաչեցուցանեն. «Արդ ըսելիք, ասեն, չգիտե, և ընդ վայր աղաղակէ և գրգռէ»։ Իսկ Սանձաց ժողովրդեան՝ և աղաղակն անդամ 'ի վերայ նորա ծնողացն՝ չարժեալ զնեանելըն 'ի գովութեան այլոցն, ձայնս անյարգականս արձակելով յայտնեն։ Եւ զորս նստին զկնորկեալս, պատառեալս երեսօք, որպէս առ հանեալ զխոկան, պատանեալս որպէս հանդէս գն։ Եւ եթէ զթագելով Մարգարէիցն՝ կամեցի առ բան խրատու 'ի ժողովրդոցն փրկութեան, հայեցեալ 'ի զաղըն խորհրդոյն նոցա որոմնեանն՝ յինքն ամփոփեալ արգելու զշնորհն։ անզգաստակայ աղաղակէ ըստ գրելումն յՈրջնութեան որջնութեանց, երկրին ասէ, ահա և նախանձ։ «Թափէք նորա թափէք բոլոր հրոյ»։ յորոց խորոտանեալը ըզ յայոց 'ի

[illegible] ա-
թե. և 'ի [illegible]
[illegible]:

Եւ [illegible] 'ի ժամանակս՝
[illegible] Եղիսէի, որ
ասէր [illegible]. « Ո՞ [illegible]
[illegible] 'ի [illegible] և [illegible] ա-
[illegible] », և [illegible]
[illegible]:

Եւ [illegible] գիտա-
[illegible] Ղազար. և այժմ [illegible]
[illegible]: Մէջ 'ի [illegible]
[illegible]
[illegible]. յորժամ ա-
[illegible]
[illegible] 'ի [illegible]
[illegible]
[illegible]
և [illegible]
և [illegible] 'ի [illegible]
[illegible] և 'ի [illegible]. [illegible] և [illegible]
[illegible]
[illegible]. 'ի [illegible]. և [illegible]
[illegible]
[illegible] և [illegible]: [illegible]
յորժամ 'ի [illegible]:

րաւ շնորհակալութիւն՝ ընելով տը-
ւելու բանին. և ոչ թէ յաւելին,
բաւ մեկն. քանզի անձինք և շնորհն
և անպատիւ են պարգևքն. այլ 'ի
գոյանէ, զի մի ընկեցն զբան փըր-
կութեան խորհրդոյ։ Ա՛ս որպէս կա-
տարի բան Հոգւոյն, որ ասէ. Թէ
« Տայ մեզ առն ըսէ զգաստացանս
Տեառն »։

Ասհեղացեալ զհամեմատութիւնն
'ի բազում յանձանձնս, և զոյս եւ
յօդեալ յայլ շնորհափոխութիւնն՝
ասէ թն. «Այդ[1] գիր ոչ կարգայ, և
զընթերցուածն այնպիսի ասէ ան-
տայթոյ՝ որպէս թէ զգոյն։ Ա-
յոյս ոչ հայելեան զիտել։ Թէ որք
զալ զիտելն՝ զառաջնոյն Պուլթի
պաշտանել միայն պիտոյ է 'ի ժամանն
անձինով, և ոչ միշտ զպիտոյն 'ի մե-
րձն ստենեօք խօսել զայլազան իրքն
զգանձապաշտեցելոյ։ Իսկ մեր եր-
նելի վարդապետութեան՝ զամենայն զեր-
տարերական եկեղեցւոյ երկիր և շը-
րջեա ուսուցեալ մեզ 'ի սկզբու.

1. Պօղի Առբ ...։

թեան. — կամին ուսանել զոսն թէ յարմանն մերկացել:

Նոյնպէս եկեալ յառաջագոյն րանիս՝ 'ի գեղ և 'ի պատուական համարիմ, յետ չշարժմանցն, և գերեցս երանեայ առաջադրեն զբան, զոր 'ի խոսքն առաքելոյն ասէր ցեղենկն, յետ ընկերն. թէ « Մեր բան արժանի զոր գործեցայն՝ ընդունելեալ պետատացայն » . և 'ի Փրկչէն հարկացուցանելով, թէ « Ինձ ամ ընկեր » . Այդ են ահա բան արժանի որոց գործեցին՝ ընկերաց զգաստութեան, և խոստովանիմ աստեղի հրեշտակաց և մարզկան. ինձ այլ առաջնորդման մարզինն՝ ընդէր այդպիսութե. և եա ատանել զոսն զայլս գիտելոյս՝ 'ի յաւիտենիս 'ի յոյսն, խոստովանն մեռեալ մարմնանեցան.

Երանելի Փիլոնախոսն Մակեդո, որ արդարև մինչև էր 'ի մարմնի՝ ցանկալ երկնային զօրացն էր զուգականէր. ոչ ապաքէն 'ի անդրանիկ 'ի ակզբ արեգական Հայոց հովանական արարքն. Ով զուատարքն և և զաղխատահլան զդրանն նորա՝

առաքելական այլն զՏէր՝ նոյն [1] ան-
հանդերձ հաղորդութեամբ վարդապետու-
թեանցն. որք և այժմ զնոսա ունելո-
բանիւթեամբ գիտեմ՝[2] ընդ մանկանցն
հոգին.

Առաջօք և յանձնեցանց յար-
գէն յոյսն՝ առ իւր Խոստովանին. չև եւ
հասեալ 'ի ատենական մեր. մինչդեռ
դարձ 'ի ձմեռնային և կրկին, որ-
պէս 'ի վերայ Թեսաղոնիկէ ընդդէմ
զենքեան. ասելով. Այս, ուր զայլ
մեզ Թագաւորաց. Եւ որոճելովն 'ի
հնազանդեալ լուեալ զզգայական ձայն-
հանեալն ազնուական՝ աղօթելով առ
Թագաւորացն, և վաղվաղակի ընծայու-
զհեշտագին. որում և անձնական նշխա-
րացն այլք՝ և ոչ մեր՝ արժանի եղեն
ընդունակութեան.

Այլ 'ի գեղ հանդերձեալ ընդ նորին
մեծէն և զանի Աբրահամ զնահապետ-

1. Տպագրեալն գրեթէ նոյն՝ ։ Այլ Թուականն
գրեալ 'ի խորհրդեանն Տէր. զոր երրորդ
Ա. Մեծագոյն մեծութեանց Թագաւոր զորու-
թեան 'ի Վիենա. Տես յէջ 41.
2. Տպագրեալն ե՛ս.

[illegible]

զեղջուրս 'ի վերայ եղբօր. այլ առաւելս զայրացուցեալ՝ գրգռեալն զհամայն խորհուրդ Ներսէս կատարեցին զհրամանս.

Եւ այսպ այսպէս Թշնամանեալք և հալածական հալածեալք, ոչ յերեկոյս ինչ ժամանակաց զրոյցատրութեամբս յանձինն հանդարտաց ծանուցում մեզ. այլ առ մեզ խոկ և 'ի մերում ժամանակի եղեալ անդր զայս ամենայն. Իսկ զյառաջագոյն զրեալս ասոյք արարեալ. զորս 'ի պատմութեանն նախահաւաքին Դրիգորի զրոյցեալ յիշատակէ. զինչ եւ առաջինց զարդար և զարմանաւոր բարեպաշտ կաթողիկոսն՝ զորոյն Ներսէսին, և զհրաշալի առաքինոյն և զմեծ լուսաւորչին Հայոց՝ զանէր Սահակայ, և զայլոց բազմաց, որոց ոչ բաւեալ 'ի բարեբան զրերանս խորհրդոյ՝ վախճանեցան.

Սակայն որոյ երկնային զարհուրեալ, մի զանցէ և 'ի զոյն յարկեն աշխարհականին արքայութեանցն, որ ասէ. « Աշխարհին եա աշխարհի առեղ մարզաբեռ և խնամոցն և զե-

հայրակերպի։ Զի դիցուք թէ ամե-
նայն ամենեցուն, յորժամ ամենայն
մարդ 'ի Հայր՝ յաւուր և 'ի կրակէր՝
հասեալ է մեծամեծս աստուածայնու-
թեան և զօրն և փառաց, թէ ասելոց՝
և 'ի մեծամասնէ 'ի կենաց, և 'ի
երանութեան զաւակաց և 'ի մէջն լինել-
լու Տէր, եղեալ են պատահման։ Ա-
ռաջ անուանեալ զայրացեալ որ ըստ
որմ զօր Տեառն՝ յԱստուածոյ փա-
ռաւորութեանն լսելով զհնազանդութիւն,
որ պարզելով առ մեզ բերելով
զերկրաւորութիւնս և պարծանս, և թէ
եր՝ կատարեն զամենայն հնարս, լսող
եմ որ առ նախանձնոս չհամարեցա-
նեմ զայրի փոխարէնս փոխանակ
զօր Տեառնս բարեաց։ այլ ընդդեմ
հակառակս։ Իսկ մերին արդարա-
ամեն ամենայնսմն՝ չհայի 'ի լոյս կա-
մայն ինքնին, այլ կայ խնամակա-
լութեանն յաղթութեանց՝ կառա-
րն հանապազ անփոփոխութեանց
'ի բարիս, 'ի փառաւորութիւն ա-
նուան իւրոյ որոյ։ այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

# ԱԶԴ

[illegible] 500 [illegible]

[illegible] Տեառն [illegible] Տէր [illegible] ի [illegible] ի [illegible] ի [illegible] եւ [illegible]

# ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ


Աբխազաց աշխարհի 551.
Աբրահամ երէց Աղուանից 222. 229. 230.
Աբրահամ Խոստովանող 255. 257. 260. 282. 283. 317. 319. 321. 322.
Աբրահամ Նախահայրն 91. 200.
Ագաթանգեղոս 1. 4. 7. 11.
Ագամ 573.
Ագամանկերտ 16.
Ագանիա 552. 554.
Աթանաս աղեքսանդրացի 585.
Աթիլ քաղաքաց 363.
Աղեքսանդր Մակեդոնացի 405.
Ալձոր գիւղ 470.
Ակիթ 591.
Ակոռի գիւղ 376. 382.
Ահարոն 574.
Ադամ նախահայրն 15. 125. 185. 572.
Ադրբադականաց գաւառ 446.

Աղձնիք 184.
Աղուանք 16. 118. 119. 123. 132.
134. 135. 137. 140. 141. 150. 154.
158. 182. 183. 188. 189. 193. 197.
247. 249. 251. 359. 404. 486. 592.
Ամբակում մարգարէի 588.
Ամիթ քաղաք 566.
Ամիրմերդանց Սիւնի 159.
Ամոն 578.
Այրարատեան գաւառ 20. 22. 25.
28. 29. 106. 182. 183. 187. 197.
282. 450.
Անակ 5.
Անանիա Սիւնեաց եպիսկոպոս 124.
Անաստաս վարդապետ 217.
Անարբեր 242. 231.
Անգեղ տուն 184.
Անգղ բերդ 174.
Անգեղեան 542. 543. 545.
Անի բերդ 366.
Անձևացիք 385.
Անձաւայ գաւառ 469.
Անուշաւան 355. 572.
Անտիոք 184.
Աշուշա 134. 148. 150. 172. 325.
325. 334. 335.

Աշտատ 326 · 327 · 334 ·
Աշտիշատ 104 · 367 · 438 ·
Ապար աշխարհ 257 · 264 · 284 · 305 · 321 ·
Ապողինար լաւոդիկեցի 384 ·
Աբրաամ արծրունի 222 · 236 ·
Առանձար ամատունի 201 · 236 ·
Առաւան աղբիւրեկացի 405 ·
Առաւան անձեւացի 236 ·
Առաւան վանանդեցի 126 ·
Առաստոմ գնունի 371 · 376 · 379 · 382 · 383 ·
Աւետ բագրատունեաց 388 ·
Առնակ ամատունի 236 · 340 ·
Աւխական 585 ·
Ատրպատական 72 · 261 · 319 · 322 · 476 ·
Ատրիկ 16 · 336 · 334 · 474 · 513 ·
Ատղէն վանանդացի 467 ·
Ատոմ գնունի 126 · 236 · 371 · 376 · 379 · 382 · 393 ·
Ատրներսեհ սագար 390 ·
Ատրորմիզդ Արշական 215 · 216 · 220 · 221 ·
Ատրպատական աշխարհ 367 · 369 · 487 ·
Ատրվշնասպ-Յոզմանեան 390 · 396 ·

Արդշիրաց-Թաշանեան 339. 360. 366. 368. 373. 374. 378.
Արաբիա 536.
Արաճէշ գիւղ 533.
Արամանեաց գիւղ 165. 167.
Արեաց աշխարհ. տես Պարսից աշխարհ.
Արիոս 583.
Արէշ. տես Գարդմանք.
Արծաթաղբիւր 446.
Արծաթի գիւղ 454.
Արծաւի գիւղ 176.
Արծնի գիւղ 65.
Արծրունիք 148. 149. 383.
Արծուան 205.
Արշակ որդի Տիգրանայ 2. 71.
Արշակ որդի Պապայ 2. 20. 21. 29.
Արշակունիք 19. 25. 29. 31. 33. 38. 49. 50. 52. 68. 72. 94. 96.
Արշակունեաց գաւառ 436.
Արշաւիր տոհմապետին Կամսարական 126. 167. 185. 190. 192. 210. 221. 245. 250. 256. 303. 316. 327. 371. 379. 408. 411. 463. 495.
Արշնի երկիր 222. 232. 233. 300. 304. 305.

Աստուածն ընծայութիւն 213.
Աստուծոյ դատաստան 203. 391. 301.
Աստուածք մեծագոյնք 126. 134. 148. 249.
210.
Աստուածք պաշտամունք 185. 210.
Աստուածք ոգեկոչմունք 134.
Աստուածաշնչական կանոնքն 523.
Աստուածաշունչ գրքի Կանոնականութեան 52.
63. 64. 67. 69.
Աստուածաշունչ գրքի Հայերէնեայ 335.
Աստուածային ստորոգելի 1. 3.
Աստուածայնոց մատենագրութեան 236.
Աստուածութիւն կամ Աստուածոյն որդւոյն.
1. 3.
Արամեան իշխան Արեւելեայց 195.
Արամեան գաղթականն 216.
Աւարայր գիւղ 203.
Ալխամանեցիք 224.
Բարսեղն սրբոյն 255. 370. 376. 378.
382. 408. 412.
Բարեկամն 341. 399. 531.
Բարեկամ 40.
Բարեկ սրբոյն 153. 340.
Բարեկ աղաչական 230.
Բարեկն տես Բարսեղն.
Բարսեղ 394.

Ռոդանոս գետ 429.
Ռոդրեանց գաւառ 103. 165. 176. 232. 429.
Ռոզէն շահապ. 502.
Ռոխսար 253.
Ռուզ վաճառումն, տես Ռուզզ.
Ռուսեն գաւառ 163. 446. 470.
Ռուսէլ Մակոյ եպիսկոպոս 123.
Ռուզզ վաճառումն 393. 395. 396. 408.
Ռուբենց հեռաբոյի 583.
Ռեբբեկունոյ գետ 176.
Ռշտունիք 63. 322.
Ռիւշանդգեա քաղաք 11. 12. 13.
Ռիւշա 11.
Ռշար գետ 103.
Ռէփ գետ 365.
Ռոդրերդ 457. 478.
Ռանամիֆիլի շահաստան 367.
Ռփրկեռս ասորի 72. 74.
Պարսայ գաղթեցեան 459.
Պօղ եպիսկոպոս Վռնանեցւոյ 123.
Պաղեստինու իշխանութիւն 154. 193. 341. 343. 392. 367.
Պաղերհմ արքեղեան 126. 167.
Պարզանեայ վանք 591.

Գարեգին Սրուանձտեանց 213.
Գաբրիէլ Մանուկ 371. 376. 378. 379.
Գերճան որդին 379. 390. 427. 428. 441. 446. 456. 458. 464. 466. 468. 477. 485.
Գեղեւան 378.
Գինեգիւղ գիւղ 443.
Գէօթէ 585.
Գիւտ Կաթողիկոս 333. 341. 344. 346. 348. 350. 351. 593.
Գիւտ Վահեւունի 126. 134. 183. 193.
Գնել 71.
Գոթք 11.
Գառարդ 15.
Գրիգոր Լուսաւորիչ 2. 3. 6. 45. 57. 73. 76. 78. 87. 94. 97. 104. 109. 116. 142. 147. 160. 180. 206. 238. 270. 271. 276. 283. 303. 371. 425. 429. 430. 521. 539. 583.
Գրիգոր Մաժիկեանեան 526.
Գրիգոր Նարեկացի 583.
Դանիէլ մարգարէ 92.
Դանիէլ քահանայ 58. 59.
Դատաստանեան 256.
Դաւիթ երէց 125.

Դաւիթ մարգարէ 53. 160. 327. 568. 572. 574. 605. 606.
Դմշկական 293. 309. 310. 314. 317. 319.
Դոպրն 202.
Դու գետ 414. 446. 437.
Դուին 367. 382. 391. 430. 439. 479. 524. 525. 542.
Եգիպտացւոց աշխարհ 447.
Եգիպտացիք 549.
Եգիպտոս 28.
Եդեսիա 39. 40.
Եզնիկ եպիս. Բագրեւանդայ 125.
Եկեղեաց գաւառ 41. 184.
Եզրայր Անձեւացեաց եպիս. 125.
Եղեգեաց գիւղ 232.
Եղիա մարգարէ 437. 579.
Եղինդ գետ 501.
Եղիսէ մարգարէ 457.
Եղիշէ եպս. Ամատունեաց 125.
Ենովք 578.
Եպիփանիոս 40.
Եսայի մարգարէ 48.
Եւա 574.
Երասխ գետ 369. 438.
Երեմիա եպս. Արշարունեաց 123.

Սրբուհի կոյս. Մարգարտանի 123.
Սրբուհի երէց 167.
Սրբուհի մարգարէն 604.
Սրեղ գիւղ 456. 458.
Սրեղով 399.
Սրուանդէմ 12. 270. 555. 556.
Ստախրեա 584.
Սփհանցիք 380.
Սփհան 602.
Վամպրի 578.
Վանդակի երէց 198.
Վանդարայն Մասնանեայ տանեն 176.
Վարանանդ, Վարդանանդ գաւառ 199. 292. 390. 488.
Վարդան որդի Գեորգի 523. 526.
Վարդհաւան գիւղ 182.
Վարմնքը հաղորդութեան 339. 438. 439.
Վաչէն Սանանդաւրայ կոյս. 123.
Վարեաս 537.
Վէնանկս գիւղ 282.
Տաթ 256
Տաթիկ կոյս. Բամանդայ 125. 225. 261.
Տաթուլ գինեգործան 185. 256.
Տաթուլ վանանդեցի 210.

Թէոդոս (Ս) վանք 217.
Թրակիա 11.
Իսահակ կաթողիկոս, տես Սահակ
Իսահակ Ձորապետ 91. 555.
Իսաւրիացիք 69.
Իտալիացիք 150. 151. 548. 550.
Լեռն (Ս) վանք Յունաց 341
Խաղխող գիւղ 188.
Խաղտիք 219. 443.
Խաղչինց գիւղ 106.
Խոսրով Ա. 5.
Խոսրով Բ. 19. 31. 34. 49.
Խոսրովանուշեան 440.
Խորասան 191.
Խորէն երէց 123. 165. 282. 283. 317.
319. 322.
Խորէն խորխոռունի 185. 190. 213.
Խորէն Մախազ 210.
Խուժաստան 223. 543.
Խուժիկն 286. 285. 291. 303. 310.
312. 313.
Խորս արքունական 454. 455.
Ծաղկէ գիւղ 453.
Ծաղկեանց լեառն Ծաղկէոտն գաւառ
174. 405.
Ծոփք 184. 469.

Կանոնադրականք 193. 225. 229. 243.
334.
Կայէն 573.
Կանդար գաւառ 404.
Կաստեր 369.
Կարմիր ծով 399.
Կասպից ծով 434.
Կասպից քաղաք 434.
Կիլիկիա գաւառ 286.
Կիւրեղ աղեքսանդրացի 583.
Կիւրեղ երուսաղեմացի 583.
Կողթէն իշխ. Որդւոյ 367.
Կոստիք 369.
Կոստանդիանոս 11.
Կոստանդինուպօլիս 13.
Կորիւն 33. 105. 205.
Կորճեթացիք 70. 580.
Կուրբիկոս, տես Մանի.
Կուր գետ 188. 193. 406. 410.
Կուսանք 373.
Կրօնն տես Վրաց. պաշտօնն ի կոր-
գին.
Հարեւորդի Աշտանայ 573.
Հարեւ քաջանայ 38. 39.
Հադար 553. 556.

Համազասպ եղբայր Վարդանայ 103· 168· 211· 256· 338· 368· 598·
Համազասպ հայր Վարդանայ 103·
Հայաստան տես Հայոց աշխարհ·
Հայրիկ 595·
Հայոց աշխարհ 1· 8· 16· 19· 20·
28· 29· 33· 33· 36· 38· 4 տեղ·
Հայք 33· 49· 119· 121· 130· 131·
133· 137· 150· 158· 170· 172· 182·
183· 187· 188· 249· 264· 283· 298·
322· 336· 360· 369· 374· 405· 416·
418· 448· 486· 499· 510· 513·
Հաշտեանք 184· 453· 456· 469·
Հայկեան գիւղ 33·
Հեղինէ 12·
Հեր գաւառ 199· 202· 390· 480·
489· 493·
Հեփթաղք 446· 471· 473· 497· 509·
Հմայեակ Դիմաքսեան 136· 167·
185· 190· 213·
Հմայեակ Մամիկոնեան 103· 164·
166· 184· 216· 219· 220· 225· 334·
Հոնք 193· 194· 248· 334· 359· 361·
363· 385· 403· 407·
Հռոմայեցւոց աշխարհ 250· 345·
Հռոմք 249· 344· 362· 363· 570·

Հաւմ 6 ·
Հասփանոս 40 · 41 ·
Հրաչեայ յԱյգայ 126 ·
Հրաչեայ կամսարական 371 · 376 · 379 · 380 · 382 · 414 · 444 · 430 · 371 · 391 ·
Հրաչեայ մամիկոնեան 394 · 424 · 426 ·
Հրեայք 279 · 332 · 374 · 375 ·
Հրեա 326 · 327 · 331 · 343 ·
Հրեշանմանպաշտ 327 ·
Ձախիկ 333 ·
Ղազար բարեկամ Գրիգորոսի 270 ·
Ղազար Փարպեցի 15 · 564 · 567 · 568 · 573 · 576 · 577 · 588 · 594 · 604 ·
Ղեւոնդ երէց 123 · 167 · 204 · 205 · 207 · 209 · 222 · 229 · 227 · 232 · 234 · 239 · 240 · 243 · 253 · 255 · 275 · 293 · 297 · 298 · 300 · 303 · 305 · 311 · 313 · 316 ·
Ղեկոմբ գետ 11 ·
Ղերսաբրդաս 467 ·
Ղոփա 555 ·
Ճարմանայնոց գաւառ 403 ·
Մամիկոնեանք 144 · 148 · 193 · 223 · 229 · 243 · 334 · 337 · 403 · 533 · 530 · 504 ·

Մաշթոց 33. 35. 37. 39. 44. 49. 205.
Մանճն՛ապահոանի 126. 134. 193
Մանի 584.
Մանիքեցիք 584.
Մատթէոս ուռհայեցին 537.
Մարզպետական դունդ 186. 193.
ՄԱՐԻԱՄ Աստուածամայր 178. 564.
Մարխան բէկ Աշտարակի 274.
Մարկիանոս կայսր 217.
Մարկիոնոս 253.
Մեսրոպ կաթողիկոս 333.
Մեսրոպ եպս. Մանազկերտոյ 124
Մեսրոպ. տես Մաշթոց.
Մերձաւորած արծրունի 185. 236
Միհրան 404. 406. 413. 415. 417.
423. 426. 428. 437.
Միհրներսեհ հազարապետ 107. 109.
111. 116. 121. 131. 153. 182. 185.
187. 229. 234. 239. 422. 245. 259.
294. 323.
Միհրշապուհ մարզպետ 210.
Միհրվշնասպ Ձոռայրեցի 480. 493.
495. 498.
Միջագետք 39.
Միաւոնիճ գեղ 414.

Մոկաց ազգ 383 ·
Մովսէս անձերձանայեան արքունի 262 · 291 · 307 ·
Մովսէս կաթողիկոս մանազկերտա- ցի 333 ·
Մովսէս կրօնաւոր 571 ·
Մովսէս մարգարէ 409 · 379 ·
Մովսէս փիլիսոփայ 607 ·
Մուշ գիւղաքաղաքն 190 · 191 ·
Մուշեղ Մամիկոնեան 256 · 437 · 438 · 442 · 454 · 455 · 463 · 485 ·
Մուշէ եպս. Արծրունեաց 124 · 222 · 232 · 255 · 300 · 304 · 303 · 571 ·
Մուշէ տարօնացի 41 ·
Մուշեան Նիւաստաւաւորս 202 · 214 · 215 ·
Յազդ սպահի 413 · 424 · 426 · 428 · 429 ·
Յազկերտ Ա. 49 · 51 · 52 ·
Յազկերտ Բ. 103 · 106 · 107 · 117 · 121 · 126 · 139 · 151 · 235 · 136 · 138 · 155 · 159 · 172 · 214 · 215 · 221 · 223 · 227 · 242 · 250 · 255 · 256 · 258 · 261 · 305 · 316 · 318 · 323 · 325 · 335 ·
Յակոբ Նահապետ 91 · 574 ·
Յակոբոս առաքեալ 587 ·
Յուշկայր արծրունի 495 ·

Յեսու 579·
Յազդենշնաս 323· 326· 344· 447·
Յոբ 382·
Յովհան 41·
Յովհան Մայրագոմեցի 387· 389·
Յովհան կաթողիկոս 372· 382· 383·
390· 393· 397· 398· 442· 530· 547·
395· 396·
Յովհան Մանկացի 388·
Յովհան սարկաւագ 256·
Յովհար 354·
Յովհաննէսեան Մկրտիչ 575·
Յովնաթան 327·
Յովսեփ Հողոցմեցի 69· 514
Յովսեփ կաթողիկոս 106· 124· 204·
207· 209· 222· 225· 232· 235· 240·
253· 273· 275· 293· 294· 296· 300·
303· 305· 333·
Յովսեփ պաղնատեցի 41·
Յոյնք 14· 42· 163· 601·
Յուդաս մատնիչ 152· 180· 209· 588·
Յուլիանոս ուրացողն 13· 216-18· 246· 564·
Նախճաւան գիւղ 569·
Նեստոր· 584·
Ներշապուհ Արծրունի 126· 134·
221· 222· 232· 255· 256· 302·

Ներսէս Սոփեկեան 467.
Ներսեհապատ 391.
Ներսէհ Արտամիգունի 387. 389.
Ներսէհ իշխան Սոփաց 195.
Ներսէհ Կամսարական 371. 377.
380. 382. 396. 410. 411. 424. 425.
444. 450. 454. 455. 502. 571. 591.
Ներսէհ Մամիկոնեան 394.
Ներսէհ Ռաջբերունի. 210. 215.
Ներսէս Պարթեւ 29. 46. 52. 62. 63.
69. 71.
Նշուարանք գեղ 480.
Նիխոր Վշնասպդատ 487. 490. 495.
505. 509. 516. 518. 521. 523. 524.
527. 530.
Նիխորական ներուխտ 187.
Նինուէ 80.
Նիւշապուհ շահաստան 257. 262.
264. 283. 290. 347.
Նոյ Նահապետ 555. 579.
Նոր քաղաք. տես Վաղարշապատ.
Նպատ լեառն 429.
Շարուր գաւառ 320.
Շաղագոմ գաւառ 444.
Շամշուլդէ աւանք 74.
Շապուհ Բ. Թագ. Պարսից 19. 31.
33. 49. 52.

Շապուհ Բ. 30. 31.
Շապուհ դպիր 389. 495. 498.
Շապուհ Միհրան 446. 448. 450. 452. 453. 456. 458. 460. 464. 465. 467. 468. 470. 471. 476. 478. 483. 496.
Շաւասպ արծրունի 256.
Շիրակ գաւառ 360.
Շիրիմանց գիւղ 434.
Շմաւոն անձեւացի 126. 134. 221. 256.
Շնգիթ արծրունի 256.
Շաեայ գիւղ 460.
Ոգմաու գիւղ 332.
Ոզթ գիւղ 460.
Ոձիփիփոր 390.
Որդի գիմազական 441.
Որեկալի գիւղ 283.
Որձնջաղ գիւղ 219.
Որսաղ գաւառ 443. 445. 452.
Պաճոկ 495.
Պապ արշակունի 394.
Պապ արքայ Հայոց 2.
Պարգեւ արծրունի 256.
Պարխար լեառն 219. 220.
Պարսիկք 21. 30. 31. 70. 138. 143.

158 · 187 · 216 · 227 · 242 · 245 · 247 · 249 · 250 · 253 · 290 · 304 · 335 · 355 · 361 · 362 · 364 · 375 · 379 · 405 · 407 · 410 · 418 · 423 · 433 · 434 · 454 · 473 · 491 · 497 · 515 · 527 · 587 ·
Պարսից աշխարհ 33 · 49 · 108 139 · 194 · 215 · 216 · 223 · 233 · 251 · 252 · 255 · 333 · 419 · 456 · 471 · 473 · 475 · 476 · 478 · 481 · 483 · 493 · 497 · 506 · 508 · 509 · 517 · 539 ·
Պետրոս առաքեալ 400 · 537 ·
Պետրոս Սեբաթի 198 ·
Պերոզ արքայ Պարսից 325 · 332 · 336 · 339 · 342 · 344 · 354 · 355 · 357 · 359 · 417 · 446 · 471 · 473 · 475 · 478 · 480 · 482 · 483 · 488 · 497 · 507 · 508 · 510 · 511 · 515 · 523 · 528 · 531 · 534 ·
Պիղատոս 279 · 298 · 575 ·
Պղատոն 39 ·
Պօղոս առաքեալ 57 · 60 · 77 · 78 · 88 · 150 · 286 · 556 · 566 · 569 · 570 · 580 · 587 · 599 · 601 · 602 ·
Ջնիկան մայրենա արքունի 262 · 291 · 507 · 510 ·
Ջրմեռ դաստակերտ 440 ·
Ռեւան 230 · 303 ·

Ուշատանեաց գաւառ 232.
Սագրայ բերդ 368.
Սահակ ասպետ բագրատունի 369. 370.
372. 382. 383. 392. 393. 395. 408.
412. 431.
Սահակ կաթողիկոս 36. 37. 39. 41.
45. 46. 48. 52. 54. 62. 67. 69. 73.
75. 102. 103. 105. 150. 162.
Սահակ համասպարական 495.
Սահակ Ձայնող 198.
Սահակ Մանդակունի 236.
Սահակ Ուշատանեաց եպս. 124. 222.
232 236. 240. 253. 273. 295. 296.
298. 300. 302. 305.
Սահակ Տարօնոյ եպս. 124.
Սամարիա 373.
Սամոս 40.
Սամուէլ մարգարէ 189.
Սամուէլ քահանայ յԱրածոյ 222.
229. 230. 235. 237. 260.
Սասանեանք, տես Պարսիկք.
Սասոյ գիմնազական 250.
Սատան դարբնեան 408.
Սաւաղ 458. 574.
Սեւակ անձնացի 388. 389.
Սիմի 353. 355.

Սքեմայ ընծան 336·
Սիւնիք 107· 119· 195· 198· 216·
252· 254· 369· 446· 468· 571· 592·
Սողոմոն իմաստուն 548· 552· 554·
Սուրէն Պահլաւ 64· 66· 67· 390·
Սուրմակ երէց 63· 70· 125·
Սասանայք, տես Արտաշիր·
Վազգէն 338·
Վախթանգ 338· 360· 384· 403· 404·
408· 413· 440· 447·
Վահան Աղուան 193·
Վահան Ամատունի 100 126· 134·
172· 173· 184· 221· 240· 256·
Վահան գնունի 213·
Վահան Մամիկոնեան [illegible] 4· 8· 15·
17· 335· 338· 340· 353· և այլն·
Վահրամ սպարապետ 473·
Վահրիճ 38·
Վաղարշ արքայ Պարսից 480· 482·
483· 487· 499· 504· 526· 527· 529·
533· 538· 539· 543· 545·
Վաղարշապատ 6· 23· 81· 103· 167·
450· 479· 541·
Վայոց ձոր 106·
Վանանդ գաւառ 352·
Վարազ գնթունի 381·

Վասակ արծրունի 15.
Վասակ մամիկոնեան 333. 364. 371. 373. 374. 376. 382. 402. 409. 412. 431. 596.
Վասակ սահառունի 581.
Վասակ Սիւնի 108. 126. 134. 139. 166. 169. 172. 173. 175. 178. 181. 183. 188. 194. 195. 197. 198. 222. 223. 225. 228. 243. 246. 248. 250. 252. 254. 255. 323.
Վասակուրա Հարդայքն 493.
Վարազդէն Առաւեղեան 236.
Վարազնկերտ գիւղ 372. 373.
Վարազներսեհ տարծայի 567.
Վարազ-շապուհ ամատունի 566.
Վարազշապուհ Պալունի 126. 195. 216.
Վարազվաղան սիւնի 107. 111. 113. 117. 233.
Վարայր-Վարայ անցք 444.
Վարդ 333. 364. 398. 400. 402. 595.
Վարդան հայր Մեսրովբայ 33.
Վարդան մամիկոնեան Մեծն 103. 126. 134. 138. 140. և այլն. և այլն։
Վարդանշէն գիւղ 443.
Վարդգեա գաւառ 261. 314.

Վարդայ 236·
Վարշամակի Լեռնանն 403·
Վեհդենշապուհ ամարարկապետ 262·
264· 265· 275· 272· 279· 282· 280·
291· 292· 296· 297· 300· 302· 306·
307· 309· 318·
Վեհշապուհ 187·
Վեհշեհնամ 360· 502·
Վիթխարական 390· 396·
Վիրք 16· 119· 123· 134· 135· 137·
150· 158· 247· 361· 362· 404· 406·
430· 446· 452· 476· 484· 486· 502·
Վարդն ընծայեցի 191·
Վռամ արքայ Պարսից 49· 52· 63·
66· 68· 70· 72· 74· 103· 106·
Վռամշապուհ 33· 35· 37· 43· 46·
48· 49·
Վրաց աշխարհն 118· 131· 132· 140·
141· 154· 334· 338· 447· 480·
Վրէն Ձիւնական 126· 222·
Վրէն Վանանդացի 304· 395· 525-26·
Վրէն տաշրացի 356·
Վրիւ մաղխազ 126· 354· 357·
Վրկանք 256· 257· 278· 283· 284·
289· 317· 472· 476·
Տաճատ արծրունի 15· 256·

Տաճատ գնդուածի 213.
Տաճատ Տաշրաց եպիսկոպոս 123.
Տաշիր 216. 219. 282. 333. 335. 370.
414.
Տարօն գաւառ 33. 104.
Տէր Խորձենեանցի 41. 609.
Տիգրան 343.
Տիրան բ. 2. 71.
Տիրոց եղբօր Բագրատունեաց 193.
Տղմուտ գետ 205.
Տուարածատափի 165.
Տրդատ արքայ 3.
Փայտակարան քաղաքի 182.
Փարսից տանուտէրեան 126. 211. 222.
236.
Փառակ Գալուածի 393.
Փարաւան 348. 350
Փարաման Մանդակունեցի 236.
Փաւստոս կամ Փաւստոս Բուզանդ
2. 11.
Փէնճէհէզ 578.
Փիւնիկէ 40.
Փըրբեան տարրի 217.
Քաղաք առաջնատուոյ 441.
Քաղաք արքունական 229. 252. 255.
290. 304. 305.

Փաստ Տարբերութեանց նշան. 125.
Փոխք ատամնեան 467.
Փուշանձք 257.
Օշական գիւղ 106.

—